*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ ՀՊ*
*2019թ. փետրվարի 7-ի թիվ 2/4 որոշմամբ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՏԵՍՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Բովանդակություն**-------------------------------------------------------------------------------------------------1
**Անկախ հաշվեքննության կարծիք** ---------------------------------------------------------------------------4
**Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ**-----------------8

**ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին**----------------------------------------------8

Տեսչական մարմնի ձևավորումը, գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերը, անկախությունը------------------------------------------------------------------------------------------------8
Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումները-----------------------------------------11
Տեսչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթները------------------------------16
Գույքի հանձնում-ընդունումը--------------------------------------------------------------------------18
Ավտոտրանսպորտային միջոցներից արտանետումները---------------------------------------------19
Տեսուչի կողմից զենք կրելու պարտավորությունը--------------------------------------------------27
Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու պարտավորությունը------------------------------------------------------------------32
Տեսուչների կողմից համազգեստ կրելու պարտավորությունը--------------------------------------35
Աոգրավված բնական ռեսուրսները-------------------------------------------------------------------37
Կենդանական կամ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը և պետական բյուջե վերականգնված գումարները--------------------------------------------------43
Տեսչական մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտներին իրազեկումը--------------------------44
Լաբորատոր հետազոտությունների բաժնի կողմից իրականացված հետազոտությունները----46
Տեսչական մարմնի կողմից ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը-------------------------48
Վայրի կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների՝ ՀՀ-ից արտահանման, ՀՀ դրանց ներմուծման նկատմամբ վերահսկողությունը------------------------------------------50
Ներքին աուդիտի համակարգ--------------------------------------------------------------------------52
**ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին**----------------------------------------54
Տեսչական մարմնի ձևավորումը, գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերը, անկախությունը----------------------------------------------------------------------------54
Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումները--------------------------------------56
Տեսչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթները---------------------------58
ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի միջև գույքի, այդ թվում՝ փաստաթղթերի հանձնում-ընդունումը------------------------------------------------------------60
<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետում առկա հեռահար ջերմաչափման սարքեր սարքավորումները---------------------62
Տեսչական մարմնի վերահսկողությունից դուրս մնացած աշխատանքային իրավահարաբերությունները--------------------------------------------------------------------63
Տնտեսվարող սուբյեկտներին իրազեկելու պարտավորությունը----------------------------------64
Տեսչական մարմնի աշխատակիցների գործուղումը---------------------------------------------------66

Տեսչական մարմնի կողմից իրականացված <<Ուսումնասիրություն>> գործառույթը-----------67
ՀՀ առողջապահության նախարարության <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի միջոցով իրականացված լաբորատոր հետազոտությունները--------------------------------------------------69
ՀՀ պետական առողջապահական գործակալություն----------------------------------70
Տեսչական մարմնի ղեկավարի հրամաններով միանվագ դրամական խրախուսանքներ և պարգևատրումներ----------------------------------------73
Ներքին աուդիտի համակարգը----------------------------------------------74
**ՀՀ կրթության տեսչական մարմին**---------------------------------------------77
Տեսչական մարմնի ձևավորումը, գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերը, անկախությունը------------------------------------------77
Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումները, ստուգաթերթերը և պատասխանատվության ենթարկելու լիազորությունը---------------------79
Տեսչական մարմնի վարչարարությունը և ուսումնասիրությունները--------------------83
Տեսչական մարմնի կողմից լիցենզիաների պայմանների և պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը-----------------------------------85
Բարձրագույն ուսումնական հաստատությունների վերահսկողությունը-------------------87
Իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակումը և համապատասխան մարմիններին ներկայացումը---------------------------------89
Բացատրական աշխատանքների իրականացումը, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացումը, իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովումը և կանխարգելիչ գործունեությունը----------------------------------------------------------90
Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ----------------------------------92
Ներքին աուդիտի համակարգ----------------------------------------------94
**ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին**---------------------------------96
Տեսչական մարմնի ձևավորումը, գործունեության տարեկան ծրագրերը, անկախությունը---96
Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումները----------------------------98
Տեսչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթները-------------------101
Տեսչական մարմնի ղեկավարի հրամաններով միանվագ դրամական խրախուսանքներն ու պարգևատրումները----------------------------------------------102
Տեսչական մարմնի կողմից չափումների միասնականության ապահովման բնագավառում իրականացված լաբորատոր հետազոտությունները--------------------------104
Ներքին աուդիտի համակարգ----------------------------------------------105
**Ամփոփ եզրակացություն**--------------------------------------------------108
**Ամփոփ առաջարկություններ**-----------------------------------------------119
**Հավելված 1**------------------------------------------------------------130
**Հավելված 2**------------------------------------------------------------131
**Հավելված 3**------------------------------------------------------------132
**Հավելված 4**------------------------------------------------------------133
**Հավելված 5**------------------------------------------------------------143

| | |
|---|---|
| **Հաշվեքննության հիմքը** | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/15, սեպտեմբերի 19-ի թիվ 9/2, թիվ 9/3 և 9/4 որոշումներ: |
| **Հաշվեքննության օբյեկտներ** | ՀՀ բնապահպանության նախարարություն և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, ՀՀ առողջապահության նախարարություն և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, ՀՀ կրթության նախարարություն և ՀՀ կրթության տեսչական մարմին, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն և ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին: |
| **Հաշվեքննության առարկան** | • Շրջակա միջավայրի պահպանմանն ու բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեություն:<br>• Առողջապահության, աշխատողների առողջության և անվտանգության ապահովմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեություն:<br>• Կրթությանն բնագավառում ֆինանսատնտեսական գործունեություն:<br>• Ոչ պարենային արտադրանքի, թանկարժեք մետաղների և չափումների միասնականության ապահովմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեություն: |
| **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը** | 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը: |
| **Հաշվեքննության կատարման ժամկետը** | 2018 թվականի հուլիսի 6-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը և 2018 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը: |
| **Հաշվեքննության մեթոդաբանությունը** | Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը: |
| **Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում** | Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի իրավաբանական վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Ոսկանյանը: |

# I. ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ հաշվեքննիչ պալատի իրավաքանական վարչությունը՝ հաշվեքննության խումբը, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի ա. և բ. ենթակետերի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերի և 2-րդ մասի դրույթները, կատարողականի և համապատասխանության հաշվեքննության է ենթարկել՝

- ՀՀ բնապահպանության նախարարությունում և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում՝ շրջակա միջավայրի պահպանմանն ու բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեությունը.
- ՀՀ առողջապահության նախարարությունում և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում՝ առողջապահության, աշխատողների առողջության և անվտանգության ապահովմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեությունը.
- ՀՀ կրթության նախարարությունում և ՀՀ կրթության տեսչական մարմնում՝ կրթության բնագավառում ֆինանսատնտեսական գործունեությունը.
- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում և ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնում՝ ոչ պարենային արտադրանքի, թանկարժեք մետաղների և չափումների միասնականության ապահովմանն ուղղված ֆինանսատնտեսական գործունեությունը:

### *Ղեկավարության պատասխանատվությունը*

Հաշվեքննության օբյեկտների ղեկավարությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությունների (հաշվեքննության առարկայի վերաբերյալ առկա և հասանելի ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, փաստաթղթեր և գրանցումներ) պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար:

Հաշվեքննության օբյեկտների ղեկավարությունը պատասխանատվություն է կրում տեսչական մարմինների գործունեությունը ՀՀ օրենքների և իրավական ակտերի համապատասխան իրականացնելու համար:

Հաշվեքննության օբյեկտների ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարության կարծիքով թույլ կտա պատրաստել սխալների արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվություններ:

### *Հաշվեքննողի պատասխանատվությունը*

Հաշվեքննության խումբը պատասխանատվություն է կրում անցկացված կատարողականի և համապատասխանության հաշվեքննության արդյունքում կազմված աուդիտորական կարծիքում ներկայացված հաշվետվությունների օրենքների և իրավական ակտերի համապատասխանության վերաբերյալ:

Հաշվեքննության խումբը հաշվեքննությունն անցկացրեց «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Աուդիտի բարձրագույն մարմնի միջազգային ստանդարտներին համապատասխան մշակված «Հանրային հատվածի արտաքին համապատասխանության աուդիտի մեթոդաբանության» և «Հանրային հատվածի արտաքին կատարողականի աուդիտի

մեթոդաբանության» համաձայն: Օրենքով և այդ մեթոդաբանություններով պահանջվում է, որ հաշվեքննության խումբը հետևի վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորի և իրականացնի այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից, իսկ տեսչական մարմինների գործունեությունը՝ էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ աուդիտորական ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով հաշվետվությունների էական խեղաթյուրման և տեսչական մարմնի գործունեության իրականացման ժամանակ անհամապատասխանությունների ռիսկերի գնահատումը:

Ռիսկերի նման գնահատումը իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ հաշվի առնելով հաշվետվությունների ճշմարիտ լինելը և արժանահավատությունը՝ ոչ թե ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու այլ տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր ընտրելու նպատակով:

Հաշվեքննության խումբը գտնում է, որ ձեռք է բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ հաշվեքննության խմբի կարծիքը հիմնավորելու համար:

### *Հաշվեննության նպատակը*

Կատարողականի և համապատասխանության հաշվեքննության նպատակն է գնահատել տեսչական գործընթացի կազմակերպման և իրականացման որակը: Հաշվեքննության խումբը հաշվեքննությունն իրականացրել է հետևյալ ուղղություններով՝

- Որքանո՞վ են նվազագույնի հասցվել նախատեսված (ձեռք բերվող) ռեսուրսներին ուղղված ծախսերը.
- Արդյո՞ք տեսչական մարմինների ծախսերը կատարվել են սահմանված ժամկետի, որակի, քանակի, ծավալի պահպանմամբ և համարժեք հատուցմամբ.
- Որքանո՞վ են արդյունավետ եղել սահմանված նպատակների իրականացումը և պլանավորված արդյունքների ստացումը.
- Որքանո՞վ են տեսչական մարմինները նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ համապատասխան որակով, քանակով և ժամկետում ստացել առավելագույն արդյունքներ.
- Արդյո՞ք անհրաժեշտ են բարելավվել ներքին գործընթացները.
- Որքանո՞վ է արդյունավետ գործում ներքին աուդիտի համակարգը.
- Որքանո՞վ է ոլորտը կարգավորող իրավական դաշտը համապարփակ և ամբողջական տեսչական մարմինների բնականոն գործունեությունն ապահովելու համար.
- Արդյո՞ք տեսչական մարմինների գործունեությունը իրականացվել է օրենսդրական կարգավորումներին համապատասխան:

### *Ոչ լիարժեք եզրահանգման հիմք*

Հաշվեքննության խումբը հաշվեքննության ընթացքում պարզեց հետևյալ խնդիրները՝

*Ինստիտուցիոնալ խնդիրներ*

Տեսչական մարմիններն ամբողջությամբ ձևավորվել են էական ժամկետային ուշացումներով, գործունեությունը սկսել են առանց հաստատված տարեկան ծրագրերի, ստուգաթերթերի, ստուգումների մեթոդաբանության, իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների և այլ անհրաժեշտ հիմնարար քայլերի (Տե՛ս հավելված 1)։ Տեսչական մարմիններում պատշաճ կերպով չի իրականացվել գույքի, ինչպես նաև ստուգումների փաթեթների հանձնում-ընդունում։ Տեսչական մարմիններից մի քանիսում բացակայում է նաև ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը։

Հավելենք, որ ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1135-Ն որոշմամբ հաստատված Հայաստանում տեսչական բարեփոխումների հայեցակարգի թիրախային խնդիրներից էր տեսչական գործընթացում կենտրոնացված տեսչական համակարգի ստեղծումը, երբ համապատասխան բնագավառում տեսչական մարմնին տրվում էր ոլորտի վերահսկման լայն և համապարփակ լիազորություններ, իսկ տեսչական մարմնի ստեղծումից հետո դադարեցվում էր այդ բնագավառը վերահսկող տեսչական գործառույթ իրականացնող այլ մարմինների գործունեությունը։ Տվյալ բնագավառում վերահսկողություն իրականացնող այլ մարմին գործել չէր կարող։ Այնինչ, որոշ տեսչական մարմինների տրվել է ոլորտը վերահսկելու ոչ ամբողջական լիազորությունների շրջանակ։

Տեսչական մարմինները պարտավոր էին մշակել իրենց իրավասությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, սակայն ոլորտի իրավական կարգավորումները բավականին թերի են, հաճախ պահպանված են «տեսչություն» ձևակերպումները և նախկին կարգավորումները, իսկ ենթաօրենսդրական ակտերը և պետական մարմինների միջև համագործակցությունը առհասարակ բացակայում է։ Փաստորեն, տեսչական մարմինները, իբրև բարեփոխված կառույցներ, իրենց աշխատանքը մեկնարկել են նախկին ընդունված կարգերով։

*Ստուգումների արդյունավետություն*

Տեսչական մարմինները հաշվետու ժամանակաշրջանում էապես թերակատարել են ստուգումների պլանով նախատեսված միջոցառումները, փաստորեն չի ապահովվել առանձին ոլորտներում սահմանված նպատակների իրականցումն ու պլանավորված արդյունքների ստացումը(Տե՛ս հավելված 2)։

Միաժամանակ, եթե հաշվի առնենք, տեսչական մարմինների բնականոն գործունեությանն ուղղված ռեսուրսների ծավալն ու նշանակությունը, ապա կարելի է ասել, որ նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ չի ապահովվել համապատասխան որակի, քանակի և ժամկետի առավելագույն արդյունքի ստացումը (Տե՛ս հավելված 3)։

*Փաստացի կատարված ստուգումների էականություն և արժանահավատություն*

Կատարված ստուգումները հիմնականում չեն արտացոլում ոլորտում առկա բոլոր հնարավոր ռիսկերը։ Ստուգումները եղել են խիստ հատվածային, երբեմն նաև ձևական։

*Սահմանված անորոշ լիազորություններ*

Որոշ դեպքերում, խուսափելով «բուն»ստուգումների պաշտոնապես իրականացումից, տեսչական մարմինները տնտեսվարող սուբյեկտներում իրականացրել են «այսպես կոչված»ուսումնասիրություններ (իրականում ստուգում են իրականացրել), որոնց արդյունքներն ու հետևանքները վարչական և իրավական առումով բացարձակապես տարբեր են։

*Տեսչական մարմնի վարչարարությունը*

Տեսչական մարմիններն անհավասար մոտեցում են ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ և որոշ դեպքերում չեն հարուցվել վարչական վարույթներ և չի նշանակվել տուգանք:

*Կատարված ծախսերի արդյունավետություն*

Արձանագրված ինտիտուցիոնալ խնդիրներին և ստուգումների թերակատարմանը զուգահեռ տեսչական մարմինները կատարել են ծախսեր, որոնց արդյունավետությունը ցածր է կամ անհասկանալի:

*Գործունեության արդյունավետություն*

Տեսչական մարմինները, ունենալով կադրային մեծ հագեցվածություն, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների լայն շրջանակ, իրենց գործառույթներն իրականացրել են ոչ արդյունավետ:

*Ներքին աուդիտը տեսչական մարմիններում*

Թեև ՀՀ օրենքներով բոլոր տեսչական մարմիններում պետք է ձևավորված լիներ առանձին ներքին աուդիտի համակարգեր, այդուհանդերձ պարզվել է, որ որևէ մեկում ներքին աուդիտի համակարգ չի ստեղծվել, հետևաբար նաև նման գործառույթ չի իրականացվել:

*Այլ խնդիրներ*

Հաշվեքննության ընթացքում ի հայտ են եկել այլ առանձին անհամապատասխանություններ և ռիսկեր և եթե հետագայում դրանք չբացառվեն, ապա բացասաբար կանդրադառնան տեսչական մարմինների արդյունավետության վրա:

### Ոչ լիարժեք եզրահանգում

Հաշվեքննության խմբի կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման հիմք» պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության՝ Տեսչական մարմինների գործունեությունը 2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը բոլոր էական առումներով համապատասխանում է իրավական ակտերին և քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

### Կատարողականի հաշվետվություն

Հաշվեքննության խմբի կարծիքով 2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2018թ.-ի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում տեսչական մարմիններն իրենց գործունեությունն իրականացնելիս չեն պահպանել տնտեսման, նպատակային արդյունավետության և ծախսային արդյունավետության սկզբունքները:

Գագիկ Ոսկանյան՝
ՀՀ Հաշվեքննիչ պալատի անդամ
7 փետրվարի 2019 թվական
ՀՀ Հաշվեքննիչ պալատ,
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 19

# II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության արդյունքները քննարկվել և, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով նախատեսված պահանջը, արձանագրությունների տեսքով ներկայացվել են հաշվեքննության օբյեկտների ղեկավարներին՝ ծանոթացման և ստորագրման նպատակով, որոնց վերաբերյալ ներկայացված պարզաբանումները և բացատրությունները էականորեն չեն տարբերվում արձանագրված ռիսկերի մասով հաշվեքննության խմբի կողմից տրված գնահատականներից:

Տեսչական բարեփոխումները Հայաստանում մեկնարկել են 2009 թվականից: Բարեփոխումների համակարգման նպատակով ստեղծվել է Տեսչական բարեփոխումների համակարգման խորհուրդ:

Տեսչական բարեփոխումները ենթադրում էին Հայաստանում գործող տեսչությունների օպտիմալացում: Այսինքն, նախկինում գործող 18 տեսչությունների փոխարեն մինչև 2018թ. պետք է ձևավորվեին վեց տեսչական մարմիններ, որոնք պետք է աշխատեին նոր մոտեցումներով, ձևաչափերով, նոր ընթացակարգերի մշակմամբ և ամբողջացմամբ, ներդրվեր ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ, ստուգումների գործընթացներում գործարկվեին ստուգաթերթեր:

## ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

### I. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

**Տեսչական մարմինը պետք է ամբողջությամբ ձևավորված լիներ քառամսյա ժամկետում՝ մինչև 2017 թվականի սեպտեմբերի 20-ը և ունենար հաստատված տարեկան ծրագիր, հաստատված ստուգաթերթեր, մեթոդաբանություն, իրավական ակտերում կատարեին համապատասխան փոփոխություններ և այլն:**

2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/15 որոշմամբ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջան է սահմանվել 2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. սեպտեմբերի 30-ը: Հաշվեքննության առաջադրանքի իրականացման ընթացքում պարզվեց, որ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ձևավորվել է ՀՀ կառավարության 27.04.2017թ. № 445-Ն որոշման համաձայն, որի 3-րդ կետով սահմանվել է Տեսչական մարմնի ձևավորման քառամսյա ժամկետ, իսկ ՀՀ վարչապետի 11.06.2018թ. № 733-Լ որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը վերակազմավորվել է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին):

Տեսչական մարմինը ձևավորվել է Բնապահպանական և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ընդերքի տեսչությունների լուծարման արդյունքում: Լուծարված Բնապահպանական և Ընդերքի պետական տեսչությունների կողմից սկսված և չավարտված վարչական, դատական և այլ գործառույթների իրականացման հետագա ընթացքի ապահովումը ՀՀ կառավարության 27.04.2017թ. № 445-Ն որոշման 10-րդ կետի համաձայն վերապահվել է ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին (հետագայում՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին):

Տեսչական մարմինը պետք է ամբողջությամբ ձևավորված լիներ քառամսյա ժամկետում՝ մինչև 2017 թվականի սեպտեմբերի 20-ը և ունենար հաստատված տարեկան ծրագիր, հաստատված ստուգաթերթեր, մեթոդաբանություն, իրավական ակտերում կատարեին համապատասխան փոփոխություններ և այլն:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետի համաձայն տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիրը՝ ընթացիկ տարում հաջորդ տարվա համար տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատվող փաստաթուղթ է: Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիրը հաստատում է կառավարման խորհուրդը տեսչական մարմնի ղեկավարի ներկայացմամբ: Գործունեության տարեկան ծրագրում ներառվում են տեսչական մարմնի կողմից իրականացվելիք իրազեկման, խորհրդատվական և բացատրական աշխատանքները: *Տեսչական մարմինը նախարարությունից անկախ կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է, սակայն Տեսչական մարմնի հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացվել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից: «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է վարչապետի աշխատակազմի միջոցով՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերի շրջանակում:* Հարկ է նշել, որ նշված ձևակերպումն ուժի մեջ է մտել 2018թ.-ի ապրիլի 9-ից՝ համաձայն ՀՕ-267-Ն օրենքի 11-րդ հոդվածի, սակայն «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում այդպես էլ չի կատարվել համապատասխան փոփոխություն և ֆինանսավորումը շարունակվել է կատարվել նախարարության միջոցով:

**Տեսչական մարմինը նախարարությունից անկախ կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է, սակայն Տեսչական մարմնի հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացվել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:**

Տեսչական մարմինն ունի 195 հաստիքային միավոր, որից 15-ը թափուր են:

2017թ.-ին տեսչական մարմնի պահպանման ծախսերը եղել են ՀՀ բնապահպանության նախարարության պահպանման ծախսերի հետ միասին:

2018թ.-ին տեսչական մարմնի պահպանման ծախսերը կազմել են **685,456,8** հազ. դրամ:

Տեսչական մարմնի կողմից 2017-2018թթ. պետական բյուջե մուտքերի թիվը կազմել է **168,406.2** հազ. դրամ:

*Տեսչական մարմնի տարածքային բաժինների կողմից աշխատանքային տարածքների մեծ մասը զբաղեցվում են վարձակալական հիմունքներով: 2017թ.-ին վարձավճարների ընդհանուր թիվը կազմել է **5,563.8** հազ. դրամ, իսկ 2018 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ **3,551.0** հազ. դրամ:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինն ամբողջությամբ չի ձևավորվել ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 27-ի N 445-Ն որոշման 3-րդ կետով սահմանված քառամսյա ժամկետում:
2. Տեսչական մարմինը 2017-2018թթ. համար չի ունեցել հաստատված գործունեության տարեկան ծրագրեր:
3. Տեսչական մարմինը 2018թ.-ի ապրիլ ամսից իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը շարունակել է իրականացնել ՀՀ բնապահպանության նախարարության միջոցով, որը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին:

## *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1. 3-րդ կետի համաձայն հաստատել ոչ միայն ստուգումների այլ նաև գործունեության տարեկան ծրագրեր:
2. Հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացնել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, այն է՝ տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է վարչապետի աշխատակազմի միջոցով:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չեն ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատաս-խանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## II.ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԲՆ Բնապահպանական տեսչությունը 2017թ. տարեկան ստուգումների ծրագրով ուներ 600, իսկ ՀՀ ԷԵԲՊՆ Ընդերքի տեսչությունը՝ 122 ստուգում, սակայն Տեսչական մարմնի կողմից այդ ստուգումներից ոչ մեկը չի իրականացվել, չնայած այն հանգամանքին, որ չավարտված վարչական, դատական և այլ գործառույթների հետագա ընթացքի ապահովումը վերապահվել էր Տեսչական մարմնին:

ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 30-ի № 839-Ա որոշման 1-ին կետի համաձայն Տեսչական մարմինը 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ստուգումներ կարող էր իրականացնել միայն որոշման հավելվածով հաստատված՝ ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և բարձր ռիսկային խմբում գտնվող սուբյեկտների մոտ, թիվ 11 (բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում, պահպանություն) և 6 (թափոնների հավաքում, մշակում և ոչնչացում, թափոնների վերամշակում) ստուգաթերթերով, որը չի իրականացրել:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքից և այլ իրավական ակտերից, իսկ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետի և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) 21-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն Տեսչական մարմնի ղեկավարը ստուգում իրականացնելու վերաբերյալ տալիս է հրաման կամ հանձնարարագիր, ինչպես նաև ստուգումների արդյունքների հիման վրա կիրառում է պատասխանատվության միջոցներ՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն բոլոր ստուգումներն անցկացվում են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատում է ՀՀ կառավարությունը: *ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի հոկտեմբերի 19-ի № 1343-Ն որոշմամբ հաստատվել են թվով 13 ստուգաթերթեր, որոնցից տեսչական մարմնի կողմից կիրառվել են թիվ 1 (ընդերքօգտագործում՝ մետաղական հանքավայրեր) և 13 (արդյունաբերություն՝ արտադրություն և շինարարություն) ստուգաթերթերը: Ստուգաթերթերը հաստատվել են այդ ժամանակ գործող ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի համար, որը որպես մարմին դադարել է գոյություն ունենալ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի № 705-Ն որոշմամբ և վերակազմակերպվել է ներկայումս գործող ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, որն իր գործունեությունը շարունակում է նախկին մարմնի ստուգաթերթերով:*

**Տեսչական մարմինը Կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով պարտավոր է մշակել և համապատասխան մարմիններին ներկայացրել իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, դրանցում փոփոխություններ և լրացումներ, սակայն այդ գործառույթը չի իրականացվել:**

*Հարկ է նշել նաև, որ Տեսչական մարմինը Կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով պարտավոր է մշակել և համապատասխան մարմիններին ներկայացրել իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, դրանցում փոփոխություններ և լրացումներ, սակայն այդ գործառույթը չի իրականացվել:*

Տեսչական մարմնի տարածքային բաժիններում (ընտրանքային՝ Արագածոտնի ՏԲ (7 աշխատակից), Արարատի ՏԲ (8 աշխատակից), Արմավիրի ՏԲ (7 աշխատակից), Գեղարքունիքի ՏԲ (9 աշխատակից), Վայոց ձորի ՏԲ (7 աշխատակից) և Սյունիքի ՏԲ (9 աշխատակից) իրականացված հաշվեքննության արդյունքում պարզ դարձավ, որ Արագածոտնի ՏԲ-ի կողմից իրականացվել է մեկ ստուգում («Ձորամեջ» ՍՊԸ, որը 04.05.2018թ. թիվ ՎԱԲ/02/Ա որոշմամբ բեկանվել է և վարչական իրավախախտման գործը կարճվել է) և Սյունիքի ՏԲ-ի կողմից՝ երեք ստուգում («Կապան-Էներժի» ՓԲԸ, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, «Կապույտ բազալտ» ՍՊԸ), իսկ մնացած ՏԲ-ները ստուգում չեն իրականացրել:

**Տեսչական մարմինը 2017թ. ստուգումների ծրագիր չի ունեցել, իսկ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշմամբ հաստատված ստուգումների ծրագրով նախատեսվել է թվով 250 ստուգում, սակայն 2018թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել է ընդամենը 35 ստուգում:**

Տեսչական մարմինը ստուգում իրականացնում է ստուգման տարեկան ծրագրի հիման վրա, որը Կանոնադրության 17-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն տեսչական մարմնի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է Տեսչական մարմնի կառավարման խորհուրդը: *Տեսչական մարմինը 2017թ. ստուգումների ծրագիր չի ունեցել, իսկ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 29-ի № 06-Ա որոշմամբ հաստատված ստուգումների ծրագրով նախատեսվել է թվով 250 ստուգում, սակայն 2018թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել է ընդամենը 35 ստուգում, ինչը չի ընդգրկում տեսչական մարմինների վերահսկողական լիազորությունների ամբողջական ոլորտը, որը ռիսկային է և հիմնավորված չէ (Տե՛ս Հավելված 4):* Մինչդեռ Տեսչական մարմինն ունի լիազորությունների լայն շրջանակ՝ մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության, հողերի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման և ընդերքի

**Ռիսկերի ամբողջական գնահատման վերլուծություն չի իրականացվել՝ վերահսկողության դաշտից դուրս է մնացել ոլորտների մեծ մասը**

պահպանության, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության, վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների ոլորտներում, ինչը ենթադրում է ներգործություն կամ ազդեցություն հիշյալ ոլորտներում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների վրա: Նշված ոլորտների դաշտում Տեսչական մարմինը պարտավոր էր իրականացնել նաև վիճակագրական տվյալների հավաքման, ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների վերլուծություն: *Ռիսկերի ամբողջական գնահատման վերլուծություն չի իրականացվել՝ վերահսկողության դաշտից դուրս է մնացել ոլորտների մեծ մասը:*

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1 մասի 2-րդ կետի համաձայն Տեսչական մարմինը ստուգման տարեկան ծրագրից դուրս (այսուհետ՝ արտածրագրային ստուգումներ) կարող է ստուգում իրականացնել, եթե՝

- ՀՀ վարչապետից ստացել է հանձնարարական,
- քաղաքացիներից, իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից ստացել է դիմում,
- պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ գրավոր տեղեկատվություն՝

  ա. քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին, կենդանիներին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու վտանգի, ինչպես նաև բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման վտանգի մասին,

  բ. քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին, կենդանիներին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու, ինչպես նաև բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման մասին,

  գ. սպառողի իրավունքների խախտման մասին (այն քաղաքացիների դիմումի դեպքում, որոնց իրավունքները խախտվել են):

Տեսչական մարմինը քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա արտածրագրային ստուգումներ կարող է իրականացնել ՀՀ կառավարության 2015թ.-ի հունիսի 18-ի N 711-Ն «Տեսչական մարմինների գործունեության ոլորտում հանրությունից ստացվող բողոքների ընդունման ընդհանուր կարգը և տնտեսավարող սուբյեկտներից բողոքների ստացման, հետագա ընթացքի և դրան հետևելու կարգը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված կարգով, որի 9-րդ կետի համաձայն հանրության կողմից տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ բողոքների ներկայացումը հիմք չէ ըստ անհրաժեշտության ստուգումներ անցկացնելու համար՝ առանց հետագա դիտարկման: Նմանատիպ դրույթ սահմանված է նաև «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն որի բողոքները վերլուծվում, դիտարկվում և օգտագործվում են ռիսկերի կառավարման համար: Հիմնականում դրանք պետք է ծառայեն համապատասխան տնտեսավարող սուբյեկտի ռիսկայնության գնահատականի փոփոխության համար: Ըստ անհրաժեշտության ստուգումներն անցկացվում են միայն այն դեպքում, երբ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ երբ

նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ: Տնտեսավարող սուբյեկտներից ստացված բողոքներն օգտագործվում են տեսչական մարմնի որակի ապահովման և հաշվետվողականության նպատակներով:

***Հետևաբար, տնտեսավարող սուբյեկտներից և հանրությունից ստացված բողոքներով արտածրագրային ստուգումներ իրականացնելու դեպքում ստուգում իրականացնելու վերաբերյալ հրամաններում կամ հանձնարարագրերում հստակ պետք է սահմանված լինեն դրանց հիմքերը, ինչպես նաև հիմնավորումներ, որ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ:***

Հարկ է նշել, որ 2017թ. սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 29-ը ընկած ժամանակահատվածում Տեսչական մարմինն իրականացրել է 18 արտածրագրային ստուգում և այդ ստուգման հանձնարականներից մի քանիսում որպես հիմք սահմանված էր «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1 մասի 2-րդ կետի ա) ենթակետը, սակայն բացակայում էր քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին, կենդանիներին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու վտանգի, ինչպես նաև բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման հնարավոր վտանգը հիմնավորող որևէ տեղեկատվություն: Իսկ 2018թ. հունվարի 1-ից մինչև 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակաշրջանում իրականացված արտածրագրային և ծրագրային 35 ստուգումների հիմքերի մասին Տեսչական մարմնում հավելյալ տեղեկատվություն առկա չէ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը չի ապահովել ՀՀ կառավարության 27.04.2017թ. № 445-Ն որոշման 10-րդ կետով սահմանված լուծարված պետական տեսչությունների կողմից սկսված և չավարտված վարչական, դատական և այլ գործառույթների իրականացման հետագա ընթացքը և չի իրականացրել ՀՀ ԲՆ Բնապահպանական տեսչության 2017թ. տարեկան ստուգումների ծրագրով նախատեսված 600, իսկ ՀՀ ԷԵԲՊՆ Ընդերքի տեսչության՝ 122 ստուգումներից ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 30-ի № 839-Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և բարձր ռիսկային խմբում գտնվող սուբյեկտների մոտ ստուգումներ:
2. Տեսչական մարմինը 2018թ.-ի հունիսի 21-ից ստուգումները շարունակել է իրականացնել ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի հոկտեմբերի 19-ի № 1343-Ն որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և

ընդերքի տեսչական մարմնի համար հաստատված ստուգաթերթերով, որի իրավասությունը չուներ:
3. Տեսչական մարմինը Կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով ժամանակին չի մշակել և համապատասխան մարմիններին չի ներկայացրել իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր:
4. Տեսչական մարմինը 2017-2018թթ-ին ստուգումներն իրականացրել է թիվ 1 (ընդերքօգտագործում՝ մետաղական հանքավայրեր) և 13 (արդյունաբերություն՝ արտադրություն և շինարարություն) ստուգաթերթերով, այնինչ ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 30-ի № 839-Ա որոշման հավելվածի 4-րդ կետով պետք է իրականացվեր թիվ 11 (բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում, պահպանություն) և 6 (թափոնների հավաքում, մշակում և ոչնչացում, թափոնների վերամշակում) ստուգաթերթերով:
5. Տեսչական մարմինը չի իրականացրել ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 29-ի № 06-Ա որոշմամբ հաստատված 2018թ.-ի ստուգումների ծրագրով նախատեսված թվով 250 ստուգումներից 215-ը:
6. Տեսչական մարմինը չի մշակել ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանություն, ստուգաթերթեր:
7. Տեսչական մարմինը տնտեսավարող սուբյեկտներից և հանրությունից ստացված բողոքներով արտածրագրային ստուգումներ իրականացրել է առանց պատշաճ հիմքերի, իսկ ստուգման հանձնարարագրերում հստակ չի սահմանել դրանց հիմքերը, ինչպես նաև հիմնավորումներ, որ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ:

## ***Առաջարկություններ***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Սահմանված ժամկետներում մշակել և Կառավարությանը ներկայացնել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստուգաթերթերը:
2. Ստուգումներ իրականացնել բոլոր հաստատված ստուգաթերթերով, որպեսզի Տեսչական մարմնի Կանոնադրությամբ հաստատված վերահսկողության բոլոր ոլորտները լինեն մշտական հսկողության ներքո:
3. Ժամանակին իրականացնել ստուգումների ծրագրերով նախատեսված բոլոր ստուգումները:
4. Քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա արտածրագրային ստուգումներ իրականացնել ՀՀ կառավարության 2015թ.-ի հունիսի 18-ի N 711-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, այսինքն այն դեպքում, երբ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ

ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ, և ստուգման հանձնարարագրերում հստակ սահմանված լինեն դրանց հիմքերը, ինչպես նաև հիմնավորումները:

*Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

**Տեսչական մարմնի կողմից 2017-2018թթ.-ին իրականացվել են թվով 797 վարչական վարույթներ:**

**Սակայն, հարկ է նշել, որ Տեսչական մարմնի ղեկավարի 111.1/11.2/1475-18 13.12.2018թ. գրավոր տրված մեկ այլ տեղեկատվության համաձայն Տեսչական մարմինը 2017թ.-ին իրականացրել է 178 վարչական վարույթ, իսկ 2018թ.-ին՝ 171 վարչական վարույթ:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը.

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

Վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին):

Տեսչական մարմնի կողմից 2017թ.-ին իրականացվել են թվով 325 վարչական վարույթներ, որից Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վերահսկողության վարչության կողմից՝ 5, Կենսաբազմազանության վարչության կողմից՝ 1, Երևանի ՏԲ-ի կողմից՝ 12, Արագածոտնի ՏԲ-ի կողմից՝ 17, Արարատի ՏԲ-ի կողմից՝ 19, Արմավիրի ՏԲ-ի կողմից՝ 33, Կոտայքի ՏԲ-ի կողմից՝ 38, Գեղարքունիքի ՏԲ-ի կողմից՝ 52, Տավուշի ՏԲ-ի կողմից՝ 78, Լոռու ՏԲ-ի կողմից՝ 33, Շիրակի ՏԲ-ի կողմից ՝ 19, Վայոց ձորի ՏԲ-ի կողմից՝ 11, Սյունիքի ՏԲ-ի կողմից՝ 7 վարչական վարույթներ:

2018թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ իրականացվել են թվով 472 վարչական վարույթներ, որից Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վերահսկողության վարչության կողմից՝ 19, Ընդերքի վերահսկողության վարչության կողմից՝ 8, Կենսաբազմազանության վարչության կողմից՝ 5, Երևանի ՏԲ-ի կողմից՝ 30, Արագածոտնի ՏԲ-ի կողմից՝ 30, Արարատի ՏԲ-ի կողմից՝

13, Արմավիրի ՏԲ-ի կողմից՝ 19, Կոտայքի ՏԲ-ի կողմից՝ 7, Գեղարքունիքի ՏԲ-ի կողմից՝ 56, Տավուշի ՏԲ-ի կողմից՝ 126, Լոռու ՏԲ-ի կողմից՝ 86, Շիրակի ՏԲ-ի կողմից՝ 38, Վայոց ձորի ՏԲ-ի կողմից՝ 21, Սյունիքի ՏԲ-ի կողմից՝ 14 վարչական վարույթներ: Տեսչական մարմնի կողմից կարճվել են 2017 թ. -ին թվով 6, իսկ 2018թ. -ին՝ 44 վարույթներ: *Տեսչական մարմնի կողմից 2017-2018թթ..-ին իրականացվել են թվով 797 վարչական վարույթներ:*

*Սակայն, հարկ է նշել, որ Տեսչական մարմնի ղեկավարի 111.1/11.2/1475-18 13.12.2018թ. գրավոր տրված մեկ այլ տեղեկատվության համաձայն Տեսչական մարմինը 2017թ.-ին իրականացրել է 178 վարչական վարույթ, իսկ 2018թ.-ին՝ 171 վարչական վարույթ:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը տրամադրել է միմյանց հակասող 2 տարբեր տեղեկատվություն իրականացված վարչական վարույթների թվաքանակի մասին:

## ***Առաջարկություններ***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Մշակել դիմում-բողոքների և վարչական վարույթների գրանցման այնպիսի մեխանիզմ, որը հնարավորություն կտա ճշգրիտ և հստակ պատկերացում ունենալ վարչական վարույթների հարուցման և վարման ամբողջ գործընթացի վերաբերյալ, ինչի արդյունքում հնարավոր կլինի խուսափել իրարամերժ տեղեկատվություն տրամադրելուց:

## ***Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան***

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատաս-խանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## IV.ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

**Տեսչական մարմինը մինչ օրս փաթեթները պատշաճ չի տեսակավորել ըստ ուղղվածությունների:**

**Ստուգումների ընթացքում կազմված ստուգումների փաթեթները, որոնց հանձնման-ընդունման ակտը մինչ օրս չի ստորագրվել: Հանձնման-ընդունման ոչ մի ակտ չի ստորագրվել նաև Բնապահպանության նախարարության և Տեսչական մարմնի միջև:**

Բնապահպանական և Ընդերքի պետական տեսչությունների լուծարումից հետո լուծարված պետական տեսչությունների կողմից կազմված ստուգումների փաթեթները ոչ պատշաճ կերպով են հանձնվել Տեսչական մարմնին և որոշ մասը գտնվում է արկղերի մեջ անփույթ վիճակում: *Տեսչական մարմինը մինչ օրս այդ փաթեթները պատշաճ չի տեսակավորել ըստ ուղղվածությունների:* Մարմնի փաստաթղթաշրջանառությունը կատարվում է թերի: ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 20.11.2018թ.-ի գրությամբ պարզ է դարձել, որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների և ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարների միջև ստորագրվել է գույքի հանձնման-ընդունման ակտ: *ՀՀ ԲՆ են հանձնվել նաև Ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված ստուգումների ընթացքում կազմված ստուգումների փաթեթները, որոնց հանձնման-ընդունման ակտը մինչ օրս չի ստորագրվել: Հանձնման-ընդունման ոչ մի ակտ չի ստորագրվել նաև Բնապահպանության նախարարության և Տեսչական մարմնի միջև:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննվող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. ՀՀ կառավարության 27.04.2017 թ. № 445-Ն որոշման 6-րդ կետի և 7-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները իրականացվել են ոչ պատշաճ, այն է՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների և ՀՀ բնապահպանության նախարարությունների միջև Ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված ստուգումների ընթացքում կազմված ստուգումների փաթեթների հանձնում-ընդունում չի իրականացվել:
2. Բնապահպանության նախարարության և Տեսչական մարմնի միջև ստուգումների փաթեթների հանձնման-ընդունման ոչ մի ակտ չի ստորագրվել:

***Առաջարկություններ***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**ՀՀ բնապահպանության նախարարությանը՝**

1. Ստորագրել Ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված ստուգումների ընթացքում կազմված ստուգումների փաթեթների հանձնման-ընդունման ակտը:

**Տեսչական մարմնին՝**

1. ՀՀ Բնապահպանության նախարարության հետ ստորագրել փաստաթղթերի հանձման-ընդունման ակտ:

2. Լուծարված պետական տեսչությունների կողմից կազմված ստուգումների փաթեթները պատշաճ տեսակավորել ըստ ուղղվածությունների:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## V.ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ

Տեսչական մարմնի Կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն Տեսչական մարմինն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, այդ թվում՝ կիրառում է պատասխանատվության միջոցներ բնապահպանության և ընդերքի ոլորտներում հետևյալ ուղղություններով՝

- անշարժ և շարժական աղբյուրներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվությունների առկայության ապահովում և այդ թույլտվություններով սահմանված նորմատիվների պահպանում,
- մթնոլորտային օդի վրա ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների ու պահանջների պահպանում,
- մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության համապատասխանությունը ՀՀ կառավարության սահմանած կարգին,
- տրանսպորտային միջոցների, ինքնաթիռների, նավերի և այլ փոխադրամիջոցների ու կայանքների շահագործման ընթացքում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի համար սահմանված նորմատիվների, պահանջների ու չափման կարգերի պահպանում:

**Տեսչական մարմինն ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար արտանետումների նկատմամբ վերահսկողություն անելու պարտավորություն ունի**

*«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն ավտոտրանսպորտային միջոցների, ինքնաթիռների, նավերի, այլ փոխադրամիջոցների ու կայանքների արտանետումներում աղտոտող նյութերի քանակը չպետք է գերազանցի սահմանված թույլատրելի նորմատիվները: Իսկ շահագործման մեջ գտնվող բոլոր*

*փոխադրամիջոցներն ու կայանքները պետք է վերահսկման ենթարկվեն աղտոտող նյութերի սահմանված թույլատրելի արտանետումների նորմատիվները պահպանելու առումով:* Սույն օրենքով սահմանված վերահսկման պարտավորությունը Կանոնադրության համաձայն դրված է Տեսչական մարմնի վրա: Ավելին, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դ) ենթակետի համաձայն տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի համար սահմանված նորմատիվների ու չափման կարգերի պահպանումը ճանաչվել է որպես բնապահպանական վերահսկողության հիմնական ուղղություն:

*Այսպիսով, Տեսչական մարմինն ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար արտանետումների նկատմամբ վերահսկողություն անելու պարտավորություն ունի:*

«Բնապահպանական վերահսկողության մասին»ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով: Այս կարգը սահմանվել է կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2410-Ն որոշմամբ: Սույն կարգի 4-րդ կետի համաձայն բնապահպանության և ընդերքի պետական տեսուչի (Այսուհետ՝ Տեսուչ) կողմից չափումների ենթարկվում են՝

ա) ավտոճանապարհներին՝ շահագործվող ավտոտրանսպորտային միջոցները (ընտրանքային կարգով): Սույն ենթակետի համաձայն ավտոմեքենաները կանգնեցնում է ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանական ծառայողը՝ Տեսուչի պահանջով (հաղորդմամբ), որի գործընթացի պայմանները սահմանվում են ՀՀ ոստիկանության պետի ՀՀ բնապահպանության նախարարի կողմից համատեղ ընդունված հրամանով,

բ) ավտոպարկերում՝ իրավաբանական անձանց պատկանող ավտոտրանսպորտային միջոցները՝ նախքան ուղեգիծ դուրս գալը (ընտրանքային կարգով),

գ) ՀՀ տարածքում գործող չափիչ կետերում՝ չափման ենթարկված ավտոտրանսպորտային միջոցները (ընտրանքային կարգով),

դ) տեխնիկական զննման կետերում՝ ավտոտրանսպորտային միջոցները՝ տեխնիկական զննություն անցնելու ժամանակ (ընտրանքային կարգով):

Կարգաբերումից հետո ավտոտրանսպորտային միջոցը շահագործող անձը դիմում է ներկայացնում խախտումն արձանագրած Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանում, որը դիմումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ստուգման արդյունքների հիման վրա, վերադարձնում է աղտոտող նյութերի արտանետումների նորմատիվների համապատասխանության կտրոնը և տալիս տեղեկանք, ինչը հանդիսանում է տվյալ ավտոտրանսպորտային միջոցի շահագործման թույլտվությունը:

Այսինքն, վերը նշված կարգով հստակ սահմանված է ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար արտանետումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ընթացակարգը:

ՀՀ տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակները սահմանված են ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 20-ի № 860-Ն որոշմամբ, որը սահմանում է ՀՀ տարածքում շահագործվող (շրջանառության մեջ դրվող և շահագործման մեջ գտնվող) ավտոտրանսպորտային միջոցների շարժիչներից

արտանետվող բանած գազերում պարունակվող աղտոտող նյութերի արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակները (նորմերը)՝ ըստ ավտոտրանսպորտային միջոցների խմբերի, ենթախմբերի, էկոլոգիական դասի, օգտագործվող վառելիքի տեսակի, ավտոտրանսպորտային միջոցի թողարկման տարեթվի և բանած գազերի չեզոքացման համակարգի առկայության:

*Շրջանառության մեջ դրվող ավտոտրանսպորտային միջոցները, համաձայն Միացյալ ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) եվրոպական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ ԵՏՀ) № 83 (կախված օգտագործվող վառելիքի տեսակից) և № 49 (կախված շարժիչի տեսակից) կանոնների, բաժանված են 1-6 էկոլոգիական դասերի, ինչը համապատասխանում է եվրո-1-ից մինչև եվրո-6 դասերի պահանջներին: Էկոլոգիական յուրաքանչյուր դասը բնութագրվում է ՄԱԿ ԵՏՀ համապատասխան կանոններով սահմանված արտանետումների մակարդակներով կամ արտանետումների տեխնիկական նորմատիվներով՝ ելնելով ավտոտրանսպորտային միջոցների ենթախմբերից ու շարժիչի տեսակից:*

*Հավելենք, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումը, առանց լիազորված մարմնի թույլտվության՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:*

Վնասակար արտանետումների չափումների իրականացման և պետությանը հասցված վնասի չափը հաշվարկելու նպատակով տեղեկատվություն է հայցվել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից (այսուհետ՝ ՃՈ): 24.10.2018թ. № 17-6-638գ գրությամբ ստացվել են տվյալներ ՀՀ-ում 30.09.2018թ. դրությամբ հաշվառված [redacted][1] տրանսպորտային միջոցների և [redacted]* միավոր տեխնիկական միջոցների (ինքնագնաց գյուղատնտեսական, ճանապարհաշինարարական, արտադրական մեքենաների, գյուղատնտեսական արտադրական, անտառաարտադրական, անտառատնտեսական տրակտորների, սահմանափակ կամ անսահմանափակ օդափոխությամբ վայրերում շահագործվող այլ անիվավոր կամ թրթուրավոր տրանսպորտային միջոցներ) վերաբերյալ, սակայն վերջիններս չեն խմբավորվում ըստ արտադրության տարեթվերի և շարժիչի տեսակի համակարգային հաշվառման բացակայության պատճառով:

**ՀՀ-ում տրասպորտային միջոցները հաշվառված չեն ըստ ՄԱԿ ԵՏՀ միօրինակ կարգադրագրերի**

*Ավելին, ՀՀ-ում տրասպորտային միջոցները հաշվառված չեն ըստ ՄԱԿ ԵՏՀ միօրինակ կարգադրագրերի և բացակայում է տեղեկատվություն ավտոտրանսպորտային միջոցների ենթախմբերի, ավտոտրանսպորտային միջոցի առավելագույն զանգվածի, շարժիչի ծնկաձև լիսեռի պտտման նոմինալ հաճախության, առավելագույն ոլորող մոմենտի, էկոլոգիական դասի և այլնի մասին, ինչը գործնականում կարող է առաջացնել խնդիրներ, քանի որ նման տեղեկատվության առկայությունը, և ՃՈ-ի ու Տեսչական մարմնի համագործակցությունը շատ ավելի կդյուրացնեին*

---

* Գաղտնիք համարվող տեղեկատվություն

*վերջինիս աշխատանքը, հատկապես երբ նման համագործակցության հնարավորություն նախատեսված է նաև Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2410-Ն որոշման 4-րդ կետի ա) ենթակետով:*

Օրինակ, այսօր, ՀՀ շահագործվում է թվով [redacted]* միկրոավտոբուս, որոնց արտադրման ժամկետը 20 տարուց ավել է, և եթե ենթադրենք, որ վերջիններիս սեփականատերերը աղտոտող նյութերի արտանետումների չափումներ չեն իրականացրել, ապա իրենք կենթարկվեին վարչական պատասխանատվության՝ **42,450.0** հազ. դրամի չափով՝ չհաշված վնասի չափը:

Հարկ է նշել, որ մեր հարցմանը ի պատասխան (մտից թիվ ՀՊՄ-1019 02.11.2018թ.) Տեսչական մարմինը իր անգործությունը պատճառաբանել է այն հիմքով, որ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա ՀՀ տարածքում ավտոտրանսպորտային միջոցներից արտանետումները չեն գերազանցում թույլատրելի նորմերը (ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդ, մուր) և հանդիսանում են որպես ցածր ռիսկայնության օբյեկտներ, հետևաբար ավտոտրանսպորտային միջոցներից արտանետումների մակարդակների, սահմանային թույլատրելի նորմատիվների, պահանջների ու չափման կարգերի պահպանման նկատմամբ ստուգումներ չեն նախատեսվել և իրականացվել:

**«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարված վերլուծությունը չպետք է տվյալ ոլորտը ռիսկային կամ ոչ ռիսկային գնահատելու հիմք հանդիսանա Տեսչական մարմնի համար**

Սակայն, Տեսչական մարմնի այս մոտեցումը անընդունելի է մի քանի պատճառով՝

1. Տեսչական մարմինը պարտավոր է ինքնուրույն իրականացնել բնապահպանության և ընդերքի ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքները վերահսկողական գործառույթները ուղղել դեպի ավելի ռիսկային ոլորտներ, տնտեսավարող սուբյեկտներ: Նման գործառույթ սահմանված է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով: Տեսչական մարմինը հատուկ այդ նպատակով նույնիսկ ունի առանձին ստորաբաժանում՝ Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն: Իսկ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության համաձայն Տեսչական մարմնի համար ռիսկի գնահատում կատարելը սահմանված չէ որպես լիազորություն:

*Փաստորեն, «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարված վերլուծությունը չպետք է տվյալ ոլորտը ռիսկային կամ ոչ ռիսկային գնահատելու հիմք հանդիսանա Տեսչական մարմնի համար:*

**Ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդի աղտոտումը և ռիսկայնության չափը չի կարելի հաշվարկել միայն ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի և մուրի քանակով և անպայման պետք է հաշվարկել այդ նպատակով սահմանված բանաձևերով**

2. «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը կատարված ուսումնասիրությունների համաձայն ՀՀ տարածքում ավտոտրանսպորտային միջոցներից արտանետումները չեն գերազանցում թույլատրելի նորմերը (ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդ, մուր), սակայն հարկ է նշել, որ և՛ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի № 965-Ն որոշման և՛ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 20-ի № 860-Ն որոշման համաձայն ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար արտանետումներ են հանդիսանում շարժիչից արտանետվող բանած գազերում պարունակվող աղտոտող նյութերը, որոնք լինում են՝

ա. գազերի ձևով՝ ածխածնի օքսիդ (CO), ածխաջրածիններ (CmH№), ազոտի օքսիդներ (№Ox, արտահայտված երկօքսիդի (ն) հաշվարկով կամ համարժեք)։ Կախված վառելիքի տեսակից՝ ածխաջրածինների m և № գործակիցներն ընդունում են՝

CH1,85՝ բենզինի համար (m =1, № =1,85)

CH1,86՝ դիզելային վառելիքի համար (m =1, № =1,86)

CH2,525՝ հեղուկացված նավթային գազի համար (m =1, № = 2,525)

CH4՝ բնական գազի համար (m =1, № = 4),

բ. տեսանելի աղտոտող նյութերի ձևով՝ դիսպերս մասնիկներ, որոնք արտազատվում են սեղմումից առաջացած ինքնաբռնկումով աշխատող շարժիչների աշխատանքի հետևանքով։

Ավելին, ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 20-ի № 860-Ն որոշման համաձայն, վնասակար արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակները պետք է հաշվարկվեն հատուկ բանաձևերով, հիմք ընդունելով սահմանված արտանետումների մակարդակները կամ արտանետումների տեխնիկական նորմատիվները՝ ելնելով ավտոտրանսպորտային միջոցների ենթախմբերից ու շարժիչի տեսակից։ *Փաստորեն, ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդի աղտոտումը և ռիսկայնության չափը չի կարելի հաշվարկել միայն ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի և մուրի քանակով և անպայման պետք է հաշվարկել այդ նպատակով սահմանված բանաձևերով։*

**Ստուգաթերթերով հաստատված են եղել վերահսկողության հարցեր, որոնք վերաբերել են ավտոտրանսպորտային միջոցներից արտանետումներին, սակայն Տեսչական մարմինը այդ մասով ոչ մի գործողություն չի արել**

3. «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1.1 կետի համաձայն բոլոր ստուգումները, անցկացվում

են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի № 1343-Ն որոշմամբ (որը դեռ ուժը չի կորցրել) հաստատվել է ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը: Այդ որոշման 7-րդ, 9-րդ, 11-րդ հավելվածներով նախատեսված են փաստաթղթային, չափագրական և սկանադիտական ստուգումներ և սահմանված են վերահսկողական բնույթի հարցեր ավտոտրանսպորտային միջոցներից, փոխադրամիջոցներից ու կայանքներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանված թույլատրելի նորմատիվներով շահագործման և ըստ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների վերահսկման մասին:

*Փաստորեն, ստուգաթերթերով հաստատված են եղել վերահսկողության հարցեր, որոնք վերաբերել են ավտոտրանսպորտային միջոցներից արտանետումներին, սակայն Տեսչական մարմինը այդ մասով ոչ մի գործողություն չի արել:*

Հարկ է նշել, նաև, որ այս ոլորտի նորմատիվ կարգավորումները լիարժեք չեն:

Մասնավորապես, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 11 հոկտեմբերի 1994 թ.-ին, որի 18-րդ հոդվածով սահմանվել էր, որ ավտոտրանսպորտային միջոցների արտանետումներում աղտոտող նյութերի քանակը չպետք է գերազանցի սահմանված թույլատրելի նորմատիվները, իսկ 18¹ հոդվածով (որը այժմ ուժը կորցրել է) սահմանված էր աղտոտող նյութերի արտանետումների չափումներ, որոնք իրականացվում էին տարին առնվազն մեկ անգամ, ինչի համար տրվում էր արտանետումների նորմատիվներին համապատասխանության կտրոն, առանց որի հնարավոր չէր իրականացնել տեխնիկական զննում:

Այս հոդվածների կիրարկումն ապահովելու նպատակով 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2410-Ն որոշմամբ ընդունվել էր ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացնելու կարգը: Այս կարգով մանրամասն կարգավորվում է վնասակար նյութերի արտանետումների չափումներ իրականացնելու ձևերը, մարմինները, ինչպես նաև ընթացակարգը:

**Արդյունքում, ստացվում է մի իրավիճակ, որ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 18¹ հոդվածը ուժը կորցնում է 2010 թվականի դեկտեմբերի 8-ին (ՀՕ-235-Ն), իսկ դրա կիրարկումն ապահովող որոշումը դեռ շարունակում է գործել՝ ստեղծելով կազուսային իրավիճակներ**

*Արդյունքում, ստացվում է մի իրավիճակ, որ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 18¹ հոդվածը ուժը կորցնում է 2010 թվականի դեկտեմբերի 8-ին (ՀՕ-235-Ն), իսկ դրա կիրարկումն ապահովող որոշումը դեռ շարունակում է գործել՝ ստեղծելով կազուսային իրավիճակներ: Օրինակ՝ օրենքի համաձայն ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների համար սահմանված նորմատիվների համապատասխանության դեպքում տրվում է նորմատիվներին համապատասխանության կտրոն, իսկ*

*ավտոտրանսպորտային միջոցից վնասակար նյութերի արտանետումների թույլատրելի նորմատիվների գերազանցման դեպքում Տեսուչը վերցնում է չափիչ կետերի կողմից ավտոտրանսպորտային միջոցներ տնօրինողին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված համապատասխանության կտրոնը, իսկ խախտման կարգաբերումից հետո վերադարձնում է այն:*

*Փաստորեն նորմատիվներին համապատասխանության կտրոն ձեռք բերելը այլևս օրենքի պարտադիր պահանջ չէ, սակայն Տեսուչը խախտման հայտնաբերման դեպքում պետք է վերցնի այդ կտրոնը, իսկ կարգաբերումից հետո պետք է վերադարձնի այն:*

**Կարգով սահմանված է վնասակար արտանետումների չափումների իրականացման ընթացակարգ, այնինչ այդ թույլատրելի նորմատիվները սահմանված են ավելի ուշ ընդունված՝ 2007թ. և 2017թ. իրավական ակտերով:**

Ավելին, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2410-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված են ածխածնի օքսիդի, ածխաջրածինների և ծխայնության չափումների կատարման ընթացակարգերը, մինչդեռ վնասակար արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակները սահմանվել են ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 20-ի № 860-Ն որոշմամբ, իսկ մինչ այդ գործում էր ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 2-ին ուժի մեջ մտած № 965-Ն որոշումը:

*Փաստորեն, վերը նշված 2006թ.-ի կարգով սահմանված է վնասակար արտանետումների չափումների իրականացման ընթացակարգ, այնինչ այդ թույլատրելի նորմատիվները սահմանված են ավելի ուշ ընդունված՝ 2007թ. և 2017թ. իրավական ակտերով:*

Կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն Տեսչական մարմնի գործառույթներն են՝ իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակումը և համապատասխան մարմիններին ներկայացումը, հետևաբար Տեսչական մարմինը պետք է հետամուտ լինի այդ իրավական ակտերի միմյանց համապատասխանությանը:

Այսպիսով հաշվեքննության արդյունքում պարզվեց, որ Տեսչական մարմինը հաշվեքննվող ժամանակաշրջանում՝ 2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. սեպտեմբերի 30-ը, թույլ է տվել հետևյալ անհամապատասխանություններն ու խեղաթյուրումները.

1. Չի իրականացրել ՀՀ տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների մակարդակների, սահմանային թույլատրելի նորմատիվների, պահանջների ու չափման կարգերի պահպանման նկատմամբ վերահսկողություն:
2. Տեսչական մարմինը չի պահպանել Տեսուչի կողմից ավտոտրանսպորտային միջոցների չափումների ենթարկման ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2410-Ն որոշմամբ հաստատված կարգը և հետամուտ չի եղել ՄԱԿ-ի ԵՏՀ կանոնների պահպանմանը:
3. Չեն իրականացրել բնապահպանության և ընդերքի ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքներ:
4. Ստուգումների ծրագիրը կազմելիս հաշվի չի առել ռիսկերի վրա հիմնված իր կողմից մշակված մեթոդաբանությունը և հիմք է ընդունել այլ մարմնի կողմից տրված տեղեկատվությունը:

5. Տեսչական մարմինը ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակների նկատմամբ ստուգումներ չի իրականացրել, թեև ստուգաթերթերով նման հնարավորություն նախատեսված էր:
6. Տեսչական մարմինը չի կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակման և համապատասխան մարմիններին ներկայացման պարտավորությունը:

## Առաջարկություններ

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների ու խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ Առաջարկությունները՝

***Տեսչական մարմնին՝***

1. Իրականացնել ՀՀ տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակների չափումներ և խախտումների դեպքում պատասխանատվության ենթարկել իրավախախտներին՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 80-րդ հոդվածով սահմանված կարգով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:
2. ՀՀ տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակների չափումները իրականացնել ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 20-ի N 860-Ն որոշմամբև ՄԱԿ ԵՏՀ N 83 և և N 49 կանոններով սահմանված արտանետումների մակարդակներով կամ արտանետումների տեխնիկական նորմատիվներով՝ ելնելով ավտոտրանսպորտային միջոցների ենթախմբերից ու շարժիչի տեսակից:
3. Համագործակցել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ որպեսզի իրականացվի ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումներ՝ հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության պետի և ՀՀ բնապահպանության նախարարի կողմից համատեղ ընդունված համապատասխան հրամանը:
4. Մշակել իրավական ակտերի նախագծեր, որոնք կկանոնակարգեն ոլորտը կարգավորող իրավական ակտերի միջև հակասությունները:

***ՀՀ կառավարությանը***

1. Փոփոխություններ իրականացնել ՀՀ կառավարության «ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացնելու կարգը հաստատելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2410-Ն որոշման մեջ՝ դրանք համապատասխանեցնելով 2017թ.-ի հուլիսի 20-ի N 860-Ն որոշմանը և ՄԱԿ ԵՏՀ կանոններին:

***ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն>> ծառայությանը***

1. ՀՀ տարածքում շահագործվող (շրջանառության մեջ դրվող և շահագործման մեջ գտնվող) ավտոտրանսպորտային միջոցները Ոստիկանությունում հաշվառվեն ըստ ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 20-ի N 860-Ն որոշմամբ հաստատված ենթախմբերի՝

ըստ ավտոտրանսպորտային միջոցների խմբերի, ենթախմբերի, էկոլոգիական դասի, օգտագործվող վառելիքի տեսակի, ավտոտրանսպորտային միջոցի թողարկման տարեթվի և բանած գազերի չեզոքացման համակարգի առկայության՝ հետագայում ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումները դյուրացնելու համար:

2. Համագործակցել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հետ որպեսզի պատշաճ իրականացվի ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումները բնապահպանական տեսուչի և ոստիկանության աշխատակցի միջոցով:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## VI.ՏԵՍՈՒՉԻ ԿՈՂՄԻՑ ԶԵՆՔ ԿՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի ժա) կետով սահմանված է Տեսուչի՝ օրենքով սահմանված կարգով ծառայողական զենք, զինամթերք, ձեռնաշղթա պահելու, կրելու, օգտագործելու իրավասությունը:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն Տեսուչին հատկացվում է ծառայողական զենք, որի տեսակը, ձևը, մոդելը և քանակը, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը սահմանված է «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչին հատկացվող զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի № 2242-Ն որոշմամբ:

Սույն որոշմամբ սահմանված է, որ 80 տեսուչների հատկացվում է թվով 89 ծառայողական զենք, այդ թվում՝ կարճ ակոսափող զենք, կենդանական աշխարհի օբյեկտների անշարժացման կամ ներարկումների համար կիրառվող զենք, գազային ատրճանակ կամ թմբուկավոր ռևոլվեր, ազդանշանային զենք, ակոսափող որսորդական հրացան, երկար ողորկափող զենք և այլն:

*Փաստորեն, օրենսդրական ամրագրումից կարելի է ենթադրել, որ Տեսուչների աշխատանքի արդյունավետությունը կբարձրանա ծառայողական զենքի առկայության պայմաններում և դա պատահական չէ, քանի որ Տեսչական մարմնի գործառույթներն այնպիսին*

*են, որ պարունակում են որոշակի ռիսկայնություն և վտանգավորություն: Տեսուչները վերահսկողական աշխատանքների ընթացքում պարբերաբար առնչվում են իրավախախտ, օրինազանց քաղաքացիների հետ, իսկ երբեմն նաև վայրի կենդանիների հետ, ինչի պայմաններում, օրինակ, կենդանական աշխարհի օբյեկտների անշարժացման կամ ներարկումների համար կիրառվող զենքի առկայությունը անհրաժեշտություն է:*

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) և բ) կետերով սահմանվում է Տեսուչի կողմից զենքի գործադրման պայմանները, այն է՝ իր կամ այլ անձի վրա զինված հարձակումը կանխելու, կասեցնելու համար, եթե առկա է նրանց կյանքին կամ առողջությանն սպառնացող իրական վտանգ, ինչպես նաև զենքի հափշտակման փորձը կանխելու, կասեցնելու համար: «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն նախքան ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի օգտագործման իրավասություն ստանալը, իսկ այնուհետ՝ պարբերաբար, Տեսուչը սահմանված կարգով անցնում է հատուկ պատրաստության ստուգումներ, որի անցկացման կարգը սահմանվում է «Զենքի մասին» ՀՀ օրենքով: «Զենքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն զենք ձեռք բերելու օրվանից երկշաբաթյա ժամկետում զենքը պետք է գրանցվի ՀՀ ոստիկանությունում: Գրանցման ժամանակ զենքի ձեռքբերման օրինականությունը հաստատող փաստաթղթերի հիման վրա հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց տրվում է զենք պահելու և օգտագործելու թույլտվություն՝ երեք տարի ժամանակով:

**Տեսուչները պետք է պարբերաբար հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու՝ իրենց պիտանիությունը որոշող պատրաստության ստուգումներ անցնեն ՀՀ ոստիկանությունում, ինչի համար պետք է կնքել համապատասխան պայմանագիր ՀՀ ոստիկանության հետ**

Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողներին զենքը տրվում է իրավաբանական անձի ղեկավարի գրավոր հրամանով, եթե այդ աշխատողներն անցել են հատուկ պատրաստություն և ՀՀ ոստիկանությունից ստացել զենք պահելու ու կրելու թույլտվություն: Այդ աշխատողները պարտավոր են պարբերաբար անցնել հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու՝ իրենց պիտանիությունը որոշող ստուգումներ: Նշված աշխատողների հատուկ պատրաստությունն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը՝ պայմանագրային հիմունքներով: Հատուկ պատրաստության ծրագիրը և ստուգումներ անցկացնելու կարգը սահմանում է ՀՀ ոստիկանությունը:

*Փաստորեն Տեսուչները պետք է պարբերաբար հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու՝ իրենց պիտանիությունը որոշող պատրաստության ստուգումներ անցնեն ՀՀ ոստիկանությունում, ինչի համար պետք է կնքել համապատասխան պայմանագիր ՀՀ ոստիկանության հետ:*

Հաշվեքննության արդյունքում պարզվեց, որ ոչ բոլոր Տեսուչներն ունեն սահմանված կարգով զենք, հետևաբար, վերոնշյալի վերաբերյալ պարզաբանում պահանջվեց Տեսչական մարմնից:

> **Տեսուչներից միայն մի քանիսն ունեն զենք, որը ստացել են դեռևս ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական տեսչության աշխատակից լինելու ժամանակ՝ այն էլ 5 տարի ժամկետով, (երբ օրենքով թույլտվություն կարող է տրվել միայն 3 տարով): Նոր ստեղծված Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով տեսչական կազմին զենք չի հատկացվել և նոր թույլտվություններ չեն տրվել:**

*Տեսչական մարմինը 2018թ.-ի նոյեմբերի 27-ի 111/132/1332-18 գրությամբ տեղեկացրել է, որ «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչին հատկացվող զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի № 2242-Ն որոշմամբ զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը չի համապատասխանում Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառուցվածքում գործող պաշտոնների անվանացանկին: Այնուամենայնիվ, Տեսուչներից միայն մի քանիսն ունեն զենք, որը ստացել են դեռևս ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական տեսչության աշխատակից լինելու ժամանակ՝ այն էլ 5 տարի ժամկետով, (երբ օրենքով թույլտվություն կարող է տրվել միայն 3 տարով): Նոր ստեղծված Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով տեսչական կազմին զենք չի հատկացվել և նոր թույլտվություններ չեն տրվել:*

«Զենքի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն 1-ին մասի համաձայն զենք ձեռք բերելու, պահելու, կրելու թույլտվություններն ուժը կորցրած են ճանաչվում, եթե լուծարվել է իրավաբանական անձը: Իսկ նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները, որոնց վրա օրենսդրությամբ դրված են այնպիսի գործառույթներ, որոնք կապված են ծառայողական զենք օգտագործելու կամ գործադրելու հետ, համարվում են հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք: ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի № 445-Ն որոշման 14-րդ կետի (սույն կետը ուժի մեջ է մտել 2017թ. օգոստոսի 20-ից) համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը լուծարվել է և այդ կապակցությամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին»№ 1149-Ն որոշումը:

> **ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության այն աշխատակիցները, որոնք ունեին սահմանված կարգով ստացված զենք օգտագործելու կամ գործադրելու թույլտվություն, պարտավոր էին դրանք հանձնել ՀՀ ոստիկանություն**

*Հետևաբար, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության այն աշխատակիցները, որոնք ունեին սահմանված կարգով ստացված զենք օգտագործելու կամ գործադրելու թույլտվություն, պարտավոր էին դրանք հանձնել ՀՀ ոստիկանություն, քանի որ իրենց թույլտվությունները ուժը կորցրած էին ճանաչվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության լուծարման փաստով դեռևս 2017թ. օգոստոսի 20-ից:*

Հարկ է նշել նաև, որ Տեսչական մարմնի Կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն Տեսչական մարմնի գործառույթներից է՝ իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակումը և համապատասխան մարմիններին ներկայացումը: «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչին հատկացվող զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի № 2242-Ն որոշման մեջ սահմանված խնկապես զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը չի համապատասխանում ներկայիս իրավիճակին (օրինակ՝ Տեսչական մարմնի ղեկավարի փոխարեն սահմանված է Տեսչության պետ), այնուամենայնիվ, Տեսչական մարմինը պետք է հետամուտ լինի իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի միմյանց համապատասխանությանը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննվող ժամանակաշրջանում՝ 2017թ. -ի հունվարի 1-ից 2018թ. -ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը չի պահպանում Տեսուչի ծառայողական զենք, զինամթերք, ձեռնաշղթա պահելու, կրելու, օգտագործելու «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի ժա) կետով, 17-րդ հոդվածով և 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) և բ) կետերով, ինչպես նաև «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչին հատկացվող զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի № 2242-Ն որոշմամբ սահմանված պահանջները:
2. Տեսուչները սահմանված կարգով չեն անցել հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու՝ իրենց պիտանիությունը որոշող պատրաստության պարբերաբար ստուգումներ, որը նախատեսված է «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով և «Զենքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով:
3. Տեսչական մարմնի որոշ աշխատակիցներ զենք պահելու և օգտագործելու թույլտվություն ձեռք են բերել 5 տարի ժամկետով, մինչդեռ «Զենքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված է՝ 3 տարի ժամկետ:
4. Տեսչական մարմնի՝ զենք պահելու և օգտագործելու թույլտվություն ունեցող աշխատակիցները, որոնք այդ թույլտվությունը ստացել են լուծարված ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունից, պարտավոր էին զենքը հանձնել դեռևս 2017թ. օգոստոսի 20-ից, քանի որ իրենց թույլտվությունները ուժը կորցրած են:

5. Տեսչական մարմնի ղեկավարը չի ընդունել հատուկ պատրաստություն անցած և ՀՀ ոստիկանությունից զենք ստանալու, պահելու ու կրելու թույլտվություն ստացած աշխատակիցներին զենք տրամադրելու գրավոր հրաման:
6. Տեսչական մարմինը ՀՀ Ոստիկանության հետ չի կնքել աշխատողների հատուկ պատրաստության իրականացման պայմանագիր:
7. Տեսչական մարմինը հետամուտ չի լինում իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի միմյանց համապատասխանեցնելուն, արդյունքում՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի № 2242-Ն որոշման մեջ սահմանված զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը չի համապատասխանում ներկայիս իրավիճակին:

## ***Առաջարկություններ***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Կատարել «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի ժա) կետով, 17-րդ հոդվածով և 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) և բ) կետերի և «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչին հատկացվող զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի № 2242-Ն որոշման՝ Տեսուչներին ծառայողական զենք, զինամթերք, ձեռնաշղթա տրամադրելու, պահելու, կրելու և օգտագործելու վերաբերյալ պահանջները:
2. Պարբերաբար կազմակերպել «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով և «Զենքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված տեսուչների հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու՝ իրենց պիտանիությունը որոշող պատրաստության ստուգումներ:
3. Հետևել «Զենքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից զենք պահելու և օգտագործելու թույլտվության ձեռքբերման ժամկետների պահպանմանը:
4. Տեսչական մարմնի՝ զենք պահելու և օգտագործելու թույլտվություն ունեցող աշխատակիցները, որոնք այդ թույլտվությունը ստացել են լուծարված ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունից, զենքը պետք է պատշաճ ձևով հանձնեն ՀՀ ոստիկանություն:
5. Տեսչական մարմնի ղեկավարը պետք է ընդունի գրավոր հրաման հատուկ պատրաստություն անցած և ՀՀ ոստիկանությունից զենք ստանալու, պահելու ու կրելու թույլտվություն ստացած աշխատակիցներին զենք տրամադրելու վերաբերյալ:

6. ՀՀ Ոստիկանության հետ կնքել աշխատողների հատուկ պատրաստության իրականացման պայմանագիր:
7. Հետամուտ լինել իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի միմյանց համապատասխանությանը, այն է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի № 2242-Ն որոշման մեջ սահմանված զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը պետք է համապատասխանեցվի ներկայիս իրավիճակին:

**ՀՀ Ոստիկանությանը՝**

1. Համագործակցել Տեսչական մարմնի հետ հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու՝ տեսուչների պիտանիությունը որոշող պատրաստության ստուգումներ կազմակերպու համար ինչի համար կնքել համապատասխան պայմանագիր Տեսչական մարմնի հետ:
2. Հետևել «Զենքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից զենք պահելու և օգտագործելու թույլտվության ձեռքբերման ժամկետների պահպանմանը:
3. Հետևել, որ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության այն աշխատակիցները, որոնք ունեին սահմանված կարգով ստացված զենք օգտագործելու կամ գործադրելու թույլտվություն, դրանք պատշաճ ձևով հանձնեն ՀՀ ոստիկանություն, քանի որ իրենց թույլտվությունները ուժը կորցրած էին ճանաչվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության լուծարման փաստով դեռևս 2017թ. օգոստոսի 20-ից:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատաս-խանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## VII.ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Տեսուչը տեսչական գործողությունների ծավալման ամբողջ ընթացքում պարտավոր է իր հետ ունենալ առաջին բուժօգնության համար համապատասխան պարագաներ՝ դրանց համար

նախատեսվող հատուկ պայուսակով: Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման հետևանքով կարող են մարմնական վնասվածքներ և (կամ) մահվան դեպքեր գրանցվել, ուստի հույժ կարևոր է, որ Տեսուչները տիրապետեն ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի օգտագործման և առաջին բուժօգնություն տրամադրելու հմտություններին:

**Տեսուչը համարվում է դասընթացները յուրացրած, եթե ուսումնական դասընթացների արդյունքում նրան տրվել է հատուկ պատրաստության դասընթացներն ավարտելը հաստատող փաստաթուղթ, որը ուժի մեջ է այն տալու օրվանից հաշված 3 տարի:**

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն Տեսուչի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: ՀՀ կառավարության «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու կարգը սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 15-ի № 2296-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված է Տեսուչների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցներ կրելու, պահելու, գործադրելու (կիրառելու) և առաջին բուժօգնություն ցուցաբերելու (այսուհետ՝ հատուկ պատրաստություն) նպատակով տեսական և գործնական հմտություններ ձեռք բերելու ընթացակարգը: *Տեսուչը համարվում է դասընթացները յուրացրած, եթե ուսումնական դասընթացների արդյունքում նրան տրվել է հատուկ պատրաստության դասընթացներն ավարտելը հաստատող փաստաթուղթ, որը ուժի մեջ է այն տալու օրվանից հաշված 3 տարի:*

Հատուկ պատրաստության դասընթացները կազմակերպվում են՝ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի և ՀՀ ոստիկանության պետի համատեղ հաստատված ուսումնական տարեկան ծրագրերի, որոնք կազմվում են մինչև հաջորդ տարվա պետական բյուջեի ձևավորման հայտը ներկայացնելը: Հատուկ պատրաստության դասընթացներին Տեսուչները մասնակցում են ՀՀ բնապահպանության նախարարի կողմից հաստատված ցանկով, որը համապատասխան ուսումնական հաստատություն է ներկայացվում դասընթացներն սկսվելուց մեկ ամիս առաջ:

Հարկ է նշել, որ Կանոնադրության 1-ին կետով Տեսչական մարմինը Կառավարությանը ենթակա՝ վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող պետական մարմին է, ուստի իր աշխատակիցների համար հատուկ պատրաստության դասընթացների Տեսուչների մասնակցության ցանկ և ՀՀ ոստիկանության պետի հետ համատեղ ուսումնական տարեկան ծրագրեր հաստատելու լիազորություն պետք է ունենա ոչ թե ՀՀ բնապահպանության նախարարը, այլ Տեսչական մարմնի ղեկավարը:

---

***Տեսչական մարմինը ՀՊՄ-1070 12.11.2018թ. գրությամբ պարզաբանել է, որ Տեսուչների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու հատուկ***

***պատրաստության ուսումնական դասընթացներ չեն կազմակերպվել, ինչի արդյունքում Տեսուչները նշված դասընթացների չեն մասնակցել:***

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննվող ժամանակաշրջանում՝ 2017թ. -ի հունվարի 1-ից 2018թ. -ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսուչները սահմանված կարգով չեն անցել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու հատուկ պատրաստության դասընթացներ և չունեն դասընթացներն ավարտելը հաստատող փաստաթուղթ, որը նախատեսված է ՀՀ կառավարության 2005թ.-ի ի դեկտեմբերի 15-ի № 2296-Ն որոշմամբ հաստատված կարգով:
2. Տեսուչները տուժողին առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն չունեն:
3. Տեսուչները տեսչական գործողությունների ծավալման ամբողջ ընթացքում իրենց հետ չեն կրում առաջին բուժօգնության համար համապատասխան պարագաներ՝ դրանց համար նախատեսվող հատուկ պայուսակով, ինչը չի համապատասխանում«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:
4. Տեսչական մարմինը չի մշակել և համապատասխան մարմիններին չի ներկայացրել «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու կարգը սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 15-ի № 2296-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծ:

## ***Առաջարկություններ***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. ՀՀ կառավարության 2005թ.-ի ի դեկտեմբերի 15-ի № 2296-Ն որոշմամբ հաստատված կարգով Տեսուչները պետք է սահմանված կարգով անցնեն ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու հատուկ պատրաստության դասընթացներ և ձեռք բերեն դասընթացներն ավարտելը հաստատող փաստաթուղթ:
2. Տեսուչները պետք է տեսչական գործողությունների ծավալման ամբողջ ընթացքում իրենց հետ կրեն առաջին բուժօգնության համար համապատասխան պարագաներ՝ դրանց համար նախատեսվող հատուկ պայուսակով՝ համաձայն «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների:
3. Տեսչական մարմինը պետք է մշակի և համապատասխան մարմիններին ներկայացնի «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու կարգը

սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 15-ի № 2296-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծ:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## VIII.ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն Տեսուչի համազգեստի ձևը և այն կրելու կարգն ու պայմանները սահմանում է ՀՀ կառավարության 2005թ-ի օգոստոսի 18-ի № 2085-Ն որոշմամբ և ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ. մայիսի 17-ի № 153-Ն հրամանով:

ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ. մայիսի 17-ի № 153-Ն հրամանի 4-րդ և 8-րդ կետերի համաձայն համազգեստ կրում են բոլոր Տեսուչները: Տեսուչները ամենօրյա համազգեստը կրում են ամենօրյա ծառայողական պարտականությունները կատարելու, ատեստավորման, հատուկ ուսուցման և վերապատրաստման ժամանակ, իսկ դաշտային համազգեստը՝ դաշտային պայմաններում իրականացվող ստուգումների և ստուգայցերի իրականացման ժամանակ:

**Աշխատանքային այցերի ընթացքում պարզվեց, որ Տեսուչները համազգեստ չեն կրում**

*Սակայն աշխատանքային այցերի ընթացքում պարզվեց, որ Տեսուչները համազգեստ չեն կրում: Այնուամենայնիվ հաշվեքնությունն ընդգրկող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի համար կատարված միայն գնումների թիվը կազմում է **42,353.13** հազ. դրամ, որից **9,597.96** հազ. դրամը հանդիսանում է հանդերձանքի գնում:*

1. 2017թ.-ի մայիսի 12-ին «Պահապան» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, որով կատարվել է **1,559. 52** հազ. դրամի 240 զույգ կոշիկի գնում:
2. 2017թ.-ի հուլիսի 26-ին «Դերձակ» ՍՊԸ-ի հետ կնքվել է **2,608. 92** հազ. դրամի պայմանագիր, որով կատարվել է 120 հատ ձմեռային գլխարկի, 60 հատ ձմեռային կիսավերարկուի, 60 հատ երկարաթև վերնաշապիկի, 60 հատ կարճաթև վերնաշապիկի գնում:

3. 2017թ.-ի հուլիսի 26-ին «Էլաամոդա» ՍՊԸ-ի հետ կնքվել է **5,429. 52** հազ. դրամի պայմանագիր, որով կատարվել է 60 հատ ամառային համազգեստի, 60 հատ ձմեռային համազգեստի, 60 հատ ամառային դաշտային համազգեստի գնում:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ կառավարության 2005թ-ի օգոստոսի 18-ի № 2085-Ն որոշմամբ սահմանվել է Տեսուչի համազգեստի և Տեսչական մարմնի տարբերանշանի նկարագրերը և ձևերը: Համաձայն այս որոշման 1-ին կետի բ) գ) դ) ե) ենթակետերի տղամարդ Տեսուչի ձմեռային համազգեստը պետք է լինի բրդյա կտորից, 2-րդ կետի բ) գ) դ) ե) ենթակետերի տղամարդ Տեսուչի ամառային համազգեստը պետք է լինի բամբակյա կտորից սակայն գնման 26.07.2017թ.-ի կնքված № « ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-1» ծածկագրով պայմանագրի հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագրում տղամարդու ձմեռային համազգեստը պատվիրված և գնված է բամբակյա կտորից, իսկ գնման 26.07.2017թ.-ի կնքված № « ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-2» ծածկագրով պայմանագրի հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագրում տղամարդու ամառային համազգեստը պատվիրված և գնված է բրդյա կտորից:

Այսինքն, ամառային համազգեստը գնել են բրդյա կտորից, իսկ ձմեռայինը՝ բամբակյա, թեև պետք է լիներ հակառակը:

**Հարցմանն ի պատասխան տարածքային մարմինների աշխատակիցները հայտնել են, որ համազգեստները ներկայումս չեն կրում՝ չափսերի անհամապատասխանության և որակազրկված լինելու պատճառով**

*Հավելենք, որ մեր հարցմանն ի պատասխան տարածքային մարմինների աշխատակիցները հայտնել են, որ համազգեստները ներկայումս չեն կրում՝ չափսերի անհամապատասխանության և որակազրկված լինելու պատճառով:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննվող ժամանակաշրջանում՝ 2017թ. -ի հունվարի 1-ից 2018թ. -ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը չի կատարել ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. մայիսի 17-ի № 153-Ն հրամանով ամրագրված համազգեստ կրելու պարտավորությունը, ինչը չի համապատասխանում նաև «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դրույթների պահանջներին:
2. «Դերձակ» և «Էլաամոդա» ՍՊԸ-ների հետ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման « ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-1» և « ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-2» պայմանագրերի մաս կազմող հավելվածներով սահմանված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005թ.-ի օգոստոսի 18-ի № 2085-Ն որոշմամբ ամրագրված Տեսուչի ամառային և ձմեռային համազգեստների նկարագրերին:
3. 2017-2018թթ. տեսչական մարմնի կողմից կատարվել է **9,597.96** հազ. դրամի հանդերձանքի գնման անարդյունավետ ծախս:

### *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Կատարել ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ. մայիսի 17-ի N 153-Ն հրամանով ամրագրված համազգեստը ամենօրյա ծառայողական պարտականությունները կատարելու, ստեստավորման, հատուկ ուսուցման և վերապատրաստման ժամանակ, իսկ դաշտային համազգեստը՝ դաշտային պայմաններում իրականացվող ստուգումների և ստուգայցերի իրականացման ժամանակ կրելու պարտավորությունը:
2. Անարդյունավետ ծախս չկատարելու համար բնապահպանական տեսուչի համազգեստի գնումը կատարել տեսուչների համազգեստների չափսերին համապատասխան:
3. Գնման տեխնիկական բնութագրերը կազմել ՀՀ կառավարության 2005թ-ի օգոստոսի 18-ի N 2085-Ն որոշմամբ սահմանված բնապահպանության տեսուչի համազգեստի և Տեսչական մարմնի տարբերանշանի նկարագրերին և ձևերին համապատասխան:

### *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանությա նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

## IX.ԱՌԳՐԱՎՎԱԾ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի է) կետի և 13-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետի դրույթների համաձայն Տեսուչը պարտավոր է ապահովել առգրավված բնական ռեսուրսների, որսի, որսագործիքների և որսի գործիք համարվող այլ միջոցների՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված տնօրինման կարգի պահպանումը, որը համաձայն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի սահմանում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի «Ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների (ներառյալ՝ որսի)

տնօրինման կարգը (այսուհետ՝ Կարգ) հաստատելու մասին « № 2168-Ն որոշմամբ սահմանվել է ստուգումների ժամանակ հայտնաբերված և առգրավված՝ ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների՝

ա) կենսառեսուրսների՝ վայրի խոտաբույսերի, թփերի, ծառերի, այդ թվում՝ փայտանյութի և վայրի կենդանիների ու դրանց արգասիքների,

բ) հողի բերրի շերտի,

գ) օգտակար հանածոների տնօրինման կարգը:

Կարգի 2-րդ կետի համաձայն արագ փչացող առգրավված կենսառեսուրսներն անհատույց հանձնվում են տվյալ մարզի կամ համայնքի (կամ հարակից մարզի կամ համայնքի) մանկատներին կամ ծերանոցներին, թանգարաններին՝ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարի և ընդունող կազմակերպության ղեկավարի կողմից կազմված հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ անասնաբուժասանիտարական փորձաքննության մասին եզրակացությունից հետո:

***Այսինքն, արագ փչացող առգրավված կենսառեսուրսները պետք է հանձնվեն միայն երեք կարգի հասցեատերերի՝ մանկատներ, ծերանոցներ և թանգարաններ, այնինչ եղել են դեպքեր, երբ դրանք հանձնվել են մանկապարտեզների, պուն ինտերնատների, հիվանդանոցների՝ ընդ որում անասնաբուժասանիտարական փորձաքննության բացակայության պայմաններում:***

Կարգի 3-րդ կետի համաձայն առգրավված կենդանի վայրի կենդանիները Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման Տեսուչների կողմից ազատ են արձակվում բնական միջավայր՝ տվյալ մարզպետարանի բնապահպանական բաժնի և համապատասխան անտառպետության աշխատողների մասնակցությամբ, ինչը արձանագրվում է, իսկ ազատ արձակման պահը տեսագրվում:

*Շատ հաճախ նման դեպքերում բացակայում է և՛ արձանագրությունը, և՛ տեսագրությունը:*

Կարգի 4-րդ կետի համաձայն թփերն ու խոտաբույսերը, բացառությամբ դեղաբույսերի, ոչնչացվում են Տեսչական մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից ստեղծված՝ 3 մարդուց բաղկացած հանձնաժողովի կողմից, որում ընդգրկված է նաև համապատասխան անտառտնտեսության ներկայացուցիչը: Ոչնչացման փաստն արձանագրվում է, իսկ ոչնչացման պահը՝ տեսագրվում, իսկ առգրավված դեղաբույսերը հանձնվում են ՀՀ առողջապահության նախարարությանը՝ ի տնօրինում:

**Տեսչության կողմից նման դեպքերում հանձնաժողով չի կազմվում, իսկ արձանագրություններն ու տեսագրությունները բացակայում են**

*Տեսչության կողմից նման դեպքերում հանձնաժողով չի կազմվում, իսկ արձանագրություններն ու տեսագրությունները բացակայում են:*

Կարգի 5-րդ կետի համաձայն դատական կարգով բռնագրավված ծառերը, ներառյալ փայտանյութը և օգտակար հանածոները, ենթակա են իրացման՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ օրենքով սահմանված կարգով: Իրացումից ստացված գումարը եռօրյա ժամկետում մուտքագրվում է ՀՀ պետական բյուջե:

Կարգի 7-րդ կետի համաձայն արձանագրությունները գրանցվում են գործերի վարույթի գրանցամատյանում, իսկ տեսագրությունները՝ պահվում ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում:

**Ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսները տնօրինվում են Կարգով սահմանված ընթացակարգերի էական խախտմամբ, իսկ գրանցամատյանում բացակայում է առգրավված բնական ռեսուրսները արձանագրված խախտման հետ համադրելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը և գրանցամատյանները վարվում են թերի**

*Փաստորեն, ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսները տնօրինվում են Կարգով սահմանված ընթացակարգերի էական խախտմամբ, իսկ գրանցամատյանում բացակայում է առգրավված բնական ռեսուրսները արձանագրված խախտման հետ համադրելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը և գրանցամատյանները վարվում են թերի: Մասնավորապես՝ բացակայում է արձանագրված խախտման տեսակը, այդ խախտման արձանագրության համարը և ամսաթիվը, առգրաված բնական ռեսուրսի տեսակը, արագ փչացող կենսառեսուրսի հանձնման-ընդունման արձանագրության համարը և ամսաթիվը, արագ փչացող կենսառեսուրսի մանկատուն, ծերանոց կամ թանգարան հանձնման անասնաբուժասանիտարական փորձաքննության ամսաթիվը և համարը, կենդանի վայրի կենդանիների ազատ արձակման արձանագրության և տեսագրության համարը, ամսաթիվը, թփերի և խոտաբույսերի ոչնչացման արձանագրության և տեսագրության համարը և ամսաթիվը, թփերի և խոտաբույսերի ոչնչացման հանձնաժողովի անդամների անուն/ազգանունները, մինչև աճուրդով իրացումը պահածքային բաժին ի պահ հանձնված դատական կարգով բռնագրաված օգտակար հանածոների, ծառերի, փայտանյութի քանակը, ամսաթիվը, առգրավված հողի բերրի շերտի քանակը և կազմված արձանագրության համարը, ամսաթիվը: Իսկ տեսագրությունները չեն պահվում Տեսչական մարմնում:*

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն առգրավված բնական ռեսուրսների իրացումից կամ դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցներից առաջացած գումարները մուտքագրվում են ՀՀ պետական բյուջե:

*Հետևաբար, Տեսչական մարմինը պետք է հետամուտ լինի ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների իրացմանը և ՀՀ պետական բյուջե մուտքագրմանը:*

Տեսչական մարմինը Կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով պարտավոր է մշակել և համապատասխան մարմիններին ներկայացնել իր

իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, դրանցում փոփոխություններ և լրացումներ, սակայն այդ գործառույթը չի իրականացրել:

Հարկ է նշել նաև, որ Կարգը սահմանում է ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների տնօրինման ընթացակարգերը, սակայն Տեսչական մարմինը, որպես պետական մարմին իրականացնում է նաև վարչարարություն՝ անձի դիմումների և բողոքների, ինչպես նաև վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա և դրա շրջանակներում ևս արձանագրում է խախտումներ ու դրա շրջանակներում հայտնաբերում և առգրավվում ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսներ, ուստի անհրաժեշտ է փոփոխություններ իրականացնել Կարգում՝ նկատի ունենալով վերոնշյալ հանգամանքը:

*Հավելենք, որ վերոնշյալի վերաբերյալ 03.11.2018թ. թիվ 9C61-4261-7234 գրությամբ պարզաբանում է պահանջվել Տեսչական մարմնից, որին, սակայն, Տեսչական մարմինը մինչ օրս չի պատասխանել:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննվող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը չի իրականացրել «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի է) կետի և 13-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետի դրույթները, այն է՝ Տեսուչի կողմից չեն իրականացվում առգրավված բնական ռեսուրսների, որսի, որսագործիքների և որսի գործիք համարվող այլ միջոցների՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված տնօրինման կարգի պահանջները:
2. Տեսչական մարմնի կողմից չեն իրականացվել Կարգի 2-րդ կետի պահանջները, այն է՝
    - փչացող առգրավված կենսառեսուրսներն անհատույց չեն հանձնվել տվյալ մարզի կամ համայնքի (կամ հարակից մարզի կամ համայնքի) մանկատներին, ծերանոցներին, թանգարաններին,
    - փչացող առգրավված կենսառեսուրսները, օրենքին չհամապատասխանող կարգով, որոշ դեպքերում հանձնվել են մանկապարտեզների, տուն ինտերնատների, հիվանդանոցների,
    - փչացող առգրավված կենսառեսուրսները հաստատություններին հանձնելու ժամանակ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման և ընդունող կազմակերպության ղեկավարների միջև չեն կազմվել հանձնման-ընդունման արձանագրություններ,
    - փչացող առգրավված կենսառեսուրսները հաստատություններին հանձնվել են առանց անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացության:
3. Տեսչական մարմնի գործունեությունը շատ դեպքերում չի համապատասխանել Կարգի 3-րդ կետի պահանջները, այն է՝ չի տեսագրվել Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման Տեսուչների կողմից առգրավված կենդանի վայրի կենդանիներ ազատ արձակելու պահը և չի կազմվել արձանագրություն:
4. Տեսչական մարմնի կողմից չեն պահպանվել են Կարգի 4-րդ կետի պահանջները, այն է՝ առգրավված թփերի ու խոտաբույսերի ոչնչացման համար չեն կազմվել հանձնաժողովներ, չի կազմվել արձանագրություն և չի տեսագրվել ոչնչացման պահը:

5. Տեսչական մարմնի կողմից չեն պահպանվել Կարգի 7-րդ կետի պահանջները, այն է՝ գրանցամատյանում բացակայում է առգրավված բնական ռեսուրսները արձանագրված խախտման հետ համադրելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ գրանցամատյանները վարվում են թերի:
6. Տեսչական մարմինը հետամուտ չի եղել ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների իրացումից կամ դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցներից առաջացած գումարները ՀՀ պետական բյուջե մուտքագրմանը, ինչը չի համապատասխանում«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների պահանջներին:
7. Տեսչական մարմինը չի կատարել Կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, դրանցում փոփոխություններ և լրացումներ մշակելու և համապատասխան մարմիններին ներկայացնելու իր գործառույթը, այն է՝ ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի «Ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների (ներառյալ՝ որսի) տնօրինման կարգը հաստատելու մասին» № 2168-Ն որոշման մեջ անհրաժեշտ է իրականացնել փոփոխություններ և սահմանել, որ ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսներ կարող են հայտնաբերվել և առգրավվել նաև վարչական վարույթի շրջանակներում:

## ***Առաջարկություններ***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Իրականացնել «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի է) կետի և 13-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետի դրույթները, այն է ՝ Տեսուչի կողմից պետք է իրականացվեն առգրավված բնական ռեսուրսների, որսի, որսագործիքների և որսի գործիք համարվող այլ միջոցների՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված տնօրինման կարգի պահանջները:
2. Իրականացնել Կարգի 2-րդ կետի պահանջները, այն է՝
   - փչացող առգրավված կենսառեսուրսներն անհատույց պետք է հանձնվեն տվյալ մարզի կամ համայնքի (կամ հարակից մարզի կամ համայնքի) մանկատներին, ծերանոցներին, թանգարաններին,
   - փչացող առգրավված կենսառեսուրսները չպետք է հանձնել մանկապարտեզներին, տուն ինտերնատներին, հիվանդանոցներին,
   - փչացող առգրավված կենսառեսուրսները հաստատություններին հանձնելու ժամանակ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման և ընդունող կազմակերպության ղեկավարների միջև պետք է կազմվեն հանձնման-ընդունման արձանագրություններ,

- փչացող առգրավված կենսառեսուրսները հաստատություններին հանձնել անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացության առկայության դեպքում:

3. Իրականացնել Կարգի 3-րդ կետի պահանջները, այն է՝ տեսագրել Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման Տեսուչների կողմից առգրավված կենդանի վայրի կենդանիներ ազատ արձակելու պահը և կազմել արձանագրություն:
4. Իրականացնել Կարգի 4-րդ կետի պահանջները, այն է՝ առգրավված թփերի ու խոտաբույսերի ոչնչացման համար կազմել հանձնաժողովներ, արձանագրություն և տեսագրել ոչնչացման պահը:
5. Իրականացնել Կարգի 7-րդ կետի պահանջները, այն է՝ գրանցամատյանում արձանագրեն առգրավված բնական ռեսուրսները արձանագրված խախտման հետ համադրելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ գրանցամատյանները վարվեն պատշաճ կարգով:
6. Հետամուտ լինել ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների իրացումից կամ դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցներից առաջացած գումարները ՀՀ պետական բյուջե մուտքագրմանը՝ համաձայն «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների:
7. Կատարել Կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, դրանցում փոփոխություններ և լրացումներ մշակելու և համապատասխան մարմիններին ներկայացնելու իր գործառույթը, այն է՝ ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի «Ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների (ներառյալ՝ որսի) տնօրինման կարգը հաստատելու մասին» № 2168-Ն որոշման մեջ իրականացնել փոփոխություններ և սահմանել, որ ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսներ կարող են հայտնաբերվել և առգրավվել նաև վարչական վարույթի շրջանակներում:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## X. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ և ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

*Տեսչական մարմնի կողմից 2017թ-ից 2018թ-ի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում վնասի հատուցման որոշումներով և բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական կամ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկներով հաշվարկվել է շուրջ **3,137,012.6** հազ.դրամ գումար, որից՝*

- նույն ժամանակահատվածի համար պետական բյուջե մուտքագրվել է շուրջ **168,406.2** հազ.դրամ գումար,
- ԴԱՀԿ ուղարկված գործերի գումարային արտահայտությունը կազմել է շուրջ **11,004.8** հազ.դրամ,
- Գումարի մնացած մասը դատախազության կողմից հարուցված քրեական գործերի շրջանակներում ներգրավված Տեսչական մարմնի Տեսուչների միջոցով՝ կենդանական կամ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկն է, որի հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկատվությանը տեսչական մարմինը չի տիրապետում:

Վնասի հատուցման չափի հաշվարկը ճշտելու համար հաշվեքննության խումբը 04. 12. 2018թ. -ի *ՀՊԵ-279 գրությամբ տեղեկատվություն է պահանջել ՀՀ գլխավոր դատախազությունից: Գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանը 28.12.201/թ.-ի 02/15/15555-18 գրությամբ տեղեկացրել է, որ քրեական գործերով Տեսչական մարմնի կողմից հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս՝ **3,319. 943. 66** հազ. դրամի չափով, որից մինչ օրս վերականգնվել է **47,416.69** հազ. դրամ գումար: Փաստացի տեսչական մարմինը և ՀՀ գլխավոր դատախազությունը տրամադրել են վնասի հատուցման իրարից տարբերվող գումարի չափեր:*

**Փաստացի տեսչական մարմինը և ՀՀ գլխավոր դատախազությունը տրամադրել են վնասի հատուցման իրարից տարբերվող գումարի չափեր**

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննվող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմնի անհետևողականության արդյունքում, համապատասխան մարմիններին (ՀՀ գլխավոր դատախազություն, ԴԱՀԿ և այլն) գրություններով հարցումներ չներկայացնելու հետևանքով վերահսկողությունից դուրս է մնացել պետական բյուջե վնասի հատուցման գումարների մուտքագրման հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը:
2. 2017թ-ից 2018թ-ի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում պետական բյուջե վնասի հատուցման շուրջ **3,137,012.6** հազ.դրամ գումարից մուտքագրվել է **168,406.2** հազ.դրամ գումար:

***Առաջարկություններ՝***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատաս-խանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Համագործակցել ՀՀ պետական այլ մարմինների հետ կենդանական կամ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման՝ պետական բյուջե գումարների մուտքագրման հետագա ընթացքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով:
2. Հետամուտ լինել 2017թ-ից 2018թ-ի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում պետական բյուջեի վնասի հատուցման շուրջ **3,137,012.6** հազ.դրամ գումարի պետական բյուջե մուտքագրմանը:

***Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան***

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատաս-խանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## XI.ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

Կանոնադրության 12-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված կարգով Տեսչական մարմինը պարտավոր է տնտեսավարող սուբյեկտի(ների) գործունեությանն առնչվող, տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող նոր իրավական ակտեր ընդունվելու կամ ուղեցույցներ հրապարակվելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում այդ մասին «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրազեկել տնտեսավարող սուբյեկտներին:

**Բնապահպանական հարկ վճարողները և բնօգտագործման վճար վճարողները ոչ բոլոր դեպքերում են Տեսչական մարմին ներկայացնում միասնական հարկային հաշվարկի հավելված**

ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի № 1291-Ն որոշմամբ հաստատված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգի 5-րդ կետի համաձայն բնապահպանական հարկ վճարողները և բնօգտագործման վճար վճարողները լրացնում են միասնական հարկային հաշվարկի հավելվածը (արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային

օդ վնասակար նյութերի արտանետման համար, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար, ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները տեղադրելու և (կամ) պահելու համար բնապահպանական հարկի և (կամ) բնօգտագործման վճարի), որը պետք է ներկայացնի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին՝ հաստատման: *Սակայն, բնապահպանական հարկ վճարողները և բնօգտագործման վճար վճարողները ոչ բոլոր դեպքերում են Տեսչական մարմին ներկայացնում միասնական հարկային հաշվարկի հավելված:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննվող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը պատշաճ չի իրականացրել տնտեսվարող սուբյեկտներին իրազեկելու գործառույթը, ինչը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնադրության 12-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթների պահանջներին:
2. Ոչ պատշաճ իրազեկման արդյունքում տնտեսավարող սուբյեկտների կողմից չի կատարվել ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի № 1291-Ն որոշմամբ հաստատված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգի 5-րդ կետի պահանջը, այն է՝ միասնական հարկային հաշվարկի հավելվածը հիմնականում չի ներկայացվել բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստատմանը:

## ***Առաջարկություններ՝***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Կատարել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնադրության 12-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթները, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի(ների) գործունեությանն առնչվող, տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող նոր իրավական ակտեր ընդունվելու կամ ուղեցույցներ հրապարակվելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում այդ մասին իրազեկել տնտեսավարող սուբյեկտներին:
2. Հետամուտ լինել, որպեսզի տնտեսավարող սուբյեկտների կողմից միասնական հարկային հաշվարկի հավելվածը ներկայացվի Տեսչական մարմնի հաստատմանը՝ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի № 1291-Ն որոշմամբ հաստատված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգի 5-րդ կետի պահանջի:

***Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան***

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## XII. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



*Նկար 2*

Տեսչական մարմնի լաբորատոր հետազոտությունների բաժինը (նախկինում՝ կենտրոնական լաբորատորիա) իրականացնում է լաբորատոր հետազոտություններ կատարելով ջրի, հողի, գազային միացությունների նմուշառում: Փորձանմուշներում կատարում է աղտոտիչ նյութերի և միացությունների ֆիզիկո-քիմիական անալիզներ և ստացված արդյունքները համեմատում գործող բնապահպանական նորմատիվների հետ, որն էլ հիմք է հանդիսանում շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկմանը: *Լաբորատորիան անալիտիկ հետազոտությունները և գազային միացությունների չափագրումը իրականացնում է 2006թ. նոյեմբերին համալրված շարժական էկոլոգիական սարքավորումներով, որոնց մի մասը թերկոմպլեկտավորված է և հնարավոր չէ շահագործել (Տե՛ս նկար 1), իսկ մյուս սարքավորումները փեխնիկապես մաշված են (Տե՛ս նկար 2): Տեսչական մարմնի լաբորատոր հետազոտությունների բաժնին պատկանող լաբորատոր*

**Թերկոմպլեկտավորված և չստուգաչափված սարքերը և սարքավորումները կասկածի տակ են դնում հետազոտությունների արդյունքների արժանահավատությունը**



*Նկար 1*

*սարքերը և սարքավորումները «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից ստուգաչափվել են և ուժի մեջ են մինչև 07.11.2018թ.: Պաշտոնական գրություններով «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնից 2017թ. հունվարի 1-ից 2018թ. սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածի համար պահանջված տեսչական մարմնում առկա լաբորատոր սարքերի և սարքավորումների, ինչպես նաև այդ սարքավորումների*

*ստուգաչափված կամ չստուգաչափված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը փաստում է, որ կան սարքեր և սարքավորումներ որոնք ստուգաչափված են բայց չեն աշխատում, կան նաև լաբորատորիայում գրանցված, սակայն չստուգաչափված սարքեր և սարքավորումներ:* 2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ-ի սեպտեմբերի 30-ը ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի լաբորատոր հետազոտությունների բաժնի աշխատակիցների կողմից տեսչական ստուգումներին և ստուգայցերին անմիջական մասնակցությամբ լաբորատոր հետազոտությունները իրականացվել են հիմնականում հետևյալ սարքերով և սարքավորումներով՝ (HACH DR/2400, КОЛИОН-1В – լաբորատորիա այցելության ժամանակ սարքին չէր, սակայն տրվել էր ստուգաչափման վկայական, ГАНК- 4, КРИСМАС – ինդիկատորային նմուշառիչ – ստուգաչափված չէ):

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննվող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Թերկոմպլեկտավորված և չստուգաչափված սարքերը և սարքավորումները կասկածի տակ են դնում հետազոտությունների արդյունքների արժանահավատությունը:
2. «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չստուգաչափված չափման միջոցների շահագործումն արգելվում է:

## *Առաջարկություններ՝*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Լաբորատորիան համալրել ստուգաչափված և ժամանակակից սարքավորումներով՝ շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկումը ճիշտ կատարելու և հետազոտությունների արդյունքների արժանահավատությունը ապահովելու նպատակով:
2. Ապահովել «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջները, այն է՝ շահագործումն իրականացնել միայն օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա ստուգաչափված չափման միջոցներով:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

***ՀՀ բնապահպանության նախարարություն՝***

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## XIII.ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տեսչական մարմինը Կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված կարգով պարտավոր է իրականացնել վիճակագրական տվյալների հավաքման, ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների վերլուծություն և վերահսկողական, հսկողական գործառույթների նպատակադրումը դեպի առավել ռիսկային ոլորտներն ու տնտեսավարող սուբյեկտներ: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1 հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը ստուգում իրականացնող մարմինների կողմից ստուգումների պլանավորման նպատակով իրականացվող միջոցառումների համալիր է: Ստուգում իրականացնող մարմինը՝ հետազոտելով իր վերահսկման ոլորտը, մշակում է տվյալ ոլորտում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշները, որոնք պետք է ներառեն տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտի ռիսկը և (կամ) տնտեսավարող սուբյեկտի անհատական ռիսկերի հանրագումարը:

**Տեսչական մարմինը չունի վերլուծած ռիսկերի գնահատման մեթոդաբանություն: Ռիսկերի գնահատման մեթոդաբանության նախագիծը 2017թ. դեկտեմբերին ներկայացվել է Կառավարության հաստատմանը, որը մինչ օրս չի հաստատվել**

*Սակայն Տեսչական մարմինը չունի վերլուծած ռիսկերի գնահատման մեթոդաբանություն: Ռիսկերի գնահատման մեթոդաբանության նախագիծը 2017թ. դեկտեմբերին ներկայացվել է Կառավարության հաստատմանը, որը մինչ օրս չի հաստատվել:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննվող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմնի կողմից պատշաճ չի ապահովվել վիճակագրական տվյալների հավաքման և վերլուծությունների, ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացումը և վերահսկողական ու հսկողական գործառույթների նպատակադրումը դեպի առավել ռիսկային ոլորտներն ու տնտեսավարող սուբյեկտները, ինչը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետի և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1 հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի դրույթների պահանջներին:
2. Տեսչական մարմինը չունի ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություն:

3. Ոլորտում ռիսկերի գնահատման մեթոդաբանության բացակայությամբ գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքներում ցուցաբերվել է կամայական մոտեցում:

## *Առաջարկություններ՝*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Ապահովել վիճակագրական տվյալների հավաքման և վերլուծությունների, ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացումը և վերահսկողական ու հսկողական գործառույթների նպատակաուղղումը դեպի առավել ռիսկային ոլորտներն ու տնտեսավարող սուբյեկտները՝ իրականացնելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետի և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1 հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի դրույթները:
2. Ունենալ ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություն:
3. Կամայական մոտեցում չցուցաբերել ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքները կատարելիս:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## XIV. ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ և ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ՝ ՀՀ-ԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀՀ ԴՐԱՆՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

**Գեղարքունիքի մարզի տարածքային բաժնի կողմից վերը նշված գործառույթի իրականացման վերաբերյալ տեղեկատվություն է պահանջվել, որին ի պատասխան հաշվեքննիչ խմբին պատասխանել են, որ հնարավոր չի եղել վերահսկողություն սահմանել, քանի որ իրենց հայտնի չէ մաքսատան հետ աշխատելու որևէ մեխանիզմ**

Կանոնադրության 11-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն տեսչական մարմինն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, այդ թվում՝ կիրառում է պատասխանատվության միջոցներ վայրի կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների՝ ՀՀ-ից արտահանման, ՀՀ դրանց ներմուծման սահմանված պահանջների պահպաման նկատմամբ:

*Գեղարքունիքի մարզի տարածքային բաժնի կողմից վերը նշված գործառույթի իրականացման վերաբերյալ տեղեկատվություն է պահանջվել, որին ի պատասխան հաշվեքննիչ խմբին պատասխանել են, որ հնարավոր չի եղել վերահսկողություն սահմանել, քանի որ իրենց հայտնի չէ մաքսատան հետ աշխատելու որևէ մեխանիզմ:*

Գեղարքունիքի մարզի տարածքում 2017թ. արձանագրվել են Սևանա լճից խեցգետնի ապօրինի որսի 7 և Սիգ տեսակի ձկան ապօրինի որսի 4 դեպքեր: 2018թ. արձանագրվել են խեցգետնի ապօրինի որսի 2 և Սիգ տեսակի ձկան ապօրինի որսի 1 դեպք: Սակայն Տեսչության կողմից տրամադրված առգրավված բնական ռեսուրսների գրանցամատյանի (այսուհետ՝ Գրանցամատյան) տվյալներից ելնելով վերոնշյալ տվյալները չեն համապատասխանում իրականությանը: 2017թ. -ի Գրանցամատյանում գրանցված է Սիգ տեսակի ձկան և խեցգետնի ապօրինի որսի հայտնաբերման վերաբերյալ 27 դեպք, իսկ 2018թ. -ին Գրանցամատյանում գրանցված է Սիգ տեսակի ձկան և խեցգետնի ապօրինի որսի հայտնաբերման վերաբերյալ 29 դեպք: Սակայն այս գործերով վարչական վարույթ չի հարուցվել:

Հարկ է նշել նաև, որ Տեսչության կողմից 2017թ. 17 դեպքով 1118 հատ ձուկ՝ 250,5կգ ընդհանուր քաշով ճանաչվել են տիրազուրկ, իսկ 2018թ.-ին 21 դեպքով 4022 հատ ձուկ՝ 1109 կգ ընդհանուր քաշով, 124 հատ խեցգետին՝ 4,5կգ ընդհանուր քաշով ճանաչվել են տիրազուրկ: Սակայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն տիրազուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից, իսկ 179-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դեն նետված այլ գույքն անցնում է այն տիրապետող անձի սեփականությանը, եթե այդ անձի դիմումի հիման վրա դատարանը գույքը ճանաչում է տիրազուրկ: Հետևաբար, գույքը կարող է տիրազուրկ ճանաչվել միայն դատարանի որոշմամբ օրենքով սահմանված ընթացակարգով, և Տեսչական մարմինը իրավասու չէր ապօրինի որսի ժամանակ հայտնաբերված ձկներն ու խեցգետինները գրանցամատյանում գրանցել որպես տիրազուրկ գույք:

Տեղեկատվություն է պահանջվել նաև Կենսառեսուրսների կառավարման գործակալության Կենդանական ռեսուրսների կառավարման բաժնից, ինչին ի պատասխան հայտնվել է, որ 2010թ.-ից առ այսօր Կենսառեսուրսների կառավարման գործակալության կողմից սիգ ձկնատեսակի համար բնական կենդանական պաշարների օգտագործման պայմանագրեր չեն ձևակերպվել:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննվող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմնի կողմից հայտնաբերված շարժական գույքը՝ ձկներն ու խեցգետինը, տիրազուրկ է ճանաչվել օրենքին չհամապատասխանող կարգով:
2. Տեսչական մարմնի Գեղարքունիքի մարզի տարածքային բաժնի կողմից ձկների և խեցգետնի մասին տրամադրված տեղեկատվությունը չի համապատասխանում բնական ռեսուրսների գրանցամատյանում լրացված տեղեկատվության հետ:
3. Տեսչական մարմնի կողմից չի իրականացվել Կանոնադրության 11-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերության դրույթները, այն է՝ չեն կիրառվել պատասխանատվության միջոցներ վայրի կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների՝ ՀՀ-ից արտահանման, ՀՀ դրանց ներմուծման սահմանված պահանջների պահպաման նկատմամբ:

## ***Առաջարկություններ՝***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Տեսչական մարմնի կողմից հայտնաբերված շարժական գույքը՝ ձկներն ու խեցգետինը, տիրազուրկ ճանաչել միայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:
2. Բնական ռեսուրսների գրանցամատյանը պատշաճ վարել, որպեսզի Տեսչական մարմնի կողմից տրված ձկների և խեցգետնի մասին տեղեկատվությունը համապատասխանի գրանցամատյանում լրացված տեղեկատվության հետ:
3. Իրականացնել Կանոնադրության 11-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերության դրույթները, այն է՝ կիրառել պատասխանատվության միջոցներ վայրի կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների՝ ՀՀ-ից արտահանման, ՀՀ դրանց ներմուծման սահմանված պահանջների պահպաման նկատմամբ:

## ***Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան***

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետում չի ներկայացվել առարկություններ և բացատրություններ՝ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված

անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների, ինչպես նաև այլ տեղեկատվության վերաբերյալ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## XV.ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱԿԱՐԳ

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների համաձայն ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունները՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պետք է ունենան ներքին աուդիտի համակարգ: Ներքին աուդիտի համակարգը, համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, ներքին աուդիտի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, պահանջների և ներքին աուդիտի մասնակիցների իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է: Ավելին, «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական մարմնի գործունեությունը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելով՝ ներքին աուդիտը պետք է աջակցի պետական մարմնին հասնել իր նպատակներին՝

1) օժանդակելով պետական մարմնի ղեկավարին՝ պետական մարմնում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում.

2) գնահատելով ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետությունը և համապատասխանությունը հետևյալ պայմաններին՝

ա. պետական մարմնի ղեկավարության կողմից ռիսկերի բացահայտում, գնահատում և կառավարում,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և պետական մարմնի գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանություն,

գ. տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,

դ. տեղեկությունների վստահելիություն և ամբողջականություն,

ե. կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն,

զ. առաջադրանքների կատարում և նպատակների իրագործում:

*Ելնելով վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ ներքին աուդիտի համակարգը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործընթացների ամբողջություն է, որն ուղղված է պետական մարմնի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է պետական մարմնին հասնել իր նպատակներին՝ պետական մարմնի ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:*

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի դրույթների համաձայն Հաշվեքննիչ պալատն իրավասու է ուսումնասիրելու իր կողմից հաշվեքննվող մարմինների ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը:

**Տեսչական մարմինը հայտնել է, որ մարմնում առկա չէ ներքին աուդիտի համակարգ**

Սակայն, հաշվեքննող խմբի 2018թ. դեկտեմբերի 19-ի ՀՊԵ-ԱՄ-195 գրությանն ի պատասխան Տեսչական մարմինը հայտնել է, որ մարմնում առկա չէ ներքին աուդիտի համակարգ:

«Տեսչական մարմինների մասին»ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմինը Կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է: Սույն օրենքը ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից, հետևաբար Տեսչական մարմինն այդ օրվանից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը 2018թ. ապրիլի 9-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ:

## *Առաջարկություններ՝*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Մշակել և ներդնել ներքին աուդիտի համակարգ՝ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ բնապահպանության նախարարություն՝**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկությունը, այն է՝ մինչև 2018թ.-ի հունիսի 11-ը Տեսչական մամինը գտնվել է ՀՀ ԲՆ կազմում, որտեղ գործել է ներքին ուդիտի բաժին, Հաշվեքննության խմբի կողմից ընդունվել է :

# ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

## I. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

2018 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 9/2 որոշմամբ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջան է սահմանվել 2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. սեպտեմբերի 30-ը: Հաշվեքննության առաջադրանքի իրականացման ընթացքում, պարզվեց, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) ձևավորվել է ՀՀ կառավարության 27.04.2017թ. N 444-Ն որոշման համաձայն, որի 3-րդ կետով սահմանվել է Տեսչական մարմնի ձևավորման քառամսյա ժամկետ, իսկ ՀՀ վարչապետի 11.06.2018թ. N 755-Լ որոշմամբ ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը վերակազմավորվել է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի:

ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը ձևավորվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության լուծարման արդյունքում: Լուծարված պետական տեսչության կողմից սկսված և չավարտված վարչական, դատական և այլ գործառույթների իրականացման հետագա ընթացքի ապահովումը ՀՀ կառավարության 27.04.2017 թ. N 444-Ն որոշման 8-րդ կետի համաձայն վերապահվել է ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնին (հետագայում՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին):

**Տեսչական մարմինը պետք է ամբողջությամբ ձևավորված լիներ քառամսյա ժամկետում՝ մինչև 2017 թվականի օգոստոսի 27-ը և ունենար հաստատված տարեկան ծրագիր, հաստատված ստուգաթերթեր, մեթոդաբանություն, իրավական ակտերում կատարեին համապատասխան փոփոխություններ և այլն**

*Տեսչական մարմինը պետք է ամբողջությամբ ձևավորված լիներ քառամսյա ժամկետում՝ մինչև 2017 թվականի օգոստոսի 27-ը և ունենար հաստատված տարեկան ծրագիր, հաստատված ստուգաթերթեր, մեթոդաբանություն, իրավական ակտերում կատարեին համապատասխան փոփոխություններ և այլն:*

*«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է վարչապետի աշխատակազմի միջոցով՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերի շրջանակում: Հարկ է նշել, որ նշված ձևակերպումն ուժի մեջ է մտել 2018թ. -ի ապրիլի 9-ից՝ համաձայն ՀՕ-267-Ն օրենքի 11-րդ հոդվածի, սակայն «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում այդպես էլ չի կատարվել համապատասխան փոփոխություն և ֆինանսավորումը շարունակվել է կատարվել նախարարության միջոցով:*

Տեսչական մարմնի հաստիքային միավորներ վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ) և Տեսչական մարմնի կողմից ներկայացվել են իրար

հակասող տվյալներ: ՀՀ ԱՆ-ի կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն Տեսչական մարմինն ունի 280 հաստիքային միավոր, որից՝ 90-ը թափուր, իսկ Տեսչական մարմնի կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն Տեսչական մարմինը կարող է ունենալ առավելագույն 280 հաստիքային միավոր, որից 98-ը թափուր են:

2017թ.-ին Տեսչական մարմնի պահպանման ծախսերը փաստացի կազմել են **736,783.1** հազ. դրամ, իսկ 2018թ.-ի 9 ամիսների համար՝ **380,217.5** հազ. դրամ:

Տեսչական մարմնի կողմից 2017թ. նշանակված տուգանքներ չեն եղել, քանի որ Տեսչական մարմնի կողմից 2017թ.-ին չեն իրականացվել ստուգումներ և վարչական վարույթներ: 2018թ.-ին հաշվարկվել է **48,325. 0** հազ. դրամի տուգանք, որից պետական բյուջե մուտքագրվել է **1,470.0** հազ. դրամը:

Տեսչական մարմնի տարածքային բաժինների կողմից աշխատանքային տարածքների մեծ մասը զբաղեցվում են վարձակալական հիմունքներով: 2017-2018թթ. ընթացքում վարձակալական հիմունքներով զբաղեցված աշխատանքային տարածքների վճարման վերաբերյալ ՀՀ ԱՆ-ի և Տեսչական մարմնի կողմից ներկայացվել են իրար հակասող տվյալներ: ՀՀ ԱՆ-ի կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն 2017-2018թթ. -ի համար վճարվել է **15,176. 0** հազ. դրամ, իսկ Տեսչական մարմնի կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն՝ **8,547.5** հազ. դրամ վարձավճար:

Տեսչական մարմնի տրամադրության տակ կան 8 տրանսպորտային միջոցներ: 2018թ. -ին տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման համար կատարվել է **1,057. 8** հազ. դրամի ծախս, որից միայն **399,0** հազ.դրամը Հյուսիսային տարածքային կենտրոնի պետին կցագրված «Շեվրոլե Նիվա» ավտոմեքենայի համար:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինն ամբողջությամբ չի ձևավորվել ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 27-ի N 444-Ն որոշման 3-րդ կետով սահմանված քառամսյա ժամկետում:
2. Տեսչական մարմինը 2017-2018թթ. համար չի ունեցել գործունեության տարեկան ծրագրեր:
3. Տեսչական մարմինը 2017թ.-ին պետական բյուջե գումար չի մուտքագրել.:
4. Տեսչական մարմինը 2018թ.-ի ապրիլ ամսից իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը շարունակել է իրականացնել ՀՀ բնապահպանության նախարարության միջոցով, որը հանդիսանում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի հետ անհամապատասխանություն:

## *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետի համաձայն օրենքով սահմանված ժամկետներում հաստատել գործունեության տարեկան ծրագրերը:
2. Հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացնել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, այն է՝ տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է վարչապետի աշխատակազմի միջոցով:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

## *II.ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ*

ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության 2017թ-ի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված է եղել թվով 950 տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումներ: Տեսչական մարմինը 2017թ.-ին չի իրականացրել այդ ստուգումները՝ չնայած ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության լուծարման պահից՝ սկսված և չավարտված վարչական, դատական և այլ գործառույթների իրականացման հետագա ընթացքի ապահովումը վերապահվել էր Տեսչական մարմնին:

*ՀՀ կառավարության 2015թ. -ի հուլիսի 30-ի № 839-Ա որոշման 1-ին կետի համաձայն Տեսչական մարմինը 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ստուգումներ կարող էր իրականացնել միայն այդ որոշման հավելվածով հաստատված ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և բարձր ռիսկային խմբում գտնվող սուբյեկտների մոտ՝ թիվ 26 (հանրակրթական դպրոցների) և 27 (նախադպրոցական կազմակերպությունների) ստուգաթերթերով, որոնք չի իրականացրել:*

**2018թ.-ի համար Տեսչական մարմինը չի ունեցել ստուգումների տարեկան ծրագիր, ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանություն և ստուգաթերթեր**

*2018թ.-ի համար Տեսչական մարմինը չի ունեցել ստուգումների տարեկան ծրագիր, ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանություն և ստուգաթերթեր:*

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքից և այլ իրավական ակտերից, իսկ «Տեսչական մարմինների

մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետի և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) 19-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն Տեսչական մարմնի ղեկավարը ստուգում իրականացնելու վերաբերյալ տալիս է հրաման կամ հանձնարարագիր, ինչպես նաև ստուգումների արդյունքների հիման վրա կիրառում է պատասխանատվության միջոցներ՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն բոլոր ստուգումները անցկացվում են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատում է ՀՀ կառավարությունը:

Տեսչական մարմինը ստուգում իրականացնում է ստուգման տարեկան ծրագրի հիման վրա, որը Կանոնադրության 15-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն տեսչական մարմնի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է Տեսչական մարմնի կառավարման խորհուրդը: Խորհուրդը հաստատում է նաև Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիրը, գործունեության տարեկան ծրագրում ներառվում են տեսչական մարմնի կողմից իրականացվելիք իրազեկման, խորհրդատվական և բացատրական աշխատանքները:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմնի կողմից 2017-2018թթ.. ստուգումներ չեն իրականացվել ստուգումների տարեկան ծրագրեր, ստուգումների մեթոդաբանություն և ստուգաթերթեր չունենալու պատճառով :
2. Տեսչական մարմինը ՀՀ կառավարության 27.04.2017 թ. N 444-Ն որոշման 3-րդ կետով սահմանված քառամսյա ժամկետում չի իրականացրել մարմնի ձևավորման համար անհրաժեշտ գործառույթները, այն է՝ չի մշակել տեսչական մարմնի գործունեության և իրականացվող ստուգումների տարեկան ծրագրերը, ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանություն, ստուգաթերթեր, իրավական ակտերում չեն կատարվել համապատասխան փոփոխություններ և այլն:
3. Տեսչական մարմինը չի ապահովել ՀՀ կառավարության 27.04.2017թ. N 444-Ն որոշման 8-րդ կետով սահմանված լուծարված պետական տեսչությունների կողմից սկսված և չավարտված վարչական, դատական և այլ գործառույթների իրականացման հետագա ընթացքը և չի իրականացրել ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված թվով 950 տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումները:
4. Տեսչական մարմինը չի իրականացրել ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 30-ի № 839-Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված այդ որոշման հավելվածով հաստատված ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և բարձր ռիսկային խմբում գտնվող սուբյեկտների մոտ ստուգումները՝ թիվ 26 (հանրակրթական դպրոցների) և 27 (նախադպրոցական կազմակերպությունների) ստուգաթերթերով:

## *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Օրենքով սահմանված ժամկետներում հաստատել Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրերը:
2. Սահմանված ժամկետներում մշակել և Կառավարության հաստատմանը ներկայացնել Տեսչական մարմնի ստուգաթերթերը:
3. Ստուգումներ իրականացնել հաստատված բոլոր ստուգաթերթերով, որպեսզի Տեսչական մարմնի Կանոնադրությամբ հաստատված վերահսկողության յուրաքանչյուր ոլորտ լինի մշտական հսկողության ներքո:
4. Օրենքով սահմանված ժամկետներում մշակել և համապատասխան մարմնի հաստատմանը ներկայացնել «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների» մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշները:
5. Օրենքով սահմանված ժամկետներում մշակել և համապատասխան մարմիններին ներկայացնել իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր:

**ՀՀ կառավարությանը՝**

1. Սահմանված ժամկետներում հաստատել Տեսչական մարմնի ստուգաթերթերը, ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշները:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

# III. *ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ*

**Տեսչական մարմնի կողմից 2017թ.-ին վարչական վարույթներ չեն հարուցվել**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը.

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

*Վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին): 2018թ. սեպտեմբերի 20-ի դրությամբ իրականացվել են դիմում-բողոքի հիման վրա՝ 76, սեփական նախաձեռնությամբ՝ 83 վարչական վարույթներ:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմնի կողմից 2017թ. -ին վարչական վարույթներ չի հարուցվել:

## *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Հետևամուտ լինել դիմում-բողոքների կամ սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթների պատշաճ իրականացմանը:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

## IV. ՀՀ ԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԵՎ ԳՈՒՅՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

**Տեսչական մարմինը 2017թ.-ին սահմանված կարգի համաձայն գույքագրում չի իրականացրել**

**ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության և Տեսչական մարմնի միջև տեղի չի ունեցել գույքի հանձնում-ընդունում**

ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի 2018թ.-ի նոյեմբերի 28-ի ՀՀ/11-2/17319-18 գրության համաձայն ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության լուծարումից հետո առ այսօր ՀՀ ԱՆ-ի կողմից տեսչության գույքի, այդ թվում՝ փաստաթղթերի գույքագրում չի իրականացվել: «ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները» սահմանելու մասին 08. 01. 2016թ. -ի N 2-Ն հրամանի 6-րդ կետի համաձայն տարեկան ֆինանսական հաշվետվություններ կազմելուց առաջ պարտադիր գույքագրման ենթակա են կազմակերպության բոլոր ակտիվներն ու պարտավորությունները: *Տեսչական մարմինը 2017թ.-ին վերը նշված կարգի համաձայն գույքագրում չի իրականացրել:*

*ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության և Տեսչական մարմնի միջև տեղի չի ունեցել գույքի հանձնում-ընդունում:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ. -ի հունվարի 1-ից 2018թ. -ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության լուծարումից հետո առ այսօր ՀՀ ԱՆ-ի կողմից տեսչության գույքի, այդ թվում՝ փաստաթղթերի գույքագրում չի իրականացվել, ինչը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի «ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները» սահմանելու մասին 08. 01. 2016թ. -ի N 2-Ն հրամանի 7-րդ կետին, այն է՝ կազմակերպության վերակազմակերպման և լուծարման դեպքերում պարտադիր գույքագրման ենթակա են կազմակերպության բոլոր ակտիվներն ու պարտավորությունները:
2. ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության և Տեսչական մարմնի միջև տեղի չի ունեցել գույքի հանձնում-ընդունում:
3. Տեսչական մարմինը 2017թ. -ին չի իրականացրել պարտադիր գույքագրում «ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները» սահմանելու մասին 08. 01. 2016թ. -ի N 2-Ն հրամանի 6-րդ կետի համաձայն, այն է՝ տարեկան ֆինանսական հաշվետվություններ կազմելուց առաջ պարտադիր գույքագրման ենթակա են կազմակերպության բոլոր ակտիվներն ու պարտավորությունները:

## *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. ՀՀ ԱՆ-ի հետ ստորագրել ՀՀ ԱՆ աշխատակազմի լուծարված առողջապահական պետական տեսչության փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտ:
2. Իրականացնել կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների ամենամյա պարտադիր գույքագրում:

**ՀՀ Առողջապահության նախարարությանը՝**

1. Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման դեպքերում իրականացնել կազմակերպության բոլոր ակտիվների ու պարտավորությունների պարտադիր գույքագրում:
2. Համեմատել Տեսչական մարմնի կողմից կատարված գույքագրումը ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության մինչև լուծարումը կատարված վերջին գույքագրման հետ՝ հնարավոր անհամապատասխանություններից խուսափելու նպատակով:

**Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակին՝**

1. Հետամուտ լինել ՀՀ ԱՆ-ի և Տեսչական մարմնի միջև գույքի և փաստաթղթերի հանձնման-ընդունման, գույքագրման գործընթացների պատշաճ իրականացմանը:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

## *V.«ԶՎԱՐԹՆՈՑ>> ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿԻՉ ԿԵՏՈՒՄ ԱՌԿԱ ՀԵՌԱՀԱՐ ՋԵՐՄԱՉԱՓՄԱՆ ՍԱՐՔԵՐ-ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ*



*Նկար 4*

Տեսչական մարմնի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում առկա են հեռահար ջերմաչափման թանկարժեք սարքավորումներ: «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետում առկա են երկու ստացիոնար՝ յուրաքանչյուրը **38,416,9** հազ. դրամ և երկու տեղափոխելի ջերմաչափեր՝ յուրաքանչյուրը **22,473,1** հազ. դրամ արժողությամբ, որոնք ձեռք են բերվել 2016թ.-ի դեկտեմբերի 12-ին ԵԱՏՄ-ի շրջանակներում: «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ժամանման սրահում տեղակայված հեռահար ջերմաչափման ստացիոնար սարքերից մեկը (Տե՛ս նկար 3) տեղադրված է եղել 2017թ. -ի ամռանը: ***Տեղադրման հաջորդ օրվանից առաջացել են ծրագրային խնդիրներ և ստացիոնար սարքը այլևս չի օգտագործվել:*** Ջերմաչափումը իրականացվում է տեղափոխելի հեռահար ջերմաչափերով(Տե՛ս նկար 4): ՀՀ ԱՆ-ի կողմից ստացված տեղեկատվության համաձայն սարքերը գտնվել են երաշխիքային սպասարկման մեջ և Տեսչական մարմնի կողմից սարքերի անսարքության մասին պատշաճ չիրազեկվելու հետևանքով ՀՀ ԱՆ-ի կողմից չի կազմակերպվել սարքերի սպասարկումը:



*Նկար 3*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ. -ի հունվարի 1-ից 2018թ. -ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի յուրաքանչյուրը **38,416,9** հազ. դրամ արժողությամբ հեռահար ջերմաչափման ստացիոնար սարքերը, գտնվելով երաշխիքային սպասարկման մեջ, մինչ օրս չեն աշխատում:

### ***Առաջարկություններ***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Հետամուտ լինել ջերմաչափման ստացիոնար սարքերի գործարկմանը և օգտագործմանը: Անսարքությունների դեպքում համագործակցել ՀՀ ԱՆ-ի հետ սարքերի երաշխիքային սպասարկումը կազմակերպելու համար:

*Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

## VI.ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված բազմաթիվ դրույթների նկատմամբ Տեսչական մարմինը վերահսկողական լիազորություն չունի**

ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը ձևավորվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության լուծարման արդյունքում, որը վերակազմակերպվել էր ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչության միաձուլման հետևանքով:

*Արդյունքում ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված բազմաթիվ դրույթների նկատմամբ Տեսչական մարմինը վերահսկողական լիազորություն չունի:*

Տեսչության կողմից կատարվում են միայն աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նորմերի կիրառման նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով վերահսկողության իրականացում, նշված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը, իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացումը, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացումը.

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ. -ի հունվարի 1-ից 2018թ. -ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից իրականացվելիք վերահսկողական գործառույթների մեծ մասը չեն ներառվել Տեսչական մարմնին վերապահված վերահսկողական գործառույթների մեջ: Օրինակ՝
   - Կազմակերպությունների մասնավորեցման և լուծարման ընթացքում աշխատողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողության իրականացում.

- Կոլեկտիվ պայմանագրերով (համաձայնագրերով) նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով խախտված իրավունքների վերականգնման համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկում.
- գործատուի կողմից չձևակերպված աշխատող պահվելու կամ աշխատավարձ չհաշվարկվելու և (կամ) չվճարվելու դեպքեր հայտնաբերելիս՝ կենսաթոշակային սոցիալական ապահովագրություն իրականացնող լիազոր մարմին դրանց մասին տեղեկացում.
- քաղաքացիների աշխատանքային իրավունքների խախտման մասին դիմումների և բողոքների քննարկում և այլն:

## *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**ՀՀ Կառավարություն՝**

1. ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից իրականացվելիք վերահսկողական գործառույթները ներառել Տեսչական մարմնին վերապահված վերահսկողական գործառույթների մեջ՝ Տեսչական մարմնի ենթաօրենսդրական իրավական ակտերում կատարելով համապատասխան փոփոխություններ:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

# VII. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԻՐԱԶԵԿԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

**Տեսչական մարմնի կողմից խորհրդատվության և իրազեկման գործառույթն իրականացնելիս մի շարք դեպքերում խորհրդատվության և իրազեկման փոխարեն իրականացվել են փաստացի ստուգումներ**

Կանոնադրության 11-րդ կետի 15-րդ ենթակետով Տեսչական մարմնի լիազորություններից է հանդիսանում տնտեսվարող սուբյեկտներին իրենց գործունեությանն առնչվող, իրենց իրավասությանը վերաբերող նոր իրավական ակտեր ընդունվելու կամ ուղեցույցներ հրապարակվելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում իրազեկելու պարտավորություն:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, հաշվարկների, եկամտային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին: Ավելին, նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետի դրույթների համաձայն բոլոր ստուգումները, անցկացվում են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատում է ՀՀ կառավարությունը:

*Սակայն Տեսչական մարմնի կողմից խորհրդատվության և իրազեկման գործառույթն իրականացնելիս մի շարք դեպքերում խորհրդատվության և իրազեկման փոխարեն իրականացվել են փաստացի ստուգումներ, որը չի համապատասխանում ոչ միայն «Տեսչական մարմինների մասին» այլև «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքների պահանջներին:* Օրինակ՝ Տեսչական մարմնի ղեկավարի 13.03.2018թ.-ի 51-Ա հրամանով Երևան քաղաքի տարածքային կենտրոնի կողմից ք. Երևան Մաշտոցի 20 հասցեում գործող «Կանաչ դեղատուն» դեղատնային կրպակում խորհրդատվություն և իրազեկում իրականացնելիս կատարվել է այսպես ասած «հսկիչ» գնում՝ հայտնաբերելով և արձանագրելով խախտում, այն է՝ դեղատան աշխատակցից առանց դեղատոմսի պահանջվել և ստացվել են դեղեր, որոնց վաճառքի համար դեղատոմսի առկայությունը պարտադիր էր:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմնի կողմից խորհրդատվության և իրազեկման գործառույթն իրականացնելու փոխարեն մի շարք դեպքերում կատարվել են փաստացի ստուգումներ, ընդ որում, առանց ստուգաթերթերի:

## *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Ստուգումներ իրականացնել միայն հաստատված ստուգաթերթերով:
2. Խորհրդատվության և իրազեկման գործառույթ իրականացնելու անվան տակ զերծ մնալ փաստացի ստուգումներ և ստուգման գործառույթներ իրականացնելուց:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

## VIII.ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ

Կանոնադրություն 28-րդ կետի համաձայն Տեսչական մարմինն ունի 12 տարածքային ստորաբաժանում՝

- Հյուսիս-արևելյան տարածքային կենտրոն – Տավուշի, Գեղարքունիքի մարզեր /26 հաստիք/
- Հարավային տարածքային կենտրոն – Արմավիր, Արարատի մարզեր /26 հաստիք/
- Հյուսիսային տարածքային կենտրոն – Շիրակի, Արագածոտնի, Լոռու մարզեր /46 հաստիք/
- Արևելյան տարածքային կենտրոն – Վայոց Ձորի, Սյունիքի մարզեր /20 հաստիք/
- Մեղրիի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ /9 հաստիք/
- Բավրայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ /10 հաստիք/
- «Շիրակ» օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ / 5 /հաստիք
- Բագրատաշենի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ /9 հաստիք/
- Այրում-Ջիլիզայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ /5 հաստիք/
- Գոգավան-Պրիվոլնոյեի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ /9 հաստիք/
- Երևան քաղաքի տարածքային կենտրոն – ք. Երևան, Կոտայքի մարզ / 41 հաստիք/
- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ /9 հաստիք/

**Կառուցվածքային ստորաբաժանումները մինչ օրս չունեն կանոնադրություններ**

*Կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է Տեսչական մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները: Կառուցվածքային ստորաբաժանումները մինչ օրս չունեն կանոնադրություններ:*

Տեսչական մարմնի 2018թ.-ի 214-Ա, 223-Ա, 228-Ա հրամաններով Տեսչական մարմնի կենտրոնական ապարատի չորս աշխատակիցներ գործուղվել են Գեղարքունիքի, Տավուշի, Սյունիքի, Շիրակի և Վայոց Ձորի մարզեր խորհրդատվության և իրազեկման գործառույթներ իրականացնելու նպատակով՝ ստանալով գործուղման ծախս, տրասպորտային միջոց և վառելիք, մինչդեռ այդ գործառույթները առավել նպատակահարմար կլիներ իրականացնել համապատասխան տարածքային ստորաբաժանումների կողմից:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմնի կողմից թույլ է տրվել անհամապատասխանություն Կանոնադրության 29-րդ կետի պահանջների հետ, այն է՝ կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է Տեսչական մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:
2. Կառուցվածքային ստորաբաժանումները մինչ օրս չունեն կանոնադրություն:
3. ՀՀ մարզերում խորհրդատվության և իրազեկման գործառույթներն իրականացվել են ոչ թե Տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանումների, այլև Երևանից գործուղված աշխատակիցների կողմից :

## *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Սահմանել Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:
2. ՀՀ մարզերում խորհրդատվության և իրազեկման գործառույթները իրականացնել Տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների կողմից՝ անարդյունավետ ծախսերից՝ գործուղման ծախս, տրասպորտային միջոց, վառելիք և այլն, խուսափելու համար:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

## *IX.ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ «ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ>> ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ*

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթների համաձայն ուսումնասիրությունը տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների հիման վրա, ստուգում իրականացնող մարմնում այդ մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է: Հետևաբար, ակնհայտ է

**Տեսչական մարմնի կողմից իրականացվել է «ուսումնասիրություն» գործառույթ, ինչի լիազորությունը կանոնադրությամբ Տեսչական մարմինը չունի**

դառնում, որ ուսումնասիրությունը մի գործընթաց է, որ իրականացվում է զուտ ստուգման շրջանակներում: «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին 1.1 կետի և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասին 1-ին կետի համաձայն ստուգումները կարելի է իրականացնել միայն հաստատված ստուգման ծրագրերի, ստուգաթերթերի հիման վրա և դրանից դուրս ցանկացած ուսումնասիրություն կամ ստուգում հանդիսանում է օրենքի խախտում:

*Տեսչական մարմնի կողմից իրականացվել է «ուսումնասիրություն» գործառույթ, ինչի լիազորությունը կանոնադրությամբ Տեսչական մարմինը չունի:* Օրինակ՝ Տեսչական մարմնի ղեկավարի 08.02.2018թ.-ի 20-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ բժշկական սպասարկման և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտներում ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջների հնարավոր խախտումները կանխելու և հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ուսումնասիրություն իրականացնելու նպատակով:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ. -ի հունվարի 1-ից 2018թ. -ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը կանոնադրությամբ ուսումնասիրություն կատարելու իրավասություն չունի, սակայն կատարել է:
2. Տեսչական մարմնի կողմից կատարվել է ստուգման գործառույթի մաս հանդիսացող ուսումնասիրություն ստուգման ծրագրի և ստուգաթերթերի բացակայության պայմաններում, ինչը չի համապատասխանում «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին 1.1 կետի և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքների 7-րդ հոդվածի 7-րդ մասին 1-ին կետի դրույթների պահանջներին:

## *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Տեսչական մարմինը պետք է ուսումնասիրություններ կատարի միայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենների շրջանակներում և զերծ մնա ուսումնասիրությունների անվան տակ փաստացի ստուգումներ կատարելուց:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

## X.ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ և ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊՈԱԿ-Ի ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն Տեսչական մարմինը վերահսկողության շրջանակներում սանիտարահիգիենիկ փորձաքննության ու լաբորատոր հետազոտություններ կատարելու նպատակով իրականացնում է նմուշառում և գործիքային չափումներ: *Սակայն, Տեսչական մարմնի այս լիազորությունը իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով՝ պետական պատվերի շրջանակներում:* Տեսչական մարմնի աշխատանքներին ներգրավվում են ՊՈԱԿ-ի փորձագետներ, որոնք իրենց գործիքներով նմուշառում են կատարում և իրականացնում են համապատասխան լաբորատոր հետազոտություններ՝ արդյունքների մասին գրավոր տեղեկացնելով Տեսչական մարմնին:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը չի կատարում սանիտարահիգիենիկ փորձաքննության ու լաբորատոր հետազոտություններ կատարելու նպատակով նմուշառում և գործիքային չափումներ իրականացնելու իր գործառույթը՝ համապատասխան գործիքներ և մասնագետներ չունենալու պատճառով:

### *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանված վերահսկողության շրջանակներում սանիտարահիգիենիկ փորձաքննության ու լաբորատոր հետազոտություններ կատարելու նպատակով իրականացնել նմուշառում և գործիքային չափումներ:

**Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակին՝**

1. Տեսչական մարմնում ստեղծել համապատասխան հաստիքներ՝ Կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված լիազորությունների շրջանակներում իրականացվող նմուշառումը և գործիքային չափումները պատշաճ կազմակերպելու նպատակով:

***<u>Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան</u>***

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

## XI.ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2002թ.-ի օգոստոսի 15-ի N 1301-Ն որոշմամբ հաստատված ՀՀ պետական առողջապահական գործակալության (այսուհետ՝ Գործակալություն), կանոնադրության մեջ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1327-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն և սահմանվել են Գործակալության հետևյալ գործառույթները՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնարկների ու կազմակերպությունների հետ պետական պատվերի շրջանակներում բնակչությանը բժշկական ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի կնքման կազմակերպում, դրանց համապատասխան փաստացի կատարված աշխատանքների մասին հաշվետվությունների ամփոփում և սահմանված կարգով ֆինանսական միջոցների հատկացման ապահովում.

բ) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման գործընթացի փաստաթղթային և տեղում փորձագիտական գնահատում, դիտարկում, մշտադիտարկում, կատարված աշխատանքների վերլուծություն.

գ) առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման և տնտեսավարման ժամանակակից մեխանիզմների, նորմատիվների, չափանիշների մշակմանն ու ներդրմանը մասնակցություն.

դ) առանձին կատեգորիայի քաղաքացիների անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով պայմանագրերի կնքման կազմակերպում ապահովագրական ընկերությունների հետ.

ե) էլեկտրոնային առողջապահական համակարգի միջոցով կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների մասին հաշվետվությունների ընդունում, ամփոփում, ֆինանսավորման իրականացման նպատակով բանկային գործարքների վերաբերյալ էլեկտրոնային

**Գործակալությունը և Տեսչական մարմինը իրականացնում են միևնույն վերահսկողական գործառույթները և առկա է գործառույթների կրկնորդումներ**

փաստաթղթերի կազմում և մուտքագրում էլեկտրոնային համապատասխան համակարգ:

Առողջապահության ոլորտում հսկողական և վերահսկողական գործառույթներ իրականացնող միակ մարմինը հանդիսանում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, որի գործառույթները սահմանված են վերջինիս կանոնադրությամբ: Արդյունքում ստացվում է գործառույթների կրկնորդում, ինչի բացառումը հանդիսանում է տեսչական բարեփոխումների գլխավոր նպատակներից մեկը: *Ավելին «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի՝ եզրափակիչ և անցումային դրույթների համաձայն համապատասխան բնագավառում տեսչական մարմնի ստեղծումից հետո դադարեցվում է տվյալ բնագավառի քաղաքականությունը մշակող ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կազմում գործող տվյալ բնագավառը վերահսկող տեսչության գործունեությունը: Տվյալ բնագավառում վերահսկողություն իրականացնող այլ մարմին գործել չի կարող:*

Գործակալությունը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման գործընթացի փաստաթղթային և փորձագիտական գնահատումը իրականացնում է բժշկական հաստատություններ այցելելով՝ դիտարկումների, մշտադիտարկումների, կատարված աշխատանքների վերլուծության միջոցով: ՀՀ-ում վերահսկողական և ստուգման բոլոր գործընթացները պետք է կանոնակարգված լինեն օրենքով կամ այլ իրավական ակտերով: Ավելին «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ստուգում իրականացնող պետական մարմիններն ստուգումներ իրականացնում են միայն ՀՀ օրենքներով և դրանց հիման վրա իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և անցկացվում են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատում է ՀՀ կառավարությունը: Հետևաբար, Գործակալությունը, իրականացնելով միևնույն տեսչական գործառույթները, կատարում է փաստացի ստուգումներ՝ առանց ստուգումների տարեկան ծրագրի կամ ստուգաթերթերի առկայության:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Գործակալությունը և Տեսչական մարմինը իրականացնում են միևնույն վերահսկողական գործառույթները և առկա է գործառույթների կրկնորդումներ:
2. Գործակալությունը փաստացի կատարել է ստուգումներ՝ դիտարկումների և մշտադիտարկումների անվան տակ, ինչը չի համապատասխանում «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների պահանջներին:

## *Առաջարկություններ*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**ՀՀ պետական առողջապահական գործակալությանը՝**

1. Զերծ մնալ դիտարկումների և մշտադիտարկումների անվան տակ փաստացի ստուգումներ կատարելուց:
2. Զերծ մնալ Տեսչական մարմնի հետ միևնույն վերահսկողական գործառույթները իրականացնելուց և գործառույթների կրկնորդումներից, քանի որ տվյալ բնագավառում վերահսկողություն իրականացնող այլ մարմին գործել չի կարող:

**ՀՀ կառավարությանը՝**

1. ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին»N 1301-Ն և ՀՀ վարչապետի ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշումների մեջ կատարել համապատասխան փոփոխություններ, որով տեսչական, վերահսկողական և հսկողական, այդ թվում ստուգման, մշտադիտարկումների, դիտարկումների լիազորությունները կփոխանցվեն ՀՀ-ում առողջապահության ոլորտում գործող միակ պետական մարմնին՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին, քանի որ տվյալ բնագավառում վերահսկողություն իրականացնող այլ մարմին գործել չի կարող:
2. Հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ, որտեղ իրականացվող բժշկական օգնության և սպասարկման գործընթացի փաստաթղթային և տեղում փորձագիտական գնահատման, դիտարկման, մշտադիտարկման, կատարված աշխատանքների վերլուծության Գործակալության գործառույթները կփոխանցվեն Տեսչական մարմնին:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

Այնուամենայնիվ, Հաշվեքննության խմբի կողմից արձանագրված «Գործակալության կանոնադրությամբ սահմանված չեն դիտարկում և մշտադիտարկում իրականացնելու լիազորություններ» խախտման վերաբերյալ Գործակալության կողմից տրված բացատրություններում ներկայացվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1327-Ն որոշումը, որով փոփոխություններ են իրականացվել Գործակալության կանոնադրության մեջ և նման լիազորությունները նախատեսված են: Հաշվեքննության խմբի կողմից այդ բացատրությունն ընդունվել է:

# XII.ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՎ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

**Պարգևատրման գործընթացում բացակայում է աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված պարգևատրման հիմքերը**

Տեսչական մարմնի ղեկավարի հրամաններով 2018թ.-ի ընթացքում աշխատողների նկատմամբ կիրառվել են միանվագ դրամական խրախուսանքներ և պարգևատրումներ, մինչդեռ տվյալ ֆինանսական միջոցների կարգադրիչը հանդիսանում է ոչ թե Տեսչական մարմինը, այլ՝ ՀՀ առողջապահության նախարարությունը: *Հավելենք, որ պարգևատրման գործընթացում բացակայում է աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված պարգևատրման հիմքերը, այն է՝ աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելը կամ երկարամյա աշխատանքը և ծառայությունը կամ ծառայողական պարտականությունները գերազանց կատարելն ապացուցող փաստերը:*

---

***«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և Տեսչական մարմնի կանոնադրության 16-րդ կետի համաձայն Տեսչական մարմնի ղեկավարի և տեղակալների նկատմամբ խրախուսման ու պատասխանատվության միջոցներ կիրառում է ՀՀ վարչապետը խորհրդի ներկայացմամբ: Սակայն վերջիններս խրախուսում ստացել են Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով:***

---

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ. -ի հունվարի 1-ից 2018թ. -ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2 հոդվածի 12-րդ մասի դրույթների հետ, այն է՝ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներն են պետական բյուջեով նախատեսվող հատկացումների գծով տվյալ տարվա պետական բյուջեի ելքերի գերատեսչական կառուցվածքում նշված պետական մարմինները և (կամ) պետական հիմնարկները՝ իրենց գծով սահմանված հատկացումների մասով:
2. Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և Կանոնադրության 16-րդ կետի դրույթների հետ, այն է՝ տեսչական մարմնի ղեկավարի նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառում է ՀՀ վարչապետը՝ խորհրդի ներկայացմամբ :
3. Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ «Տեսչական մարմինների մասին « ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և Կանոնադրության 21-րդ կետի դրույթների հետ, այն է՝ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների նկատմամբ խրախուսման միջոցներ է կիրառում ՀՀ վարչապետը:

***Առաջարկություններ՝***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Հետամուտ լինել, որպեսզի միանվագ դրամական խրախուսանքները և պարգևատրումները տրամադրվեն այն մարմնի կողմից, որը հանդիսանում է ֆինանսական միջոցների կարգադրիչը:

**ՀՀ կառավարությանը՝**

1. Հետամուտ լինել, որպեսզի տեսչական մարմնի ղեկավարի և տեղակալների նկատմամբ խրախուսման միջոցները կիրառվեն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի և Կանոնադրության 16-րդ և 21-րդ կետերի դրույթների համապատասխան, այն է՝ ՀՀ վարչապետի կողմից՝ խորհրդի ներկայացմամբ:

***Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան***

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

## *XIII.ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ*

Հաշվեքննության առաջադրանքի իրականացման ընթացքում պարզվեց, որ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունները՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պետք է ունենան ներքին աուդիտի համակարգ: Ներքին աուդիտի համակարգը, համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, ներքին աուդիտի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, պահանջների և ներքին աուդիտի մասնակիցների իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է: Ավելին, «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական մարմնի գործունեությունը բարելավելու վերաբերյալ Առաջարկություններ ներկայացնելով՝ ներքին աուդիտը պետք է աջակցի պետական մարմնին հասնել իր նպատակներին՝

1) օժանդակելով պետական մարմնի ղեկավարին՝ պետական մարմնում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում.

2) գնահատելով ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետությունը և համապատասխանությունը հետևյալ պայմաններին՝

ա. պետական մարմնի ղեկավարության կողմից ռիսկերի բացահայտում, գնահատում և կառավարում,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և պետական մարմնի գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանություն,

գ. տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,

դ. տեղեկությունների վստահելիություն և ամբողջականություն,

ե. կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն,

զ. առաջադրանքների կատարում և նպատակների իրագործում:

*Ելնելով վերոգրյալից, ակնհայտ է դառնում, որ ներքին աուդիտի համակարգը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործընթացների ամբողջություն է, որն ուղղված է պետական մարմնի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է պետական մարմնին հասնել իր նպատակներին՝ պետական մարմնի ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:*

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի դրույթների համաձայն Հաշվեքննիչ պալատն իրավասու է ուսումնասիրելու իր կողմից հաշվեքննվող մարմինների ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը:

**Տեսչական մարմինը 2018թ. ապրիլի 9-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ**

*Սակայն, հաշվեքննող խմբի 2018թ. դեկտեմբերի 19-ի ՀՊՏ-ԱՄ-194 գրությանն ի պատասխան Տեսչական մարմինը հայտնել է, որ մարմնում գործում է որակի ապահովման ստորաբաժանում:*

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմինը Կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է: Սույն օրենքը ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից, հետևաբար Տեսչական մարմինը այդ օրվանից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը 2018թ. ապրիլի 9-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ:

## ***Առաջարկություններ՝***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**ՀՀ Տեսչական մարմնին՝**

1. Մշակել և ներդնել ներքին աուդիտի համակարգ՝ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխան*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ առողջապահության նախարարություն՝**

ՀՀ ԱՆ-ի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

# ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

## I. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ և ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

**Տեսչական մարմինը քառամյա ժամկետում՝ մինչև 2018թ.-ի փետրվարի 14-ը, պետք է ամբողջությամբ ձևավորված լիներ և ունենար հաստատված գործունեության տարեկան ծրագիր, ստուգումների տարեկան ծրագիր, հաստատված ստուգաթերթեր, ստուգումներին առնչվող ուղեցույցներ, մեթոդաբանություն և այլն**

2018 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 9/3 որոշմամբ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջան է սահմանվել 2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. սեպտեմբերի 30-ը: Հաշվեքննության առաջադրանքի իրականացման ընթացքում, պարզվեց, որ 2017թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հոկտեմբերի 14-ը գործել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչությունը (ստեղծվել է՝ 2004թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ կառավարության N 1927-Ն որոշմամբ), իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմինը ձևավորվել է ՀՀ կառավարության 07.09.2017 թ. N 1150-Ն որոշման համաձայն, որի 3-րդ կետով սահմանվել է Տեսչական մարմնի ձևավորման քառամյա ժամկետ, իսկ ՀՀ վարչապետի 11.06.2018թ. N 729-Լ որոշմամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմինը վերակազմավորվել է ՀՀ կրթության տեսչական մարմնի: Այսինքն, Տեսչական մարմնի ձևավորման պատկերը հետևյալն է՝

- 05.02.2005թ.-14.01.2018թ.- ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչություն (այսուհետ՝ Տեսչություն),
- 14.02.2018թ.-21.06.2018թ.- ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմին,
- 21.06.2018թ.-մինչ օրս- ՀՀ կրթության տեսչական մարմին (այսուհետ՝ Տեսչական մարմին):

*Տեսչական մարմինը քառամյա ժամկետում՝ մինչև 2018թ.-ի փետրվարի 14-ը, պետք է ամբողջությամբ ձևավորված լիներ և ունենար հաստատված գործունեության տարեկան ծրագիր, ստուգումների տարեկան ծրագիր, հաստատված ստուգաթերթեր, ստուգումներին առնչվող ուղեցույցներ, մեթոդաբանություն և այլն:*

Տեսչական մարմինը իր գործառույթները իրականացնում է գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերի հիման վրա, որոնք համաձայն ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 11-ի N 729-Լ որոշմամբ հաստատված Կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) 14-րդ կետի հաստատում է Տեսչական մարմնի կառավարման խորհուրդը: 2017թ. Տեսչության աշխատանքային ծրագիրը հաստատում էր լիազոր մարմինը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ ՀՀ ԿԳՆ)՝ համաձայն «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի և 9-րդ հոդվածի 4-րդ մասի:

**Տեսչական մարմինը 2017թ. համար չի ունեցել գործունեության տարեկան ծրագիր (աշխատանքային ծրագիր)**

*Հարկ է նշել, որ Տեսչական մարմինը 2017թ. համար չի ունեցել գործունեության տարեկան ծրագիր (աշխատանքային ծրագիր): Իսկ 2018թ. համար գործունեության ծրագիրը հաստատվել է միայն 2018 թ. հուլիսի 3-ին:*

Տեսչական մարմնի պահպանման ծախսերը 2017թ.-ին կազմել են **181,196.46** հազ.դրամ, 2018թ.-ին՝ **103,835.85** հազ.դրամ: Իսկ *Տեսչական մարմնի գործունեության արդյունքում 2017-2018թթ. պետական բյուջե որևէ գումար չի մուտքագրվել:*

**Տեսչական մարմնի հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից**

*Տեսչական մարմինը նախարարությունից անկախ կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է, սակայն 2017-2018թթ. տեսչական մարմնի հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:* *«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է վարչապետի աշխատակազմի միջոցով՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերի շրջանակում: Հարկ է* նշել, որ նշված ձևակերպումն ուժի մեջ է մտել 2018թ.-ի ապրիլի 9-ից՝ համաձայն ՀՕ-267-Ն օրենքի 11-րդ հոդվածի, սակայն « ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում այդպես էլ չի կատարվել համապատասխան փոփոխություն և ֆինանսավորումը շարունակվել է կատարվել նախարարության միջոցով:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինն ամբողջությամբ չի ձևավորվել ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 7-ի N 1150-Ն որոշման 3-րդ կետով սահմանված քառամսյա ժամկետում:
2. Տեսչական մարմինը 2017թ. համար չի ունեցել գործունեության տարեկան ծրագիր (աշխատանքային ծրագիր):
3. Տեսչական մարմինը պետական բյուջե գումար չի մուտքագրել 2017-2018թթ.:
4. Տեսչական մարմինը 2018թ.-ի ապրիլ ամսից իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացրել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության միջոցով, որը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին:

## ***Առաջարկություններ՝***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Հետամուտ լինել, որպեսզի գործունեության տարեկան ծրագրերը համապատասխան կարգով և ճիշտ ժամանակին մշակվեն և ընդունվեն Տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից:
2. Հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացնել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, այն է՝ տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացնել վարչապետի աշխատակազմի միջոցով:

**ՀՀ Կառավարությանը՝**

1. Մշակել համապատասխան իրավական ակտեր, մեխանիզմներ, տույժ ու տուգանքի չափ և այլն, որով Տեսչական մարմնին հնարավորություն կտրվի ՀՀ օրենքների, համապատասխան ոլորտի հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցներ կիրառել և պետական բյուջե գումար մուտքագրել:

## ***Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ***

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

Ավելին, որպես ապացույց հաշվեքննության արձանագրությանը կից ներկայացված 2017թ. աշխատանքային ծրագիր ունենալու ապացույցը՝ նախարարի հրամանը, բացակայել է, իսկ հավելվածը եղել է թերի, բացակայել է նախարարի ստորագրությունը կամ հավելվածի՝ հրամանի բաղկացուցիչ մաս լինելու փաստը հավաստող հղումը:

2017թ. աշխատանքային ծրագիրը տեղեկայված չէ նաև Տեսչական մարմնի պաշտոնական կայքում ( http://www.eib.am/ ):

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ ներկայացվել է առարկություն, որում նշվել է, որ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում կատարված փոփոխությունը ուժի մեջ է մտել 2018թ. -ի ապրիլի 9-ից, այդ իսկ պատճառով Տեսչական մարմնի հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը շարունակել է իրականացվել ՀՀ ԿԳՆ-ի կողմից:

ՀՀ ԿԳՆ-ի առարկությունը ընդունվել է մասնակի:

## II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ, ՍՏՈՒԳԱԹԵՐԹԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Տեսչական մարմնի 2017 թվականի ստուգումների ծրագրով նախատեսված է եղել ստուգումներ իրականացնել թվով 135 ուսումնական հաստատություններում (թվով 82 ՀՈԱԿ-

ներ, թվով 47 ոչ պետական ուսումնական հաստատություններ, թվով 6 նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններ)։ Ստուգումներ են իրականացվել թվով 77 ՀՈԱԿ-ներում (մանկապարտեզ) և 6 նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում։ Հիմնանորոգման պատճառով ստուգումներ չեն իրականացվել ՀՀ Արարատի մարզի Արտաշատի թվով 2, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի թվով 1, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թվով 2 ՀՈԱԿ-ներում։ Տեսչական մարմնի պնդմամբ թվով 47 ոչ պետական ուսումնական հաստատություններում ստուգումներ չի իրականացվել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 20.07.2017թ. N865-Ն որոշման (սույն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ն որոշման մեջ) դրույթները։

Այսպիսով, 2017թ.-ին ստուգումներ են իրականացվել թվով 83 ուսումնական հաստատություններում։

ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ն որոշման համաձայն 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված տեսչական մարմինների ստուգումները կարող են իրականացվել միայն հստակ սահմանված դեպքերում, որոնցից են մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների սննդի կազմակերպման նկատմամբ իրականացվող ստուգումները։ *Այսինքն, Տեսչական մարմինը ստուգում պետք է իրականացներ միայն ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի N 598-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 (ՀՀ նախադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունում կանոնների, մեթոդիկայի ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ) և 15 (ՀՀ հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) ծրագրեր իրականացնող կազմակերպությունում վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ ծրագրերի, ինչպես նաև ծառայությունների իրականացման պահանջների կատարմանն ուղղված ստուգումներ) ստուգաթերթերով ամրագրված սովորողների առողջության պահպանման միջոցառումների, սովորողների սննդի կազմակերպման, սննդի որակի մասին հարցադրումներով։*

**Տեսչական մարմնի 2017թ.ին իրականացված թվով 83 ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումները եղել են տարբեր ստուգաթերթերով**

Սակայն, Տեսչական մարմնի 2017թ.ին իրականացված թվով 83 ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումները եղել են տարբեր ստուգաթերթերով, որի արդյունքում արձանագրվել են զանազան խախտումներ, (օրինակ՝ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոցում արձանագրված խախտում՝ ՀՀ կառավարության 14.10.2010թ. N 1391-Ն որոշման «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին»հավելված 4-ի IX գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ (*հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս)* մասնագիտական կրթություն, համապատասխան որակավորմամբ) կամ Երևանի թիվ 12 հատուկ դպրոցում

արձանագրված խախտում՝ նույն որոշման հավելված 4-ի VI բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետ, VIII բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետ *(հանրակրթական ուսումնական հաստատության մասնագիտացված կրթական աջակցությունների աշխատանքի գծով փոխտնօրենի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս)* և մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում) կամ ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 24.11.2010թ. N 1640-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգ»-ի 19-րդ կետի 3-րդ ենթակետ *(13-ից 15 տարեկան, դպրոց չհաճախած կամ մինչև 2 տարի ուսումն ընդհատած սովորողն ընդունվում է իր տարիքային խմբից մեկ կամ երկու դասարան ցածր))*:

*2018թ.-ի ստուգումների ծրագրով նախատեսվել են թվով 75 ստուգումներ, սակայն 2018թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ չի իրականացվել ոչ մի ստուգում, քանի որ ստուգումների ծրագրի իրականացման համար ստուգաթերթերը ՀՀ կառավարության կողմից հաստատվել են 2018թ.-ի հոկտեմբերի 4-ին:* Մինչ այդ, ուժի մեջ են եղել 2013 թվականի հունիսի 6-ի N 598-Ն որոշմամբ հաստատված ստուգումների ստուգաթերթերը: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն բոլոր ստուգումները անցկացվում են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատում է ՀՀ կառավարությունը:

**2018թ.-ի ստուգումների ծրագրով նախատեսվել են թվով 75 ստուգումներ, սակայն 2018թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ չի իրականացվել ոչ մի ստուգում, քանի որ ստուգումների ծրագրի իրականացման համար ստուգաթերթերը ՀՀ կառավարության կողմից հաստատվել են 2018թ.-ի հոկտեմբերի 4-ին:**

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից և այլ իրավական ակտերից, իսկ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետի և Կանոնադրության 18-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն Տեսչական մարմնի ղեկավարը ստուգում իրականացնելու վերաբերյալ տալիս է հրաման կամ հանձնարարագիր, ինչպես նաև ստուգումների արդյունքների հիման վրա կիրառում է պատասխանատվության միջոցներ՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը:

**2017-2018թթ.-ին Տեսչական մարմինը օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորությունը չի կատարել**

2017թ.-ին ՀՀ կրթության պետական տեսչությունը օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման լիազորություն կանոնադրությամբ չի ունեցել, բացառությամբ «նախազգուշացում» պատասխանատվության միջոցից: Սակայն, ստուգումների, ուսումնասիրությունների

արդյունքները ներկայացվել են համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին և պատասխանատվության միջոցները կիրառվել են նրանց կողմից: Այնուամենայնիվ, դա մի լիազորություն է, որ Տեսչական մարմիններին տրված է օրենքի ուժով՝ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով: *Այսպիսով 2017-2018թթ.-ին Տեսչական մարմինը օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորությունը չի կատարել:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը չպետք է իրականացներ ստուգումներ 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում, բացառությամբ մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների սննդի կազմակերպման նկատմամբ իրականացվող ստուգումների՝ համաձայն ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ա որոշման:
2. Տեսչական մարմինը 2018թ. չի իրականացրել ոչ մի ստուգում:
3. Տեսչական մարմինը 2018թ. չի ունեցել ստուգումների ստուգաթերթեր:
4. Տեսչական մարմինը օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորությունը չի կատարել ո՛չ 2017թ.-ին, ո՛չ 2018թ.-ին:

## *Առաջարկություններ՝*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Հետամուտ լինել ստուգումների պատշաճ իրականացմանը:
2. Սահմանված կարգով պատասխանատվության ենթարկել ՀՀ օրենքների, համապատասխան ոլորտի հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

**ՀՀ կառավարությանը՝**

1. Ժամանակին հաստատել ստուգումների ստուգաթերթերը, որպեսզի Տեսչական մարմինների գործունեությունը կաթվածահար չլինի:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմինն իր բացատրություններում նշել է, որ 2017թ. կատարել է ստուգումներ առաջնորդվելով ոչ թե ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ա որոշման 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերով, այլև նույն որոշման 1-ին մասի 1-ին կետով:

Այս դիտարկումը ընդունելի է եղել հաշվեքննության խմբի կողմից:

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը.

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

Վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին):

Տեսչական մարմնի կողմից 2017թ. դիմում-բողոքների հիման վրա իրականացվել են թվով 149 վարչական վարույթներ, որոնցից 36-ը անանուն լինելու պատճառով կարճվել են: 2018թ. դիմում-բողոքների հիման վրա իրականացվել են թվով 306 վարչական վարույթներ, որոնցից 81-ը անանուն լինելու պատճառով կարճվել են:

Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթներ չեն հարուցվել: Փոխարենը 2017թ.-ին սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություններ են իրականացվել թվով 150 ուսումնական հաստատություններում, իսկ 2018թ.-ին՝ 2 ուսումնական հաստատությունում:

Հարկ է նշել, սակայն, որ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը տեսչական մարմինների կողմից ուսումնասիրություններ իրականացնելու իրավասություն կամ մեխանիզմներ չի սահմանել, իսկ 2017թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության և 2018թ. ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրություններում ուսումնասիրությունները սահմանված են որպես ստուգումների հետ իրականացվող գործընթաց, որի արդյունքների հիման վրա Տեսչական մարմինը կազմում է հաշվետվություններ, ակտեր, տեղեկանքներ, արձանագրություններ, զեկուցագրեր, զեկույցներ, վերլուծություններ, ամփոփագրեր և այլ փաստաթղթեր:

Ավելին, «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն Կրթության բնագավառի պետական տեսչական գործընթացն իրականացվում է ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով՝ օրենքի և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգերին և ժամկետներին համապատասխան: Իսկ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ ուսումնասիրությունը տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների հիման վրա ստուգում իրականացնող մարմնում այդ մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է: Բայց օրենքը չի սահմանում ուսումնասիրությունների կատարման ընթացակարգը, ժամկետները, ուսումնասիրությունների կատարման ժամանակացույցը, ռիսկերի վրա հիմնված ուսումնասիրությունների համակարգը, ուսումնասիրություն կատարող անձանց իրավունքները, արդյունքների ամփոփման կարգը և այլն:

Տեսչական մարմինը ուսումնասիրություններն իրականացրել է հարցաշարերի համաձայն, սահմանել է ուսումնասիրություններն ընդգրկող ժամանակահատված, որի ընթացքում, ըստ անհրաժեշտության, իրականացվել են ստուգայցեր, ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կազմվել են տեղեկանքներ, իսկ Տեսչական մարմնի ծառայողների գործուղման հետ կապված ծախսերը վճարվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության գնումների և հաշվապահական հաշվառման վարչության կողմից:

*Հետևաբար, իրավական ակտերի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ ուսումնասիրությունը տնտեսավարող սուբյեկտի կողմից պարբերաբար ներկայացվող հաշվետվությունների հիման տեսչական մարմնում իրականացվող ներքին գործընթաց է, որը չի կարող լինել փաստացի ստուգում, քանի որ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ստուգում իրականացնող պետական մարմիններն ստուգումներ իրականացնում են միայն ՀՀ օրենքներով և դրանց հիման վրա իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և անցկացվում են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատում է ՀՀ կառավարությունը:*

***Հարկ է նշել, որ Տեսչական մարմինն ուսումնասիրությունների փոխարեն պետք է իրականացներ վարչարարություն՝ սեփական նախաձեռնությամբ կամ դիմում բողոքների հիման վրա:***

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը 2017թ. կատարել է 150, իսկ 2018թ. 2 փաստացի ստուգումներ՝ ուսումնասիրությունների անվան տակ՝ ինչը չի համապատասխանում «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթներին:
2. Տեսչական մարմինը չի կատարել ուսումնասիրություններ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

## *ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Տեսչական մարմինը պետք է ուսումնասիրություններ կատարի միայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում և զերծ մնա ուսումնասիրությունների անվան տակ փաստացի ստուգումներ կատարելուց:

*Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ*

***Տեսչական մարմին՝***

Տեսչական մարմնի կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

## IV. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և Կանոնադրության 10-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն Տեսչական մարմնի լիազորություններից է հանդիսանում նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրերի ներկայացումը լիցենզավորող մարմիններ և այդ նպատակով լիցենզիաների պայմանների և պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը: Իսկ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Տեսչական մարմինը Կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է: Հետևաբար այդ ոլորտում այլ մարմնի վերահսկողական լիազորությունների առկայությունը կարող է առաջացնել գործառույթների կրկնության և անարդյունավետության:

**Լիցենզավորման գործառույթ իրականացնող բոլոր նախարարությունների լիցենզավորման գործակալություններից հանվել էին վերահսկողական գործառույթները և միայն Կրթության և գիտության նախարարության Լիցենզավորման գործակալությունն էր մնացել, որ դեռ ուներ նշված լիազորությունները**

Սակայն, Կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի N 676-Ն որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի (որը ուժը կորցրել է 30.06.2018թ. N 705-Ն որոշմամբ) համաձայն Կրթության և գիտության նախարարության Լիցենզավորման գործակալությունը ևս իրականացնում է նույն գործառույթը, այն է լիցենզավորված սուբյեկտների կողմից տվյալ գործունեությունն իրականացնելու համար պարտադիր պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ դիտարկումների և ուսումնասիրությունների իրականացում: *Արդյունքում սպացվում է, որ լիցենզավորման գործառույթ իրականացնող բոլոր նախարարությունների լիցենզավորման գործակալություններից հանվել էին վերահսկողական գործառույթները և միայն Կրթության և գիտության նախարարության Լիցենզավորման գործակալությունն էր մնացել, որ դեռ ուներ նշված լիազորությունները:*

Հավելենք, որ ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1135 - Ն որոշմամբ հաստատված Հայաստանում տեսչական բարեփոխումների հայեցակարգի թիրախային խնդիրներից էր տեսչական գործընթացում գործառույթների կրկնորդումները: Վերահսկման միևնույն օբյեկտը միևնույն հարցով «ստուգման է ենթարկվում»բազմակի անգամ՝ տարբեր տեսչությունների կողմից: Հաճախ պարզ չի լինում տեսչության իրավասության ոլորտը և շրջանակը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Կրթության և գիտության նախարարության Լիցենզավորման գործակալությունը իրականացրել է գործառույթ, որի համար օրենքով լիազորված էր Տեսչական մարմինը, ինչը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և Կանոնադրության 10-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթների պահանջներին:

## *Առաջարկություններ՝*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝**

1. Լիցենզիաների պայմանների և պահանջների պահպանման, դրանց նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև դիտարկումների և ուսումնասիրությունների իրականացումը դուրս բերել Կրթության և գիտության նախարարության Լիցենզավորման գործակալության իրավասություններից:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել՝ նշելով, որ այդ գործառույթն իրականացվել է իրենից անկախ պատճառներով:

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

# V. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

**Բարձրագույն ուսումնական հաստատությունները, դուրս են մնացել տեսչության ստուգումների և հսկողության դաշտից**

*ՀՀ կառավարության 2019թ. կարևորագույն անելիքներից է Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության համակարգը որակական նոր մակարդակի բերելը (ՀՀ կառավարության 13.12.2018թ. նիստ,* *http://www.primeminister.am/hy/press-release/item/2018/12/13/Cabinet-meeting/* *):*

Տեսչական մարմնին են վերապահվել վերահսկողական գործառույթներ նախադպրոցական, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում՝ բացառությամբ բարձրագույն ուսումնական հաստատությունների: Արդյունքում տեսչությունը արձանագրել է բազմաթիվ խախտումներ, որոնց համաձայն և պետական և մասնավոր հաստատությունների ղեկավար մարմինները չեն համապատասխանել ընդունված չափորոշիչներին, օրինակ՝ տնօրենները չեն ունեցել հավաստագիր և այլն: Նույն զուգահեռները անցկացվել են հաշվեքննության խմբի կողմից՝ բուհերի մասով: Պահանջվել է անհրաժեշտ տեղեկատվություն ԿԳՆ Բարձրագույն որոկավորման կոմիտեից: Արդյունքում պարզվել է, որ բուհերի ոլորտը դուրս է մնացել տեսչական վերահսկողությունից կամ ստուգումներից:

ՀՀ-ում գիտական աստիճանները և գիտական կոչումները սահմանված են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով: Իսկ ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված Կանոնակարգի 5-րդ կետի համաձայն օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի վկայագիրը ՀՀ գիտական աստիճանի վկայագրին համապատասխանեցնում է ԲՈՀ-ը, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան չի սահմանված:

Հաշվեքննիչ պալատ ներկայացված տվյալների վերլուծությունից ակնհայտ է, որ պետական բուհերի գործադիր մարմինների համար իրավական ակտերով նախատեսված են գիտական կոչման և աստիճանի հստակ չափորոշիչներ, որոնք սակայն բացակայում են ոչ պետական բուհերի դեպքում:

*Տեղեկատվության վերլուծությունից պարզվել է, որ պետական բուհերից ԵՊՀ-ում, ՀԱՊՀ-ում, ՀՊՏՀ-ում, ՀՊՄՀ-ում ՀԱԱՀ-ում, ՊԱՀ-ում, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում և այլ բուհերում ռեկտորների պաշտոնը զբաղեցնում են առնվազն գիտությունների դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում ունեցող, իսկ դեկանի պաշտոնը՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և դոցենտի կոչում ունեցող անձիք: Սակայն ոչ պետական բուհերում պատկերը այլ է. ոչ պետական բուհի ռեկտորի, պրոռեկտորի, դեկանի պաշտոններ են զբաղեցնում գիտական կոչում, աստիճան չունեցող անձիք, ինչը կարող է անմիջականորեն ազդել բուհերի կողմից տրվող կրթության որակի վրա: Նամանավանդ այն պայմաններում, երբ պետական և ոչ պետական բուհերը տալիս են պետական նմուշի դիպլոմներ, որոնք հավասարազոր են:*

Տեսչական մարմինների բարեփոխումների նպատակն էր հնարավորություն ստեղծել, ռեսուրսները նպատակաուղղել համապատասխան ոլորտներում հսկողության առավել արդյունավետ կազմակերպմանը և արդյունքում բարենպաստ գործարար միջավայր ու բնակչության, պետության, շրջակա միջավայրի անվտանգությունն ապահովելուն, ինչպես նաև

Հայաստանում տեսչական համակարգի և իրականացվող ստուգումների օպտիմիլացմանը: Երբ բարձրագույն ուսումնական հաստատությունների ոլորտում քաղաքականությունը մշակում է մի մարմին և վերահսկողությունը ևս իրականացնում է միևնույն մարմինը, մեծանում են նաև կոռուպցիոն ռիսկերը: Ուստի, բարձրագույն ուսումնական հաստատությունների նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում, Տեսչական մարմնին վերապահելը շատ ավելի արդյունավետ կլինի և կնպաստի այդ բարեփոխումների ոլորտում պետության որդեգրած քաղաքականությանը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. ՀՀ կրթության ոլորտի կարևորագույն մասնիկը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները, դուրս են մնացել տեսչության ստուգումների և հսկողության դաշտից:
2. Թվով 17 ոչ պետական բուհերի ղեկավար կազմի վերլուծությունից պարզվել է, որ ռեկտորի, պրոռեկտորի, դեկանի պաշտոններ զբաղեցնում են գիտական կոչում և աստիճան չունեցող անձիք (Տե՛ս Հավելված 5):

## *Առաջարկություններ՝*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**ՀՀ կառավարությանը՝**

1. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններն անհրաժեշտ է տանել տեսչության ստուգումների և հսկողության դաշտ:
2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնավոր բուհերը տալիս են պետական բուհերի դիպլոմներին հավասարազոր նմուշի դիպլոմ՝ ոչ պետական բուհերի ղեկավար կազմի համար (ռեկտոր, պրոռեկտոր, դեկան) նույնպես պետք է սահմանել համապատասխան չափորոշիչներ:
3. Ոչ պետական բուհերում իրավիճակը շտկելու նպատակով պետական լիազոր մարմինների կողմից անհրաժեշտ է կատարել համապատասխան վերահսկողություն կամ ստուգում:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել՝ նշելով, որ կանոնադրությամբ լիազորված չէ վերահսկողություն իրականացնել բուհերում:

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

## VI. ԻՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

**ՀՀ կրթության և գիտության նախարարը պարտավոր էր որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել որոշման ընդունումից բխող և ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովող օրենսդրական փոփոխությունների փաթեթը**

Հարկ է նշել նաև, որ Կանոնադրության 14-րդ կետի 2-րդ ենթակետի և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ կետի 1.1) ենթակետի համաձայն Տեսչական մարմնի կառավարման խորհուրդը հավանություն է տալիս Տեսչական մարմնի կողմից ներկայացվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերին: Ավելին, ՀՀ կառավարության 07.09.2017թ. N 1150-Ն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետի բ. պարբերության համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարը պարտավոր էր որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել որոշման ընդունումից բխող և ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովող օրենսդրական փոփոխությունների փաթեթը: Սակայն, մի շարք իրավական ակտերում մինչ օրս պահպանված է «պետական տեսչություն» կամ «ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմին» ձևակերպումները: Մասնավորապես, «Կրթության պետական տեսչության մասին» 2005 թվականի նոյեմբերի 15-ի ՀՀ օրենքը դեռևս ուժի մեջ է և սահմանում է կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության որակի, ուսուցման, գնահատման, ինչպես նաև կրթության կազմակերպման կանոնադրական պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարաբերությունները հանրակրթության և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության բնագավառում, ինչպես նաև սահմանում է ՀՀ կրթության պետական տեսչության խնդիրները և լիազորությունների շրջանակը, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչությունը դադարել է գոյություն ունենալ 14.01.2018թ-ին: Նմանապես դեռևս գործում են և ուժի մեջ են ՀՀ կառավարության «ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի N 1927-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին «2006 թվականի մարտի 16-ի N 497-Ն, «ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչություն ստեղծելու և ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ փոփոխություն և

լրացումներ կատարելու մասին «2004 թվականի դեկտեմբերի 30-ի N 1927-Ն որոշումները և այլն (համաձայն՝ https://www.arlis.am/ իրավական տեղեկատվական համակարգի):

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը չի իրականացրել իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակման, գործող իրավական ակտերում փոփոխությունների և համապատասխան մարմիններին ներկայացնելու իր պարտավորությունը, որը սահմանված է Կանոնադրության 14-րդ կետի 2-րդ ենթակետով և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ կետի 1.1) ենթակետով:

***<u>Առաջարկություններ՝</u>***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**ՀՀ Տեսչական մարմնին՝**

1. Իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր մշակելու, գործող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու և համապատասխան մարմիններին ներկայացնելու իր պարտավորությունը պատշաճ իրականացնել:

***<u>Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ</u>***

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

## VII. ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ, ԻՐԱՎԱԿԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ և ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ:

**Հաշեքննվող ժամանակաշրջանում նշված գործառույթը չի իրականացվել**

Կանոնադրության 10-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Տեսչական մարմնի լիազորություններից է նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և

միջին մասնագիտական կրթության ոլորտներում ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացումը, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացումը, իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովումը և կանխարգելիչ գործունեությունը: Հարկ է նշել, որ Տեսչական մարմինն այդ գործառույթը չի իրականացրել հաշվեքննվող ժամանակաշրջանում, սակայն Տեսչական մարմնի խորհրդի 2018 թվականի հուլիսի 3-ի N 07-02-01 որոշմամբ հաստատված 2018 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված է իրականացնել Տեսչական մարմնի վերահսկման ոլորտներում կրթության բնագավառը կարգավորող իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների, խորհրդատվության իրականացման, կանխարգելիչ միջոցառումներ: *Այնուամենայնիվ, հաշեքննվող ժամանակաշրջանում նշված գործառույթը չի իրականացվել:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը չի իրականացրել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացման, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման, իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովման և կանխարգելիչ գործունեության իր պարտավորությունը, ինչը չի համապատասխանում Կանոնադրության 10-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթների պահանջներին:

## *Առաջարկություններ՝*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**ՀՀ Տեսչական մարմնին՝**

2. Պատշաճ իրականացնել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացման, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման, իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովման և կանխարգելիչ գործունեության իր պարտավորությունը:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

## VIII. ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Տեսչական մարմինը ղեկավարվում է ռիսկայնության առաջնորդվելու սկզբունքով, այսինքն՝ ռեսուրսները նպատակաուղղում է դեպի այն ոլորտները և տնտեսավարող սուբյեկտները, որոնք առավել ռիսկային են:

Կանոնադրության 10-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն Տեսչական մարմնի լիազորություններից է վիճակագրական տվյալների հավաքման և վերլուծությունների, նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացումը և վերահսկողական ու հսկողական գործառույթների նպատակադրումը դեպի առավել ռիսկային ոլորտներն ու տնտեսավարող սուբյեկտները: Ավելին, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն տուգումները պլանավորելու նպատակով ստուգում իրականացնող մարմինը՝ հետազոտելով իր վերահսկման ոլորտը, մշակում է տվյալ ոլորտում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշները, որոնք պետք է ներառեն տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտի ռիսկը և (կամ) տնտեսավարող սուբյեկտի անհատական ռիսկերի հանրագումարը:

**Տեսչական մարմինը 2018թ. չի ունեցել ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություն**

*Տեսչական մարմինը 2018թ. չի ունեցել ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություն:* Այն անհրաժեշտ է և ստուգումների տարեկան ծրագիր և գործունեության տարեկան ծրագիր կազմելու համար, քանի որ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 1.3-րդ ենթակետի համաձայն գործունեության տարեկան ծրագիրը ներառում է նաև առկա խնդիրներն ու բացահայտված ռիսկերը:

**Ստուգումների և գործունեության տարեկան ծրագրերը կազմվել են օգտագործելով արդեն իսկ գոյություն չունեցող մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը**

Սակայն, ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը սահմանվել է 2013 թվականի հունիսի 6-ի N 598-Ն որոշմամբ, որը նախատեսված էր ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության համար և ուժը կորցրած է

ճանաչվել միայն 2018թվականի նոյեմբերի 3-ին: *Հետևաբար, ստուգումների և գործունեության տարեկան ծրագրերը կազմվել են օգտագործելով արդեն իսկ գոյություն չունեցող մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը 2018թ. չի ունեցել ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություն, ինչը չի համապատասխանում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի 2 մասի դրույթների պահանջներին:
2. Ստուգումների և գործունեության տարեկան ծրագրերը կազմվել են օգտագործելով արդեն իսկ գոյություն չունեցող մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը:

## *Առաջարկություններ՝*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**ՀՀ Տեսչական մարմնին՝**

1. Պատշաճ մշակել և ժամանակին ներկայացնել ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը:
2. Ստուգումների և գործունեության տարեկան ծրագրերը կազմել օգտագործելով արդեն ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը:

**ՀՀ կառավարությանը՝**

1. Ժամանակին հաստատել ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

# IX. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱԿԱՐԳ

**Տեսչական մարմինը 2018թ. ապրիլի 9-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ**

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունները՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պետք է ունենան ներքին աուդիտի համակարգ: Ներքին աուդիտի համակարգը, համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, ներքին աուդիտի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, պահանջների և ներքին աուդիտի մասնակիցների իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է: Ավելին, «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պետական մարմնի գործունեությունը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելով, ներքին աուդիտը պետք է աջակցի պետական մարմնին հասնել իր նպատակներին՝

1) օժանդակելով պետական մարմնի ղեկավարին՝ պետական մարմնում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում.

2) գնահատելով ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետությունը և համապատասխանությունը հետևյալ պայմաններին՝

ա. պետական մարմնի ղեկավարության կողմից ռիսկերի բացահայտում, գնահատում և կառավարում,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և պետական մարմնի գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանություն,

գ. տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,

դ. տեղեկությունների վստահելիություն և ամբողջականություն,

ե. կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն,

զ. առաջադրանքների կատարում և նպատակների իրագործում:

*Ելնելով վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ ներքին աուդիտի համակարգը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործընթացների ամբողջություն է, որն ուղղված է պետական մարմնի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է պետական մարմնին հասնել իր նպատակներին՝ պետական մարմնի ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:*

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի դրույթների համաձայն Հաշվեքննիչ պալատն իրավասու է ուսումնասիրելու իր կողմից հաշվեքննվող մարմինների ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը:

Սակայն, հաշվեքննող խմբի 2018թ. դեկտեմբերի 19-ի ՀՊԵ-ԱՄ-193 գրությանն ի պատասխան Տեսչական մարմինը հայտնել է, որ ներքին աուդիտի համակարգի վերաբերյալ տեղեկատվություն չունեն:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմինը Կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է: Սույն օրենքը ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից, հետևաբար Տեսչական մարմինը այդ օրվանից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը 2018թ. ապրիլի 9-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ:

## ***Առաջարկություններ՝***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**ՀՀ Տեսչական մարմնին՝**

1. Մշակել և ներդնել ներքին աուդիտի համակարգ՝ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների:

## ***Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ***

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

# ՀՀ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

## I. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁևԱՎՈՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

2018 թվականի սեպտեմբերիի 19-ի թիվ 9/4 որոշմամբ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջան է սահմանվել 2017թ. հունվարի 1-ից մինչև 2018 թ. սեպտեմբերի 30-ը: Հաշվեքննության առաջադրանքի իրականացման ընթացքում պարզվեց, որ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմինը ստեղծվել է ՀՀ կառավարության 10.09.2015 թ. № 1063-Ն որոշման համաձայն, որը 6-րդ կետով ուժի մեջ է մտել 03.10.2015 թ., իսկ ՀՀ վարչապետի 11.06.2018թ. № 732-Լ որոշմամբ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմինը վերակազմավորվել է ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) :

Տեսչական մարմինը ստեղծվել է 2015 թվականի հոկտեմբերի 3-ին՝ շուկայի վերահսկողության պետական տեսչության լուծարման արդյունքում:

2017թ.-ին տեսչական մարմնի պահպանման ծախսերը կազմել են **132,059.6** հազ. դրամ, իսկ 2018 թ –ին՝ **141,532.9** հազ.դրամ:

Տեսչական մարմնի կողմից պետական բյուջե 2017թ. վճարված տուգանքների ընդհանուր գումարը կազմել է **21,930.0** հազ.դրամ, իսկ 2018թ-ին՝ **18,480.0** հազ. դրամ:

Լուծարված ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչության կողմից սկսված և չավարտված վարչական և այլ գործառույթների իրականացման հետագա ընթացքի ապահովումը ՀՀ կառավարության 10.09.2015թ. № 1063-Ն որոշման 5-րդ կետի համաձայն վերապահվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնին (հետագայում դարձել է ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին):

**Տեսչական մարմինը նախարարությունից անկախ կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է, սակայն Տեսչական մարմնի հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից**

Տեսչական մարմինն ունի 40 հաստիքային միավոր՝ 11-ը թափուր:

*Տեսչական մարմինը նախարարությունից անկախ, կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է, սակայն Տեսչական մարմնի հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից: «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է վարչապետի աշխատակազմի միջոցով՝ պետական բյուջեով*

*նախատեսված ծախսերի շրջանակում:* Հարկ է նշել, որ նշված ձևակերպումն ուժի մեջ է մտել 2018թ. -ի ապրիլի 9-ից՝ համաձայն ՀՕ-267-Ն օրենքի 11-րդ հոդվածի, սակայն « ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում այդպես էլ չի կատարվել համապատասխան փոփոխություն, և ֆինանսավորումը շարունակվել է կատարվել նախարարության միջոցով:

Տեսչական մարմնի կառավարման խորհուրդը հաստատում է մարմնի գործունեության տարեկան ծրագիրը, գործունեության տարեկան ծրագրում ներառվում են տեսչական մարմնի կողմից իրականացվելիք իրազեկման, խորհրդատվական և բացատրական աշխատանքները:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը 2018թ.-ի ապրիլ ամսից իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը շարունակել է իրականացնել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության միջոցով, որը չի համապատասխանում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին:
2. Տեսչական մարմինը չի ունեցել տարեկան գործունեության ծրագրեր՝ ո՛չ 2017թ., ո՛չ 2018թ. համար՝ չի իրականացվել Կանոնադրության 15-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը:

## ***Առաջարկություններ՝***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացնել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, այն է՝ տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացնել վարչապետի աշխատակազմի միջոցով:
2. Հետամուտ լինել, որպեսզի գործունեության տարեկան ծրագրերը համապատասխան կարգով և ճիշտ ժամանակին մշակվեն և ընդունվեն Տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից:

## ***Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ***

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Տեսչական մարմինը հաշվեքննության խմբին տրված իր բացատրություններում ներկայացրել է 2017-2018թթ. տարեկան գործունեության ծրագրերը,

որոնք սակայն ժամանակին չէին տրամադրվել և տեղադրված չէին Տեսչական մարմնի պաշտոնական կայքում:

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

## II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

Տեսչական մարմինը ստուգում իրականացնում է ստուգման տարեկան ծրագրի հիման վրա, որը Կանոնադրության 15-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն տեսչական մարմնի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է Տեսչական մարմնի կառավարման խորհուրդը: Տեսչական մարմինը 2017 թ.-ին ստուգումների ծրագրով ունեցել է 200 ստուգում, իրականացրել է 144 ստուգում, իսկ 2018թ.-ին ստուգումների ծրագրով ունեցել է 240 ստուգում, իրականացրել է 160 ստուգում: Տեսչական մարմնի կողմից 2017 թ. նշանակված տուգանքների ընդհանուր գումարը կազմել է **23,080.0** հազ.դրամ, որից **21,930.0** հազ.դրամ գումարը մուտքագրվել է պետական բյուջե, իսկ 2018թ. 9-ը ամիսների ընթացքում՝ **22,030.0** հազ.դրամ, որից սեպտեմբերի 30-ի դրությամբ պետական բյուջե մուտքագրվել է **18,480.0** հազ.դրամ:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1 մասի 2-րդ կետի համաձայն Տեսչական մարմինը ստուգման տարեկան ծրագրից դուրս (այսուհետ՝ արտածրագրային ստուգումներ) ստուգումներ է իրականացրել՝

- ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա՝ 2017թ.-ին՝ 52 ստուգում, 2018թ.–ին՝ 0 ստուգում,
- քաղաքացիներից, իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից ստացված դիմումների հիման վրա՝ 2017թ.-ին՝ 1 ստուգում, 2018թ.-ին՝ 3 ստուգում,
- պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրավոր տեղեկատվության հիման վրա՝ 2017թ.-ին՝ 0 ստուգում, 2018թ.-ին՝ 1 ստուգում:

Տեսչական մարմինը քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա արտածրագրային ստուգումներ կարող է իրականացնել ՀՀ կառավարության 2015 թ.-ի հունիսի 18-ի N 711-Ն «Տեսչական մարմինների գործունեության ոլորտում հանրությունից ստացվող բողոքների ընդունման ընդհանուր կարգը և տնտեսվարող սուբյեկտներից բողոքների ստացման, հետագա ընթացքի և դրան հետևելու կարգը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված կարգով, որի 9-րդ կետի համաձայն հանրության կողմից տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ բողոքների ներկայացումը հիմք չէ ըստ անհրաժեշտության ստուգումներ անցկացնելու համար՝ առանց հետագա դիտարկման:Նմանատիպ դրույթ սահմանված է նաև «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն որի՝ բողոքները վերլուծվում, դիտարկվում և օգտագործվում են ռիսկերի գնահատման համար: Հիմնականում դրանք պետք է ծառայեն համապատասխան տնտեսավարող սուբյեկտի ռիսկայնության գնահատականի փոփոխության համար: Ըստ անհրաժեշտության ստուգումներն անցկացվում

են միայն այն դեպքում, երբ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ երբ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ: Տնտեսավարող սուբյեկտներից ստացված բողոքները օգտագործվում են Տեսչական մարմնի որակի ապահովման և հաշվետվողականության նպատակներով:

Տեսչական մարմինը քաղաքացիներից ստացել է 2017թ. թվով 9, իսկ 2018թ. թվով 16 դիմում բողոք, որոնցից միայն 2 քաղաքացու դիմումների հիման վրա է իրականացվել ստուգումներ:

***Տնտեսավարող սուբյեկտներից և հանրությունից ստացված բողոքներով արտածրագրային ստուգումներ իրականացնելու դեպքում ստուգում իրականացնելու վերաբերյալ հրամաններում կամ հանձնարարագրերում հստակ պետք է սահմանված լինեն դրանց հիմքերը, ինչպես նաև հիմնավորումներ, որ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ: Հարկ է նշել, որ Տեսչական մարմնի կողմից 2017-2018թթ. ստացված 2 դիմում բողոքների հիման վրա իրականացված ստուգման հանձնարարականներում բացակայում էր պատշաճ հիմնավորումները:***

Տեսչական մարմինը 2017թ. ՀՀ վարչապետի հանձնարարականով իրականացրել է 53 ստուգում, իսկ 2018թ. հանձնարարական չի ունեցել: Իսկ 2017թ. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից գրավոր տեղեկատվություն չի ստացել և ստուգումներ չի իրականացրել, 2018թ. իրականացրել է 1 ստուգում՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահի գրության հիման վրա: Սակայն, Տեսչական մարմինը 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը ՀՀ տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացել է թվով 15 դիմումներ:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է նաև «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքից և այլ իրավական ակտերից: «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն բոլոր ստուգումներն անցկացվում են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատում է ՀՀ կառավարությունը:

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմինը վերակազմավորվել է ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի, որն իր գործունեությունը շարունակում է նախկին մարմնի ստուգաթերթերով**

*Սակայն, Տեսչական մարմնի ստուգաթերթերը հաստատվել են ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N 756-Ն որոշմամբ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչության համար, որը որպես մարմին դադարել է գոյություն ունենալ ՀՀ վարչապետի*

*11.06.2018թ. N 732-Լ որոշմամբ՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմինը վերակազմավորվել է ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի, որն իր գործունեությունը շարունակում է նախկին մարմնի ստուգաթերթերով:*

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ա որոշման համաձայն 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված տեսչական մարմինների ստուգումները կարող են իրականացվել միայն հստակ սահմանված դեպքերում, այդ որոշման հավելվածով հաստատված տեսչությունների ստուգումների ստուգաթերթերով՝ ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և բարձր ռիսկային խմբում գտնվող սուբյեկտների մոտ: Սակայն, Տեսչական մարմինն այդ տեսչությունների շարքին չի դասվում, հետևաբար 2017թ.-ին ստուգումներ իրականացնելու իրավասություն չուներ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմնի կողմից 2017թ-ին և 2018թ.-ի 9-ը ամիսների ընթացքում նշանակված տուգանքների ընդհանուր **45,110.0** հազ. դրամ գումարից **4,700.0** հազ. դրամը պետական բյուջե չի վճարվել:
2. Տեսչական մարմնի կողմից 2017-2018թ.թ.-ին քաղաքացիների դիմում–բողոքների հիման վրա արտածրագրային ստուգումներ իրականացնելու դեպքում ստուգում իրականացնելու վերաբերյալ հրամաններում կամ հանձնարարագրերում հստակ սահմանված չեն եղել դրանց հիմքերը, ինչպես նաև հիմնավորումները, որ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ, ինչը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թ.-ի հունիսի 18-ի N 711-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներին:
3. Տեսչական մարմինն իր վերահսկողական գործառույթները շարունակում է իրականացնել նախկին մարմնի ստուգաթերթերով: ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի համար նոր ստուգաթերթերի (կամ ստուգաթերթերում այդ ուղղությամբ կատարված փոփոխությունների) վերաբերյալ հաստատված իրավական ակտ չկա:
4. Տեսչական մարմինը 2017թ.-ին ստուգումներ իրականացնելու իրավասություն չուներ՝ համաձայն ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ա որոշման դրույթների:

## ***Առաջարկություններ՝***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Հետամուտ լինել Տեսչական մարմնի կողմից նշանակված տուգանքների պատշաճ հավաքագրմանը:

2. Հետամուտ լինել ստուգումների պատշաճ իրականացմանը:
3. Տեսչական մարմնի կողմից քաղաքացիների դիմում – բողոքների հիման վրա արտածրագրային ստուգումներ իրականացնելու դեպքում ստուգում իրականացնելու վերաբերյալ հրամաններում կամ հանձնարարագրերում հստակ սահմանել դրանց հիմքերը, ինչպես նաև հիմնավորումները, որ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ՝ համաձայն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թ.-ի հունիսի 18-ի N 711-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջների:

**ՀՀ կառավարությանը՝**

1. Ժամանակին հաստատել ստուգումների ստուգաթերթերը, որպեսզի Տեսչական մարմինների գործունեությունը կաթվածահար չլինի:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկությունները և բացատրություններ չեն ներկայացվել:

## III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

**Տեսչական մարմնում 2017-2018թթ. համար պետք է հարուցված լինեին թվով 40 վարչական վարույթներ, որոնք չեն հարուցվել**

ա) անձի դիմումը, բողոքը.

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

*Վարչական վարույթը համարվում է հարուցված համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում սրանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին):*

Տեսչական մարմինը, ի տարբերություն ՀՀ-ում գործող այլ տեսչական մարմինների, 2017-2018թթ.ընթացքում ստացված դիմում բողոքների հիման վրա վարչական վարույթներ չի հարուցել, այլ միայն ստուգումներ է իրականացրել: Սակայն Տեսչական մարմինը

քաղաքացիներից 2017թ. ստացել է թվով 9, իսկ 2018թ. թվով 16 դիմում-բողոքներ, իսկ ՀՀ տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից 2017-2018թթ. վերահասցեագրված թվով 15 դիմում բողոքներ:

*Վարչական վարույթը համարվում է հարուցված համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, հետևաբար տեսչական մարմինը բոլոր դիմում բողոքների հիման վրա պարտավոր էր հարուցել վարչական վարույթներ:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմնում 2017-2018թթ. համար պետք է հարուցված լինեին թվով 40 վարչական վարույթներ, որոնք չեն հարուցվել, ինչը չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթների պահանջներին:

### ***Առաջարկություններ՝***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Պատշաճ վարչարարություն իրականացնել՝ սեփական նախաձեռնությամբ կամ անձանց դիմում-բողոքների հիման վրա հարուցել վարչական վարույթներ:

### ***Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ***

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկությունները և բացատրություններ չեն ներկայացվել:

## IV. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՎ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԸ

Տեսչական մարմնի ղեկավարի 24.09.2018թ.-ի 368-Ա հրամանով աշխատողների նկատմամբ կիրառվել են միանվագ դրամական խրախուսանքներ և պարգևատրումներ, ընդհանուր առմամբ **5,606.0** հազ. դրամի չափով, մինչդեռ տվյալ ֆինանսական միջոցների կարգադրիչը հանդիսանում է ոչ թե ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմինը, այլ՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը:

***«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և Տեսչական մարմնի կանոնադրության 21-րդ կետի համաձայն Տեսչական մարմնի ղեկավարի և տեղակալների նկատմամբ խրախուսման ու պատասխանատվության միջոցներ կիրառում է ՀՀ վարչապետը՝ խորհրդի ներկայացմամբ: Սակայն վերջիններս խրախուսում ստացել են Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով:***

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2 հոդվածի 12-րդ մասի դրույթների հետ, այն է՝ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներն են պետական բյուջեով նախատեսվող հատկացումների գծով տվյալ տարվա պետական բյուջեի ելքերի գերատեսչական կառուցվածքում նշված պետական մարմինները և (կամ) պետական հիմնարկները՝ իրենց գծով սահմանված հատկացումների մասով:
2. Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և Կանոնադրության 21-րդ կետի դրույթների հետ, այն է՝ տեսչական մարմնի տեղակալների նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառում է ՀՀ վարչապետը՝ խորհրդի ներկայացմամբ:

## *Առաջարկություններ՝*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Հետամուտ լինել, որպեսզի միանվագ դրամական խրախուսանքները և պարգևատրումները տրամադրվեն այն մարմնի կողմից, որը հանդիսանում է ֆինանսական միջոցների կարգադրիչը:

**ՀՀ կառավարությունը՝**

1. Հետամուտ լինել, որպեսզի տեսչական մարմնի տեղակալների նկատմամբ խրախուսման միջոցները կիրառվեն ՀՀ վարչապետի կողմից՝ խորհրդի ներկայացմամբ:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

## V. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Տեսչական մարմինը չի օգտագործում իր թվով 2 շարժական լաբորատորիաները**

Տեսչական մարմինը «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական չափագիտության տարածման ոլորտների պահանջների պահպանման, հաստատված տեսակի չափման միջոցների կիրառման, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների առկայության և չափումների միասնականության ապահովման բնագավառում տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական չափագիտական վերահսկողության իրականացման ընթացքում կատարում է նաև լաբորատոր հետազոտություններ: Մարմնում առկա են թվով երկու շարժական լաբորատորիաներ, որոնք համալրված են համապատասխան սարքերով և սարքավորումներով: *Տեսչական մարմնի շարժական լաբորատորիաների միջոցով տևական ժամանակ է լաբորատոր հետազոտություններ չեն իրականացվել, փոխարենը տեսչական մարմնի կողմից լաբորատոր հետազոտությունները և փորձաքննությունները 2018 թ. դեկտեմբերի 4-ի դրությամբ* ***12,405.2*** *հազ.դրամ գումարի չափով, որից քննիչի որոշմամբ՝* ***11,824.0*** *հազ.դրամ, ծրագրային փորձարկում՝* ***581,2*** *հազ.դրամ պատվիրվել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությանը:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևյալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը չի օգտագործում իր թվով 2 շարժական լաբորատորիաները:
2. Տեսչական մարմինը լաբորատոր հետազոտություններն իր մոտ կատարելու փոխարեն պատվիրում է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությանը՝ հավելյալ վճարելով 2018 թ. դեկտեմբերի 4-ի դրությամբ **12,405.2** հազ.դրամ:

### *Առաջարկություններ՝*

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**Տեսչական մարմնին՝**

1. Սահմանված կարգով օգտագործել իր թվով 2 շարժական լաբորատորիաները:

2. Հետամուտ լինել, որպեսզի Տեսչական մարմնի լաբորատոր հետազոտությունները կատարվեն ոչ թե «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունում հավելյալ վճարի փոխարեն, այլ իր մոտ՝ Տեսչական մարմնում:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից ներկայացված առարկությունները և բացատրությունները էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկությունները և բացատրություններ չեն ներկայացվել:

# VI. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱԿԱՐԳ

**Տեսչական մարմինը 2018թ. ապրիլի 9-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ**

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունները՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պետք է ունենան ներքին աուդիտի համակարգ: Ներքին աուդիտի համակարգը, համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, ներքին աուդիտի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, պահանջների և ներքին աուդիտի մասնակիցների իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է: Ավելին, «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական մարմնի գործունեությունը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելով՝ ներքին աուդիտը պետք է աջակցի պետական մարմնին հասնել իր նպատակներին՝

1) օժանդակելով պետական մարմնի ղեկավարին՝ պետական մարմնում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում.

2) գնահատելով ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետությունը և համապատասխանությունը հետևյալ պայմաններին՝

ա. պետական մարմնի ղեկավարության կողմից ռիսկերի բացահայտում, գնահատում և կառավարում,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և պետական մարմնի գործունեության առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանություն,

գ. տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,

դ. տեղեկությունների վստահելիություն և ամբողջականություն,

ե. կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն,

զ. առաջադրանքների կատարում և նպատակների իրագործում:

*Ելնելով վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ ներքին աուդիտի համակարգը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործընթացների ամբողջություն է, որն ուղղված է պետական մարմնի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է պետական մարմնին հասնել իր նպատակներին՝ պետական մարմնի ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:*

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի դրույթների համաձայն Հաշվեքննիչ պալատն իրավասու է ուսումնասիրելու իր կողմից հաշվեքննվող մարմինների ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը:

Սակայն, հաշվեքննող խմբի 2018թ. դեկտեմբերի 19-ի ՀՊԵ-ԱՄ-196 գրությանն ի պատասխան Տեսչական մարմինը հայտնել է, որ Տեսչական մարմնում 2017-2018թթ. ընթացքում ներքին ուդիտի համակարգը գործել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում, իսկ ներքին աուդիտի վարչության կողմից ուսումնասիրութուններ չեն իրականացվել:

«Տեսչական մարմինների մասին»ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմինը Կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է: Սույն օրենքը ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից, հետևաբար Տեսչական մարմինն այդ օրվանից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է հետևալ խեղաթյուրումներն ու անհամապատասխանությունները՝

1. Տեսչական մարմինը 2018թ. ապրիլի 9-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ:

## ***Առաջարկություններ՝***

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

**ՀՀ Տեսչական մարմնին՝**

1. Մշակել և ներդնել ներքին աուդիտի համակարգ՝ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների:

## *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների պատասխաններ*

**Տեսչական մարմին՝**

Տեսչական մարմնի կողմից այս կետի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներն էական առումներով որևէ հիմնավոր պարզաբանումներ չեն պարունակել, կրել են հիմնականում բացատրական բնույթ և հաշվեքննության խմբի կողմից չեն ընդունվել:

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից այս կետի վերաբերյալ առարկությունը, այն է՝ մինչև 2018թ.-ի հունիսի 11-ը Տեսչական մամինը գտնվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կազմում, որտեղ գործել է ներքին ուդիտի բաժին, Հաշվեքննության խմբի կողմից ընդունվել է:

***Ծանոթություն:*** *Հաշվեքննության օբյեկտների ղեկավարների կողմից հաշվեքննության արձանագրություններում պարունակվող որոշ փաստերի վերաբերյալ ներկայացված առարկություններին և բացատրություններին հնարավոր է ծանոթանալ՝ այցելելով հետևյալ հղումով. www.armsai.am/ararkutyunner2018/001.pdf:*

# ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննող խումբը հաշվեքննող ժամանակաշրջանում՝ 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը, արձանագրել է մի շարք խեղաթյուրումներ և անհամապատասխանություններ:

***ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին***

1. Տեսչական մարմինն ամբողջությամբ չի ձևավորվել ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 27-ի N 445-Ն որոշման 3-րդ կետով սահմանված քառամյա ժամկետում:
2. Տեսչական մարմինը 2017-2018թթ. համար չի ունեցել հաստատված գործունեության տարեկան ծրագրեր:
3. Տեսչական մարմինը 2018թ.-ի ապրիլ ամսից իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը շարունակել է իրականացնել ՀՀ բնապահպանության նախարարության միջոցով, որը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին:
4. Տեսչական մարմինը չի ապահովել ՀՀ կառավարության 27.04.2017թ. № 445-Ն որոշման 10-րդ կետով սահմանված լուծարված պետական տեսչությունների կողմից սկսված և չավարտված վարչական, դատական և այլ գործառույթների իրականացման հետագա ընթացքը և չի իրականացրել ՀՀ ԲՆ Բնապահպանական տեսչության 2017թ. տարեկան ստուգումների ծրագրով նախատեսված 600, իսկ ՀՀ ԷԵԲՊՆ Ընդերքի տեսչության՝ 122 ստուգումներից ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 30-ի № 839-Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և բարձր ռիսկային խմբում գտնվող սուբյեկտների մոտ ստուգումներ:
5. Տեսչական մարմինը 2018թ.-ի հունիսի 21-ից ստուգումները շարունակել է իրականացնել ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի հոկտեմբերի 19-ի № 1343-Ն որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի համար հաստատված ստուգաթերթերով, որի իրավասությունը չուներ:
6. Տեսչական մարմինը Կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով ժամանակին չի մշակել և համապատասխան մարմիններին չի ներկայացրել իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր:
7. Տեսչական մարմինը 2017-2018թթ-ին ստուգումներն իրականացրել է թիվ 1 (ընդերքօգտագործում՝ մետաղական հանքավայրեր) և 13 (արդյունաբերություն՝ արտադրություն և շինարարություն) ստուգաթերթերով, այնինչ ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 30-ի № 839-Ա որոշման հավելվածի 4-րդ կետով պետք է իրականացվեր թիվ 11 (բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում, պահպանություն) և 6 (թափոնների հավաքում, մշակում և ոչնչացում, թափոնների վերամշակում) ստուգաթերթերով:
8. Տեսչական մարմինը չի իրականացրել ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2017 թվականի

նոյեմբերի 29-ի № 06-Ա որոշմամբ հաստատված 2018թ.-ի ստուգումների ծրագրով նախատեսված թվով 250 ստուգումներից 215-ը:

9. Տեսչական մարմինը չի մշակել ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանություն, ստուգաթերթեր:
10. Տեսչական մարմինը տնտեսավարող սուբյեկտներից և հանրությունից ստացված բողոքներով արտածրագրային ստուգումներ իրականացրել է առանց պատշաճ հիմքերի, իսկ ստուգման հանձնարարագրերում հստակ չի սահմանել դրանց հիմքերը, ինչպես նաև հիմնավորումներ, որ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ:
11. Տեսչական մարմնի կողմից 2017-2018թթ..-ին իրականացվել են թվով 797 վարչական վարույթներ: Տեսչական մարմինը տրամադրել է միմյանց հակասող 2 տարբեր տեղեկատվություն իրականացված վարչական վարույթների թվաքանակի մասին:
12. ՀՀ կառավարության 27.04.2017 թ. № 445-Ն որոշման 6-րդ կետի և 7-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները իրականացվել են ոչ պատշաճ, այն է՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների և ՀՀ բնապահպանության նախարարությունների միջև Ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված ստուգումների ընթացքում կազմված ստուգումների փաթեթների հանձնում-ընդունում չի իրականացվել:
13. Բնապահպանության նախարարության և Տեսչական մարմնի միջև ստուգումների փաթեթների հանձնման-ընդունման ոչ մի ակտ չի ստորագրվել:
14. Չի իրականացվել ՀՀ տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների մակարդակների, սահմանային թույլատրելի նորմատիվների, պահանջների ու չափման կարգերի պահպանման նկատմամբ վերահսկողություն:
15. Տեսչական մարմինը չի պահպանել Տեսուչի կողմից ավտոտրանսպորտային միջոցների չափումների ենթարկման ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2410-Ն որոշմամբ հաստատված կարգը և հետամուտ չի եղել ՄԱԿ-ի ԵՏՀ կանոնների պահպանմանը:
16. Չեն իրականացվել բնապահպանության և ընդերքի ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքները:
17. Ստուգումների ծրագիրը կազմելիս հաշվի չի առնվել ռիսկերի վրա հիմնված իր կողմից մշակված մեթոդաբանությունը և հիմք է ընդունել այլ մարմնի կողմից տրված տեղեկատվությունը:
18. Տեսչական մարմինը ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակների նկատմամբ ստուգումներ չի իրականացրել, թեև ստուգաթերթերով նման հնարավորություն նախատեսված էր:
19. Տեսչական մարմինը չի կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակման և համապատասխան մարմիններին ներկայացման պարտավորությունը:
20. Տեսչական մարմինը չի պահպանում Տեսուչի ծառայողական զենք, զինամթերք, ձեռնաշղթա պահելու, կրելու, օգտագործելու «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի ժա) կետով, 17-րդ հոդվածով և 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) և բ) կետերով, ինչպես նաև «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչին հատկացվող զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի № 2242-Ն որոշմամբ սահմանված պահանջը:

21. Տեսուչները սահմանված կարգով չեն անցել հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու՝ իրենց պիտանիությունը որոշող պատրաստության պարբերաբար ստուգումներ, որը նախատեսված է «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով և «Զենքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով:
22. Տեսչական մարմնի որոշ աշխատակիցներ զենք պահելու և օգտագործելու թույլտվություն ձեռք են բերել 5 տարի ժամկետով, մինչդեռ «Զենքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված է՝ 3 տարի ժամկետ:
23. Տեսչական մարմնի՝ զենք պահելու և օգտագործելու թույլտվություն ունեցող աշխատակիցները, որոնք այդ թույլտվությունը ստացել են լուծարված ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունից, պարտավոր էին զենքը հանձնել դեռևս 2017թ. օգոստոսի 20-ից, քանի որ իրենց թույլտվություններն ուժը կորցրած են:
24. Տեսչական մարմնի ղեկավարը չի ընդունել հատուկ պատրաստություն անցած և ՀՀ ոստիկանությունից զենք ստանալու, պահելու ու կրելու թույլտվություն ստացած աշխատակիցներին զենք տրամադրելու գրավոր հրաման:
25. Տեսչական մարմինը ՀՀ Ոստիկանության հետ չի կնքել աշխատողների հատուկ պատրաստության իրականացման պայմանագիր:
26. Տեսչական մարմինը հետամուտ չի լինում իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի միմյանց համապատասխանեցնելուն, արդյունքում՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի № 2242-Ն որոշման մեջ սահմանված զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը չի համապատասխանում ներկայիս իրավիճակին:
27. Տեսուչները սահմանված կարգով չեն անցել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու հատուկ պատրաստության դասընթացներ և չունեն դասընթացներն ավարտելը հաստատող փաստաթուղթ, որը նախատեսված է ՀՀ կառավարության 2005թ.-ի ի դեկտեմբերի 15-ի № 2296-Ն որոշմամբ հաստատված կարգով:
28. Տեսուչները տուժողին առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն չունեն:
29. Տեսուչները տեսչական գործողությունների ծավալման ամբողջ ընթացքում իրենց հետ չեն կրում առաջին բուժօգնության համար համապատասխան պարագաներ՝ դրանց համար նախատեսվող հատուկ պայուսակով, ինչը չի համապատասխանում «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:
30. Տեսչական մարմինը չի մշակել և համապատասխան մարմիններին չի ներկայացրել «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու կարգը սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 15-ի № 2296-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծ:
31. Տեսչական մարմինը չի կատարել ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. մայիսի 17-ի № 153-Ն հրամանով ամրագրված համազգեստ կրելու պարտավորությունը, ինչը չի համապատասխանում նաև «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դրույթների պահանջներին:
32. «Դերձակ» և «Էլաամոդա» ՍՊԸ-ների հետ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման « ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-1» և « ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-2» պայմանագրերի մաս

կազմող հավելվածներով սահմանված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005թ.-ի օգոստոսի 18-ի № 2085-Ն որոշմամբ ամրագրված Տեսուչի ամառային և ձմեռային համազգեստների նկարագրերին:

33. 2017-2018թթ. տեսչական մարմնի կողմից կատարվել է **9,597.96** հազ. դրամի հանդերձանքի գնման անարդյունավետ ծախս:

34. Տեսչական մարմինը չի իրականացրել «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի է) կետի և 13-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետի դրույթները, այն է ՝ Տեսուչի կողմից չեն իրականացվում առգրավված բնական ռեսուրսների, որսի, որսագործիքների և որսի գործիք համարվող այլ միջոցների՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված տնօրինման կարգի պահանջները:

35. Տեսչական մարմնի կողմից չեն իրականացվել Կարգի 2-րդ կետի պահանջները, այն է՝
   - փչացող առգրավված կենսառեսուրսներն անհատույց չեն հանձնվել տվյալ մարզի կամ համայնքի (կամ հարակից մարզի կամ համայնքի) մանկատներին, ծերանոցներին, թանգարաններին,
   - փչացող առգրավված կենսառեսուրսները, օրենքին չհամապատասխանող կարգով, որոշ դեպքերում հանձնվել են մանկապարտեզների, տուն ինտերնատների, հիվանդանոցների,
   - փչացող առգրավված կենսառեսուրսները հաստատություններին հանձնելու ժամանակ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման և ընդունող կազմակերպության ղեկավարների միջև չեն կազմվել հանձնման-ընդունման արձանագրություններ,
   - փչացող առգրավված կենսառեսուրսները հաստատություններին հանձնվել են առանց անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացության:

36. Տեսչական մարմնի կողմից շատ դեպքերում թույլ են տրվել անհամապատասխանություններ Կարգի 3-րդ կետի պահանջների հետ, այն է՝ չի տեսագրվել Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման Տեսուչների կողմից առգրավված կենդանի վայրի կենդանիներ ազատ արձակելու պահը և չի կազմվել արձանագրություն:

37. Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ Կարգի 4-րդ կետի պահանջների հետ, այն է՝ առգրավված թփերի ու խոտաբույսերի ոչնչացման համար չեն կազմվել հանձնաժողովներ, չի կազմվել արձանագրություն և չի տեսագրվել ոչնչացման պահը:

38. Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ Կարգի 7-րդ կետի պահանջների հետ, այն է՝ գրանցամատյանում բացակայում է առգրավված բնական ռեսուրսները արձանագրված խախտման հետ համադրելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ գրանցամատյանները վարվում են թերի:

39. Տեսչական մարմինը հետամուտ չի եղել ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների իրացումից կամ դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցներից առաջացած գումարները ՀՀ պետական բյուջե մուտքագրմանը, ինչը չի համապատասխանում «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների պահանջներին:

40. Տեսչական մարմինը չի կատարել Կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, դրանցում փոփոխություններ և լրացումներ մշակելու և համապատասխան մարմիններին ներկայացնելու իր

գործառույթը, այն է՝ ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի «Ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների (ներառյալ՝ որսի) տնօրինման կարգը հաստատելու մասին» № 2168-Ն որոշման մեջ անհրաժեշտ է իրականացնել փոփոխություններ և սահմանել, որ ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսներ կարող են հայտնաբերվել և առգրավվել նաև վարչական վարույթի շրջանակներում:

41. Տեսչական մարմնի անհետևողականության արդյունքում, համապատասխան մարմիններին (ՀՀ գլխավոր դատախազություն, ԴԱՀԿ և այլն) գրություններով հարցումներ չներկայացնելու հետևանքով վերահսկողությունից դուրս է մնացել պետական բյուջե վնասի հատուցման գումարների մուտքագրման հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը:
42. 2017թ-ից 2018թ-ի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում պետական բյուջե վնասի հատուցման շուրջ **3,137,012.6** հազ.դրամ գումարից մուտքագրվել է **168,406.2** հազ.դրամ գումար:
43. Տեսչական մարմինը պատշաճ չի իրականացրել տնտեսվարող սուբյեկտներին իրազեկելու գործառույթը՝ ինչը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնադրության 12-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթների պահանջներին:
44. Ոչ պատշաճ իրազեկման արդյունքում տնտեսավարող սուբյեկտների կողմից չի կատարվել ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի № 1291-Ն որոշմամբ հաստատված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգի 5-րդ կետի պահանջը, այն է՝ միասնական հարկային հաշվարկի հավելվածը հիմնականում չի ներկայացվել բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստատմանը:
45. Թերկոմպլեկտավորված և չստուգաչափված սարքերը և սարքավորումները կասկածի տակ են դնում հետազոտությունների արդյունքների արժանահավատությունը:
46. «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չստուգաչափված չափման միջոցների շահագործումն արգելվում է:
47. Տեսչական մարմնի կողմից պատշաճ չի ապահովվել վիճակագրական տվյալների հավաքման և վերլուծությունների, ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացումը և վերահսկողական ու հսկողական գործառույթների նպատակադրումը դեպի առավել ռիսկային ոլորտներն ու տնտեսավարող սուբյեկտները՝ ինչը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետի և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2. 1 հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի դրույթների պահանջներին:
48. Տեսչական մարմինը չունի ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություն:
49. Ոլորտում ռիսկերի գնահատման մեթոդաբանության բացակայությամբ գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքներում ցուցաբերվել է կամայական մոտեցում:
50. Տեսչական մարմնի կողմից հայտնաբերված շարժական գույքը՝ ձկներն ու խեցգետինը, տիրազուրկ է ճանաչվել օրենքին չհամապատասխանող կերպով:

51. Տեսչական մարմնի Գեղարքունիքի մարզի տարածքային բաժնի կողմից ձկների և խեցգետնի մասին տրամադրված տեղեկատվությունը չի համապատասխանում բնական ռեսուրսների գրանցամատյանում լրացված տեղեկատվության հետ:
52. Տեսչական մարմնի կողմից չի իրականացվել Կանոնադրության 11-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերության դրույթները, այն է՝ չեն կիրառվել պատասխանատվության միջոցներ վայրի կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների՝ ՀՀ-ից արտահանման, ՀՀ դրանց ներմուծման սահմանված պահանջների պահպաման նկատմամբ:
53. Տեսչական մարմինը 2018թ. ապրիլի 9-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ:

***[ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին]()***

54. Տեսչական մարմինն ամբողջությամբ չի ձևավորվել ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 27-ի N 444-Ն որոշման 3-րդ կետով սահմանված քառամսյա ժամկետում:
55. Տեսչական մարմինը 2017-2018թթ. համար չի ունեցել գործունեության տարեկան ծրագրեր:
56. Տեսչական մարմինը 2017թ.-ին պետական բյուջե գումար չի մուտքագրել:
57. Տեսչական մարմինը 2018թ. ապրիլ ամսից իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացրել է ՀՀ առողջապահության նախարարության միջոցով, որը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին:
58. Տեսչական մարմնի կողմից 2017-2018թթ.. ստուգումներ չեն իրականացվել ստուգումների տարեկան ծրագրեր, ստուգումների մեթոդաբանություն և ստուգաթերթեր չունենալու պատճառով:
59. Տեսչական մարմինը ՀՀ կառավարության 27.04.2017 թ. N 444-Ն որոշման 3-րդ կետով սահմանված քառամսյա ժամկետում չի իրականացրել մարմնի ձևավորման համար անհրաժեշտ գործառույթները, այն է՝ չի մշակել տեսչական մարմնի գործունեության և իրականացվող ստուգումների տարեկան ծրագրերը, ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանություն, ստուգաթերթեր, իրավական ակտերում չեն կատարվել համապատասխան փոփոխություններ և այլն:
60. Տեսչական մարմինը չի ապահովել ՀՀ կառավարության 27.04.2017թ. N 444-Ն որոշման 8-րդ կետով սահմանված լուծարված պետական տեսչությունների կողմից սկսված և չավարտված վարչական, դատական և այլ գործառույթների իրականացման հետագա ընթացքը և չի իրականացրել ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված թվով 950 տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումները:
61. Տեսչական մարմինը չի իրականացրել ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 30-ի № 839-Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված այդ որոշման հավելվածով հաստատված ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և բարձր ռիսկային խմբում գտնվող սուբյեկտների մոտ ստուգումները՝ թիվ 26 (հանրակրթական դպրոցների) և 27 (նախադպրոցական կազմակերպությունների) ստուգաթերթերով:
62. Տեսչական մարմնի կողմից 2017թ. -ին վարչական վարույթ չի իրականացվել:

63. 2018թ. սեպտեմբերի 20-ի դրությամբ իրականացվել են դիմում-բողոքի հիման վրա՝ 76, սեփական նախաձեռնությամբ՝ 83 վարչական վարույթներ:

64. ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության լուծարումից հետո առ այսօր ՀՀ ԱՆ-ի կողմից տեսչության գույքի, այդ թվում՝ փաստաթղթերի գույքագրում չի իրականացվել՝ ինչը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի «ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները» սահմանելու մասին 08. 01. 2016թ. -ի N 2-Ն հրամանի 7-րդ կետի պահանջին, այն է՝ կազմակերպության վերակազմակերպման և լուծարման դեպքերում պարտադիր գույքագրման ենթակա են կազմակերպության բոլոր ակտիվներն ու պարտավորությունները:

65. ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության և Տեսչական մարմնի միջև տեղի չի ունեցել գույքի հանձնում-ընդունում:

66. Տեսչական մարմինը 2017թ. -ին չի իրականացրել պարտադիր գույքագրում «ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները» սահմանելու մասին 08. 01. 2016թ. -ի N 2-Ն հրամանի 6-րդ կետի համաձայն, այն է՝ տարեկան ֆինանսական հաշվետվություններ կազմելուց առաջ պարտադիր գույքագրման ենթակա են կազմակերպության բոլոր ակտիվներն ու պարտավորությունները:

67. «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի յուրաքանչյուրը **38,416,9** հազ. դրամ արժողությամբ հեռահար ջերմաչափման ստացիոնար սարքերը, գտնվելով երաշխիքային սպասարկման մեջ, մինչ օրս չեն աշխատում:

68. ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից իրականացվելիք վերահսկողական գործառույթների մեծ մասը չեն ներառվել Տեսչական մարմնին վերապահված վերահսկողական գործառույթների մեջ: Օրինակ՝

- Կազմակերպությունների մասնավորեցման և լուծարման ընթացքում աշխատողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողության իրականացում.
- Կոլեկտիվ պայմանագրերով (համաձայնագրերով) նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով խախտված իրավունքների վերականգնման համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկում.
- գործատուի կողմից չձևակերպված աշխատող պահվելու կամ աշխատավարձ չհաշվարկվելու և (կամ) չվճարվելու դեպքեր հայտնաբերելիս՝ կենսաթոշակային սոցիալական ապահովագրություն իրականացնող լիազոր մարմին դրանց մասին տեղեկացնելը
- քաղաքացիների աշխատանքային իրավունքների խախտման մասին դիմումների և բողոքների քննարկում և այլն:

69. Տեսչական մարմնի կողմից խորհրդատվության և իրազեկման գործառույթն իրականացնելու փոխարեն մի շարք դեպքերում կատարվել են փաստացի ստուգումներ, ընդ որում, առանց ստուգաթերթերի:

70. Տեսչական մարմնի կողմից թույլ է տրվել անհամապատասխանություն Կանոնադրության 29-րդ կետի պահանջներին, այն է՝ կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է Տեսչական մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները, սակայն կառուցվածքային ստորաբաժանումները մինչ օրս չունեն կանոնադրություն:
71. ՀՀ մարզերում խորհրդատվության և իրազեկման գործառույթներն իրականացվել են ոչ թե Տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանումների, այլև Երևանից գործուղված աշխատակիցների կողմից :
72. Տեսչական մարմինը կանոնադրությամբ ուսումնասիրություն կատարելու իրավասություն չունի, սակայն կատարել է:
73. Տեսչական մարմնի կողմից կատարվել է ստուգման գործառույթի մաս հանդիսացող ուսումնասիրություն ստուգման ծրագրի և ստուգաթերթերի բացակայության պայմաններում՝ թույլ տալով անհամապատասխանություն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին 1.1 կետի և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասին 1-ին կետի դրույթների պահանջների հետ:
74. Տեսչական մարմինը չի կատարում սանիտարահիգիենիկ փորձաքննության ու լաբորատոր հետազոտություններ կատարելու նպատակով նմուշառում և գործիքային չափումներ իրականացնելու իր գործառույթը՝ համապատասխան գործիքներ և մասնագետներ չունենալու պատճառով:
75. Գործակալությունը և Տեսչական մարմինն իրականացնում են միևնույն վերահսկողական գործառույթները: Առկա են գործառույթների կրկնորդումներ:
76. Գործակալությունը փաստացի կատարել է ստուգումներ՝ դիտարկումների և մշտադիտարկումների անվան տակ՝ թույլ տալով անհամապատասխանություն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների պահանջների հետ:
77. Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2 հոդվածի 12-րդ մասի դրույթների պահանջների հետ, այն՝ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներն են պետական բյուջեով նախատեսվող հատկացումների գծով տվյալ տարվա պետական բյուջեի ելքերի գերատեսչական կառուցվածքում նշված պետական մարմինները և (կամ) պետական հիմնարկները՝ իրենց գծով սահմանված հատկացումների մասով:
78. Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ «Տեսչական մարմինների մասին «ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և Կանոնադրության 16-րդ կետի դրույթների պահանջների հետ, այն է՝ տեսչական մարմնի ղեկավարի նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառում է ՀՀ վարչապետը՝ խորհրդի ներկայացմամբ :
79. Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ «Տեսչական մարմինների մասին « ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և Կանոնադրության 21-րդ կետի դրույթների պահանջների հետ, այն է՝ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների նկատմամբ խրախուսման միջոցներ է կիրառում ՀՀ վարչապետը:
80. Տեսչական մարմինը 2018թ. ապրիլի 9-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ:

*ՀՀ կրթության տեսչական մարմին*

81. Տեսչական մարմինն ամբողջությամբ չի ձևավորվել ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 7-ի N 1150-Ն որոշման 3-րդ կետով սահմանված քառամսյա ժամկետում:
82. Տեսչական մարմինը 2017թ. համար չի ունեցել գործունեության տարեկան ծրագիր (աշխատանքային ծրագիր):
83. Տեսչական մարմինը պետական բյուջե գումար չի մուտքագրել 2017-2018թթ.:
84. Տեսչական մարմինը 2018թ. ապրիլ ամսից իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացրել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության միջոցով, որը հանդիսանում է անհամապատասխանություն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջների հետ:
85. Տեսչական մարմինը չպետք է իրականացներ ստուգումներ 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում, բացառությամբ մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների սննդի կազմակերպման նկատմամբ իրականացվող ստուգումների՝ համաձայն ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ա որոշման:
86. Տեսչական մարմինը 2018թ. չի իրականացրել ոչ մի ստուգում:
87. Տեսչական մարմինը 2018թ. չի ունեցել ստուգումների ստուգաթերթեր:
88. Տեսչական մարմինը օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորությունը չի կատարել ո՛չ 2017թ.-ին, ո՛չ 2018թ.-ին:
89. Տեսչական մարմինը 2017թ. կատարել է 150, իսկ 2018թ. 2 փաստացի ստուգումներ՝ ուսումնասիրությունների անվան տակ՝ թույլ տալով անհամապատասխանություն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթների պահանջներ հետ:
90. Տեսչական մարմինը չի կատարել ուսումնասիրություններ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:
91. Կրթության և գիտության նախարարության Լիցենզավորման գործակալությունն իրականացրել է գործառույթ, որի համար օրենքով լիազորված էր Տեսչական մարմինը, որը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և Կանոնադրության 10-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթների պահանջներին:
92. ՀՀ կրթության ոլորտի կարևորագույն մասնիկը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները, դուրս են մնացել տեսչության ստուգումների և հսկողության դաշտից:
93. Թվով 17 ոչ պետական բուհերի ղեկավար կազմի վերլուծությունից պարզվել է, որ ռեկտորի, պրոռեկտորի, դեկանի պաշտոններ զբաղեցնում են գիտական կոչում և աստիճան չունեցող անձիք:
94. Տեսչական մարմինը չի իրականացրել իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակման, գործող իրավական ակտերում փոփոխությունների և համապատասխան մարմիններին ներկայացնելու իր պարտավորությունը, որը սահմանված է Կանոնադրության 14-րդ կետի 2-րդ ենթակետով և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ կետի 1.1) ենթակետով:

**95.** Տեսչական մարմինը չի իրականացրել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացման, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման, իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովման և կանխարգելիչ գործունեության իր պարտավորությունը՝ թույլ տալով անհամապատասխանություն Կանոնադրության 10-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթների պահանջների հետ:

**96.** Տեսչական մարմինը 2018թ. չի ունեցել ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություն՝ թույլ տալով անհամապատասխանություն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի 2 մասի դրույթների պահանջների հետ:

**97.** Ստուգումների և գործունեության տարեկան ծրագրերը կազմվել են օգտագործելով արդեն իսկ գոյություն չունեցող մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը:

**98.** Տեսչական մարմինը 2018թ. ապրիլի 9-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ:

***ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին***

**99.** Տեսչական մարմինը 2018թ. ապրիլ ամսից իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացրել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության միջոցով, որը չի համապատասխանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին:

**100.** Տեսչական մարմնի կողմից 2017թ-ից - 2018թ.-ի 9-ը ամիսների ընթացքում նշանակված տուգանքների ընդհանուր **45,110.0** հազ. դրամ գումարից **4,700.0** հազ. դրամը պետական բյուջե չի վճարվել:

**101.** Տեսչական մարմնի կողմից 2017-2018թթ.-ին քաղաքացիների դիմում – բողոքների հիման վրա արտածրագրային ստուգումներ իրականացնելու դեպքում ստուգում իրականացնելու վերաբերյալ հրամաններում կամ հանձնարարագրերում հստակ սահմանված չեն եղել դրանց հիմքերը, ինչպես նաև հիմնավորումները, որ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ՝ թույլ է տրվել անհամապատասխանություն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թ.-ի հունիսի 18-ի N 711-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջների հետ:

**102.** Տեսչական մարմինն իր վերահսկողական գործառույթները շարունակում է իրականացնել նախկին մարմնի ստուգաթերթերով: ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի համար նոր ստուգաթերթերի (կամ ստուգաթերթերում այդ ուղղությամբ կատարված փոփոխությունների) վերաբերյալ հաստատված իրավական ակտ չկա:

**103.** Տեսչական մարմինը 2017թ.-ին ստուգումներ իրականացնելու իրավասություն չուներ՝ համաձայն ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ա որոշման դրույթների:

**104.** Տեսչական մարմնում 2017-2018թթ. համար պետք է հարուցված լինեին թվով 40 վարչական վարույթներ, որոնք չեն հարուցվել՝ թույլ տալով անհամապատասխանություն

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթների պահանջների հետ:

**105.** Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 1.2 հոդվածի 12-րդ մասի դրույթների պահանջների հետ, այն է՝ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներն են պետական բյուջեով նախատեսվող հատկացումների գծով տվյալ տարվա պետական բյուջեի ելքերի գերատեսչական կառուցվածքում նշված պետական մարմինները և (կամ) պետական հիմնարկները՝ իրենց գծով սահմանված հատկացումների մասով:

**106.** Տեսչական մարմնի կողմից թույլ են տրվել անհամապատասխանություններ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և Կանոնադրության 21-րդ կետի դրույթների պահանջների հետ, այն է՝ տեսչական մարմնի տեղակալների նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառում է ՀՀ վարչապետը՝ խորհրդի ներկայացմամբ:

**107.** Տեսչական մարմինը չի օգտագործում իր թվով 2 շարժական լաբորատորիաները:

**108.** Տեսչական մարմինը լաբորատոր հետազոտություններն իր մոտ կատարելու փոխարեն պատվիրում է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությանը՝ հավելյալ վճարելով 2018 թ. դեկտեմբերի 4-ի դրությամբ **12,405.2** հազ.դրամ:

**109.** Տեսչական մարմինը 2018թ. ապրիլի 9-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ:

*Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հաշվեքննության խումբն արձանագրում է, որ նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ չի ապահովվել համապատասխան որակի, քանակի և ժամկետի առավելագույն արդյունքի ստացումը, հատկապես նկատի ունենալով տեսչական մարմինների բնականոն գործունեությանն ուղղված ռեսուրսների ծավալն ու նշանակությունը:*

*Արձանագրված ինտիտուցիոնալ խնդիրներին և ստուգումների թերակատարմանը զուգահեռ տեսչական մարմինները կատարել են ծախսեր, որոնց արդյունավետությունը ցածր է կամ անհասկանալի (Տե՛ս Հավելված 5): Արդյունավետ չի եղել նաև սահմանված նպատակների իրականացումը և պլանավորված արդյունքների ստացումը: Նվազագույնի չեն հասցվել նախատեսված (ձեռք բերվող) ռեսուրսներին ուղղված ծախսերը:*

*Տեսչական մարմինների ներքին գործընթացները պետք է ամբողջությամբ բարելավվեն, կատարվեն համակարգային փոփոխություններ, իրականացվեն միջոցառումներ աշխատակիցների մասնագիտական և որակական չափանիշները բարձրացնելու նպատակով:*

*Բոլոր տեսչական մարմիններում անհրաժեշտ է ներդնել ներքին աուդիտի համակարգ, որն առավելագույնս կձառայի իր նպատակային նշանակությանը:*

*Տեսչական մարմինների բնականոն գործունեությունը կարգավորող իրավական դաշտը ամբողջական չէ, առկա են բազմաթիվ թերություններ, պահպանվել են նախկին մարմինների ձևակերպումները և դրանց բնորոշ իրավակարգավորումները, որոնք արդեն ժամանակավրեպ են:*

*Հաշվեքննության ընթացքում ի հայտ են եկել այլ առանձին անհամապատասխանություններ և ռիսկեր և եթե հետագայում դրանք չբացառվեն, ապա բացասաբար կանդրադառնան տեսչական մարմինների արդյունավետության վրա:*

# ԱՄՓՈՓ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները՝

***ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին***

1. «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1. 3-րդ կետի համաձայն հաստատել ոչ միայն ստուգումների այլ նաև գործունեության տարեկան ծրագրեր:
2. Հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացնել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, այն է՝ տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է վարչապետի աշխատակազմի միջոցով:
3. Սահմանված ժամկետներում մշակել և Կառավարությանը ներկայացնել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստուգաթերթերը:
4. Ստուգումներ իրականացնել բոլոր հաստատված ստուգաթերթերով, որպեսզի Տեսչական մարմնի Կանոնադրությամբ հաստատված վերահսկողության բոլոր ոլորտները լինեն մշտական հսկողության ներքո:
5. Ժամանակին իրականացնել ստուգումների ծրագրերով նախատեսված բոլոր ստուգումները:
6. Քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա արտածրագրային ստուգումներ իրականացնել ՀՀ կառավարության 2015թ. -ի հունիսի 18-ի N 711-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, այսինք այն դեպքում, երբ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ, և ստուգման հանձնարարագրերում հստակ սահմանված լինեն դրանց հիմքերը, ինչպես նաև հիմնավորումները:
7. Մշակել դիմում-բողոքների և վարչական վարույթների գրանցման այնպիսի մեխանիզմ, որը հնարավորություն կտա ճշգրիտ և հստակ պատկերացում ունենալ վարչական վարույթների հարուցման և վարման ամբողջ գործընթացի վերաբերյալ, ինչի արդյունքում հնարավոր կլինի խուսափել իրարամերժ տեղեկատվություն տրամադրելուց:
8. ՀՀ Բնապահպանության նախարարության հետ ստորագրել փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտ:
9. Լուծարված պետական տեսչությունների կողմից կազմված ստուգումների փաթեթները պատշաճ տեսակավորել ըստ ուղղվածությունների:
10. Իրականացնել ՀՀ տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակների չափումներ, և խախտումների դեպքում պատասխանատվության ենթարկել իրավախախտներին՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 80-րդ հոդվածով սահմանված կարգով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

11. ՀՀ տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակների չափումները իրականացնել ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 20-ի N 860-Ն որոշմամբև ՄԱԿ ԵՏՀ N 83 և և N 49 կանոններով սահմանված արտանետումների մակարդակներով կամ արտանետումների տեխնիկական նորմատիվներով՝ ելնելով ավտոտրանսպորտային միջոցների ենթախմբերից ու շարժիչի տեսակից:
12. Համագործակցել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ որպեսզի իրականացվի ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումներ՝ հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության պետի և ՀՀ բնապահպանության նախարարի կողմից համատեղ ընդունված համապատասխան հրամանը:
13. Մշակել իրավական ակտերի նախագծեր, որոնք կկանոնակարգեն ոլորտը կարգավորող իրավական ակտերի միջև հակասությունները:
14. Կատարել «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի ժա) կետով, 17-րդ հոդվածով և 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) և բ) կետերի և «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչին հատկացվող զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի № 2242-Ն որոշման՝ Տեսուչներին ծառայողական զենք, զինամթերք, ձեռնաշղթա տրամադրելու, պահելու, կրելու և օգտագործելու վերաբերյալ պահանջները:
15. Պարբերաբար կազմակերպել «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով և «Զենքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված տեսուչների հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու՝ իրենց պիտանիությունը որոշող պատրաստության ստուգումներ:
16. Հետևել «Զենքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից զենք պահելու և օգտագործելու թույլտվության ձեռքբերման ժամկետների պահպանմանը:
17. Տեսչական մարմնի՝ զենք պահելու և օգտագործելու թույլտվություն ունեցող աշխատակիցները, որոնք այդ թույլտվությունը ստացել են լուծարված ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունից, զենքը պատշաճ ձևով հանձնեն ՀՀ ոստիկանություն:
18. Տեսչական մարմնի ղեկավարը պետք է ընդունի գրավոր հրաման հատուկ պատրաստություն անցած և ՀՀ ոստիկանությունից զենք ստանալու, պահելու ու կրելու թույլտվություն ստացած աշխատակիցներին զենք տրամադրելու վերաբերյալ:
19. ՀՀ Ոստիկանության հետ կնքել աշխատողների հատուկ պատրաստության իրականացման պայմանագիր:
20. Հետամուտ լինել իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի միմյանց համապատասխանությանը, այն է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի № 2242-Ն որոշման մեջ սահմանված զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը պետք է համապատասխանեցվի ներկայիս իրավիճակին:

21. ՀՀ կառավարության 2005թ.-ի դեկտեմբերի 15-ի № 2296-Ն որոշմամբ հաստատված կարգով Տեսուչները պետք է սահմանված կարգով անցնեն ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու հատուկ պատրաստության դասընթացներ և ձեռք բերեն դասընթացներն ավարտելը հաստատող փաստաթուղթ:
22. Տեսուչները պետք է տեսչական գործողությունների ծավալման ամբողջ ընթացքում իրենց հետ կրեն առաջին բուժօգնության համար համապատասխան պարագաներ՝ դրանց համար նախատեսվող հատուկ պայուսակով՝ համաձայն «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների:
23. Տեսչական մարմինը պետք է մշակի և համապատասխան մարմիններին ներկայացնի «Բնապահպանության և ընդերքի պետական տեսուչի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու կարգը սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 15-ի № 2296-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծ:
24. Կատարել ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ. մայիսի 17-ի N 153-Ն հրամանով ամրագրված համազգեստն ամենօրյա ծառայողական պարտականությունները կատարելու, ատեստավորման, հատուկ ուսուցման և վերապատրաստման ժամանակ, իսկ դաշտային համազգեստը՝ դաշտային պայմաններում իրականացվող ստուգումների և ստուգայցերի իրականացման ժամանակ կրելու պարտավորությունը:
25. Անարդյունավետ ծախս չկատարելու համար բնապահպանական տեսուչի համազգեստի գնումը կատարել տեսուչների համազգեստների չափսերին համապատասխան:
26. Գնման տեխնիկական բնութագրերը կազմել ՀՀ կառավարության 2005թ-ի օգոստոսի 18-ի N 2085-Ն որոշմամբ սահմանված բնապահպանության տեսուչի համազգեստի և Տեսչական մարմնի տարբերանշանի նկարագրերին և ձևերին համապատասխան:
27. Իրականացնել «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի է) կետի և 13-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետի դրույթները, այն է ՝ Տեսուչի կողմից պետք է իրականացվեն առգրավված բնական ռեսուրսների, որսի, որսագործիքների և որսի գործիք համարվող այլ միջոցների՝ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված տնօրինման կարգի պահանջները:
28. Իրականացնել ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի № 2168-Ն որոշմամբ հաստատված Կարգի 2-րդ կետի պահանջները, այն է՝
    - փչացող առգրավված կենսառեսուրսներն անհապաղ պետք է հանձնվեն տվյալ մարզի կամ համայնքի (կամ հարակից մարզի կամ համայնքի) մանկատներին, ծերանոցներին, թանգարաններին,
    - փչացող առգրավված կենսառեսուրսները չպետք է հանձնել մանկապարտեզներին, տուն ինտերնատներին, հիվանդանոցներին,
    - փչացող առգրավված կենսառեսուրսները հաստատություններին հանձնելու ժամանակ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման և ընդունող կազմակերպության ղեկավարների միջև պետք է կազմվեն հանձնման-ընդունման արձանագրություններ,

- փչացող առգրավված կենսառեսուրսները հաստատություններին հանձնել անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացության առկայության դեպքում:

29. Իրականացնել Կարգի 3-րդ կետի պահանջները, այն է՝ տեսագրել Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման Տեսուչների կողմից առգրավված կենդանի վայրի կենդանիներ ազատ արձակելու պահը և կազմել արձանագրություն:
30. Իրականացնել Կարգի 4-րդ կետի պահանջները, այն է՝ առգրավված թփերի ու խոտաբույսերի ոչնչացման համար կազմել հանձնաժողովներ, արձանագրություն և տեսագրել ոչնչացման պահը:
31. Իրականացնել Կարգի 7-րդ կետի պահանջները, այն է՝ գրանցամատյանում արձանագրել առգրավված բնական ռեսուրսները արձանագրված խախտման հետ համադրելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ գրանցամատյանները վարվել պատշաճ կարգով:
32. Հետամուտ լինել ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների իրացումից կամ դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցներից առաջացած գումարները ՀՀ պետական բյուջե մուտքագրմանը՝ համաձայն «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների:
33. Կատարել Կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, դրանցում փոփոխություններ և լրացումներ մշակելու և համապատասխան մարմիններին ներկայացնելու իր գործառույթը, այն է՝ ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի «Ստուգման ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների (ներառյալ՝ որսի) տնօրինման կարգը հաստատելու մասին» № 2168-Ն որոշման մեջ իրականացնել փոփոխություններ և սահմանել, որ ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսներ կարող են հայտնաբերվել և առգրավվել նաև վարչական վարույթի շրջանակներում:
34. Համագործակցել ՀՀ պետական այլ մարմինների հետ կենդանական կամ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման՝ պետական բյուջե գումարների մուտքագրման հետագա ընթացքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով:
35. Հետամուտ լինել 2017թ-ից 2018թ-ի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում պետական բյուջեի վնասի հատուցման շուրջ **3,137,012.6** հազ.դրամ գումարի պետական բյուջե մուտքագրմանը:
36. Կատարել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնադրության 12-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթները, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի(ների) գործունեությանն առընչվող, տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող նոր իրավական ակտեր ընդունվելու կամ ուղեցույցներ հրապարակվելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում այդ մասին իրազեկել տնտեսավարող սուբյեկտներին:
37. Հետամուտ լինել, որպեսզի տնտեսավարող սուբյեկտների կողմից միասնական հարկային հաշվարկի հավելվածը ներկայացվի Տեսչական մարմնի հաստատմանը՝ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի № 1291-Ն որոշմամբ հաստատված

բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգի 5-րդ կետի պահանջի:

38. Լաբորատորիան համալրել ստուգաչափված և ժամանակակից սարքավորումներով՝ շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկումը ճիշտ կատարելու և հետազոտությունների արդյունքների արժանահավատությունը ապահովելու նպատակով:
39. Ապահովել «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջները, այն է՝ շահագործումն իրականացնել միայն օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա ստուգաչափված չափման միջոցներով:
40. Ապահովել վիճակագրական տվյալների հավաքման և վերլուծությունների, ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացումը և վերահսկողական ու հսկողական գործառույթների նպատակադրումը դեպի առավել ռիսկային ոլորտներն ու տնտեսավարող սուբյեկտները՝ իրականացնելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետի և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2. 1 հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի դրույթները:
41. Ունենալ ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություն:
42. Կամայական մոտեցում չցուցաբերել ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքները կատարելիս:
43. Տեսչական մարմնի կողմից հայտնաբերված շարժական գույքը՝ ձկներն ու խեցգետինը, տիրազուրկ ճանաչել միայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:
44. Բնական ռեսուրսների գրանցամատյանը պատշաճ վարել, որպեսզի Տեսչական մարմնի կողմից տրված ձկների և խեցգետնի մասին տեղեկատվությունը համապատասխանի գրանցամատյանում լրացված տեղեկատվության հետ:
45. Իրականացնել Կանոնադրության 11-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերության դրույթները, այն է՝ կիրառել պատասխանատվության միջոցներ վայրի կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների՝ ՀՀ-ից արտահանման, ՀՀ դրանց ներմուծման սահմանված պահանջների պահպաման նկատմամբ:
46. Մշակել և ներդնել ներքին աուդիտի համակարգ՝ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների:

***ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին***

47. «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1. 3-րդ կետի համաձայն օրենքով սահմանված ժամկետներում հաստատել գործունեության տարեկան ծրագրերը:
48. Հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացնել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, այն է՝ տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է վարչապետի աշխատակազմի միջոցով:

49. Օրենքով սահմանված ժամկետներում հաստատել Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրերը:
50. Սահմանված ժամկետներում մշակել և Կառավարության հաստատմանը ներկայացնել Տեսչական մարմնի ստուգաթերթերը:
51. Ստուգումներ իրականացնել հաստատված բոլոր ստուգաթերթերով, որպեսզի Տեսչական մարմնի Կանոնադրությամբ հաստատված վերահսկողության յուրաքանչյուր ոլորտ լինի մշտական հսկողության ներքո:
52. Օրենքով սահմանված ժամկետներում մշակել և համապատասխան մարմնի հաստատմանը ներկայացնել «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների» մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշները:
53. Օրենքով սահմանված ժամկետներում մշակել և համապատասխան մարմիններին ներկայացնել իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր:
54. Հետամուտ լինել դիմում-բողոքների կամ սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթների պատշաճ իրականացմանը:
55. ՀՀ ԱՆ-ի հետ ստորագրել ՀՀ ԱՆ աշխատակազմի լուծարված առողջապահական պետական տեսչության փաստաթղթերի հանձման-ընդունման ակտ:
56. Իրականացնել կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների ամենամյա պարտադիր գույքագրում:
57. Հետամուտ լինել ջերմաչափման ստացիոնար սարքերի գործարկմանը և օգտագործմանը: Անսարքությունների դեպքում համագործակցել ՀՀ ԱՆ-ի հետ սարքերի երաշխիքային սպասարկումը կազմակերպելու համար:
58. Ստուգումներ իրականացնել միայն հաստատված ստուգաթերթերով:
59. Խորհրդատվության և իրազեկման գործառույթ իրականացնելու անվան տակ զերծ մնալ փաստացի ստուգումներ և ստուգման գործառույթներ իրականացնելուց:
60. Սահմանել Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:
61. ՀՀ մարզերում խորհրդատվության և իրազեկման գործառույթները իրականացնել Տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների կողմից՝ անարդյունավետ ծախսերից՝ գործուղման ծախս, տրասպորտային միջոց, վառելիք և այլն, խուսափելու համար:
62. Տեսչական մարմինը պետք է ուսումնասիրություններ կատարի միայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքների շրջանակներում և զերծ մնա ուսումնասիրությունների անվան տակ փաստացի ստուգումներ կատարելուց:
63. Կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանված վերահսկողության շրջանակներում սանիտարահիգիենիկ փորձաքննության ու լաբորատոր հետազոտություններ կատարելու նպատակով իրականացնել նմուշառում և գործիքային չափումներ:

64. Հետամուտ լինել, որպեսզի միանվագ դրամական խրախուսանքները և պարգևատրումները տրամադրվեն այն մարմնի կողմից, որը հանդիսանում է ֆինանսական միջոցների կարգադրիչը:
65. Մշակել և ներդնել ներքին աուդիտի համակարգ՝ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների:

***ՀՀ կրթության տեսչական մարմնին***

66. Հետամուտ լինել, որպեսզի գործունեության տարեկան ծրագրերը համապատասխան կարգով և ճիշտ ժամանակին մշակվեն և ընդունվեն Տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից:
67. Հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացնել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, այն է՝ Տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացնել վարչապետի աշխատակազմի միջոցով:
68. Հետամուտ լինել ստուգումների պատշաճ իրականացմանը:
69. Սահմանված կարգով պատասխանատվության ենթարկել ՀՀ օրենքների, համապատասխան ոլորտի հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:
70. Տեսչական մարմինը պետք է ուսումնասիրություններ կատարի միայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում և զերծ մնա ուսումնասիրությունների անվան տակ փաստացի ստուգումներ կատարելուց:
71. Իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր մշակելու, գործող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու և համապատասխան մարմիններին ներկայացնելու իր պարտավորությունը պատշաճ իրականացնել:
72. Պատշաճ իրականացնել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացման, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման, իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովման և կանխարգելիչ գործունեության իր պարտավորությունը:
73. Պատշաճ մշակել և ժամանակին ներկայացնել ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը:
74. Ստուգումների և գործունեության տարեկան ծրագրերը կազմել օգտագործելով արդեն ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը:
75. Մշակել և ներդնել ներքին աուդիտի համակարգ՝ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների:

***ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնին***

76. Հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացնել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, այն է՝ տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացնել վարչապետի աշխատակազմի միջոցով:

77. Հետամուտ լինել Տեսչական մարմնի կողմից նշանակված տուգանքների պատշաճ հավաքագրմանը:
78. Հետամուտ լինել ստուգումների պատշաճ իրականացմանը:
79. Տեսչական մարմնի կողմից քաղաքացիների դիմում–բողոքների հիման վրա արտածրագրային ստուգումներ իրականացնելու դեպքում ստուգում իրականացնելու վերաբերյալ հրամաններում կամ հանձնարարագրերում հստակ սահմանել դրանց հիմքերը, ինչպես նաև հիմնավորումները, որ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ՝ համաձայն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թ.-ի հունիսի 18-ի N 711-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջների:
80. Պատշաճ վարչարարություն իրականացնել՝ սեփական նախաձեռնությամբ կամ անձանց դիմում-բողոքների հիման վրա հարուցել վարչական վարույթներ:
81. Հետամուտ լինել, որպեսզի միանվագ դրամական խրախուսանքները և պարգևատրումները տրամադրվեն այն մարմնի կողմից, որը հանդիսանում է ֆինանսական միջոցների կարգադրիչը:
82. Սահմանված կարգով օգտագործել իր թվով 2 շարժական լաբորատորիաները:
83. Հետամուտ լինել, որպեսզի Տեսչական մարմնի լաբորատոր հետազոտությունները կատարվեն ոչ թե «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունում հավելյալ վճարի փոխարեն, այլ իր մոտ՝ Տեսչական մարմնում:
84. Մշակել և ներդնել ներքին աուդիտի համակարգ՝ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների:

***[ՀՀ բնապահպանության նախարարությանը](#)***՝

85. Ստորագրել Ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված ստուգումների ընթացքում կազմված ստուգումների փաթեթների հանձնման-ընդունման ակտը:

***ՀՀ կրթության և գիտության նախարարությանը***՝

86. Լիցենզիաների պայմանների և պահանջների պահպանման, դրանց նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև դիտարկումների և ուսումնասիրությունների իրականացումը դուրս բերել Կրթության և գիտության նախարարության Լիցենզավորման գործակալության իրավասություններից:

***ՀՀ Առողջապահության նախարարությանը***՝

87. Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման դեպքերում իրականացնել կազմակերպության բոլոր ակտիվների ու պարտավորությունների պարտադիր գույքագրում:
88. Համեմատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից կատարված գույքագրումը ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության մինչև լուծարումը կատարված վերջին գույքագրման հետ՝ հնարավոր անհամապատասխանություններից խուսափելու նպատակով:

***ՀՀ պետական առողջապահական գործակալությանը՝***

89. Չերծ մնալ դիտարկումների և մշտադիտարկումների անվան տակ փաստացի ստուգումներ կատարելուց:

90. Չերծ մնալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հետ միևնույն վերահսկողական գործառույթներն իրականացնելուց և գործառույթների կրկնորդումներից, քանի որ տվյալ բնագավառում վերահսկողություն իրականացնող այլ մարմին գործել չի կարող:

***ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն>> ծառայությանը***

91. ՀՀ տարածքում շահագործվող (շրջանառության մեջ դրվող և շահագործման մեջ գտնվող) ավտոտրանսպորտային միջոցները Ոստիկանությունում հաշվառվեն ըստ ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 20-ի N 860-Ն որոշմամբ հաստատված ենթախմբերի՝ ըստ ավտոտրանսպորտային միջոցների խմբերի, ենթախմբերի, էկոլոգիական դասի, օգտագործվող վառելիքի տեսակի, ավտոտրանսպորտային միջոցի թողարկման տարեթվի և բանած գազերի չեզոքացման համակարգի առկայության՝ հետագայում ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումները դյուրացնելու համար:

92. Համագործակցել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հետ որպեսզի պատշաճ իրականացվի ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումները բնապահպանական տեսուչի և ոստիկանության աշխատակցի միջոցով:

***ՀՀ Ոստիկանությանը՝***

93. Համագործակցել Տեսչական մարմնի հետ հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու տեսուչների պիտանիությունը որոշող պատրաստության ստուգումներ կազմակերպելու համար, ինչի համար կնքել համապատասխան պայմանագիր ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հետ:

94. Հետևել «Զենքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցների կողմից զենք պահելու և օգտագործելու թույլտվության ձեռքբերման ժամկետների պահպանմանը:

95. Հետևել, որ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության այն աշխատակիցները, որոնք ունեին սահմանված կարգով ստացված զենք օգտագործելու կամ գործադրելու թույլտվություն, դրանք պատշաճ ձևով հանձնեն ՀՀ ոստիկանություն, քանի որ իրենց թույլտվությունները ուժը կորցրած էին ճանաչվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության լուծարման փաստով դեռևս 2017թ. օգոստոսի 20-ից:

***Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակին՝***

96. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում ստեղծել համապատասխան հաստիքներ՝ Կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված լիազորությունների շրջանակներում իրականացվող նմուշառումը և գործիքային չափումները պատշաճ կազմակերպելու նպատակով:
97. Հետամուտ լինել ՀՀ ԱՆ-ի և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի միջև գույքի և փաստաթղթերի հանձման-ընդունման, գույքագրման գործընթացների պատշաճ իրականացմանը:
98. Տեսչական մարմիններում ներդնել ներքին աուդիտի համակարգ:

***ՀՀ կառավարությանը՝***

99. Սահմանված ժամկետներում հաստատել բոլոր տեսչական մարմինների ստուգաթերթերը, ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշները:
100. Փոփոխություններ իրականացնել ՀՀ կառավարության «ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացնելու կարգը հաստատելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2410-Ն որոշման մեջ՝ դրանք համապատասխանեցնելով 2017թ. -ի հուլիսի 20-ի N 860-Ն որոշմանը և ՄԱԿ ԵՏՀ կանոններին:
101. ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին»N 1301-Ն և ՀՀ վարչապետի ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշումների մեջ կատարել համապատասխան փոփոխություններ, որով տեսչական, վերահսկողական և հսկողական, այդ թվում ստուգման, մշտադիտարկումների, դիտարկումների լիազորությունները կփոխանցվեն ՀՀ-ում առողջապահության ոլորտում գործող միակ պետական մարմնին՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին, քանի որ տվյալ բնագավառում վերահսկողություն իրականացնող այլ մարմին գործել չի կարող:
102. ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից իրականացվելիք վերահսկողական գործառույթները ներառել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին վերապահված վերահսկողական գործառույթների մեջ՝ այդ մարմնի ենթաօրենսդրական իրավական ակտերում կատարելով համապատասխան փոփոխություններ:
103. Հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ, որով իրականացվող բժշկական օգնության և սպասարկման գործընթացի փաստաթղթային և տեղում փորձագիտական գնահատման, դիտարկման, մշտադիտարկման, կատարված աշխատանքների վերլուծության ՀՀ պետական առողջապահական գործակալության գործառույթները կփոխանցվեն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին:
104. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններն անհրաժեշտ է տանել տեսչության ստուգումների և հսկողության դաշտ:
105. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնավոր բուհերը տալիս են պետական բուհերի դիպլոմներին հավասարազոր նմուշի դիպլոմ՝ ոչ պետական բուհերի ղեկավար կազմի

համար (ռեկտոր, պրոռեկտոր, դեկան) նույնպես պետք է սահմանել համապատասխան չափորոշիչներ:

**106.** Ոչ պետական բուհերում իրավիճակը շտկելու նպատակով պետական լիազոր մարմինների կողմից անհրաժեշտ է կատարել համապատասխան վերահսկողություն կամ ստուգում:

**107.** Մշակել համապատասխան իրավական ակտեր, մեխանիզմներ, տույժ ու տուգանքի չափ և այլն, որոնցով Կրթության տեսչական մարմնին հնարավորություն կտրվի ՀՀ օրենքների, համապատասխան ոլորտի հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցներ կիրառել և պետական բյուջե գումար մուտքագրել:

**108.** Հետամուտ լինել, որպեսզի տեսչական մարմինների ղեկավարի և տեղակալների նկատմամբ խրախուսման միջոցները կիրառվեն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի և իրենց կանոնադրությունների համապատասխան, այն է՝ ՀՀ վարչապետի կողմից՝ խորհրդի ներկայացմամբ:

***«Հաշվեքննիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն եզրակացությունն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հաշվեքննության օբյեկտի ղեկավարները Հաշվեքննիչ պալատին տրամադրում են ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:***

Հավելված 1

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿ | ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ | ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ | ՍՏՈՒԳԱԹԵՐԹ |
|---|---|---|---|---|
| **Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին** | 2017թ. սեպտեմբեր | 2017թ. չի ունեցել | 2017թ.չի ունեցել | 2017թ. չի ունեցել |
| | | 2018թ. չի ունեցել | 2018թ.չի ունեցել | 2018թ. չի ունեցել |
| **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին** | 2017թ. սեպտեմբեր | 2017թ. չի ունեցել | 2017թ չի ունեցել | 2017թ. ունեցել է |
| | | 2018թ. չի ունեցել | 2018թ. ունեցել է | 2018թ. չի ունեցել և ստուգումները կատարել են նախկին ստուգաթերթերով |
| **Կրթության տեսչական մարմին** | 2018թ. փետրվար | 2017թ. չի ունեցել | 2017թ. ունեցել է | 2017թ. չի ունեցել |
| | | 2018թ. -ի ծրագիրը հաստատվել է 5 ամիս ուշացումով | 2018թ.ունեցել է | 2018թ.-ի համար ստուգաթերթերը հաստատվել են 8 ամիս ուշացումով |
| **Շուկայի վերահսկողության տեսչական մարմին** | 2015թ. սեպտեմբեր | 2017թ. ունեցել է | 2017թ.ունեցել է | 2017թ.ունեցել է |
| | | 2018թ. ունեցել է | 2018թ.ունեցել է | 2018թ.կատարել են նախկին ստուգաթերթերով |

Հավելված 2

| ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | | | | |
|---|---|---|---|---|
| ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ | | | |
| | 2017թ | | 2018թ. | |
| | ՊԼԱՆ | ՓԱՍՏ | ՊԼԱՆ | ՓԱՍՏ |
| Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | 0 | 0 | 0 | 0 |
| Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | 722 | 0 | 250 | 35 |
| Կրթության տեսչական մարմին | 135 | 83 | 75 | 0 |
| Շուկայի վերահսկողության տեսչական մարմին | 200 | 144 | 240 | 160 |

Հավելված 3

| ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ** | ԾԱԽՍԵՐ /հազ. դրամ/ | | ԱՇԽԱ ՏՈՂՆԵՐԻ ԹԻՎ | ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԹԻՎ | | ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄ /հազ. դրամ/ | | ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԲՅՈՒՋԵ /հազ. դրամ/ | |
| | **2017թ.** | **2018թ.** | **հաստիք** | **2017թ.** | **2018թ.** | **2017թ.** | **2018թ** | **2017թ.** | **2018թ.** |
| **Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին** | **736,783.1** | **380,217.5** | **280** | **0** | **0** | **0** | **48,325.0** | **0** | **1,470.0** |
| **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին** | | **685,456,8** | **195** | 0 | 35 | **3,137.012.6** | | **168,406.2** | |
| **Կրթության տեսչական մարմին** | **181,196.5** | **103,835.9** | **41** | 83 | 0 | **0** | **0** | **0** | **0** |
| **Շուկայի վերահսկողության տեսչական մարմին** | **132,059.6** | **141,532.9** | **40** | **144** | **160** | **23,080.0** | **22,030.0** | **21,930.0** | **18,480.0** |

*Հավելված 4*

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2018 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված 35 ստուգումների վերաբերյալ

| NN ը/կ | Տնտեսավարող | | ոլորտ | Պետական գրանցման (հաշվառման) համարը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն | | | | | ստուգման ակտ, հանձնարարական | տուգանք | | | վնաս /դրամ | վճարում | հանձնարարականի կատարում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը կամ անունը, ազգանունը | կազմակերպաիրավական ձևը | | | | տեսակը | քանակը | սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) | ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը) | անցկացման հիմքը | | ամսաթիվ | չափ | վճարված | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 1 | ՁՈՐԱՄ ԵՋ | ՍՊԸ | մթնոլորտ, թափոն,ջուր | 16.110.01002 | 05015482 | ստուգում | 1 | 12.12.2017 | 20.12.2017 | 3 հաշվ. չներկայացնել | Որոշում ՎԱԲ/02-Ա. 04.05.2018- գործը կարճելու մասին | | | | | | | Չեղյալ |
| 2 | ճԱՄԲԱՐԱԿԻ ճՇՇ | ՓԲԸ | մթնոլորտ, ընդերք | 74.130.00224 | 08100179 | ստուգում | 1 | 20.12.2017 | 26.12.2017 | 221 | ակտ N22, 23.01.2018, վնասի հատուցման որոշում N ԸՎՀ/001-Ա, 26.01.2018 | 26.01.2018 որոշում ՆԸՎՏ/01-Ա | 300,000 | | 263,086 | | | |
| 3 | ԳԱՎԱՌԻ ճՇՇ | ԲԲԸ | մթնոլորտ, ընդերք | 25.130.00939 | 08402186 | ստուգում | 1 | 20. 12.2017 | 09.01.2018 | 225 | ակտ N07/01, 22.01.2018, հանձնարարական 07-01, 22.01.20 | | | | | | | Նյութերն ուղարկվել են գլխավոր դատախազություն |
| 4 | ԱԽԹԱԼԱՅԻ | ՓԲԸ | մթնոլորտ, | 96.120.00632 | 06602309 | ստուգում | 1 | 18.01.2018 | 04.02.2018 | 221 | ակտ N01-Ա, | 06.03.2018 | 200,000 | 200,000 | 3,070,914 / 1,933,060 | 5,003,974 | N 33296 | վնասը հաշվարկ |

| NN ը/կ | Տնտեսավարող | | ոլորտ | Պետական գրանցման (հաշվառման) համարը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն | | | | | ստուգման ակտ, հանձնարարական | տուգանք | | | վնաս /դրամ | վճարում | հանձնարարականի կատարում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը կամ անունը, ազգանունը | կազմակերպաիրավական ձևը | | | | տեսակը | քանակը | սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) | ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը) | անցկացման հիմքը | | ամսաթիվ | չափ | վճարված | | | | |
| 5 | ԳԱՋ | ՓԲԸ | մթնոլորտ, ընդերք | 282.120.01063 | 00802543 | ստուգում | 1 | 23.01.2018 | 30.01.2018 | 221 | ակտ N03, 16.02.2018, հանձնարարական՝ ՋՄՀԹՎ Վ-04, 16.02.2015, վնասի որոշում N ՋՄ 03-Ա 21.02.20 | 21.02.2018 որոշում ԹՎՏ/07-Ա | 100,000 | 100,000 | 2,003,040 | 2,003,040 | 11.04.2018 | |
| 6 | ԱՐՁՆԻ ԱՌՈՂՋ ԱՐԱՆ | ՓԲԸ | ընդերք | 42.120.01951 | 03501957 | ստուգում | 1 | 06.02.2018 | 09.02.2018 | 221 | ակտ N03, 05.03.2018, հանձնարարական՝ N 03,05.03 | 06.03.2018 որոշում ԸՎ/02-Ա | 100,000 | 100,000 | | | | |
| 7 | ՋՈՒՐ ԿԵՆՍՈ ԼՈՐՏԱ ՅԻՆ ՀԱՄԱԼ | ՊՈԱԿ | | | 09423966 | ստուգում | 1 | | | Հրապարակման հիման վրա | ը կասեցվել է մինչև 90 աշխատա | | | | | | | |

| NN ը/կ | Տնտեսավարող | | ոլորտ | Պետական գրանցման (հաշվառման) համարը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն | | | | | ստուգման ակտ, հանձնարարական | տուգանք | | | վնաս /դրամ | վճարում | հանձնարարականի կատարում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը կամ անունը, ազգանունը | կազմակերպա-իրավական ձևը | | | | տեսակը | քանակը | սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) | ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը) | անցկացման հիմքը | | ամսաթիվ | չափ | վճարված | | | | |
| 8 | ԷԼԲԱՏ | ՓԲԸ | ջուր, թափոն | 90.120.03583 | 02242108 | ստուգում | 1 | 19.02.2018 | 23.02.2018 | 1 | ակտ N06, 16.03.2018, հանձնարարական՝ 05, 29.03.20 | 29.03.2018 որոշում ԹՎՏ/09-Ա | 50,000 | 50,000 | | | 05.06.2018 | |
| 9 | ՄԵՏՐՈ ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | ԲԲԸ | մթնոլորտ | 269.130.01316 | 02200317 | ստուգում | 1 | 15.02.2018 | 21.02.2018 | 1 | ակտ N07, 13.03.2018, վնասի հաշվարկ | 19.03.2018 որոշում ՄՎՏ/06-Ա | 100,000 | 100,000 | 12,030 | 12,030 | | |
| 10 | ՍԼՈԲԵՐ | ՍՊԸ | մթնոլորտ, ընդերք | 99.110.01912 | 04722817 | ստուգում | 1 | 27.02.2018 | 07.03.2018 | 221 | ակտ N08, 06.04.2018, հանձնարարական՝ N 08 23.04.2018 , մնասի | 06.06.2018 որոշում ԸՎՎ/08-Ա | 100,000 | | 3,210,942 | | | |
| 11 | ՊԵՐԼԱՐՈ ԼՈԿԱԼ ԻՆՎԵՍԹՄԵՆԹ | ՍՊԸ | ընդերք, մթնոլորտ | 286.120.06814 | 02588751 | ստուգում | 1 | 27.02.2018 | 07.03.2018 | 221 | ակտ N 09, 06.04.2018, հանձնարարական՝ N 09 19.04.2018 , մնասի | 04.06.2018 որոշում N ՎՏ/28-Ա | 150,000 | | 770,809 | | | |

| NN ը/կ | Տնտեսավարող | | ոլորտ | Պետական գրանցման (հաշվառման) համարը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն | | | | | ստուգման ակտ, հանձնարարական | տուգանք | | | վնաս /դրամ | վճարում | հանձնարարականի կատարում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը կամ անունը, ազգանունը | կազմակերպաիրավական ձևը | | | | տեսակը | քանակը | սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) | ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը) | անցկացման հիմքը | | ամսաթիվ | չափ | վճարված | | | | |
| 12 | ԱՐԱՐԱՏ ԳՐՈՒՊ | ՍՊԸ | թափոն, ընդերք, մթնոլորտ, ջուր | 51.110.00828 | 04110854 | ստուգում | 1 | 01.03.2018 | 3.03.2018 | 221 | ակտ N 10, 06.04.2018, հանձնարարական՝ N 10 06.04.20 | 03.05.2018 որոշում N ՎՏ/27-Ա | 300,000 | | | | | |
| 13 | ԷՆԵՐԳԱՑԱՆՑ ՇԻՆ | ԲԲԸ | մթնոլորտ, թափոն, ջուր | 264.140.0037 | 00015729 | ստուգում | 1 | 05.03.2018 | 19.03.2018 | 1 | ակտ N 11, 10.04.2018, հանձնարարական՝ N ՋՄՀԹՎՆ-06, 10.04.2018 վնասի հաշվարկ | 13.04.2018 որոշում N ԹՎՏ/10-Ա | 100,000 | 100,000 | 297,786 | 297,786 | 29.08.2018 | |
| 14 | Կ. ԳՈՐՈՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ | ՍՊԸ | մթնոլորտ, ընդերք | 53.110.00312 | 06105861 | ստուգում | 1 | 19.03.2018 | 30.03.2018 | 225 | 01, 13.04.2018, հանձնարարական՝ N Հ-01, 05.05.2018 վնասի հաշվարկ | 05.05.2018 որոշում N 06/21--Ա | 100,000 | | 26,286 | | | |

| NN ը/կ | Տնտեսավարող | | ոլորտ | Պետական գրանցման (հաշվառման) համարը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն | | | | | ստուգման ակտ, հանձնարարական | տուգանք | | | վնաս /դրամ | վճարում | հանձնարարականի կատարում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը կամ անունը, ազգանունը | կազմակերպաիրավական ձևը | | | | տեսակը | քանակը | սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) | ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը) | անցկացման հիմքը | | ամսաթիվ | չափ | վճարված | | | | |
| 15 | ՏՈՒՖԱ ԳՈՐԾ-90 | ՍՊԸ | մթնոլորտ, ընդերք | 53.110.00256 | 06104568 | ստուգում | 1 | 13.04.2018 | 27.04.2018 | 225 | 02, 24.05.2018, հանձնարարական՝ N Հ-02, 24.05.2018 վնասի հաշվարկ | | | | 131,400 | 131,400 | | Գործը ուղարկվել է դատախազություն |
| 16 | ՏԵԽՆՈՄԱՆ | ՍՊԸ | ջուր, մթնոլորտ | 286.110.0654 | 02703334 | ստուգում | 1 | 04.04.2018 | 04.04.2018 | Հանձնարարականի կատարման ստուգում | Տեղեկանք՝ N 14-Ա խախտումներ չհայտնաբերելու մասին, 07.04.20 | | | | | | | |
| 17 | ԵՐԵՎԱՆ ՋԷԿ | ՓԲԸ | թափոն, ջուր | 69.070.0025 | 02205028 | ստուգում | 1 | 19.04.2018 | 05.05.2018 | 1 | ակտ N 15, 18.05.2018, հանձնարարական՝ N ՋՄՀԹԿ Ն-08, 25.05.2018 | 25.05.2018 որոշում N ՄԿՏ/12-Ա | 200,000 | 200,000 | | | | |

| NN ը/կ | Տնտեսավարող | | ոլորտ | Պետական գրանցման (հաշվառման) համարը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն | | | | | ստուգման ակտ, հանձնարարական | տուգանք | | | վնաս /դրամ | վճարում | հանձնարարականի կատարում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը կամ անունը, ազգանունը | կազմակերպաիրավական ձևը | | | | տեսակը | քանակը | սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) | ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը) | անցկացման հիմքը | | ամսաթիվ | չափ | վճարված | | | | |
| 18 | ԻՏԱԼԱ ՍՓԱԼՏ | ՍՊԸ | մթնոլորտ | 42.110.848984 | 03541039 | ստուգում | 1 | 19.04.2018 | 05.05.2018 | 1 | ակտ N 16, 05.05.2018, հանձնարարական՝ N ՋՄՀԹՎ Ն-07, 11.05.2018 , վնասի հաշվարկ | 11.05.2018 որոշում N ԹՎՏ/11-Ա | 100,000 | 100,000 | 123,954 | 123,954 | | |
| 19 | ՄԼ ՄԱՅՆԻՆԳ | ՍՊԸ | ընդերք,մթնոլորտ | 286.110.05104 | 02569362 | ստուգում | 1 | 03.05.2018 | 04.06.2018 | 1<br>225 | 17, 15.06.2018, հանձնարարական՝ N -17, 25.06.2018 , վնասի հաշվարկ | 23.08.2018 որոշում N ԸՎԿ/17-Ա | 300,000 | 300,000 | 5,038,800 | 5,038,800 | | |
| 20 | ՎԱՅՔԳՈԼԴ | ՍՊԸ | | | 00114369 | ստուգում | 1 | | | 221 | | | | | | | | Երկարացվել է |

| NN ը/կ | Տնտեսավարող | | ոլորտ | Պետական գրանցման (հաշվառման) համարը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն | | | | | ստուգման ակտ, հանձնարարական | տուգանք | | | վնաս /դրամ | վճարում | հանձնարարականի կատարում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը կամ անունը, ազգանունը | կազմակերպաիրավական ձևը | | | | տեսակը | քանակը | սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) | ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը) | անցկացման հիմքը | | ամսաթիվ | չափ | վճարված | | | | |
| 21 | ԱԳԱՐԱԿԻ ՊՄԿ | ՓԲԸ | ընդերք,մթնոլորտ, թափոն | 79.140.00036 | 09700039 | ստուգում | 1 | 03.05.2018 | 23.05.2018 | 1 | 19, 08.06.2018, վնասի հաշվարկ հանձնարարական՝ N - ՏՄԴ/019-Ա 08.06.2018 , վնասի հաշվարկ ակտ N 20, 25.06.2018, | 12.06.2018 որոշում N ԿՏ/19-Ա | 200,000 | | 2,653,599 | | | |
| 22 | ՔԱՐԱՐՏ | ՓԲԸ | ընդերք,ջուր | 67.120.00799 | 07612154 | ստուգում | 1 | 08.05.2018 | 30.05.2018 | 221 | հանձնարարական՝ N -20. 26.06.2018, վնասի ակտ N 21, 06.07.2018 | 11.07.2018 որոշում N ԸԿՏ/20-Ա | 200,000 | | 366,941 | 366,941 | | |
| 23 | ԱՃՏԱՐԱԿ ՁՈՒ | ՍՊԸ | թափոն | 29.110.02289 | 05534309 | ստուգում | 1 | 13.02.2018 | 24.05.2018 | 1 | հանձնարարական՝ NՋՄՀԹԿՆ -09. 06.06.2018, վնասի | 11.07.2018 որոշում N ԹԿՏ/14-Ա | 100,000 | | 516,154 | | | |

| NN ը/կ | Տնտեսավարող | | ոլորտ | Պետական գրանցման (հաշվառման) համարը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն | | | | | ստուգման ակտ, հանձնարարական | տուգանք | | | վնաս /դրամ | վճարում | հանձնարարականի կատարում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը կամ անունը, ազգանունը | կազմակերպաիրավական ձևը | | | | տեսակը | քանակը | սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) | ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը) | անցկացման հիմքը | | ամսաթիվ | չափ | վճարված | | | | |
| 24 | ԹԱՄԱՐԱ ՖՐՈՒԹ | ՍՊԸ | մթնոլորտ | 11.120.01642 | 03520238 | ստուգում | 1 | 16.05.2018 | 24.05.2018 | 1 | ակտ N 22, 12.06.2018 հանձնարարական՝ ՆՁՄՀԹՎՆ-12. 08.06.2018, վնասի | 15.06.2018 որոշում N ԹՎՏ/13-Ա | 100,000 | | 16,914 | | | 20.08.2018 |
| 25 | ԿԱՊՈՒՅՏ ԲԱԶԱԼՏ | ՍՊԸ | | | 09215797 | ստուգում | 1 | | | 221 | | | | | | | | |
| 26 | ԿԱՊԱՆԻ ԼՀԿ | ՓԲԸ | | 27.120.01216 | 09416902 | ստուգում | 1 | | | 221 | | | | | | | | |
| 27 | ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ | ՓԲԸ | մթնոլորտ, թափոն | 278.130.01155 | 00404207 | ստուգում | 1 | 24.05.2018 | 04.06.2018 | 1 | 25, 18.06.2018 հանձնարարական՝ ՆՁՄՀԹՎՆ-10. 18.06.2018, վնասի հաշվարկ | 25.06.2018 որոշում N ՄՎՏ/15-Ա | 100,000 | 100,000 | 94,325,550 | 94,325,550 | | 17.08.2018 |

| NN ը/կ | Տնտեսավարող | | ոլորտ | Պետական գրանցման (հաշվառման) համարը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն | | | | | ստուգման ակտ, հանձնարարական | տուգանք | | | վնաս /դրամ | վճարում | հանձնարարականի կատարում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը կամ անունը, ազգանունը | կազմակերպաիրավական ձևը | | | | տեսակը | քանակը | սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) | ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը) | անցկացման հիմքը | | ամսաթիվ | չափ | վճարված | | | | |
| 28 | ԽԱՉՀԱՐ | ՍՊԸ | թափոն | 264.110.02336 | 00018682 | ստուգում | 1 | 29.05.2018 | 06.06.2018 | 1 | ակտ N 26, 25.06.2018 հանձնարարական՝ NՋՍՀԹՎՆ -11. 25.06.20 | 29.06.2018 որոշում N ԹՎՏ/16-Ա | 150,000 | 150,000 | | | | 07.08.2018 |
| 29 | ԱՎԱ-2000 | ՍՊԸ | ջուր, թափոն, մթնոլորտ | 278.110.00793 | 00401542 | ստուգում | 1 | 22.06.2018 | 02.07.2018 | 1 | ակտ N 27, 11.07.2018 հանձնարարական՝ NՋՍՀԹՎՆ -12. 11.07.2018, վնասի հաշվարկ | 16.07.2018 որոշում N ՄՎՏ/17-Ա | 100,000 | 100,000 | 674,520 | 674,520 | | |
| 30 | ԱՐՁՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԽ | ԲԲԸ | | 42.120.00323 | 03504939 | ստուգում | 1 | | | 225 | | | | | | | | |
| 31 | ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ | ԱԿ | | | 02208258 | ստուգում | 1 | | | քաղաքացի | | | | | | | | |
| 32 | ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ | ՓԲԸ | | | 00091919 | ստուգում | 1 | | | 221 | | | | | | | | |

| NN ը/կ | Տնտեսավարող անվանումը կամ անունը, ազգանունը | Տնտեսավարող կազմակերպա-իրավական ձևը | ոլորտ | Պետական գրանցման (հաշվառման) համարը | Հարկ վճարողի հաշվառման համարը | Ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն տեսակը | քանակը | սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) | ավարտը (օրը, ամիսը, տարեթիվը) | անցկացման հիմքը | ստուգման ակտ, հանձնարարական | տուգանք ամսաթիվ | տուգանք չափ | տուգանք վճարված | վնաս /դրամ | վճարում | հանձնարարականի կատարում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 33 | ՌԱՄ ԳՐՈՒՊ | ՍՊԸ | ընդերք, մթնոլորտ | 73.110.85662 | 02637888 | ստուգում | 1 | 09.07.2018 | 20.07.2018 | 225 | ակտ N 31, 14.08.2018 հանձնարարական՝ N ՏՄՊ/031 - Ա. 14.08.2018 [illegible] | 21.08.2018 որոշում N ՎՏ/31-Ա | 300,000 | | 46,043 | | | |
| 34 | ՀԱՅԱՆՏԱՌ / ՃԱՄԲԱՐԱԿԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | ՊՈԱԿ | | | 02512343 | ստուգում | 1 | | | 1 | | | | | | | | Էքսպերտ հզայի փուլում է |
| 35 | Սևանի ազգային պարկ /Նորատուսի, Մարտունու, Վարդենիսի մ/6 | ՊՈԱԿ | բուսական | 35.210.00952 | 08602899 | հանձնարարագիր՝ փորձագետ | 1 | 18.01.2018 | | | | | | | | | | գործերը հանձնված են ոստիկանություն |

**Հավելված 5**

| ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ (ՌԵԿՏՈՐ, ՊՐՈՌԵԿՏՈՐ, ԴԵԿԱՆ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | Բուհի անվանումը | Անուն Ազգանուն | Զբաղեցրած պաշտոնը | Գիտական կոչում, աստիճան |
| **1.** | **ՀՀ Ավանդական բժշկության համալսարան** | Ն. Ս. | ռեկտոր | Կենս.գ.թ. -1989թ. |
| | | Ա. Կ. | դեկան | - |
| | | Ա. Ս. | ուսումնական մասի վարիչ | - |
| | | Մ. Ն. | գիտական մասի վարիչ | Բժշկ.գ.թ.- ՌԴ, 2009թ., չի համապատասխանեցվել |
| **2.** | **Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտ** | Ա. Թ. | ռեկտոր | Պատ.գ.թ. – 1987թ. |
| | | Մ. Գ. | պրոռեկտոր | Պատ.գ.թ. – 1988թ. |
| **3.** | **Եվրասիա միջազգային համալսարան** | Ս. Օ. | ռեկտոր | Աշխ.գ.դ. – 1991թ. |
| | | Հ. Հ. | պրոռեկտոր | Տնտ.գ.թ. |
| **4.** | **"Մխիթար Գոշ" հայ-ռուսական համալսարան** | Վ. Բ. | ռեկտոր | Մանկ.գ.դ., դոց. |
| | | Գ. Դ. | առաջին պրոռեկտոր | Իրավ.գ.թ., դոց. |
| | | Ռ.Ղ. | բժշկական մասնագիտությունների գծով պրոռեկտոր | - |
| | | Ս. Վ. | ուսումնական գծով պրոռեկտոր | Մանկ.գ.թ. – 1971թ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Է. Մ. | գիտական գծով պրոռեկտոր | Փիլ.գ.դ. – ՌԴ, 1997թ., պրոֆ. –ՌԴ, 2003թ., չի համապատասխանեցվել |
| | | Գ. Դ. | միջազգային կապերի զարգացման եվրոինտեգրման աշխատանքի գծով պրոռեկտոր | Իրավ.գ.թ., դոց. |
| | | Ա. Օ. | դեկան | - |
| | | Հ. Դ. | տնօրեն | մանկ.գ.թ., դոց. |
| **5.** | **Երևանի ''Հայբուսակ'' համալսարան** | Մ. Հ. | ռեկտոր | - |
| | | Ա. Գ. | պրոռեկտոր | իրավ.գ.թ. |
| | | Պ. Ղ. | պրոռեկտոր | Կենս.գ.դ. – 1986թ., պրոֆ. |
| | | Ն. Հ. | պրոռեկտոր | - |
| | | Մ. Հ. | պրոռեկտոր | - |
| | | Մ. Ո. | դեկան | - |
| | | Յ. Մ. | բժշկական ֆակուլտետի դեկան | - |
| | | Ա. Ղ.<br>Ա. Հ.<br>Ք. Հ. | բժշկական ֆակուլտետի դեկանի տեղակալ | -<br>-<br>- |
| | | Գ. Գ. | իրավաբանական և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան | Իրավ.գ.թ., դոց. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **6.** | **Հայկական տուրիզմի ինստիտուտ** | Ռ. Մ | ռեկտոր | Մանկ.գ.թ. - ՌԴ, 2003թ.,չի համապատասխանեցվել, պրոֆ. |
| **7.** | **Հրազդանի հումանիտար ինստիտուտ** | Լ. Ա. | ռեկտոր | տնտ.գ.թ. |
| **8.** | **"Մարտից" արտաքին տնտեսական կապերի համալսարան** | Մ. Ո. | ռեկտոր | - |
| | | Մ. Ա. | պրոռեկտոր | Բժշկ.գ.թ. – ՌԴ, 2006թ., չի համապատասխանեցվել |
| | | Ա. Գ. | դեկան | - |
| **9.** | **Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարան** | Ջ. Ս. | ռեկտոր | - |
| | | Ժ. Գ. | ընդհ. գործ. գծ. պրոռեկտոր | - |
| | | Մ. Թ. | ուս. գծով պրոռեկտոր | Բան.գ.թ. |
| | | Հ. Ս. | սոցիալտնտ. մասն. դեպարտ. դեկ. | իրավ.գ.թ. |
| **10.** | **"ՄՖԲ" ֆինանսական ակադեմիա** | Է. Գ. | ռեկտոր | Տնտ.թ., 1972թ. |
| | | Կ. Գ. | պրոռեկտոր | տնտ.թ., դոց. |
| | | Ա. Գ. | պրոռեկտոր | - |
| | | Վ. Ա. | դեկան | Տնտ.թ. – 1990թ. |
| | | Ա. Խ. | դեկան | - |
| **11.** | **Գյումրիի "Պրոգրես"** | Ռ. Խ. | ռեկտոր | փիլ.գ.թ. |
| | | Հ. Հ. | պրոռեկտոր | - |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Համալսարան** | Ա. Ս. | իրավաբանական ֆակուլտետի դեկան | - |
| | | Ս. Մ. | տնտեսագիտական ֆակուլտետի դեկան | Տնտ.թ.- ԽՍՀՄ |
| **12.** | **Հայկական բժշկական Ինստիտուտ** | Մ. Ա. | ռեկտոր | Բժշկ.գ.թ. – 1985թ. |
| | | Լ. Ա. | ռեկտոր | - |
| | | Լ. Ա. | ռեկտոր | Բժշկ.գ.թ. – 1987թ. |
| | | Գ. Մ. | ռեկտոր | - |
| | | Ց. Հ. | պրոռեկտոր ուսումնական մասով | - |
| | | Հ. Վ. | պրոռեկտոր գիտական մասով | Կենս.գ.դ., պրոֆ. |
| | | Ա. Ն. | պրոռեկտոր գիտական գծով, բուժ. մագ. դեկան | - |
| | | Ն. Ա. | ստոմ. մագ. դեկան | - |
| | | Ց. Ջ. | բուժական ֆակուլտետի դեկան | Բժշկ.գ.թ. - 1989թ., դոց. |
| | | Կ. Կ. | ստոմատոլոգիական ֆակուլտետի դեկան | - |
| **13.** | **Մովսես Խորենացու անվան համալսարան** | Ա. Ա. | ռեկտոր | Ֆմ.գ.թ. – 1989թ. |
| | | Ա. Պ. | պրոռեկտոր | - |
| | | Լ. Մ. | ուսումնական մասի վարիչ | - |
| **14.** | **“Անանիա Շիրակացի”** | Վ. Մ. | ռեկտոր | Բան.գ.դ. – 1990թ., դոց. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **միջազգային հարաբերությունների համալսարան** | | | |
| **15.** | **ՀԲԸՄ Հայկական վիրտուալ համալսարան** | Ե. Զ. | գործադիր տնօրեն | Տեխ.գ.դ. – Կանադա, 1987թ., չի համապատասխանեցվել Պատմ.գ.դ. – Հունգարիա, 2008թ., չի համապատասխանեցվել |
| | | Հ. Խ. | ուսումնական մասի տնօրեն | |
| **16.** | **Երևանի Մենեջմենթի Համալսարան** | Մ. Խ. | ռեկտոր | Տնտ.թ. – 1986թ. |
| | | Լ. Ս. | Գյումրու կրթահամալիրի տնօրեն | - |
| | | Լ. Ա. | պրոռեկտոր ուսումնական գծով | - |
| | | Ա. Ս. | պրոռեկտոր տնտեսական գծով | - |
| | | Ֆ. Խ. | դեկան | Տեխ.գ.թ., դոց. – ԽՍՀՄ |
| | | Մ. Ա. | փոխդեկան | - |
| | | Գ. Ս. | փոխդեկան /Ստեփանակերտում ներկ./ | - |
| | | Ն. Մ. | մագ. գծով փոխդեկան | - |
| **17.** | **Գործնական հոգեբանության և** | Ս. Ս. | ռեկտոր | Հոգեբ.գ.դ., պրոֆ. |
| | | Ժ. Բ. | պրոռեկտոր գիտական գծով | Բժշկ.գ.դ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **սոցիոլոգիայի ''Ուրարտու'' համալսարան** | Մ. Ա. | պրոռեկտոր ուսումնական գծով | - |
| | | Ա. Ն. | պրոռեկտոր ընդհանուր հարցերով | - |
| | | Ա. Ն. | հոգեբանության ֆակուլտետի դեկան | Հոգեբ.գ.դ., պրոֆ. |
| | | Ա. Ն. | սոցիալական աշխատանքի ֆակուլտետի դեկան | Հոգեբ.գ.թ., դոց. |

***<u>Ծանոթություն՝</u>***

1. *Տվյալները տրամադրվել են ՀՀ ԿԳՆ ԲՈԿ-ի կողմից:*
2. *Ղեկավարվելով <<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի իրավակարգավորումներով՝ սույն փաստաթղթում նույնականացվող անձնական տվյալները ներկայացված են սկզբնատառերով:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՂԵԿԱՎԱՐ

ИНСПЕКЦИОННЫЙ ОРГАН
ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ
THE ENVIRONMENTAL PROTECTION AND
MINING INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD

№ 111.1/11.1/159-19
«25» հունվարի 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Գ. ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Ձեր № ՀՊԵ-ԳՈ-190
Առ 17.12.2018 թ.

Հարգելի պարոն Ոսկանյան,

Ի պատասխան Ձեր գրությամբ ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում (այսուհետ՝ Տեսչական մարմին) հաշվեքննող խմբի կողմից հաշվեքննվող ժամանակահատվածում 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը հայտնաբերված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ, ներկայացնում ենք հետևյալ առարկությունները ու պարզաբանումները

<u>I-ին մասի կետերի վերաբերյալ</u>.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 445-Ն որոշման 9-րդ կետի՝ *Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարին հանձնարարվել է՝*

*1) նշանակումից հետո մեկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի միջոցով Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատողների թիվը.*

*2) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատողների թվի հաստատումից հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի հաստատմանը ներկայացնել Տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի առաջարկությունը, ինչպես նաև համաձայնեցնել քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը.*

*3) Տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համաձայնեցնելուց հետո եռօրյա ժամկետում հաստատել դրանք.*

ՄՏԻՑ № ՀՊԼ-101
«30» 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Չարենցի փող. 46, 0025 Երևան, ՀՀ
46 Charents Str., 0025 Yerevan, RA
+374 11 818 585
Веб-сайт: www.mnp.am

4) Տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուց հետո յոթնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատված Տեսչական մարմնի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը:

Համաձայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետի (2018 թվականի մարտի 23-ի ««Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի փոփոխություններով)՝ տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիրը՝ ընթացիկ տարում հաջորդ տարվա համար տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատվող փաստաթուղթ է, որն առնվազն ներառում է տեսչական մարմնի վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը, ինչպես նաև դրանց նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումների ժամանակացույցը: Նշված օրենքն ուժի մեջ է մտել նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը՝ 2018 թվականի ապրիլի 9-ին:

Համաձայն նույն օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ կետի՝ «տեսչական մարմնի գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման (ֆինանսաբյուջետային), անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը:»:

Վերոգրյալից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 445-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչությունների ղեկավարներին, ինչպես նաև Տեսչական մարմնի ղեկավարին տեսչական մարմնի ձևավորման համար տրված հանձնարարականների ամբողջական կատարման հիմքով ձևավորվել է Տեսչական մարմինը:

Ինչ վերաբերում է 2017 և 2018 թվականների համար Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիր ունենալուն, ապա տեղեկացնում ենք, որ հաշվեքննող ժամանակահատվածի համար որևէ օրենսդրական պահանջ չի եղել:

Տեսչական մարմնի հաշվապահական հաշվառումն իրականացվել է լիազոր մարմնի միջոցով, որը հաշվեքննող ժամանակահատվածում վերապահվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը:

**II-րդ մասի 1-ին կետի վերաբերյալ.**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 445-Ն որոշման 10-րդ կետի համաձայն՝ Տեսչական մարմնին պետք է փոխանցվեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընդերքի պետական տեսչության լուծարման պահից՝ սկսված և չավարտված վարչական, դատական և այլ գործառույթների իրականացման հետագա ընթացքի ապահովումը վերապահել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին:

Վերը նշված կետով բոլոր գործառույթները փոխանցվել են Տեսչական մարմնին և ապահովվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Ինչ վերաբերվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների աշխատակազմերում գործող տեսչությունների կողմից հաստատված 2017 թվականի տարեկան ստուգումների ծրագրով նախատեսված ստուգումների իրականացմանը, ապա հայտնում ենք, որ Տեսչական մարմինը չի հանդիսանում վերը նշված տեսչությունների իրավահաջորդը՝ բացառությամբ սկսված և չավարտված

վարչական, դատական և այլ գործառույթների իրականացումից, իսկ տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները չեն համարվում սկսված և չավարտված վարչական գործեր:

**<u>II-րդ մասի 2-րդ կետի վերաբերյալ</u>**

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշման համաձայն՝ «*Պետական կառավարման համակարգի մարմինների մասին*» *Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը վերակազմավորվել է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի: Այս իմաստով Հայաստանի Հանրապետության կառավարության ենթակա բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինն իրավահաջորդն է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի: Բացի այդ, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ ստուգաթերթերը մշակվում են յուրաքանչյուր համապատասխան ոլորտի և գործունեության տեսակի համար՝ հիմնվելով ստուգում իրականացնողյուրաքանչյուր մարմնի հսկողության ոլորտի և աշխատանքի առանձնահատկությունների վրա:*

Տվյալ դեպքում՝ վերակազմակերպման արդյունքում, չեն փոխվել վերակազմակերպվող տեսչական մարմնի նկատմամբ վերակազմակերպված տեսչական մարմնի հսկողության ոլորտի և աշխատանքի առանձնահատկությունները, ինչպես նաև վերահսկողության համապատասխան ոլորտները և գործունեության տեսակները: Վերը նշվածի հիմքով՝ Տեսչական մարմինն իրավասու է ստուգումները կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի համար հաստատված ստուգաթերթերով:

**<u>II-րդ մասի 3-րդ կետի վերաբերյալ</u>**

Հաշվեքննող ժամանակաշրջանում, չհաշված 2018 թվականի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսները, գործել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 445-Ն որոշումը, որով իրավական ակտերի նախագծերի մշակման գործառույթ չի սահմանվել: Իսկ 2018 թվականի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 733-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 12-րդ հոդվածի 6-րդ ենթակետով սահմանված գործառույթն իրականացնելու համար միջոցառումների ցանկ և ժամանակացույց չի սահմանվել, հետևաբար արձանագրության մեջ նշվածը չի համապատասխանում իրականությանը:

**<u>II-րդ մասի 4-րդ կետի վերաբերյալ</u>**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 30-ի թիվ 839-Ա որոշման հավելվածի 4-րդ կետով նախատեսված ստուգաթերթերը կիրառելի էին արդեն իսկ լուծարված բնապահպանական պետական տեսչության կողմից, և թիվ 839-Ա որոշման դրույթները վերաբերելի չէին տեսչական մարմիններին, հետևաբար արձանագրվածն իրականությանը չի համապատասխանում:

**<u>II-րդ մասի 5-րդ կետի վերաբերյալ</u>**

Տեսչական մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2017 թվականի նոյեմբրի 29-ի թիվ 06-Ա որոշմամբ հաստատված ստուգումների ծրագրով նախատեսված ստուգումներն ամբողջությամբ չեն իրականացվել, քանի որ 2018 թվականի ընթացքում ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվածից բացի իրականացվել են նաև օրենքով սահմանված այլ դեպքերով նախատեսված արտածրագրային ստուգումներ, և Տեսչական մարմինը չունենալով անհրաժեշտ աշխատանքային ռեսուրս (այդ թվում՝ անհրաժեշտ թվաքանակի աշխատողներ), չի կարողացել ամողջությամբ կատարել տարեկան ծրագրով նախատեսված: Սակայն դա չի նշանակում, որ Տեսչական մարմինը թույլ է տվել անգործություն և չի ձեռնարկել համապատասխան միջոցներն՝ իր առջև դրված խնդիրների լուծումն ապահովելու համար:

**<u>II-րդ մասի 6-րդ կետի վերաբերյալ.</u>**

Տեսչական մարմինի կողմից դեռևս 2017 թվականին *(սրեղծման պահից)* մշակվել և կառավարության քննարկմանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Ինչ վերաբերվում է ստուգաթերթերի մշակմանը, ապա հարկ է նկատի ունենալ, որ տեսչական մարմնի կողմից մշակվել և կառավարության քննարկմանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19 N 1343-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը ընդունվել է 2018 թվականի մարտի 29-ին (որոշում թիվ 360-Ն): Նշված որոշմամբ հաստատվել են նոր ստուգաթերթեր:

**<u>II-րդ մասի 7-րդ կետի վերաբերյալ.</u>**

Սույն կետի վերաբերյալ արձանագրվածը ևս չի համապատասխանում իրականությանը. Արտածրագրային ստուգումներն իրականացվել են բացառապես «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված դեպքերում, իսկ հանձնարարագրերը կազմվել և հաստատվել են նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթներին համապատասխան:

**<u>III մասի կետերի վերաբերյալ.</u>**

Տեսչական մարմինը 2018 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 111.1/11.2/1475-18 գրությամբ տրամադրել է տեղեկատվություն՝ իրականացված վարչական վարույթների վերաբերյալ, որը ընդգրկել է Տեսչական մարմնի նախաձեռնությամբ և դիմում բողոքների հիման վրա հարուցված վարչական վարույթներին: Ընդգրկված վարչական վարույթները վերաբերելի են եղել իրավապահ մարմինների գրությունների հիման վրա հարուցվածներին, ինչը մեր կողմից չի նշվել: Այսպիսով՝

• Տեսչական մարմինը 2017 թվականին իրականացել է թվով 325 վարչական վարույթներ, որից 319-ը հարուցվել են Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ այդ թվում 147-ը հարուցվել է իրավապահ մարմինների գրությամբ, իսկ 6-ը դիմում-բողոքների հիմքով,

• Տեսչական մարմինը 2018 թվականին իրականացել է թվով 472 վարչական վարույթներ, որից 459-ը հարուցվել են Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ այդ թվում 301-ը հարուցվել է իրավապահ մարմինների գրությամբ, իսկ 13-ը դիմում-բողոքների հիմքով:

**<u>IV-րդ մասի կետերի վերաբերյալ.</u>**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 445-Ն որոշման 6-րդ կետով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին հանձնարարվել է *սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը փոխանցվող՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանն ամրացված գույքի (ներառյալ տեսչության կողմից իրականացված ստուգումների ընթացքում կազմված ստուգումների փաթեթների) ցանկը:*

Նույն որոշման 7-րդ կետի 2-րդ ենթակետով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին հանձնարարվել է *սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին ամրացվող գույքի ցանկը:*

Վերոգրյալից հետևում է, որ Արձանագրության 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նշված գործառույթները վերապահված էին Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին և Հայաստանի Հանրապետության

բնապահպանության նախարարին, որի համար Տեսչական մարմինը որևէ պատասխանատվություն չի կրում:

**V-րդ մասի կետերի վերաբերյալ.**

Տեսչական մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից արտանետումների մակարդակների, սահմանային թույլատրելի նորմատիվների պահանջների ու չափման կարգերի պահպանման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել, քանի որ տեսչական մարմնի հաշվեկշռում գտնվող սարքավորումները հին են և դեռևս Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության օրոք չեն չափաբերվել ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից ֆինանսական խնդիրներից ելնելով:

Այժմ Տեսչական մարմնի կողմից աշխատանքներ են իրականացվում ավտոտրանսպորտային միջոցներից արտանետումների համար արդի չափիչ սարքավորումներ ձեռք բերելու ուղղությամբ, որը հնարավորություն կընձեռնի կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2410-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, պահպանելով ՄԱԿ-ի ԵՏՀ կանոնները:

Ինչպես նշել էինք, Տեսչական մարմինի կողմից դեռևս 2017 թվականին *(ստեղծման պահից)* մշակվել և կառավարության քննարկմանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, ինչպես նաև հաշվեքննող ժամանակաշրջանում, չհաշված 2018 թվականի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսները, գործել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 445-Ն որոշումը, որով իրավական ակտերի նախագծերի մշակման գործառույթ չի սահմանվել: Իսկ 2018 թվականի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 733-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 12-րդ հոդվածի 6-րդ ենթակետով սահմանված գործառույթն իրականացնելու համար միջոցառումների ցանկ և ժամանակացույց չի սահմանվել, հետևաբար արձանագրության մեջ նշվածը չի համապատասխանում իրականությանը:

Հարկ եմ համարում նշել, սարքավորումների ձեռքբերման, սարքավորումների համապատասխանելիության խնդիրները հաշվեքննության առարկա չեն հանդիսանում, քանի որ Տեսչական մարմնի գործունեության ապահովման համար վարչատնտեսական գործառույթներն իրականացրել է բնապահպանության նախարարության աշխատակազմը, իսկ ներկա պահին իրականացնում է վարչապետի աշխատակազմը: Հետևաբար հաշվեքննող խումբը չէր կարող վարչատնտեսական հարցերն ուսումնասիրել Տեսչական մարմնի նկատմամբ:

**VII-րդ մասի կետերի վերաբերյալ.**

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/15 որոշման հավելվածի 3-րդ կետով հաշվեքննության տեսակներ են սահմանվել համապատասխանության և կատարողականի հաշվեքննությունները:

«Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ համապատասխանության հաշվեքննությունը հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննության տեսակ է, որի միջոցով որոշվում է պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման համապատասխանությունն իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին, իսկ կատարողականի հաշվեքննությունը հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննության տեսակ է, որի միջոցով որոշվում է պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման տնտեսող, նպատակային և ծախսային արդյունավետ լինելը:

«Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն կատարողականի հաշվեքննության սկզբունքներն են՝

1) տնտեսում՝ կատարողականի հաշվեքննության սկզբունք, որով գնահատվում է, թե ինչքանով են նվազագույնի հասցվել նախատեսված (ձեռք բերվող) ռեսուրսներին ուղղված ծախսերը՝ սահմանված ժամկետի, որակի, քանակի, ծավալի պահպանմամբ և համարժեք հատուցմամբ.

2) նպատակային արդյունավետություն (օգտավետություն)՝ կատարողականի հաշվեքննության սկզբունք, որով գնահատվում են սահմանված նպատակների իրականացումը և պլանավորված արդյունքների ստացումը.

3) ծախսային արդյունավետություն (արդյունավետություն)՝ կատարողականի հաշվեքննության սկզբունք, որով գնահատվում է նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ համապատասխան որակով, քանակով և ժամկետում առավելագույն արդյունքների ստացումը:

Վերը նշված իրավական նորմերի և արձանագրության 7-րդ մասի պայմանական փաստական հանգամանքների համադրումից և վերլուծությունից հետևում է, որ հաշվեքննող խումբը դուրս է եկել Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/15 որոշման հավելվածով սահմանված հաշվեքննության առաջադրանքի շրջանակներից, քանի որ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն ձեռք բերելու պարտավորությունը տվյալ դեպքում և օրենքի իմաստով հաշվեքննության առարկա չի հանդիսանում:

**<u>VIII-րդ մասի կետերի վերաբերյալ.</u>**

Հաշվեքննող խմբի կողմից արձանագրվածը, կապված տեսուչների կողմից համազգեստ կրելու պարտավորության հետ տեղեկացնում ենք, որ Տեսչական մարմնի աշխատակիցները համազգեստը կրում են ստուգման, ուսումնասիրության, իրավապահ մարմինների հետ համատեղ միջոցառումների ընթացքում, իսկ հաշվեքննող խումբը իր հաշվեքննության ընթացքում չի մասնակցել նշված գործողություններին և չէր կարող գնահատել համազգեստ կրելու կամ չկրելու հանգամանքը:

**<u>X-րդ մասի կետերի վերաբերյալ.</u>**

Տեսչական մարմինն իր լիազորություններն իրականացնում է բացառապես Տեսչական մարմնի Կանոնադրության և «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, ուստի քրեական գործի շրջանակներում կենդանական կամ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման գործընթացի նկատմամբ Տեսչական մարմինը հետևողական լինելու որևէ լիազորություն չունի: Կենդանական կամ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման գումարի չափը վերականգնելու ուղղությամբ Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով իր գործառույթները իրականացնում է այլ համապատասխան մարմինների կողմից քրեական գործի հարուցումը մերժելու, կամ հարուցված քրեական գործը կարճելու հիմքով վարչարարություն, որի արդյունքում պահանջ է ներկայացնում կենդանական կամ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Տեսչական մարմնի անհետևողականության հետևանքով պետական բյուջե վնասի հատուցման ենթական գումարների վերաբերյալ տեղեկատվությանը չտիրապետելուն, ապա դատախազության կողմից հարուցված քրեական գործերի շրջանակներում պետք է հիմնավորվի հանցանքի (կամ հանցանքի բացակայության դեպքում զանցանքի) առկայությունը, որը և հիմք կհանդիսանա կենդանական կամ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար: Տեսչական մարմինը օրենքով սահմանված կարգով համագործակցում է Հայաստանի Հանրապետության դատախազության հետ՝ անհրաժեշտության դեպքում տրամադրում համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև իր գործառույթներն արդյունավետ և լիարժեք իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով պահանջում քրեական գործի վերաբերյալ տեղեկատվություն՝ կենդանական կամ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու կամ դատարան դիմելու համար:

Ինչ վերաբերում է 2017 թվականից մինչ 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում պետական բյուջե վնասի հատուցման շուրջ 3,137,012.6 հազ. դրամ գումարից

միայն 168,406.2 հազ. դրամի մուտքագրմանը, ապա հանրային դրամական պահանջներով գումարների բռնագանձումների գործընթացի նկատմամբ տարվում են աշխատանքներ հարկադիր կատարման ծառայության և Տեսչական մարմնի կողմից:

**<u>XI-րդ մասի կետերի վերաբերյալ.</u>**

Տեսչական մարմինն մինչ 2018թ ապրիլ ամիսը ընդգրկված է եղել Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության կազմում, ինչի արդյունքում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգի ներդրման» ծրագիրը գործարկվել է պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ համատեղ, ինչին իր մասնակցությունն է ունեցել նաև Բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը:

Քանի որ Տեսչական մարմինը այդ շրջանում չուներ պաշտոնական կայք-էջ, ուստի տնտեսվարող սուբյեկտներին իրազեկումն իրականացվել է Բնապահպանության նախարարության կայք-էջի, ԶԼՄ-ներին ուղարկված հաղորդագրության, հեռուստահաղորդաշարերի միջոցով: Հղումներ՝

http://www.mnp.am/am/post/2568,

https://econews.am/?p=9468&l=am,

https://haymedia.am/?p=33505&l=am%2Fpek-n%20avtomatacrel%20e%20bnapahpanakan%20nerkayacman%20kargy%20&fbclid=IwAR39Sec_twIAgQngYJopGmEU6TEuNSOtw21NCjcuwdIxdwX-5n9MI6LFVMM

https://armenpress.am/arm/news/915671/pek-n-avtomatacrel-e-bnapahpanakan-ev-bnogtagortsman-vtcharneri.html?fbclid=IwAR1UTVW6OhGwNPFmIBC1ZIdj_9COaYoLVx9OgNVcS8tPfkl1Fv3KyvGbpEg

Հավելեմ, որ Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման վերաբերյալ Տեսչական մարմին տնտեսվարողների կողմից ստացվող բոլոր հեռախոսազանգերին և հարցումներին մշտապես տրվում է համապատասխան խորհրդատվություն:

Ինչպես նաև Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման վերաբերյալ իրազեկումն իրականացվել է 2017-2018թթ ընթացքում Հայաստանի Հանրապետության Լոռու, Շիրակի, Վայոց Ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի, Արմավիրի մարզերում տնտեսվարողների հետ հանդիպում-քննարկումների ժամանակ, որոնց վերաբերյալ ԶԼՄ-ներում առկա են հրապարակումներ:

Հարկ է նշել նաև, որ արձանագրության 11-րդ մասը ևս հաշվեքննության առարկա չի հանդիսանում:

**<u>XII-րդ մասի կետերի վերաբերյալ.</u>**

12-րդ մասով արձանագրվածը ևս հաշվեքննության առարկա չի հանդիսանում, քանի որ Տեսչական մարմնի գործունեության ապահովման համար վարչատնտեսական գործառույթներն իրականացրել է բնապահպանության նախարարության աշխատակազմը, իսկ ներկա պահին իրականացնում է վարչապետի աշխատակազմը: Հետևաբար հաշվեքննող խումբը չէր կարող վարչատնտեսական հարցերն ուսումնասիրել Տեսչական մարմնի նկատմամբ:

**<u>XIII-րդ մասի կետերի վերաբերյալ.</u>**

Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման ընթացքում Տեսչական մարմինը գործունեության սկզբի օրվանից ձեռնամուխ է եղել տնտեսվարողների վիճակագրական տվյալների հավաքման, դրանց վերլուծման, ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև վերահսկողական գործառույթների նախապատվությունը դեպի առավել ռիսկային ոլորտներն: Այսպիսով խիստ կարևորելով Տեսչական

մարմինների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծումը և օգտագործումը՝ տեսչական մարմինների գործունեության սկզբունքների աներկբա և ամբողջական իրականացումը: Տեսչական մարմինը վերոգրյալ գործառույթների իրականացման նպատակով օգտվել է մի շարք ռեսուրսներից՝ հավաքագրել է իր վերահսկողության ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն՝ Excel ձևաչափով:

Տեսչական մարմնի աշխատակիցները 2017 թվականին *(ստեղծման պահից)* մշակել են Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը և հետագա ընթացքն ապահովելու նպատակով, ներկայացրել կառավարության հաստատմանը:

**<u>XIV-րդ մասի 1-ին կետի վերաբերյալ.</u>**

Հաշվեքննող խմբի կողմից մատնանշված իրավանորմի խախտումը խեղաթյուրված է և անհասկանալի:

Հարգանքով՝

Տեսչական մարմնի ղեկավարի
պարտականությունները
ժամանակավորապես կատարող Ի. Սարգսյան

*Կատարող՝ Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն*
*011 818 590*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՂԵԿԱՎԱՐ

ИНСПЕКЦИОННЫЙ ОРГАН
ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ
THE ENVIRONMENTAL PROTECTION AND
MINING INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD

№ 111.1/15.1/100-19
«16» հունվարի 2019թ.

Հաշվեքննիչ պալատի անդամ
Գ. Ոսկանյանին

Հարգելի պարոն Ոսկանյան

Ի պատասխան Ձեր 2019թ.-ի հունվարի 8-ի N ՀՊԵ-ԳՈ-03 գրության՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը (այսուհետ նաև՝ տեսչական մարմին) ներկայացնում է հետևյալ առարկությունները.

Հաշվեքննիչ պալատը 2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2018թ.-ի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար արձանագրել է, որ տեսչական մարմինը 2017թ.-ի սեպտեմբերի 20-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ: Վերոնշյալ պնդումը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Նախևառաջ անհրաժեշտ է արձանագրել, որ տեսչական մարմնի իրավանախորդ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ստեղծվել է ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 27-ի N 445-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետի համաձայն: Որոշումն ուժի մեջ է մտել պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ 2017թ.-ի մայիսի 20-ին, այսինքն՝ 2017թ. հունվարի 1-ից մինչև 2017թ.-ի մայիսի 20-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը գոյություն չի ունեցել և չէր կարող ունենալ ներքին աուդիտի համակարգ:

Որոշման թիվ 1 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը հանդիսացել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության համակարգում գործող առանձնացված ստորաբաժանում:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմնի առանձնացված ստորաբաժանումը չի հանդիսանում հանրային հատվածի կազմակերպություն, ուստի չպետք է ունենա ներքին աուդիտի համակարգ:

ՄՈՒՏՔ No Հ-ՊՄ-30
«24» 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Չարենցի փող. 46, 0025 Երևան, ՀՀ
46 Charents Str., 0025 Yerevan, RA
+374 11 818 585
էլ. փոստ՝ artur.grigoryan@mnp.am
Веб-сайт: www.mnp.am

2018թ.-ի մարտի 23-ի ««Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն սահմանվել է, որ Տեսչական մարմինը Կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է: Նշված օրենքն ուժի մեջ է մտել նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը՝ 2018թ.-ի ապրիլի 9-ին:

Վերոգրյալից հետևում է, որ 2017թ.-ի մայիսի 20-ից մինչև 2018թ.-ի ապրիլի 9-ն ընկած ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում ներքին աուդիտի համակարգ ունենալու որևէ օրենսդրական պահանջ առկա չի եղել:

2018թ.-ի ապրիլի 9-ից տեսչական մարմնում ներքին աուդիտի համակարգ ունենալու վերաբերյալ անհրաժեշտ է փաստել հետևյալը.

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է կազմակերպություններում նշված օրենքի համաձայն ներքին աուդիտի համակարգի ներդրման ժամանակացույցը:

Նշված ժամանակացույցը սահմանված է ՀՀ կառավարության 2011թ.-ի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշման 3-րդ հավելվածով, որտեղ պետական կառավարման մարմիններում ներքին աուդիտի համակարգի ներդրման վերջնաժամկետ է սահմանվել 2012թ.-ի ապրիլի 1-ը:

Վերոգրյալից հետևում է, որ տեսչական մարմնում՝ որպես Կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին, ներքին աուդիտի համակարգի ներդրման որևէ ժամկետ սահմանված չէ:

Recoverable Signature

X [signature]

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: GRIGORYAN ARTUR 1511810674 Ա. Գրիգորյան

*Կատարող՝*
*Որակի ապահովման վարչության գլխավոր մասնագետ Ս. Բեգլարյան,*
*Իրավախորհրդատու Դ. Ստեփանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

MINISTER

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МИНИСТР

0010, ք.Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 501
🖷 (374 11) 818 506

№ 1/ԱԱ/12980
«28» « 12 » 2018 թ.

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
պարոն Գ. Ոսկանյանին

Հարգելի պարոն Ոսկանյան

Ի պատասխան Ձեր 2018թ-ի դեկտեմբերի 17-ի N ՀՊԵ-ԳՈ-189 գրության տեղեկացնում եմ, որ բնապահպանության նախարարությունում ուսումնասիրվել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված արձանագրությունը, ինչի վերաբերյալ ներկայացնում եմ մեր առարկությունները.

1. 2018թ-ի մարտի 23-ի «Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-267-Ն օրենքով Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը դուրս է եկել բնապահպանության նախարարության համակարգից, այդ պատճառով անդրադառնալով Ձեր կողմից ներկայացված արձանագրությամբ բարձրացված հարցերին արձագանքել ենք միայն բնապահպանության նախարարության գործառույթներին վերաբերվող կետերին:

2. Արձանագրության IV-րդ բաժնի 2-րդ կետով ԲՆ ԲՊՏ, ԷԵԲՊՆ ԸՏՄ և ԲԸՏՄ միջև գույքի հանձնման-ընդունման ակտերի ստորագրված պատճենները ներկայացվել են ՀՀ հաշվեքննիչ պալատին բնապահպանության նախարարի 2018թ-ին դեկտեմբերի 7-ին N1/ԱԱ/12730 ելից գրությամբ (պատճենը կցվում է):

3. VIII-րդ բաժնի՝ «Տեսուչների կողմից համազգեստ կրելու պարտավորությունը», արձանագրվածի մասով.

• «Դերձակ» ՍՊԸ-ի հետ կնքված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-1» ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրում տղամարդու ձմեռային համազգեստի բամբակյա կտորից և «Էլամոդա» ՍՊԸ-ի հետ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-2» ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրում տղամարդու ամառային համազգեստի բրդյա կտորից անհամապատասխանությունները եղել են տեխնիկական վրիպակներ, ինչը չի հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը և վերոնշյալ պայմանագրերով փաստացի մատակարարված ապրանքները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի N 2085-Ն որոշմամբ և ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի մայիսի 174-ի N 153-Ն հրամանով ամրագրված տեսուչի ամառային և

ՄՏԻՑ № Հ ՊԼ-06
08 . 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ծմեռային համազգեստների նկարագրերին: Ընդ որում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 11-րդ կետի 1-ին և 21-րդ կետի 1-ին ենթակետերով սահմանված է, որ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը և գնման մրցույթը կազմակերպվել է ներկայացված հայտի հիման վրա:

- Տարածքային մարմինների աշխատակիցների գնահատականը համազգեստի չկրելու պատճառները չափսերի անհամապատասխանության ու որակազրկված լինելու մասին, հայտնում եմ, որ պատասխանատու ստորաբաժանման կողմից (Բնապահպանական պետական տեսչություն) տրվել է դրական եզրակացություն և սահմանված կարգով ընդունվել են մատակարարված ապրանքները (կցվում է հայտը նախագծողի եզրակացությունը, պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը և տեսչական մարմնի պետի կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը) (պատճենը կցվում է):
- 2017-2018 թթ. տեսչական մարմնի կողմից կատարված 9 597 960 դրամի հանդերձանքի գնումն անարդյունավետ ծախս որակելու գնահատականի վերաբերյալ հայտնում եմ, որ 2018 թվականին տեսչական մարմնի կարիքների համար հանդերձանքի գնում ընդհանրապես չի իրականացվել, իսկ 2017 թվականին տեսչական մարմնի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի գնումը որպես անարդյունավետ ծախսի որակման գնահատականը չի բխում «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից (Հաշվեքննիչ պալատն իր կողմից բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ որակում չի տալիս և դրանց հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ չի անում): Ինչ վերաբերում է հանդերձանքի գնման անարդյունավետ ծախսի որակմանը, բնապահպանության նախարարությունը համամիտ չէ տրված գնահատականին:

Առդիր՝ 24 թերթ:

Հարգանքով՝

պաշտոնակատար Է. Գրիգորյան

12/28/2018

X

Signed by: GRIGORYAN ERIK 2710790092

*Հաստատում եմ՝*
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարության
աշխատակազմի ղեկավար

-------------------Կ. Վահրամանյան

*Հաստատում եմ՝*
ՀՀ բնապահպանության
նախարարության
աշխատակազմի ղեկավար

Հ.Հովհաննիսյան

# ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

ք. Երևան 19.01.2018թ.

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարի 13.10.2017թ. 126-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խումբը (այսուհետ՝ Հանձնող) և ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմը՝ մյուս կողմից (այսուհետ՝ Ընդունող) ի կատարումն ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 28-ի N 1728-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) կազմեցին սույն ակտը այն մասին, որ «ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը հանձնում է, իսկ «ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը ընդունում է Որոշման հավելվածով հաստատված գույքը(Ցանկը կցվում է):

Սույն ակտը կազմված է 2 (երկու) օրինակից՝ յուրաքանչյուր կողմի համար:

Առդիր՝ 1 էջ, գույքի ցանկը:

Հանձնեց

Ա.Համբարձումյան

Հ.Մելիքյան

Ա.Բաբուջյան

Վ.Աչոյան

Ընդունեց

Ա.Ավայան

Խ.Խաչատրյան

Մ.Մարգարյան

Ն.Ալավերդյան

Մ.Քամալյան

Ռ.Առաքելյան

Ե.Տերտերյան

## ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 28-ի N 1728-Ա որոշման համաձայն ՀՀ բնապահպանության նախարարությանը հանձնվող գույքի ցանկ

| Հ/Հ | Ապրանքի անվանում | Չափման միավոր | Քանակ | Գումար ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 1. | ԱՄԵՔ.ԳԱԶ3102 210 ԼԼ 60 | ՀԱՏ | 1 | 5875000 |
| 2. | ՂԵԿԱՎԱՐԻ ՍԵՂԱՆ ԿՈՂԱԴԻՐՈՎ ԵՒ ԿՑՈՐԴՈՎ | ՀԱՏ | 1 | 170887 |
| 3. | ՂԵԿԱՎԱՐԻ ԵՂԱՆ | ՀԱՏ | 4 | 313612 |
| 4. | ԳՐԱՍԵՂԱՆ | ՀԱՏ | 8 | 592128 |
| 5. | ԳՐԱՍԵՂԱՆ | ՀԱՏ | 8 | 390056 |
| 6. | ՍԵՂԱՆ ՍԱՐՔԱՎՈՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ | ՀԱՏ | 2 | 99764 |
| 7. | ԿՑՈՐԴ ՍԵՂԱՆ | ՀԱՏ | 2 | 139314 |
| 8. | ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՂԱՆ | ՀԱՏ | 1 | 42766 |
| 9. | ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՂԱՆ | ՀԱՏ | 2 | 120000 |
| 10. | ԲԱԶԿԱԹՈՌ ԿԱՇՎԵ | ՀԱՏ | 1 | 172324 |
| 11. | ԲԱԶԿԱԹՈՌ ՊՏՏՎՈՂ | ՀԱՏ | 1 | 145833 |
| 12. | ԿԱՐԾԱՊԱՀԱՐԱՆ ԳՐԱՍԵՂԱՆԻ ՀԱՄԱՐ | ՀԱՏ | 18 | 1003014 |
| 13. | ԳՐԱՊԱՀԱՐԱՆ ԱՊԱԿԻՆԵՐՈՎ ԵՒ ՓԱԿ ՄԱՍՈ | ՀԱՏ | 5 | 868375 |
| 14. | ԳՐԱՊԱՀԱՐԱՆ | ՀԱՏ | 4 | 694700 |
| 15. | ԳՐԱՊԱՀԱՐԱՆ | ՀԱՏ | 2 | 273976 |
| 16. | ԳՐԱՊԱՀԱՐԱՆ | ՀԱՏ | 3 | 444099 |
| 17. | ԶԳԵՍՏԱՊԱՀԱՐԱՆ | ՀԱՏ | 3 | 487590 |
| 18. | ԶԳԵՍՏԱՊԱՀԱՐԱՆ | ՀԱՏ | 1 | 246722 |
| 19. | ԶԳԵՍՏԱՊԱՀԱՐԱՆ | ՀԱՏ | 3 | 444099 |
| 20. | ԶԳԵՍՏԱՊԱՀԱՐԱՆ | ՀԱՏ | 3 | 150000 |
| 21. | ԱԹՈՌ ԵՐԿԱԹՅԱ ՀԻՄՔՈՎ | ՀԱՏ | 28 | 598136 |
| 22. | ՊՏՏՎՈՂ ԱԹՈՌ | ՀԱՏ | 4 | 183896 |
| 23. | ՀԵՌԱԽՈՍԻ ԱՊԱՐԱՏ MIKROTEL | ՀԱՏ | 4 | 82712 |
| 24. | ՀԵՌԱԽՈՍԻ ԱՊԱՐԱՏ PANASONIC | ՀԱՏ | 4 | 65880 |
| 25. | ԵՐԿԱԹՅԱ ՊԱՀԱՐԱՆ | ՀԱՏ | 1 | 94500 |
| 26. | ՀԱՄԱԿԱՐԳԻՉ GIGABIT | ՀԱՏ | 4 | 412176 |
| 27. | ՀԱՄԱԿԱՐԳԻՉ GIGABIT | ՀԱՏ | 5 | 2548000 |
| 28. | ՀԱՄԱԿԱՐԳԻՉ FUJITSU | ՀԱՏ | 2 | 249182 |
| 29. | ՀԱՄԱԿԱՐԳԻՉ MERCURY | ՀԱՏ | 1 | 251093 |
| 30. | ՀԱՄԱԿԱՐԳԻՉ HP | ՀԱՏ | 1 | 649645 |
| 31. | ՄՈՆԻԹՈՐ LG | ՀԱՏ | 3 | 242628 |
| 32. | ՄՈՆԻԹՈՐ HP | ՀԱՏ | 1 | 113677 |
| 33. | ՄՈՆԻԹՈՐ DELL | ՀԱՏ | 1 | 72100 |
| 34. | ՄՈՆԻԹՈՐ SAMSUNG | ՀԱՏ | 8 | 352640 |
| 35. | ՏՊԻՉ SAMSUNG 4300 | ՀԱՏ | 4 | 385280 |
| 36. | ՏՊԻՉ SAMSUNG ML 1640 | ՀԱՏ | 2 | 140640 |
| 37. | ՏՊԻՉ CANON MF 3010 | ՀԱՏ | 3 | 330600 |
| 38. | ՏՊԻՉ LASER JET 1020 | ՀԱՏ | 1 | 110200 |
| 39. | ՏՊԻՉ HP OFIS JET K 7103 | ՀԱՏ | 1 | 184000 |
| 40. | UPS | ՀԱՏ | 5 | 109290 |
| 41. | ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱԽՈՄԵՏՐ LECIA FLEXLINE TSO6 PLUS TOP | ՀԱՏ | 1 | 5310000 |
| 42. | ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՆ LEICA VIVA GNSS GSO8 PLUS | ՀԱՏ | 1 | 6450000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 31610534 |

ԱԿՏ

ԸՆԴՈՒՆՄԱՆ-ՀԱՆՁՆՄԱՆ

Հիմք ընդունելով ՀՀ բնապահպանության նախարարի 2017թ. օգոստոսի 11-ի N267-Ա հրամանը, հանձնաժողովը հետևյալ կազմով՝

Ա.Ավալյան- Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),

Ե.Տերտերյան -Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի(ընդունող),

Վ.Ասատրյան- Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության պետի ժ/պ (հանձնող),

Խ.Խաչատրյան-Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ,

Մ.Մարգարյան-Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության պետ,

Ն. Ալավերդյան- Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ,

Մ. Քամալյան- Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի խորհրդատու(հասարակական հիմունքներով),

Ռ. Առաքելյան- Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի փորձագետ:

իրականացրել է ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 27-ի N445-Ն որոշման համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության գույքի հանձնումը ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին:

Արձանագրվել է հետևյալը՝

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ

| Գույքային | Անվանում | Համախառն հաշվեկշռային արժեք | Կուտակված մաշվածություն | Հաշվեկշռային արժեք | Տարեթիվ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Չիրկիզվող պահարան | 400,000.00 | 400,000.00 | 0.00 | 2006 |
| 2 | Բազկաթոռ | 50,000.00 | 50,000.00 | 0.00 | 1998 |
| 3 | Սեղան | 40,000.00 | 40,000.00 | 0.00 | 1998 |
| 4 | Պահարան 3 դռնանի | 119,600.00 | 119,600.00 | 0.00 | 2004 |
| 5 | Պահարան 3 դռնանի | 119,600.00 | 119,600.00 | 0.00 | 2004 |
| 6 | Սեղան ղեկավարի | 193,500.00 | 193,500.00 | 0.00 | 2004 |
| 7 | Սեղան խորհրդակցության | 100,000.00 | 100,000.00 | 0.00 | 2004 |
| 8 | Ա/մեք.-Շևռոլե Կապտիվա100 LL 60 | 10,000,000.00 | 5,151,515.15 | 4,848,484.85 | 2013 |
| 9 | Տեսուչների համզգեստներ-28լր. | 4,423,776.00 | 4,423,776.00 | 0.00 | 2014 |
| 10 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.20 | 75,425.80 | 2014 |
| 11 | Համակարգիչ P-4 | 313,000.00 | 313,000.00 | 0.00 | 2004 |
| 12 | Համակարգիչ P-4 YL4Q302776 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 13 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 14 | UPS-800VA | 24,700.00 | 24,700.00 | 0.00 | 2009 |
| 15 | Պատճենահանման սարք - Canon | 667,000.00 | 667,000.00 | 0.00 | 2006 |
| 16 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 17 | Սեղան 1 տումբանի | 69,600.00 | 69,600.00 | 0.00 | 2003 |
| 18 | Ֆայլ կաբինետ | 105,260.00 | 105,260.00 | 0.00 | 2001 |
| 19 | Խմելու ջրի բաք | 121,635.00 | 121,635.00 | 0.00 | 2005 |
| 20 | Բազմաֆունկցիոնալ սարք տպիչ Canon MF-3010 | 75,000.00 | 51,979.15 | 23,020.85 | 2014 |
| 21 | Լազերային տպիչ DELL-1720dn | 170,440.00 | 170,440.00 | 0.00 | 2010 |
| 22 | Գրասեղան ղեկավարի | 175,000.00 | 175,000.00 | 0.00 | 1998 |
| 23 | Պահարան 3 դռնանի | 119,600.00 | 119,600.00 | 0.00 | 2003 |
| 24 | Օդափոխիչ LG S09 LH | 296,700.00 | 296,700.00 | 0.00 | 2007 |
| 25 | Չիրկիզվող պահարան | 327,600.00 | 327,600.00 | 0.00 | 2001 |
| 26 | Համակարգիչ Dell- | 398,000.00 | 398,000.00 | 0.00 | 2010 |
| 27 | Տպիչ Canon LJ 6020 | 46,000.00 | 31,880.54 | 14,119.46 | 2014 |
| 28 | Հեռուստացույց | 61,200.00 | 61,200.00 | 0.00 | 1998 |
| 29 | Սեղան 1 տումբանի | 69,600.00 | 69,600.00 | 0.00 | 2003 |
| 30 | Սեղան նախագահական | 27,006.00 | 27,006.00 | 0.00 | 1998 |
| 31 | Թվային տեսախցիկ | 497,500.00 | 497,500.00 | 0.00 | 2006 |
| 32 | Օդափոխիչ LG S09 LH | 296,700.00 | 296,700.00 | 0.00 | 2007 |
| 33 | Գիշերային հեռադիտակ | 326,647.00 | 326,647.00 | 0.00 | 2004 |
| 34 | Դիտկային եռոտանիով | 483,671.00 | 483,671.00 | 0.00 | 2004 |
| 35 | Համակարգիչ Dell- | 398,000.00 | 398,000.00 | 0.00 | 2010 |
| 36 | Տպիչ Canon LJ 6020 | 46,000.00 | 31,880.54 | 14,119.46 | 2014 |
| 37 | Համակարգիչ CPU | 297,500.00 | 297,500.00 | 0.00 | 2005 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 38 | Համակարգիչ P- 4 | 318,500.00 | 318,500.00 | 0.00 | 2006 |
| 39 | Մոնիտոր-17 Beng | 142,400.00 | 142,400.00 | 0.00 | 2008 |
| 40 | Տպիչ HP LJ-1020 | 92,000.00 | 92,000.00 | 0.00 | 2009 |
| 41 | Լազերային տպիչի քարտրիջ | 44,000.00 | 44,000.00 | 0.00 | 2005 |
| 42 | UPS -600A | 27,500.00 | 27,500.00 | 0.00 | 2005 |
| 43 | Պատճենահանման սարք - Canon | 667,000.00 | 667,000.00 | 0.00 | 2006 |
| 44 | Համակարգիչ P- 4 | 390,800.00 | 390,800.00 | 0.00 | 2006 |
| 45 | Մոնիտոր -Acer-17 | 156,400.00 | 156,400.00 | 0.00 | 2006 |
| 46 | UPS - Pro-600 | 25,300.00 | 25,300.00 | 0.00 | 2006 |
| 47 | Լազերային տպիչ Canon | 82,800.00 | 82,800.00 | 0.00 | 2006 |
| 48 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 49 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 50 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 51 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 52 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 53 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 54 | Օդափոխիչ LG LS12 LH | 339,700.00 | 339,700.00 | 0.00 | 2007 |
| 55 | Բազմաֆունկ. սարք-Lasser jet-3050 | 199,900.00 | 199,900.00 | 0.00 | 2009 |
| 56 | Համակարգիչ P- 4 | 318,500.00 | 318,500.00 | 0.00 | 2006 |
| 57 | Մոնիտոր -LG-17 | 125,400.00 | 125,400.00 | 0.00 | 2007 |
| 58 | Սառնարան-Չինար | 11,719.00 | 11,719.00 | 0.00 | 1998 |
| 59 | Համակարգիչ P-4 YL4Q305550 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 60 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 61 | Համակարգիչ P-4 YL4Q303232 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 62 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 63 | Համակարգիչ IntelG2020 | 122,850.00 | 52,211.27 | 70,638.73 | 2014 |
| 64 | Մոնիտոր-AOC | 39,000.00 | 16,575.00 | 22,425.00 | 2014 |
| 65 | Ա/մեք.-ՈՒԱԶ-390902 151 OL 64 | 4,219,500.00 | 4,219,500.00 | 0.00 | 2005 |
| 66 | Բայկալ 442 | 250,000.00 | 84,576.62 | 165,423.38 | 2015 |
| 67 | Ատրճանակ ԻԺ75 | 262,000.00 | 88,636.30 | 173,363.70 | 2015 |
| 68 | Բայկալ 442 | 250,000.00 | 84,576.62 | 165,423.38 | 2015 |
| 69 | Բայկալ 442 | 250,000.00 | 84,576.62 | 165,423.38 | 2015 |
| 70 | Բայկալ 442 | 250,000.00 | 84,576.62 | 165,423.38 | 2015 |
| 71 | Բայկալ 442 | 250,000.00 | 84,576.62 | 165,423.38 | 2015 |
| 72 | Ատրճանակ ԻԺ75 | 262,000.00 | 88,636.30 | 173,363.70 | 2015 |
| 73 | Ատրճանակ ԻԺ75 | 262,000.00 | 88,636.30 | 173,363.70 | 2015 |
| 74 | Ատրճանակ ԻԺ75 | 262,000.00 | 88,636.30 | 173,363.70 | 2015 |
| 75 | Ատրճանակ ԻԺ75 | 262,000.00 | 88,636.30 | 173,363.70 | 2015 |
| 76 | Պահարան | 100,000.00 | 100,000.00 | 0.00 | 1998 |
| 77 | Օդափոխիչ LG S09 LH | 296,700.00 | 296,700.00 | 0.00 | 2007 |
| 78 | Համակարգիչ P-4 YL4Q 303118 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 79 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 80 | Ֆաքս- Panasonic-342 | 110,000.00 | 110,000.00 | 0.00 | 2004 |
| 81 | Տպիչ Canon LJ-6020 | 46,000.00 | 31,880.54 | 14,119.46 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 82 | Տպիչ HP Lazer Jet -1300 | 340,501.00 | 340,501.00 | 0.00 | 2005 |
| 83 | Կլոր սեղան | 27,000.00 | 7,995.48 | 19,004.52 | 2015 |
| 84 | Պահարան | 54,000.00 | 15,990.97 | 38,009.03 | 2015 |
| 85 | Զգեստապահարան | 77,000.00 | 22,801.94 | 54,198.06 | 2015 |
| 86 | Օդորակիչ -Samsung | 312,000.00 | 92,392.26 | 219,607.74 | 2015 |
| 87 | ԲՆ.պետ.տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 88 | Գրապահարան | 45,000.00 | 13,325.81 | 31,674.19 | 2015 |
| 89 | Գրապահարան | 45,000.00 | 13,325.81 | 31,674.19 | 2015 |
| 90 | ԲՆ.պետ.տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 91 | ԲՆ.պետ. տեսուչ. համազգեստներ | 157,992.00 | 150,347.22 | 7,644.78 | 2015 |
| 92 | Բնապահպ. պետ.տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 93 | Ռադիատոր-NOBEL | 39,400.00 | 39,400.00 | 0.00 | 2004 |
| 94 | Տպիչ HP Laser Jet-1010 | 131,660.00 | 131,660.00 | 0.00 | 2004 |
| 95 | Համակարգիչ Դել օպտիպ. Samsung-մոնիտորով | 1,122,106.00 | 1,122,106.00 | 0.00 | 2005 |
| 96 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 97 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 98 | Օդափոխիչ LG LS12 LH | 339,700.00 | 339,700.00 | 0.00 | 2007 |
| 99 | Գրասեղան-պահեստից | 50,300.00 | 50,300.00 | 0.00 | 2003 |
| 100 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 101 | Բնապահպ. տեսուչների | 157,992.00 | 151,409.00 | 6,583.00 | 2015 |
| 102 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 103 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 104 | Չհրկիզվող պահարան | 21,758.00 | 21,758.00 | 0.00 | 1998 |
| 105 | Մոնիտոր -Acer-17 | 156,400.00 | 156,400.00 | 0.00 | 2006 |
| 106 | Լազերային տպիչ Canon | 82,800.00 | 82,800.00 | 0.00 | 2006 |
| 107 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 108 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 109 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 110 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 111 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 112 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 113 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 114 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 115 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 116 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 117 | Օդափոխիչ LG LS12 LH | 339,700.00 | 339,700.00 | 0.00 | 2007 |
| 118 | Համակարգիչ P- 4 | 282,976.00 | 282,976.00 | 0.00 | 2005 |
| 119 | Համակարգիչ P-4 YL4Q 304760 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 120 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 121 | Սեղան ղեկավարի | 193,500.00 | 193,500.00 | 0.00 | 2003 |
| 122 | Տեսախցիկ-JVC | 287,100.00 | 287,100.00 | 0.00 | 2006 |
| 123 | Թվային տեսախցիկ | 497,500.00 | 497,500.00 | 0.00 | 2006 |
| 124 | Թվային տեսախցիկ | 497,500.00 | 497,500.00 | 0.00 | 2006 |
| 125 | Թվային ֆոտոապարատ | 267,500.00 | 267,500.00 | 0.00 | 2006 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 126 | Լազերային տպիչ - Canon2900 | 89,700.00 | 89,700.00 | 0.00 | 2008 |
| 127 | Պատճենահանման սարք Canon | 161,000.00 | 161,000.00 | 0.00 | 2006 |
| 128 | Համակարգիչ P- 4 | 324,000.00 | 324,000.00 | 0.00 | 2007 |
| 129 | Մոնիտոր -LG-18 | 125,400.00 | 125,400.00 | 0.00 | 2007 |
| 130 | UPS-800VA | 24,700.00 | 24,700.00 | 0.00 | 2008 |
| 131 | Համակարգիչ P-4 YL4Q305538 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 132 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 133 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 134 | FAX-Panasonic342 | 110,000.00 | 61,874.99 | 48,125.01 | |
| 135 | Մոնիտոր-acer | 156,400.00 | 156,400.00 | 0.00 | 2005 |
| 136 | UPS - Pro-600 | 25,300.00 | 25,300.00 | 0.00 | 2005 |
| 137 | Համակարգիչ P- 4 | 324,000.00 | 324,000.00 | 0.00 | 2005 |
| 138 | Ա/մեքենա-Ծառուե -Նիվա 087 LL60 | 5,600,000.00 | 5,600,000.00 | 0.00 | |
| 139 | Ա/մեքենա Վազ-21214 630 LL 11 | 4,140,000.00 | 4,140,000.00 | 0.00 | |
| 140 | Բնապահպան.պետ. | 157,992.00 | 150,347.23 | 7,644.77 | 2015 |
| 141 | Բնապահպան.պետ. | 157,992.00 | 150,347.22 | 7,644.78 | 2015 |
| 142 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 143 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 144 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 145 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 146 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 147 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 148 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 149 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 150 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 151 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 152 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 153 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 154 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 155 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 156 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 157 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 158 | Մոնիտոր -LG-17 | 68,700.00 | 68,700.00 | 0.00 | 2009 |
| 159 | Ջրաչափ-ԻՍՊ | 1,250,000.00 | 1,250,000.00 | 0.00 | 2004 |
| 160 | Ջրաչափ-ԻՍՊ | 1,250,000.00 | 1,250,000.00 | 0.00 | 2004 |
| 161 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 162 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 163 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 164 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 165 | Համակարգիչ P- 4 | 191,700.00 | 191,700.00 | 0.00 | 2009 |
| 166 | Մոնիտոր -LG-17 | 68,700.00 | 68,700.00 | 0.00 | 2009 |
| 167 | Լազերային տպիչ-2900 | 66,000.00 | 66,000.00 | 0.00 | 2004 |
| 168 | Տպիչ HP LJ-1320 | 180,864.00 | 180,864.00 | 0.00 | 2004 |
| 169 | Տպիչ HP LJ-1018 | 66,000.00 | 66,000.00 | 0.00 | 2006 |
| 170 | GPS GARMIN -Ջրերի վերհսկ. | 327,250.00 | 319,068.80 | 8,181.20 | 2006 |
| 171 | Համակարգիչ P- 4 | 191,700.00 | 191,700.00 | 0.00 | 2006 |
| 172 | Օդափոխիչ LG S09 LH | 296,700.00 | 296,700.00 | 0.00 | 2006 |
| 173 | Ղեկավարի սեղան | 42,400.00 | 42,400.00 | 0.00 | 2009 |
| 174 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 2009 |
| 175 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2009 |
| 176 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2005 |
| 177 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2009 |
| 178 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2010 |
| 179 | Համակարգիչ P- 4 | 282,976.00 | 282,976.00 | 0.00 | 2009 |
| 180 | Մոնիտոր -BENX | 146,439.00 | 146,439.00 | 0.00 | 2007 |
| 181 | Տպիչ HP LJ-1320 | 180,864.00 | 180,864.00 | 0.00 | 2005 |
| 182 | Տպիչ HP LJ-1320 | 178,000.00 | 178,000.00 | 0.00 | 2009 |
| 183 | Մոնիտոր-17 Samsung | 72,000.00 | 72,000.00 | 0.00 | 2010 |
| 184 | Համակարգիչ P-4YL4Q304881 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 185 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 186 | Համակարգիչ IntelG2020 | 122,850.00 | 52,211.27 | 70,638.73 | 2014 |
| 187 | Համակարգիչ IntelG2020 | 122,850.00 | 52,211.28 | 70,638.72 | 2014 |
| 188 | Մոնիտոր-AOC | 39,000.00 | 16,575.00 | 22,425.00 | 2014 |
| 189 | Մոնիտոր-AOC | 39,000.00 | 16,575.00 | 22,425.00 | 2014 |
| 190 | Բն.պետ.տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 191 | Բն.պետ.տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 192 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 193 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 194 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 195 | Համակարգիչ P- 4 | 264,800.00 | 264,800.00 | 0.00 | 2006 |
| 196 | Մոնիտոր -BENX | 146,439.00 | 146,439.00 | 0.00 | 2005 |
| 197 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 198 | Մետաղյա պահարան | 158.00 | 158.00 | 0.00 | 1986 |
| 199 | Մետաղյա պահարան | 632.00 | 632.00 | 0.00 | 1986 |
| 200 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 201 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 202 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 203 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 204 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 205 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 206 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 207 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 208 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 209 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 210 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 211 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 212 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 213 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 214 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 215 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 216 | Մետաղյա պահարան | 103.00 | 103.00 | 0.00 | 1986 |
| 217 | Մետաղյա պահարան | 14,957.00 | 14,957.00 | 0.00 | 1990 |
| 218 | Մետաղյա պահարան | 14,957.00 | 14,957.00 | 0.00 | 1990 |
| 219 | Մետաղյա պահարան | 14,957.00 | 14,957.00 | 0.00 | 1990 |
| 220 | Ղեկավարի սեղան | 25,222.00 | 25,222.00 | 0.00 | 1987 |
| 221 | Մետաղյա պահարան | 100,000.00 | 100,000.00 | 0.00 | 1990 |
| 222 | Սեղան 2 տումբանի | 27,877.00 | 27,877.00 | 0.00 | 1987 |
| 223 | Սեղան 2 տումբանի | 27,877.00 | 27,877.00 | 0.00 | 1987 |
| 224 | Դիստրո լայթ | 305,520.00 | 305,520.00 | 0.00 | 2004 |
| 225 | Դիստրո պրո-4 | 552,827.00 | 552,827.00 | 0.00 | 2004 |
| 226 | Տախոմետր TC-407 | 9,313,635.00 | 9,313,635.00 | 0.00 | 2004 |
| 227 | Դիստո պրո-4 | 600,000.00 | 600,000.00 | 0.00 | 2004 |
| 228 | Սկաներ HP SI 3770 | 60,000.00 | 60,000.00 | 0.00 | 2005 |
| 229 | Տպիչ Dj-1180 | 150,000.00 | 150,000.00 | 0.00 | 2006 |
| 230 | Թվային տեսախցիկ | 497,500.00 | 497,500.00 | 0.00 | 2006 |
| 231 | Թվային ֆոտոապարատ | 267,500.00 | 267,500.00 | 0.00 | 2006 |
| 232 | Համակարգիչ Acer TM 4 | 984,000.00 | 984,000.00 | 0.00 | 2005 |
| 233 | Մոնիտոր -SONY-19 | 276,000.00 | 276,000.00 | 0.00 | 2006 |
| 234 | Լազերային տպիչ Canon | 195,500.00 | 195,500.00 | 0.00 | 2006 |
| 235 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 236 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 237 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 238 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 239 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 240 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 241 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 242 | Շիթային տպիչ ՀՊ-500 | 2,033,000.00 | 2,033,000.00 | 0.00 | 2007 |
| 243 | Տախոմետր | 3,385,000.00 | 3,385,000.00 | 0.00 | 2007 |
| 244 | Տախոմետր | 3,385,000.00 | 3,385,000.00 | 0.00 | 2007 |
| 245 | Համակարգիչ P-4 | 324,000.00 | 324,000.00 | 0.00 | 2007 |
| 246 | Համակարգիչ P-4 | 191,700.00 | 191,700.00 | 0.00 | 2009 |
| 247 | Մոնիտոր -17 | 68,700.00 | 68,700.00 | 0.00 | 2009 |
| 248 | GPS MAP 76S (աշխարհագրական կետի կոորդինորոշման սարք) | 141,914.00 | 141,914.00 | 0.00 | 2009 |
| 249 | GPS MAP 76S (աշխարհագրական կետի կոորդինորոշման սարք) | 141,914.00 | 141,914.00 | 0.00 | 2009 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 250 | GPS GARMIN (աշխարհագրական կետի կողմնորոշման սարք) | 327,250.00 | 319,068.71 | 8,181.29 | 2009 |
| 251 | GPS GARMIN (աշխարհագրական կետի կողմնորոշման սարք) | 327,250.00 | 319,068.71 | 8,181.29 | 2009 |
| 252 | Համակարգիչ P-4 YL4Q305486 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 253 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 254 | Ա/Մեք. ՎԱԶ-21214 606 ԼԼ 11 | 3,941,000.00 | 3,941,000.00 | 0.00 | 2004 |
| 255 | Ա/ Մեք.- ՆԻՍԱՆ Patrol 710 ԼԼ 11 | 8,395,000.00 | 8,395,000.00 | 0.00 | 2006 |
| 256 | Բն. պետ.տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 257 | Բն.պետ.տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 258 | Բն.պետ.տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 259 | Բն.պետ.տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 260 | Բն.պետ.տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 261 | Բն.պետ.տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 262 | Բն.պետ.տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 263 | Բնապահպ. պետ.տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 264 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 265 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 266 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 267 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 268 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 269 | Էլ. տաքացուցիչ | 28,000.00 | 1,239.59 | 26,760.41 | 2016 |
| 270 | Էլ. տաքացուցիչ | 28,000.00 | 1,239.59 | 26,760.41 | 2016 |
| 271 | Էլ. տաքացուցիչ | 28,000.00 | 1,239.59 | 26,760.41 | 2016 |
| 272 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 273 | Սեղան 1 տումբանի | 69,600.00 | 69,600.00 | 0.00 | 2003 |
| 274 | Սեղան 1 տումբանի | 69,600.00 | 69,600.00 | 0.00 | 2003 |
| 275 | Օդորակիչ 12000BTU | 198,000.00 | 65,802.01 | 132,197.99 | 2014 |
| 276 | Համակարգիչ Intel G-2020 | 122,850.00 | 98,874.42 | 23,975.58 | 2014 |
| 277 | Գրասեղան | 52,500.00 | 15,546.77 | 36,953.23 | 2015 |
| 278 | Գրապահարան | 45,000.00 | 13,325.81 | 31,674.19 | 2015 |
| 279 | Բազմանկյուն կից սեղան | 44,000.00 | 13,029.68 | 30,970.32 | 2015 |
| 280 | Մոնիտոր-acer | 170,200.00 | 170,200.00 | 0.00 | 2005 |
| 281 | Համակարգիչ - Dell Optiplex | 561,053.00 | 561,053.00 | 0.00 | 2005 |
| | Ընդամենը | **103,699,560.00** | 93,865,944.23 | 9,833,615.77 | |
| | **Կենտրոնական լաբորատորիա** | | | | |
| 1 | Միկրոսկոպ "Էրգովալ" | 51,242.00 | 51,242.00 | 0.00 | 1985 |
| 2 | Ռոտացիոն խպարիտել ծՅԾ 2 | 25,698.00 | 25,698.00 | 0.00 | 1983 |
| 3 | Ջրային բաղնիք | 12,926.00 | 12,926.00 | 0.00 | 1980 |
| 4 | Գրքի պահարան | 9,386.00 | 9,386.00 | 0.00 | 1979 |
| 5 | Գրքի պահարան | 9,386.00 | 9,386.00 | 0.00 | 1979 |
| 6 | Չորացնող պահարան | 27,237.00 | 27,237.00 | 0.00 | 1979 |
| 7 | Պահարան "ՄՇ" | 10,848.00 | 10,848.00 | 0.00 | 1979 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Պահարան "ՄԸհ" | 10,848.00 | 10,848.00 | 0.00 | 1979 |
| 9 | Չորացման պահարան հծԿխ-75 | 26,929.00 | 26,929.00 | 0.00 | 1980 |
| 10 | Ջահ 6 տեղանոց | 8,694.00 | 8,694.00 | 0.00 | 1981 |
| 11 | Գազանալիզատոր "Միրան" | 306,683.00 | 306,683.00 | 0.00 | 1988 |
| 12 | Գազանալիզատոր "Դրագեր" | 16,311.00 | 16,311.00 | 0.00 | 1988 |
| 13 | Յունգարական կոմպ. | 191,085.00 | 191,085.00 | 0.00 | 1983 |
| 14 | ՅՔՅ կոմպ. լոբորատորիա | 507,671.00 | 507,671.00 | 0.00 | 1983 |
| 15 | Մուֆելային վառարան հծԿՅ | 9,771.00 | 9,771.00 | 0.00 | 1984 |
| 16 | Սեղան երկու դռանանի | 1,077.00 | 1,077.00 | 0.00 | 1988 |
| 17 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 18 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 19 | Յագուստի չորացուցիչ-Bosch | 329,152.00 | 329,152.00 | 0.00 | 2009 |
| 20 | Լվացքի մեքենա - Bosch | 313,028.00 | 313,028.00 | 0.00 | 2009 |
| 21 | Պահարան | 52,820.00 | 52,820.00 | 0.00 | 2009 |
| 22 | Յուղային տաքացուցիչ | 54,902.00 | 54,902.00 | 0.00 | 2009 |
| 23 | Յամակարգիչ P-4 | 191,700.00 | 191,700.00 | 0.00 | 2009 |
| 24 | Մոնիտոր-17 CRT | 68,700.00 | 68,700.00 | 0.00 | 2009 |
| 25 | Տպիչ-HP LJ-1018 | 66,000.00 | 66,000.00 | 0.00 | 2009 |
| 26 | Ջրի նմուշահավաք ուղղածիգ հաստոց-Իդրոմար/idromar | 306,432.00 | 298,771.24 | 7,660.76 | 2010 |
| 27 | Ծարժական ճախարակ 100մ պարանով- Իդրոմար/idromar | 1,002,597.00 | 977,532.07 | 25,064.93 | 2010 |
| 28 | Թթվածնի շարժական չափիչ WTW (Mod pH340i) | 629,521.00 | 613,782.94 | 15,738.06 | 2010 |
| 29 | Լրացուցիչ թթվածնային սենսոր | 330,159.00 | 321,905.06 | 8,253.94 | 2010 |
| 30 | Ծարժական pH չափիչ WTW (Mod | 371,288.00 | 362,005.76 | 9,282.24 | 2010 |
| 31 | Յաղորդակ./աղայնութ. շարժ. չափիչWTW(Mod cond 340i) | 553,361.00 | 539,526.95 | 13,834.05 | 2010 |
| 32 | Աղտոտված. շարժական չափիչ-Յաննա/Hanna(Mod HI 98703) | 519,447.00 | 506,460.84 | 12,986.16 | 2010 |
| 33 | UV-VIS Analitik Jena Mod Spekord 205BU սպեկտրոֆոտ | 5,309,883.00 | 5,177,135.89 | 132,747.11 | 2010 |
| 34 | Ջրի մաքրման համակարգ-Միլիփոր/Millipore(Mod Elix3) | 2,006,300.00 | 1,956,142.50 | 50,157.50 | 2010 |
| 35 | Սառնարան-Անգելանտոնի/Angelantoni(Mod FRL | 502,785.00 | 490,215.41 | 12,569.59 | 2010 |
| 36 | Սառնարան-Անգելանտոնի/Angelantoni(Mod FRL | 502,785.00 | 490,215.41 | 12,569.59 | 2010 |
| 37 | Անալիզի բալանս- Կեռն/ Kern (Mod ABJ 220-4M) | 642,614.00 | 626,548.63 | 16,065.37 | 2010 |
| 38 | Տարող.25մլ, ենթաբաժ. 0.01մլ , սաթից շիշ 2,5լ տարող | 237,114.00 | 231,186.12 | 5,927.88 | 2010 |
| 39 | Տարող.25մլ, ենթաբաժ. 0.01մլ , սաթից շիշ 2,5լ տարող | 237,114.00 | 231,186.12 | 5,927.88 | 2010 |
| 40 | Տարող.50մլ, ենթաբաժ. 0.01մլ , սաթից շիշ 2,5լ տարող | 237,114.00 | 231,186.12 | 5,927.88 | 2010 |
| 41 | Տարող.50մլ, ենթաբաժ. 0.01մլ , սաթից շիշ 2,5լ տարող | 237,114.00 | 231,186.12 | 5,927.88 | 2010 |
| 42 | Ծարժական սառեցնող տոուփՌելագս/Relags(Mod PolyLite) | 35,106.00 | 34,228.38 | 877.62 | 2010 |
| 43 | Ծարժական սառեցնող տոուփՌելագս/Relags(Mod PolyLite) | 35,106.00 | 34,228.38 | 877.62 | 2010 |
| 44 | Ծարժական սառեցնող տոուփՌելագս/Relags(Mod PolyLite) | 35,106.00 | 34,228.38 | 877.62 | 2010 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 45 | Շարժական սառեցնող տրուփՌեւագս/Relags(Mod PolyLite) | 35,106.00 | 34,228.38 | 877.62 | 2010 |
| 46 | Շարժական սառեցնող տրուփՌեւագս/Relags(Mod PolyLite) | 35,106.00 | 34,228.38 | 877.62 | 2010 |
| 47 | Համակարգիչ Դելլ/DELL(Mod | 398,063.00 | 398,063.00 | 0.00 | 2010 |
| 48 | Համակարգիչ Դելլ/DELL(Mod | 398,063.00 | 398,063.00 | 0.00 | 2010 |
| 49 | Լազերային տպիչ սարք Դելլ/DELL(Mod 1720dn ) | 170,442.00 | 170,442.00 | 0.00 | 2010 |
| 50 | Լազերային տպիչ սարք Դելլ/DELL(Mod 1720dn ) | 170,442.00 | 170,442.00 | 0.00 | 2010 |
| 51 | Լազերային տպիչ սարք Դելլ/DELL(Mod 1720dn ) | 170,442.00 | 170,442.00 | 0.00 | 2010 |
| 52 | Շարժական pH չափիչ WTW (Mod | 371,288.00 | 362,005.76 | 9,282.24 | 2010 |
| 53 | Շարժական pH չափիչ WTW (Mod | 371,288.00 | 362,005.76 | 9,282.24 | 2010 |
| 54 | Թթվածնի շարժական չափիչ WTW (Mod pH340i) | 629,521.00 | 613,782.94 | 15,738.06 | 2010 |
| 55 | Թթվածնի շարժական չափիչ WTW (Mod pH340i) | 629,521.00 | 613,782.94 | 15,738.06 | 2010 |
| 56 | Հաղորդակ./աղայնութ. շարժ. չափիչWTW(Mod cond 340i) | 553,361.00 | 539,526.95 | 13,834.05 | 2010 |
| 57 | Հաղորդակ./աղայնութ. շարժ. չափիչWTW(Mod cond 340i) | 553,361.00 | 539,526.95 | 13,834.05 | 2010 |
| 58 | Լրացուցիչ թթվածնային սենսոր | 330,159.00 | 321,905.06 | 8,253.94 | 2010 |
| 59 | Լրացուցիչ թթվածնային սենսոր | 330,159.00 | 321,905.06 | 8,253.94 | 2010 |
| 60 | Լուսապատկերային ծանաօպտիկական գազանալիզ. | 17,823,384.00 | 17,823,384.00 | 0.00 | 2007 |
| 61 | Սպեկտրոֆոտոմետր-HACH | 19,045,224.00 | 19,045,224.00 | 0.00 | 2007 |
| 62 | Նավթամթերքների անալիզատոր | 2,018,280.00 | 2,018,280.00 | 0.00 | 2007 |
| 63 | Անալիզատոր ECOTEST-2000 | 470,932.00 | 470,932.00 | 0.00 | 2007 |
| 64 | Գազանալիզատոր-KOLION-18 | 600,897.00 | 600,897.00 | 0.00 | 2007 |
| 65 | Գազանալիզատոր-GANK-4A | 4,422,632.00 | 4,422,632.00 | 0.00 | 2007 |
| 66 | Մետեոմետր MEC-200 | 567,460.00 | 567,460.00 | 0.00 | 2007 |
| 67 | Ջրի նմուշառիչ PE-1420 | 206,561.00 | 206,561.00 | 0.00 | 2007 |
| 68 | Նոթբուք-Intel Celeron | 764,500.00 | 764,500.00 | 0.00 | 2007 |
| 69 | Գործիքների հավաքածու | 76,450.00 | 76,450.00 | 0.00 | 2007 |
| | Ընդամենը | **67,335,682.00** | 66,896,436.50 | 439,245.50 | |
| | | **Երևանի ՏՐ** | | | |
| 1 | Լազերային տպիչ - Canon-3010 | 89,700.00 | 89,700.00 | 0.00 | 2005 |
| 2 | Համակարգիչ P-4 YL4Q303143 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 3 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 4 | Սեղան 2 դռնանի | 11,926.00 | 11,926.00 | 0.00 | 1990 |
| 5 | Ֆաքս մեքենա - Panasonic | 110,000.00 | 110,000.00 | 0.00 | 2005 |
| 6 | Մոնիտոր -LCD-17 | 170,200.00 | 170,200.00 | 0.00 | 2005 |
| 7 | Համակարգիչ P-4 | 325,200.00 | 325,200.00 | 0.00 | 2005 |
| 8 | Լազերային տպիչ - Canon2900 | 89,700.00 | 89,700.00 | 0.00 | 2005 |
| 9 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 2006 |
| 10 | Թվային տեսախցիկ | 497,500.00 | 497,500.00 | 0.00 | 2006 |
| 11 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 12 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 13 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 15 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 16 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 17 | Լազերային տպիչ Dell-1720DN | 170,440.00 | 170,440.00 | 0.00 | 2010 |
| 18 | Համակարգիչ-Dell-կոմպլ. | 398,000.00 | 398,000.00 | 0.00 | 2010 |
| 19 | Համակարգիչ P-4 YL4Q303288 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 20 | Համակարգիչ P-4 YL4Q303167 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 21 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 22 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 23 | Օդափոխիչ LG LS-S12 | 339,700.00 | 339,700.00 | 0.00 | 2007 |
| 24 | Ա/մեքենա-Վազ 21214 053 LL 11 | 4,140,000.00 | 4,140,000.00 | 0.00 | 2007 |
| 25 | Ա/Մեք. Վազ-21214 294 LL 10 | 3,175,200.00 | 3,175,200.00 | 0.00 | 2003 |
| 26 | Բնապահպ. տեսուչների | 157,992.00 | 151,409.01 | 6,582.99 | 2015 |
| 27 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 28 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 29 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 30 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 31 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 32 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 33 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 34 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 35 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 36 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 37 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 38 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 39 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 40 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 41 | Էլ. տաքացուցիչ -Nova-11a | 29,000.00 | 1,283.85 | 27,716.15 | 2016 |
| 42 | Էլ. տաքացուցիչ -Nova-9a | 25,000.00 | 1,106.77 | 23,893.23 | 2016 |
| 43 | Էլ. տաքացուցիչ -Nova-9a | 25,000.00 | 1,106.77 | 23,893.23 | 2016 |
| | **Ընդամենը** | **15,400,260.00** | 15,167,322.78 | 232,937.22 | |
| | | **Սյունիքի ՏՓ** | | | |
| 1 | Գրասեղան | 9,290.00 | 9,290.00 | 0.00 | 1989 |
| 2 | Գրասեղան | 146,016.00 | 146,016.00 | 0.00 | 1993 |
| 3 | Գրապահարան | 140,996.00 | 140,996.00 | 0.00 | 1992 |
| 4 | Կողքի սեղան | 135,879.00 | 135,879.00 | 0.00 | 1987 |
| 5 | Պատճենահանման մեքենա | 161,000.00 | 161,000.00 | 0.00 | 2006 |
| 6 | Զգեստապահարան | 4,201.00 | 4,201.00 | 0.00 | 1987 |
| 7 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 2006 |
| 8 | Բազմաֆունկ.սարք Lasser Jet-3050 | 199,900.00 | 199,900.00 | 0.00 | 2009 |
| 9 | Ինֆրալիտ | 83,095.00 | 83,095.00 | 0.00 | 1989 |
| 10 | Աշխատանքային սեղան փոքր | 2,646.00 | 2,646.00 | 0.00 | 1987 |
| 11 | Աշխատանքային սեղան փոքր | 2,646.00 | 2,646.00 | 0.00 | 1987 |
| 12 | Աշխատանքային սեղան փոքր | 2,646.00 | 2,646.00 | 0.00 | 1987 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | Գրապահարան | 8,525.00 | 8,525.00 | 0.00 | 1988 |
| 14 | Զգեստապահարան | 4,201.00 | 4,201.00 | 0.00 | 1987 |
| 15 | Տաքաօդային աղտահանիչ | 24,621.00 | 24,621.00 | 0.00 | 1986 |
| 16 | Թափահարիչ | 6,124.00 | 6,124.00 | 0.00 | 1990 |
| 17 | Յեղուկների սառեցուցիչ | 34,746.00 | 34,746.00 | 0.00 | 1990 |
| 18 | Տիտրման կազմ | 30,406.00 | 30,406.00 | 0.00 | 1986 |
| 19 | Տեխնիկ.փաստաթղթ հավաքածու | 55,079.00 | 55,079.00 | 0.00 | 1991 |
| 20 | Յամակարգիչ P-4 YL4Q 303137 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 21 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 22 | Քարշիչ պահարան | 33,792.00 | 33,792.00 | 0.00 | 1987 |
| 23 | Ա/Մեք.-ՈՒԱԶ-315194 969 LL 64 | 5,550,000.00 | 5,550,000.00 | 0.00 | 2007 |
| 24 | Ա/մեքենա Լադա-21214 082 LL 60 | 5,750,000.00 | 2,320,535.71 | 3,429,464.29 | 2014 |
| 25 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 26 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 27 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լռակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| | Ընդամենը | **15,431,475.00** | 11,775,733.28 | 3,655,741.72 | |
| | **Արարատի ՏԲ** | | | | |
| 1 | Գրապահարան | 11,110.00 | 11,110.00 | 0.00 | 1989 |
| 2 | Պահարան կոմող | 20,450.00 | 20,450.00 | 0.00 | 1988 |
| 3 | Գրապահարան | 11,994.00 | 11,994.00 | 0.00 | 1988 |
| 4 | Ավտոտնակ | 18,000.00 | 18,000.00 | 0.00 | 1987 |
| 5 | Էլեկտրաջերմապահպանիչ | 10,635.00 | 10,635.00 | 0.00 | 1998 |
| 6 | Մուֆել | 3,427.00 | 3,427.00 | 0.00 | 1990 |
| 7 | Մուֆել | 3,427.00 | 3,427.00 | 0.00 | 1990 |
| 8 | PH մետր | 16,830.00 | 16,830.00 | 0.00 | 1990 |
| 9 | Քարշիչ պահարան | 5,496.00 | 5,496.00 | 0.00 | 1989 |
| 10 | Անալիտիկ կշեռք | 3,208.00 | 3,208.00 | 0.00 | 1989 |
| 11 | Չորացնող պահարան | 13,870.00 | 13,870.00 | 0.00 | 1987 |
| 12 | Գազատարալուծիչ Mg-2 | 8,182.00 | 8,182.00 | 0.00 | 1987 |
| 13 | Նիտրատաչափ ՆՄ-002 | 8,786.00 | 8,786.00 | 0.00 | 1986 |
| 14 | Անալիտիկ կշեռք | 992.00 | 992.00 | 0.00 | 1986 |
| 15 | ՖԷԿ | 6,493.00 | 6,493.00 | 0.00 | 1988 |
| 16 | Անալիտիկ կշեռք | 1,692.00 | 1,692.00 | 0.00 | 1986 |
| 17 | Իոնոմետր | 1,418.00 | 1,418.00 | 0.00 | 1988 |
| 18 | Քիմ.տարալուծման սեղան | 6,855.00 | 6,855.00 | 0.00 | 1988 |
| 19 | Ավտոռադիոձայնագրիչ | 65,000.00 | 65,000.00 | 0.00 | 1989 |
| 20 | FAX-Panasonic KX-FT-77 | 99,900.00 | 99,900.00 | 0.00 | 2004 |
| 21 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 2006 |
| 22 | Պատճենահանման սարք | 161,000.00 | 161,000.00 | 0.00 | 2006 |
| 23 | Յամակարգիչ P-4 | 191,700.00 | 191,700.00 | 0.00 | 2006 |
| 24 | Մոնիտոր-17 CRT | 109,800.00 | 109,800.00 | 0.00 | 2009 |
| 25 | Տպիչ-HP LJ-1018 | 66,000.00 | 66,000.00 | 0.00 | 2009 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 26 | Համակարգիչ P-4 YL4Q 303237 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 27 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 28 | Ա/Մեք.Վազ-21214 401 LL 11 | 3,595,000.00 | 3,595,000.00 | 0.00 | 2003 |
| 29 | Բն.պետ. տեսուչ. համազգեստներ | 157,992.00 | 150,347.22 | 7,644.78 | 2015 |
| 30 | Բն.պետ. տեսուչ. համազգեստներ | 157,992.00 | 150,347.22 | 7,644.78 | 2015 |
| 31 | Բն.պետ. տեսուչ. համազգեստներ | 157,992.00 | 150,347.22 | 7,644.78 | 2015 |
| 32 | Բն.պետ. տեսուչ. համազգեստներ | 157,992.00 | 150,347.22 | 7,644.78 | 2015 |
| 33 | Բն.պետ. տեսուչ. համազգեստներ | 157,992.00 | 150,347.22 | 7,644.78 | 2015 |
| 34 | Բն.պետ. տեսուչ. համազգեստներ | 157,992.00 | 150,347.22 | 7,644.78 | 2015 |
| 35 | Բնապահպան. պետ. տեսուչների | 157,992.00 | 150,347.22 | 7,644.78 | 2015 |
| 36 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 37 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| | **Ընդամենը** | **8,463,275.00** | 8,258,909.92 | 204,365.08 | |
| | **Արմավիրի ՏԲ** | | | | |
| 1 | FAX Panasonic KX FT 71 | 90,402.00 | 90,402.00 | 0.00 | 2004 |
| 2 | Պատճենահանման մեքենա - Canon | 161,000.00 | 161,000.00 | 0.00 | 2006 |
| 3 | Տպիչ-HP LJ-1018 | 66,000.00 | 66,000.00 | 0.00 | 2009 |
| 4 | Համակարգիչ P-4 YL4Q 304904 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 5 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 6 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 2006 |
| 7 | Ա/մեքենա ՎԱԶ-21214 924 OS 64 | 4,000,000.00 | 4,000,000.00 | 0.00 | 2008 |
| 8 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 9 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 10 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| | **Ընդամենը** | **7,363,068.00** | 7,136,790.57 | 226,277.43 | |
| | **Արագածոտնի ՏԲ** | | | | |
| 1 | Գրքերի պահարան | 17,534.00 | 17,534.00 | 0.00 | 1989 |
| 2 | Գրքերի պահարան | 17,534.00 | 17,534.00 | 0.00 | 1989 |
| 3 | FAX-Panasonic BX-71 | 90,402.00 | 90,402.00 | 0.00 | 2004 |
| 4 | Լազերային տպիչ - Canon-2900 | 82,800.00 | 82,800.00 | 0.00 | 2006 |
| 5 | Գրասեղան | 80,000.00 | 80,000.00 | 0.00 | 2006 |
| 6 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 2006 |
| 7 | Համակարգիչ P-4 3,2 | 324,000.00 | 324,000.00 | 0.00 | 2007 |
| 8 | Մոնիտոր LG-17 | 125,400.00 | 125,400.00 | 0.00 | 2007 |
| 9 | UPS-800VA | 24,700.00 | 24,700.00 | 0.00 | 2007 |
| 10 | Համակարգիչ P-4 YL4Q 302780 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 11 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 12 | Ա/մեքենա Գազ-3110 901 LL 11 | 3,941,000.00 | 3,941,000.00 | 0.00 | 2004 |
| 13 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 14 | Բն. պետ. տես.համազգեստներ | 157,992.00 | 157,992.00 | 0.00 | 2015 |
| 15 | Բն.պետ. տեսուչ. համազգեստներ | 157,992.00 | 150,347.22 | 7,644.78 | 2015 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2015 |
| 17 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2015 |
| | Ընդամենը | **8,093,412.00** | 7,934,915.60 | 158,496.40 | |
| | **Գեղարքունիքի ՏԲ** | | | | |
| 1 | Սեղան երկկողմանի | 11,945.00 | 11,945.00 | 0.00 | 1989 |
| 2 | Սեղան երկկողմանի | 11,945.00 | 11,945.00 | 0.00 | 1989 |
| 3 | Գրասեղան երկկողմանի | 13,626.00 | 13,626.00 | 0.00 | 1989 |
| 4 | Գրասեղան | 12,337.00 | 12,337.00 | 0.00 | 1989 |
| 5 | Լաբորատոր սեղան | 848.00 | 848.00 | 0.00 | 1990 |
| 6 | Լաբորատոր սեղան | 848.00 | 848.00 | 0.00 | 1990 |
| 7 | Քաշիչ պահարան | 3,216.00 | 3,216.00 | 0.00 | 1990 |
| 8 | Կշեռք անալիտիկ լաբ. | 3,693.00 | 3,693.00 | 0.00 | 1990 |
| 9 | Կշեռք անալիտիկ լաբ. | 3,693.00 | 3,693.00 | 0.00 | 1990 |
| 10 | Ձեռքի GPS սարքավորում | 258,313.00 | 258,313.00 | 0.00 | 2004 |
| 11 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 2006 |
| 12 | Պատճենահանման մեքենա | 210,000.00 | 210,000.00 | 0.00 | 2004 |
| 13 | Համակարգիչ P-4 | 191,700.00 | 191,700.00 | 0.00 | 2009 |
| 14 | Մոնիտոր-17 CRT | 68,700.00 | 68,700.00 | 0.00 | 2009 |
| 15 | Տպիչ-HP LJ-1018 | 66,000.00 | 66,000.00 | 0.00 | 2009 |
| 16 | Վրան | 120,000.00 | 120,000.00 | 0.00 | 2010 |
| 17 | Սեղան | 38,000.00 | 30,400.00 | 7,600.00 | 2010 |
| 18 | Ծալովի մահճակալ | 45,500.00 | 45,500.00 | 0.00 | 2010 |
| 19 | Համակարգիչ P-4 Notebook | 377,470.00 | 377,470.00 | 0.00 | 2011 |
| 20 | Համակարգիչ P-4 YL4Q 302713 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 21 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 22 | Ա/մեքենա ՎԱԶ-21214 843 ՍՍ 62 | 5,100,000.00 | 4,284,000.00 | 816,000.00 | 2010 |
| 23 | Համակարգիչ IntelG2020 | 122,850.00 | 52,211.27 | 70,638.73 | 2014 |
| 24 | Մոնիտոր-AOC | 39,000.00 | 16,575.00 | 22,425.00 | 2014 |
| 25 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 26 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 27 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 28 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 29 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 30 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 31 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| | Ընդամենը | **10,263,750.00** | 8,819,105.60 | 1,444,644.40 | |
| | **Կոտայքի ՏԲ** | | | | |
| 1 | Մոնիտոր -acer | 156,600.00 | 156,600.00 | 0.00 | 2004 |
| 2 | FAX Panasonic -77 | 99,900.00 | 99,900.00 | 0.00 | 2004 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 2006 |
| 4 | Պատճենահանման մեքենա- Canon | 161,000.00 | 161,000.00 | 0.00 | 2006 |
| 5 | Համակարգիչ P-4 | 191,700.00 | 191,700.00 | 0.00 | 2006 |
| 6 | Մոնիտոր- Acer-17LCD | 68,700.00 | 68,700.00 | 0.00 | 2006 |
| 7 | Լազերային տպիչ Canon-1018 | 66,000.00 | 66,000.00 | 0.00 | 2006 |
| 8 | Համակարգիչ P-4 YL4Q 303140 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 9 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 10 | Ա/մեքենա Վազ-21214 316 LL 11 | 3,898,500.00 | 3,898,500.00 | 0.00 | 2003 |
| 11 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 12 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 13 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 14 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 15 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 16 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 17 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 18 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| | **Ընդամենը** | **8,336,066.00** | 7,732,659.52 | 603,406.48 | |
| | **Տավուշի ՏԲ** | | | | |
| 1 | Ադմինիստրատիվ շենք | 4,827,900.00 | 4,827,900.00 | 0.00 | 1986 |
| 2 | Ձեռքի GPS սարքավորում | 258,313.00 | 258,313.00 | 0.00 | 2004 |
| 3 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 20062004 |
| 4 | FAX Panasonic -71 | 90,402.00 | 90,402.00 | 0.00 | 2006 |
| 5 | Պատճենահանման մեքենա | 161,000.00 | 161,000.00 | 0.00 | 2006 |
| 6 | Լազերային տպիչ Canon | 82,800.00 | 82,800.00 | 0.00 | 2006 |
| 7 | UPS-600A | 25,300.00 | 25,300.00 | 0.00 | 2006 |
| 8 | Համակարգիչ P-4 YL4Q 303293 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 9 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 10 | Ա/Մեքենա Վազ-21214 414 LL 11 | 3,595,000.00 | 3,595,000.00 | 0.00 | 2003 |
| 11 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 12 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 13 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 14 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 15 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 16 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 17 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 18 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 19 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 20 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| | **Ընդամենը** | **13,277,501.00** | 12,500,282.40 | 777,218.60 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Լոռու ՏԲ** | | | | |
| 1 | Գրասեղան երկպահարանի | 18,200.00 | 18,200.00 | 0.00 | 1991 |
| 2 | Թորիչ ապարատ | 24,350.00 | 24,350.00 | 0.00 | 1991 |
| 3 | PH մետր | 15,200.00 | 15,200.00 | 0.00 | 1991 |
| 4 | Սանիտարական մանր լաբորատոր | 1,269,500.00 | 1,269,500.00 | 0.00 | 1991 |
| 5 | Նիտրատաչափ 002 տեսակի | 22,100.00 | 22,100.00 | 0.00 | 1991 |
| 6 | FAX Panasonic-77 | 99,900.00 | 99,900.00 | 0.00 | 2004 |
| 7 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 2006 |
| 8 | Համակարգիչ P-4 | 324,000.00 | 324,000.00 | 0.00 | 2008 |
| 9 | Մոնիտոր LG-17 | 125,400.00 | 125,400.00 | 0.00 | 2008 |
| 10 | Համակարգիչ P-4 | 191,700.00 | 191,700.00 | 0.00 | 2009 |
| 11 | Մոնիտոր-17 CRT | 68,700.00 | 68,700.00 | 0.00 | 2009 |
| 12 | Տպիչ-HP LJ-1018 | 66,000.00 | 66,000.00 | 0.00 | 2009 |
| 13 | Աշխատանքային բազկաթոռ | 110,000.00 | 105,600.00 | 4,400.00 | 2009 |
| 14 | Համակարգիչ P-4 YL4Q 303152 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 15 | Համակարգիչ P-4 YL4Q 302704 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 16 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 17 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 18 | Ա/մեք. Վազ-21214 632 LL 11 | 4,140,000.00 | 4,140,000.00 | 0.00 | 2007 |
| 19 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 20 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 21 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 22 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 23 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 24 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 25 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| | **Ընդամենը** | **10,414,726.00** | 9,866,272.98 | 548,453.02 | |
| | **Շիրակի ՏԲ** | | | | |
| 1 | FAX Panasonic-77 | 99,900.00 | 99,900.00 | 0.00 | 2004 |
| 2 | Երկաթյա պահարան | 3,996.00 | 3,996.00 | 0.00 | 1990 |
| 3 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 2006 |
| 4 | Համակարգիչ P-4 | 191,700.00 | 191,700.00 | 0.00 | 2009 |
| 5 | Մոնիտոր-17 CRT | 68,700.00 | 68,700.00 | 0.00 | 2009 |
| 6 | Համակարգիչ P-4 YI4Q304758 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 7 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 8 | Ա/Մեքենա -ՎԱԶ-2121 289 LL 10 | 3,175,200.00 | 3,175,200.00 | 0.00 | 1989 |
| 9 | Հենակ սարքավորումների և | 1,220.00 | 1,220.00 | 0.00 | 1989 |
| 10 | Սեղան առանձին քիմիական | 15,700.00 | 15,700.00 | 0.00 | 1989 |
| 11 | Հենակ կշեռքի համար | 2,835.00 | 2,835.00 | 0.00 | 1989 |
| 12 | Հենակ կշեռքի համար | 2,835.00 | 2,835.00 | 0.00 | 1989 |
| 13 | Հենակ կշեռքի համար | 2,835.00 | 2,835.00 | 0.00 | 1989 |
| 14 | Տեղադրում տիտրավորման | 4,300.00 | 4,300.00 | 0.00 | 1989 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15 | Լվացարան | 1,620.00 | 1,620.00 | 0.00 | 1989 |
| 16 | Խառնիչ մագնիսային | 4,350.00 | 4,350.00 | 0.00 | 1989 |
| 17 | Խառնիչ մագնիսային | 4,350.00 | 4,350.00 | 0.00 | 1989 |
| 18 | ՊՀ-673 Մ Հաճախականության | 18,250.00 | 18,250.00 | 0.00 | 1989 |
| 19 | ՊՀ-673 Մ Հաճախականության | 18,250.00 | 18,250.00 | 0.00 | 1989 |
| 20 | Սպեկտրոֆոտոմետր  ՍՖ-46 | 57,500.00 | 57,500.00 | 0.00 | 1989 |
| 21 | Սարք թափահարման | 15,700.00 | 15,700.00 | 0.00 | 1989 |
| 22 | Բաղնիք ջրային 6տեղանոց | 13,850.00 | 13,850.00 | 0.00 | 1989 |
| 23 | Բաղնիք ջրային 6տեղանոց | 13,850.00 | 13,850.00 | 0.00 | 1989 |
| 24 | Սարք տիտրավորման | 9,800.00 | 9,800.00 | 0.00 | 1989 |
| 25 | Բարոմետր Մոլչանովի | 2,750.00 | 2,750.00 | 0.00 | 1989 |
| 26 | Բարոմետր Մոլչանովի | 2,750.00 | 2,750.00 | 0.00 | 1989 |
| 27 | Բարոմետր Մոլչանովի | 2,750.00 | 2,750.00 | 0.00 | 1989 |
| 28 | Բարոմետր Մոլչանովի | 2,750.00 | 2,750.00 | 0.00 | 1989 |
| 29 | Բլոկ ավտոմատ տիտրման համար | 24,500.00 | 24,500.00 | 0.00 | 1989 |
| 30 | Կշեռք   լաբորատոր ՎԼԿ-500 | 5,200.00 | 5,200.00 | 0.00 | 1989 |
| 31 | Կշեռք   լաբորատոր  1կգ 3-րդ | 4,800.00 | 4,800.00 | 0.00 | 1989 |
| 32 | Իոնոմեր լաբորատոր-130 | 16,100.00 | 16,100.00 | 0.00 | 1989 |
| 33 | Իոնոմեր լաբորատոր-130 | 16,100.00 | 16,100.00 | 0.00 | 1989 |
| 34 | Իոնոմեր ունիվերսալ | 20,150.00 | 20,150.00 | 0.00 | 1989 |
| 35 | Իմիտատոր էլեկտրոդ | 10,200.00 | 10,200.00 | 0.00 | 1989 |
| 36 | Կոլորիմետր ֆոտոէլկտր. | 30,000.00 | 30,000.00 | 0.00 | 1989 |
| 37 | Կոլորիմետր ֆոտոէլկտր. | 30,000.00 | 30,000.00 | 0.00 | 1989 |
| 38 | Ամրակալան լաբորատորիային | 2,650.00 | 2,650.00 | 0.00 | 1989 |
| 39 | Սարք բարակ շերտ. խրոմատոգրաֆիայի համար | 48,000.00 | 48,000.00 | 0.00 | 1989 |
| 40 | Թերմոստատ ՏԳՈՒ-01-200 | 47,000.00 | 47,000.00 | 0.00 | 1989 |
| 41 | Ցենտրիֆուգա լաբորատորիայի | 22,881.00 | 22,881.00 | 0.00 | 1989 |
| 42 | Էլեկտրավառարան | 46,665.00 | 46,665.00 | 0.00 | 1989 |
| 43 | Էլեկտրավառարան | 46,665.00 | 46,665.00 | 0.00 | 1989 |
| 44 | Էլեկտրավառարան | 46,665.00 | 46,665.00 | 0.00 | 1989 |
| 45 | Էլեկտրավառարան | 43,000.00 | 43,000.00 | 0.00 | 1989 |
| 46 | Թերմոստատ ՏԳՈՒ-01-200 | 40,000.00 | 40,000.00 | 0.00 | 1989 |
| 47 | Աշխատանքային աթոռ | 1,500.00 | 1,500.00 | 0.00 | 1989 |
| 48 | Թորման սարք -721 | 2,350.00 | 2,350.00 | 0.00 | 1989 |
| 49 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 50 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 51 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| 52 | Բնապ.պետ.տեսուչի համազգեստ | 157,992.00 | 80,270.14 | 77,721.86 | 2015 |
| | **Ընդամենը** | **7,531,001.00** | 7,220,113.56 | 310,887.44 | |
| | | **Վայոց Ձորի ՏԲ** | | | |
| 1 | FAX Panasonic-71 | 90,402.00 | 90,402.00 | 0.00 | 2004 |
| 2 | Գազանալիզատոր | 2,480,000.00 | 2,480,000.00 | 0.00 | 2006 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Պատճենահանման մեքենա | 161,000.00 | 161,000.00 | 0.00 | 2006 |
| 4 | Համակարգիչ Cpu-3,2 | 264,800.00 | 264,800.00 | 0.00 | 2006 |
| 5 | Մոնիտոր- Acer-17LCD | 156,400.00 | 156,400.00 | 0.00 | 2006 |
| 6 | UPS- 600A | 25,300.00 | 25,300.00 | 0.00 | 2006 |
| 7 | Լազերային տպիչ Canon | 82,800.00 | 82,800.00 | 0.00 | 2006 |
| 8 | Ա/մեքենա Վազ-21214 842 ՍՍ 63 | 5,100,000.00 | 4,284,000.00 | 816,000.00 | 2010 |
| 9 | Համակարգիչ P-4 YL4Q303116 | 130,644.00 | 130,644.00 | 0.00 | 2011 |
| 10 | Մոնիտոր-Samsung | 46,222.00 | 46,222.00 | 0.00 | 2011 |
| 11 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 12 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 13 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 14 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 15 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| 16 | Բնապահպ. պետ. տեսուչ. համազգեստ-լրակազմով | 129,600.00 | 54,174.19 | 75,425.81 | 2016 |
| | **Ընդամենը** | **9,315,168.00** | 8,046,613.14 | 1,268,554.86 | |
| | **Ընդամենը** | **284,924,944.00** | 265,221,100.08 | 19,703,843.92 | |

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ավայան

անդամներ՝ Խ. Խաչատրյան

Մ. Մարգարյան

Ս. Ալավերդյան

Մ. Քամալյան

Ռ. Առաքելյան

Հանձնող՝ Վ. Ասատրյան

Ընդունող՝ Ե. Տերտերյան

Հաստատված է
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի մայիսի 20-ի N 228-Ն հրամանի

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« 19 » « դեկտեմբերի » 2017թ.

Պայմանագրի անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ **« 26 » « հուլիսի » 2017թ.**

Պայմանագրի համարը՝ № **ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-2**

Պատվիրատուի անվանումը՝ **ՀՀ բնապահպանության նախարարություն**

Կատարողի անվանումը՝ **«Էլամոդա» ՍՊԸ**

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում Վաճառողը « 19 » « դեկտեմբերի » 2017թ.-ին մատակարարել է հետևյալ ապրանքները.

| N | Մատակարարված ապրանքներ, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Տեխնիկական բնութագրերի համառոտ շարադրանքը | Քանակական բնութագրերը | | Կատարման ժամկետը | |
| | | | ըստ պայմանգրով հաստատված ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանգրով հաստատված ժամանակացույցի | փաստացի |
| 1 | Բնապահպանական պետական տեսուչի ամառային համազգեստ | • Գլխարկը գլխարկանշանով,<br>• Տաբատ կամ կիսաշրջազգեստ գարնանային աշնանային,<br>• Բաճկոն գարնանային-աշնանային տարբերանշանով,<br>• Փողկապ,<br>• Կաշվե գոտի | 60 հատ | 60 հատ | 15.12.2017թ. | 19.12.2017թ. |
| 2 | Բնապահպանական պետական տեսուչի ձմեռային դաշտային համազգեստ՝ կոստյում | • Բաճկոնը տարբերանշանով<br>• Տաբատը. | 60 հատ | 60 հատ | 15.12.2017թ. | 19.12.2017թ. |
| 3 | Բնապահպանական պետական տեսուչի ամառային դաշտային համազգեստ՝ կոստյում | • Գլխարկը (կեպի) գլխարկանշանով<br>• Բաճկոնը տարբերանշանով,<br>• Տաբատը. | 60 հատ | 60 հատ | 15.12.2017թ. | 19.12.2017թ. |

**Նշումներ անհամապատասխանությունների մասին:** Հիմք ընդունելով պայմանագրի 6.2 կետը գանձվում է տույժ 10 860 դրամ: Մատակարարման ժամկետների (4 օր ուշացում) խախտման համար հաշվարկվող տույժը՝ 5 429 520 x 0.05% x 4 = 10860 դրամ:

**Այլ անհամապատասխանություններ չկան**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ **դրական եզրակացություն:**

*« 19 » « դեկտեմբերի » 2017թ. Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ Ա.Մովսիսյան*

(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«26» «հուլիսի» 2017թ. կնքված*
*№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-2» պայմանագրի*

# ԱԿՏ N1

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2017 թ. հուլիսի 26-ին կնքված № «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-2» գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2017 թ. դեկտեմբերի 19 -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| Բնապահպանական պետական տեսուչի ամառային համազգեստ | 60 | լրակազմ |
| Բնապահպանական պետական տեսուչի ձմեռային դաշտային համազգեստ կոստյում | 60 | լրակազմ |
| Բնապահպանական պետական տեսուչի ամառային դաշտային համազգեստ կոստյում | 60 | լրակազմ |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Է. Հովհաննիսյան
պաշտոն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծող ներկայացուցիչ

ազգանուն, անուն

ստորագրություն

*Հավելված 3*
*«26» «հուլիսի» 2017թ. կնքված*
*№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-2» պայմանագրի*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ բնապահպանության նախարարություն | «ԷԼԱԱՄՈՂԱ» ՍՊԸ |
| ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք | ք.Երևան, Զավարյան 57/1 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Յունիբանկ ԲԲԸ Մալաթիա մ/ճ |
| Հ/Հ 900011007854 | Հ/Հ 24105020675400 |
| ՀՎՀՀ 02507198 | ՀՎՀՀ 00889965 |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 19 » « 12 » 2017 թ.

Պայմանագրի անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «26» «հուլիսի» 2017 թ.
Պայմանագրի համարը՝ № **«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-17/13-2»**

Գնորդն ի դեմս **ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության պետ Հ. Գալստյանի**, և Վաճառողն ի դեմս «ԷԼԱԱՄՈՂԱ» ՍՊԸ-ի տնօրեն Է.Հովսեփյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « 19 » « 12 » 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N 1 եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Բնապահպանական պետական տեսուչի ամառային համազգեստ | համաձայն տեխ. բնութագրի | 60 | 60 | 15.12.2017թ | 19.12.2017 թ | 2549,88 | մինչև 31.12.2017 թ |
| 2 | Բնապահպանական պետական տեսուչի ձմեռային դաշտային համազգեստ կոստյում | համաձայն տեխ.բնութագրի | 60 | 60 | 15.12.2017թ | 19.12.2017 թ | 1679,76 | մինչև 31.12.2017 թ |
| 3 | Բնապահպանական պետական տեսուչի ամառային դաշտային համազգեստ կոստյում | համաձայն տեխ.բնութագրի | 60 | 60 | 15.12.2017թ | 19.12.2017 թ | 1199,88 | մինչև 31.12.2017 թ |
| | Ընդամենը | | | | | | 5429,52 | |

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ստորագրություն | ստորագրություն |
| Է. Հովսեփյան | |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

MINISTER

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МИНИСТР

0010, ք.Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq. Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ փոստ 10010608@e-citizen.am
էլ փոստ /E-mail/ эл почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 501
(374 11) 818 506

№ 1/ԱԼ/10069
«19» «01» 2019 թ.

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
պարոն Գ. Ոսկանյանին

Հարգելի պարոն Ոսկանյան

Ի պատասխան Ձեր 2019թվականի հունվարի 8-ի N ՀՊԵ-ԳՈ-04 գրության ներկայացնում եմ «ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում հայտնաբերված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ» N1 արձանագրության վերաբյալ բնապահպանության նախարարության առարկությունները և պարզաբանումները:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

պաշտոնակատար Է. Գրիգորյան

1/19/2019

X

Signed by: GRIGORYAN ERIK 2710790092

ՄՏԻՑ № Հ ՊՎ-61
«21» 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ա. Ավայան
0118181570

# ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

**ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում հայտնաբերված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ» N1 արձանագրությամբ ներկայացված**

| N | Արձանագրված խեղաթյուրում | Առարկություն և պարզաբանում |
|---|---|---|
| 1. | «Տեսչական մարմինը 2017թվականի սեպտեմբերի 20-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչև օրս առկա չէ:» | 2017 թվականի ապրիլի 27-ի N 445-Ն ՀՀ կառավարության որոշմամբ բնապահպանության նախարարության համակարգում ստեղծվել է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստեղծման պահին բնապահպանության նախարարությունում գործել է ներքին աուդիտի բաժին, որն իրավասու էր աուդիտ իրականացնել նախարարության համակարգում գործող բոլոր կազմակերպություններում՝ այդ թվում նաև բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում:<br>Համաձայն ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» N733-Լ որոշման Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը գործում է որպես կառավարությանը ենթակա մարմին և դրա կառուցվածքում «Ներքին աուդիտ» ստորաբաժանման ստեղծումը բնապահպանության նախարարության լիազորություններից դուրս է: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N 01/3563-18
27.12.2018թ.

0047 ՀՀ Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան փ.129
☎ (374-10) 65-05-53, 65-46-95
Ֆաքս. (374-10) 65-16-60
Էլ. փոստ info-atm@moh.am

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ՝
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ոսկանյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՀՊԵ-ԳՈ-177 գրության տեղեկացնում ենք, որ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում (այսուհետ՝ Տեսչական մարմին) ուսումնասիրվել է Հաշվեքննիչ պալատի կողմից կազմված Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում հայտնաբերված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն), որի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Արձանագրության 1-ին բաժնի վերաբերյալ տեղեկացնում ենք հետևյալը.

ա) Արձանագրության 1-ին բաժնում սահմանվում է՝ «Տեսչական մարմինն ունի 186 հաստիքային միավոր, որից 94-ը թափուր:»: Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի № 706-Ա որոշման N 2 հավելվածով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա մարմինների հաստիքների առավելագույն թիվը, որը Տեսչական մարմնի համար կազմում է 280 հաստիքային միավոր: Ներկայումս սահմանված հաստիքային միավորներից 98-ը թափուր է:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է համապատասխան փոփոխություն կատարել Արձանագրության տեքստում:

ՄՏԻՑ N Երդ-03
«08» 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

բ) 4-րդ կետի վերաբերյալ՝ կապված Տեսչական մարմնի հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումն Առողջապահության նախարարության համապատասխան ստորաբաժանումների միջոցով իրականացնելուն, տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի № 444-Ն որոշման 9-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ նշված գործառույթների իրականացումը վերապահվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի № 705-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի № 444-Ն որոշումը, իսկ տեսչական մարմինների հաշվապահական հաշվառման, ֆինանսաբյուջետային, անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական աշխատանքներին աջակցելու հետ կապված գործընթացը ՀՀ վարչապետի 2018 թվականի հուլիսի 19-ի թիվ 02/42.2/18935-18 հանձնարարականով (կցվում է) վերապահվել է համապատասխան նախարարություններին, ուստի Տեսչական մարմնի կողմից «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը չի խախտվել:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է Արձանագրության 1-ին բաժնում չներառել 4-րդ կետը:

2. Արձանագրության 2-րդ բաժնի վերաբերյալ տեղեկացնում ենք հետևյալը.

ա) 2-րդ կետի վերաբերյալ՝ կապված Տեսչական մարմնի ձևավորման համար անհրաժեշտ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն, տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի № 444-Ն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովող օրենսդրական փոփոխությունների փաթեթը (կցվում է) ՀՀ կառավարություն ներկայացնելը վերապահված է եղել ՀՀ առողջապահության նախարարին: Միաժամանակ հայտնում ենք, որ համապատասխան փաթեթը մշակվել է ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի

կողմից և ներկայացվել ՀՀ կառավարություն 2017 թվականի հունիսի 2-ին թիվ ԼԱ/04/7717-17 գրությամբ (կցվում է):

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է 2-րդ կետում չներառել «իրավական ակտերում չեն կատարվել համապատասխան փոփոխություններ և այլն» բառերը:

բ) 3-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 444-Ն որոշման 8-րդ կետի համաձայն ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմինն ապահովել է պետական տեսչության լուծարման պահից սկսված և չավարտված վարչական և դատական գործերի իրականացման հետագա ընթացքը: Վարչական գործերի վերաբերյալ մասնավորապես տեղեկացնում ենք, որ պետական տեսչության լուծարման պահին հարուցված և չավարտված վարչական վարույթներ առկա չեն եղել, իսկ դատական գործերի հետագա ընթացքն ապահովվել է ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի կողմից:

2018 թվականի հունվարի 11-ին ՀՀ ԱՆ աշխատակազմի և ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի միջև կազմված հանձնման ընդունման ակտով (կցվում է) լուծարված պետական տեսչության ընթացիկ դատական և ԴԱՀԿ ծառայություն ուղարկված գործերը հանձնվել են ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնին:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է խմբագրել Արձանագրության 2-րդ բաժնի 3-րդ կետը՝ հանելով լուծարված պետական տեսչության կողմից սկսված և չավարտված վարչական և դատական գործերի հետագա ընթացքը չապահովելու վերաբերյալ դրույթները:

գ) 4-րդ կետերի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմինը ձևավորվել է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի № 444-Ն որոշման հիման վրա, իսկ մինչ այդ առողջապահության ոլորտի, աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ աշխատանքի անվտանգության ապահովման և աշխատողների առողջության պահպանման նորմերի կիրառման բնագավառում վերահսկողական գործառույթներ է իրականացրել և պատասխանատվության միջոցներ կիրառել ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչությունը:

Հաշվի առնելով, որ ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմինը չի հանդիսանում ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության իրավահաջորդը, տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի № 839-Ա որոշումը չէր կարող իրավական հիմք հանդիսանալ ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի համար այդ որոշմամբ նշված ստուգաթերթերով ստուգումներ իրականացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է Արձանագրության 2-րդ բաժնի 4-րդ կետում «Տեսչական մարմինը» բառերը փոխարինել «ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչությունը» բառերով:

3. Արձանագրության 3-րդ բաժնի վերաբերյալ տեղեկացնում ենք հետևյալը.

Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունների փաթեթը ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 30-ին և օրինական ուժի մեջ է մտել 2017 թվականի դեկտեմբերի 23-ին, իսկ օրենսդրական փոփոխությունների փաթեթը ընդունվել է 2018 թվականի մարտի 24-ին և օրինական ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 7-ին: Մինչ այդ Տեսչական մարմնի կողմից իր վերահսկողական լիազորությունների շրջանակներում վարչական վարույթ հարուցելու իրավական հիմքերը բացակայել են:

Արձանագրությունում նշված տեղեկատվությունը, այն է՝ 76 դիմում բողոքների հիման վրա և 83 սեփական նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթներ, ներառում է Տեսչական մարմնի կողմից 2018 թվականի ապրիլի 7-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում հարուցված վարչական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ մինչև 2017 թվականի ապրիլի 27-ը ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կողմից հարուցված վարչական վարույթների վերաբերյալ տեղեկատվությանը Տեսչական մարմինը չի տնօրինում հաշվի առնելով, որ վերջինս չի հանդիսանում լուծարված պետական տեսչության իրավահաջորդը: Նշվածով պայմանավորված անհասկանալի է, թե ինչ հիմքերով և ինչ չափանիշների հիման վրա է Տեսչական մարմնի կողմից հարուցված

վարչական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը որակվել որպես խեղաթյուրում և անհամապատասխանություն:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է քննարկել Արձանագրության 3-րդ բաժնի խմբագրման նպատակահարմարության հարցը:

4. Արձանագրության 4-րդ բաժնի վերաբերյալ տեղեկացնում ենք՝

4-րդ բաժնի առաջին պարբերությամբ նշվում է, որ՝ «ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՀՀ/11.2/17319-18 գրության համաձայն ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության լուծարումից հետո առ այսօր ՀՀ առողջապահության նախարարության կողմից տեսչության գույքի, այդ թվում՝ փաստաթղթերի գույքագրում չի իրականացվել:»: Քանի որ լուծարված տեսչությունը գործել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմում, վերջինիս լուծարումից հետո նրա գույքի, այդ թվում՝ փաստաթղթերի գույքագրումը պետք է կատարվեր ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Ի նկատի ունենալով վերոգրյալը անհասկանալի է, թե ինչ հիմքերով է արձանագրվել, որ Տեսչական մարմնի կողմից խախտվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի № 2-Ն հրամանի 7-րդ կետը:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է քննարկել Արձանագրության 4-րդ բաժնի 1-ին կետը խմբագրելու նպատակահարմարության հարցը:

5. Արձանագրության 7-րդ բաժնի վերաբերյալ տեղեկացնում ենք հետևյալը.

ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի 2018 թվականի մարտի 13-ի «Դեղատնային գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներում խորհրդատվություն և իրազեկում իրականացնելու մասին» № 51-Ա հրամանի իրավական հիմք են հանդիսանում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերը, որոնց համաձայն՝ տեսչական մարմինը իրականացնում է համապատասխան ոլորտներում ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքներ, տեղեկացնում է տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին, իր

վերահսկման ոլորտում հնարավոր խախտումները կանխելու և հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով իրականացնում է կանխարգելիչ գործունեություն: Նշված հրամանում հղում չի կատարվում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին: Վերոգրյալի հաշվառմամբ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի 2018 թվականի մարտի 13-ի № 51-Ա հրամանում նշված աշխատանքային խումբը «Խաչունց գրուպ» ՍՊԸ-ին պատկանող ք. Երևան Մաշտոցի պողոտա թիվ 20 շենք հասցեում գործող «Կանաչ դեղատուն» դեղատնային կրպակում իրականացրել է բացառապես իրազեկման աշխատանքներ (կից ներկայացվում է 2018 թվականի մարտի 14-ի իրազեկման թերթիկը):

Միաժամանակ, տվյալ գործընթացում իրականացված գործողությունները՝ դեղեր պահանջելը, որպես հսկիչ գնում որակելը միանշանակ չէ, քանի որ նշված գործընթացը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, որով Տեսչական մարմնին նման գործընթաց իրականացնելու որևէ լիազորություն վերապահված չէ: Դեղատնային կրպակ այցելության շրջանակներում դեղեր պահանջելը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի իմաստով չի կարող դիտարկվել որպես հսկիչ գնում, հաշվի առնելով, որ նույն օրենքի № 2.1 հավելվածի 1.1-ին կետով սահմանվում է հսկիչ գնումներ իրականացնող հատուկ սուբյեկտ, այն է՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, իսկ հավելվածի 1.3-րդ կետով հստակ սահմանվում են հսկիչ գնումներ իրականացնելու հիմքերը:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է քննարկել Արձանագրության 7-րդ բաժնի 2-րդ կետը խմբագրելու նպատակահարմարության հարցը:

6. Արձանագրության 8-րդ բաժնի վերաբերյալ տեղեկացնում ենք հետևյալը.

ա) 1-ին կետի վերաբերյալ հայտնում ենք, որ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները, եթե

օրենքով այլ բան նախատեսված չէ:»: ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշման հավելվածով սահմանված Տեսչական մարմնի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) 29-րդ կետի համաձայն՝ «տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է տեսչական մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:»: Կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատման հստակ ժամկետ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքով, Կանոնադրությամբ կամ որևէ այլ իրավական ակտով սահմանված չէ: Ուստի Տեսչական մարմնի կողմից Կանոնադրության համապատասխան դրույթը չի խախտվել, այլ Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները դեռևս չեն հաստատվել:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների օրինակելի ձևը մշակվել և 2018 թվականի նոյեմբերի 27-ին թիվ 01/3020-18 գրությամբ (կցվում է) ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, որին ի պատասխան ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 02/42.2/41733-18 հանձնարարականով (կցվում է) համաձայնություն է տրվել ներկայացված նախագծին: Ներկայումս կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները գտնվում են մշակման փուլում:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է քննարկել Արձանագրության մեջ 8-րդ բաժնի 1-ին կետը չներառելու հարցը:

բ) 2-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ Կանոնադրության 19-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Տեսչական մարմնի ղեկավարը ղեկավարում, համակարգում և վերահսկում է տեսչական մարմնի ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է տեսչական մարմնի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար», նույն կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ «Տեսչական մարմնի ղեկավարը իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրագրեր և տալիս հանձնարարագրեր, ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության

անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր:»:

Նշված դրույթների համադրությունից բխում է, որ Տեսչական մարմնի ընթացիկ գործունեությունը ղեկավարում, այդ թվում՝ աշխատակիցներին գործուղելու վերաբերյալ հրամաններ է ընդունում Տեսչական մարմնի ղեկավարը՝ յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով գործերի առանձնահատկությունները, աշխատողների որակավորումը և մի շարք այլ էական հանգամանքներ: Որևէ իրավական ակտով նախատեսված չէ դրույթ այն մասին, որ ՀՀ մարզերում խորհրդատվության և իրազեկման գործառույթները ենթակա են կատարման բացառապես տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է քննարկել Արձանագրության 8-րդ բաժնում 2-րդ կետը չընդգրկելու նպատակահարմարության հարցը:

7. Արձանագրության 9-րդ բաժնի վերաբերյալ տեղեկացնում ենք հետևյալը.

ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 8-ի № 20-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում բժշկական սպասարկման և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտներում հնարավոր խախտումները կանխելու և հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով ուսումնասիրություն իրականացնելու համար:

Տեղեկացնում ենք, որ հրամանի նախաբանում հղում է կատարվում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածներին, որոնց համաձայն՝ տեսչական մարմինը իրականացնում է համապատասխան ոլորտներում ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքներ, տեղեկացնում է տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին, իր վերահսկման ոլորտում հնարավոր խախտումները կանխելու և հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով իրականացնում է կանխարգելիչ գործունեություն: Նշված հրամանում հղում չի կատարվում «Հայաստանի

Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին:

Հաշվի առնելով վերոգրյալը տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 8-ի № 20-Ա հրամանում «ուսումնասիրություն» հասկացությունը չի օգտագործվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված իր բովանդակությանը համապատասխան: Գործնականում աշխատանքային խումբն ուսումնասիրելով բժշկական կենտրոնում տիրող վիճակը, ինչպես նաև արձանագրելով որոշ թերություններ 2018 թվականի փետրվարի 16-ին թիվ 444-18 գրությամբ (կցվում է) դիմել է «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ն. Ավանեսյանին՝ առաջարկելով բնակչության բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելիս պահպանել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի № 48-Ն և 2008 թվականի մարտի 4-ի № 03-Ն հրամանների պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է խմբագրել Արձանագրության 9-րդ բաժնի 2-րդ կետը:

8. Արձանագրության 10-րդ բաժնի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի № 755-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանվում է, որ «Տեսչական մարմնի լիազորություններն են վերահսկողության շրջանակներում սանիտարահիգիենիկ փորձաքննության ու լաբորատոր հետազոտություններ կատարելու նպատակով նմուշառումը և գործիքային չափումների իրականացումը»: Սակայն Տեսչական մարմնի հաստիքացուցակով, որն աշխատանքային կարգով ներկայացվել է հաշվեքննություն իրականացնող պաշտոնատար անձանց, նման հաստիք նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի վերաբերյալ» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի դրույթներով Տեսչական մարմինը հարուցված վարչական վարույթի շրջանակում նմուշառում և գործիքային չափումներ իրականացնելու նպատակով ներգրավում է համապատասխան

բնագավառի փորձագետներ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից:

Միաժամանակ տեղեկացնում ենք որ Տեսչական մարմնի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 01/3169-18 գրությամբ (կցվում է) Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակին ներկայացվել է Տեսչական մարմնի բնականոն և արդյունավետ գործունեությանը խոչընդոտող հիմնական խնդիրների վերաբերյալ տեղեկանք, որի 9-րդ կետով առաջարկվել է Տեսչական մարմնում ստեղծել համապատասխան հաստիքներ՝ Կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված լիազորությունների շրջանակներում իրականացվող նմուշառումը և գործիքային չափումները պատշաճ կազմակերպելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է քննարկել Արձանագրության 10-րդ բաժինը խմբագրելու նպատակահարմարության հարցը:

9. Արձանագրության 11-րդ բաժինը վերաբերելի չէ Տեսչական մարմնին, ուստի վերջինիս անդրադարձ չի կատարվում:

10. Արձանագրության 12-րդ բաժնի 3-րդ կետի վերաբերյալ առաջարկվում է հաշվի առնել նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ մասը, որի համաձայն՝ «Նախարարի տեղակալին, Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին, տեսչական մարմնի ղեկավարի տեղակալին, վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին, մարզպետի տեղակալին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է անմիջական ղեկավարը:»:

Կից ներկայացվում է Արձանագրության ստորագրված տարբերակը:

Առդիր՝ 53 էջ:

27.12.2018

X

ԷԴԳԱՐ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Подписано: KHURSHUDYAN EDGAR 4001830221

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԷԴԳԱՐ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Կատարող՝ Աննա Կոոյան
իրավական աջակցության
և փաստաթղթաշրջանառության բաժին (28)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

### ՂԵԿԱՎԱՐ

N 01/3585-18

«28» 12 2018թ.

0047 ՀՀ Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան փ.129
(374-10) 65-05-53, 65-46-95
Ֆաքս. (374-10) 65-16-60
Էլ. փոստ info-atm@moh.am

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ոսկանյան

Ի լրումն 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 01/3563-18 գրության՝ Ձեզ են ներկայացվում գրության կից նյութերը՝ թղթային տարբերակով:

Առդիր՝ 38 էջ:

Восстановимая подпись

X

ԷԴԳԱՐ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: KHURSHUDYAN EDGAR 4001830221
ԷԴԳԱՐ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Կատարող՝ Աննա Կոոյան
իրավական աջակցության
և փաստաթղթաշրջանառության բաժին(28)

ՄՏԻՑ N ՀԴԼ-02
«08» 01 20 19թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան, Կառավարական տուն 1

**ՀՀ առողջապահության նախարար**
**պարոն Արսեն Թորոսյանին**

**ՀՀ բնապահպանության նախարար**
**պարոն Էրիկ Գրիգորյանին**

**ՀՀ կրթության և գիտության նախարար**
**պարոն Արայիկ Հարությունյանին**

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար**
**պարոն Արծվիկ Մինասյանին**

---

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ՝ հաշվի առնելով տեսչական մարմինների գործունեության առանց ընդհատման ապահովման անհրաժեշտությունը՝ խնդրում եմ ներկա՝ անցումային փուլում, շարունակել աջակցել դրանց բնականոն աշխատանքներին՝ ժամանակավորապես իրականացնելով տեսչական մարմինների գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, ֆինանսաբյուջետային, անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի աշխատանքները:

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

.......-ը ..................-ի, 2018 թ. հ/հ.....................

Կատ.՝ Տեսչական բարեփոխումների խումբ, Տարոն Հակոբյան
Հեռ՝ 011 597 219

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀայաստանիՀանրապետություն, Երևան 0010, Կառավարականտուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս(+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

______________N ______________

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ստեփանյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 444-Ն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի, կից ներկայացվում է նշված որոշման ընդունումից բխող և նոր ստեղծված ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովող օրենսդրական փոփոխությունների փաթեթը:

Միաժամանակ, մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի մի շարք հրամաններում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի նախագիծը(կցվում է), որը նախապատրաստվում է ընդունման և գրանցման:

Տեղեկացնում եմ նաև, որ ոլորտի առանձնահատկություններից ելնելով, ինչպես նաև գործող իրավական ակտերի մեծ ծավալի առկայության պարագայում, մի շարք իրավական ակտեր, այդ թվում գերատեսչական ակտեր, գտնվում են լրամշակման փուլում և սեղմ ժամկետում լրացուցիչ կներկայացվեն:

Առդիր՝ 6 փաթեթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Գոռ Հովհաննիսյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի ԱՊՏ
Հեռ. 65-03-05 (107)

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի «Վաճառողի կողմից սննդամթերքի կշռափաթեթավորում կատարելիս, ելնելով տվյալ ապրանքատեսակի առանձնահատկությունից, փաթեթավորման համար օգտագործվում են հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության կողմից թույլատրված նյութերից պատրաստված փաթեթավորման միջոցներ» նախադասությունը հանել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ — Ս. Սարգսյան

20 թ. «»
Երևան
ՀՕ- -Ն

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մայիսի 16-ի ՀՕ-42 օրենքը լրացնել 5.1-րդ գլխով հետևյալ բովանդակությամբ.

«

### ԳԼՈՒԽ 5.1
### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 25.1. Բնակչության բժշկական օգնության և սպասարկման նկատմամբ պետական վերահսկողությունը

1. Բնակչության բժշկական օգնության և սպասարկման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը:

Հոդված 25.2. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

1. Սույն օրենքի պահանջները խախտող անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ                                    Ս. Սարգսյան

20  թ.         «»
Երևան
ՀՕ-      -Ն

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՄԱՐԴՈՒ ԱՐՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-275-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքը 39-րդ հոդվածում.

1) վերնագրում, 1-ին և 2-րդ մասերում «հսկողությունը» բառը փոխարինել «վերահսկողությունը» բառով:

2) 1-ին մասի «մարմինը» բառը փոխարինել «մարմնի համակարգում գործող տեսչական մարմինը»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

20   թ.   «»
Երևան
ՀՕ-   -Ն

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-324 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել 3.1 գլխով հետևյալ բովանդակությամբ.

«

ԳԼՈՒԽ 3.1

ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 12.1. Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու նկատմամբ պետական վերահսկողությունը

Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է լիազոր մարմնի համակարգում գործող տեսչական մարմինը»:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն օրենքի պահանջները խախտող անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

20 թ. «»
Երևան
ՀՕ- -Ն

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքը լրացնել 19.1-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 19.1. Վերարտադրողական առողջության պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունը

Վերարտադրողական առողջության պահպանման, վերարտադրողականության ոլորտում տեխնոլոգիաների կիրառման կարգի ու պայմանների նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի համակարգում գործող տեսչական մարմինը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ                                        Ս. Սարգսյան

20   թ.          «»
Երևան
ՀՕ-      -Ն

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մայիսի 25-ի ՀՕ-80-Ն օրենքը լրացնել 7.1 գլխով հետևյալ բովանդակությամբ.

«

### ԳԼՈՒԽ 7.1.
### ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 24.1. Հոգեբուժության օգնության իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունը

Հոգեբուժության օգնության իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի համակարգում գործող տեսչական մարմինը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

20 թ. «»
Երևան
ՀՕ- -Ն

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-103 օրենքը լրացնել 4.1-րդ գլխով հետևյալ բովանդակությամբ.

«

### ԳԼՈՒԽ 4.1
### ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 16.1. Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման նկատմամբ պետական վերահսկողությունը

Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի համակարգում գործող տեսչական մարմինը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

20   թ.   «»
Երևան
ՀՕ-   -Ն

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «և օրենքով սահմանված վերահսկողություն» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողությունն իրականացնում է համապատասխան լիազոր մարմնի համակարգում գործող տեսչական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ — Ս. Սարգսյան

20 թ. «»
Երևան
ՀՕ- -Ն

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-177-Ն օրենքի 6-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին մասում.

ա. 1-ին կետում «վերահսկողությունը և» բառերը հանել:

բ. 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

2) 2-րդ մասում.

ա. 2-րդ կետում «վերահսկողությունը և» բառերը հանել:

բ. 4-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ — Ս. Սարգսյան

20   թ.   «»
Երևան
ՀՕ-   -Ն

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 109-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «աշխատանքի անվտանգության ապահովման հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի ծառայողը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 250-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ, երրորդ և չորրորդ նախադասություններում «աշխատանքի անվտանգության ապահովման հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 260-րդ հոդվածի 2-րդ մասում «աշխատանքի անվտանգության ապահովման հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնին» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 262-րդ հոդվածում «իրենց իրավասությունների սահմաններում հսկողություն և վերահսկողություն են իրականացնում պետական

լիազորված մարմինները» բառերը փոխարինել «հսկողությունն ու վերահսկողությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2017թ. « »
Երևան
ՀՕ- -Ն

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒ ԱՐՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

««Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություններ կատարելու մասին», ««Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 27.04.2017թ. N 444-Ն որոշմամբ ստեղծված ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովելու անհրաժեշտությամբ: Առողջապահության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող մարմնի գործառույթները, որոնք վերապահված էին ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչությանը չէին կարող վերաբերել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնված առողջապահական տեսչական մարմնին, քանի որ տեսչական մարմինը վերոնշյալ տեսչության իրավահաջորդը չի:

## 2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Գործող օրենքներով և այլ իրավական ակտերով առողջապահության բնավառում պետական վերահսկողութան իրականացման լիազորությունները վերապահված է ՀՀ առողջապահորության նախարարությանը և ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչությանը:

Նոր ստեղծված ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի նպատակն է առողջապահության բնագավառում պետական վերահսկողության իրականացումը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ գործառույթների իրականացումը, սակայն վերջինս չի հանդիսանում ՀՀ առողջապահության նախարարության կամ լուծարված ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության իրավահաջորդը, ինչը խոչընդոտ է հանդիսանում տեսչական մարմնին իրականացնելու և ապահովելու իրեն վերապահված գործառույթները:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքի հիման վրա համապատասխան բնագավառում տեսչական մարմնի ստեղծումից հետո դադարեցվում է տվյալ բնագավառի քաղաքականությունը մշակող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կազմում գործող տվյալ բնագավառը վերահսկող տեսչության գործունեությունը: Տվյալ բնագավառում վերահսկողություն իրականացնող այլ մարմին գործել չի կարող»:

## 3. Առաջարկվող կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծերի ընդունման նպատակն է ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովելուն, ինչպես նաև առողջապահության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող մարմնի գործառույթների հստակեցում:

## 4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Իրավական ակտերի նախագծերի մշակումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության ռառողջապահության նախարարության կողմից:

## 5. Ակնկալվող արդյունքը

Օրենսդրորեն կարգավորված գործառույթների իրականացում, առողջապահության բնագավառում անվտանգության, աշխատողների առողջության պահպանումն ու անվտանգության ապահովում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒ ԱՐՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

««Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում

կատարելու մասին», ««Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին տեղեկանքի լրացման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՆԱԽԱԳԾՄԱՆԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը

Չի իրականացվել:

2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին

Չի եղել:

3. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

Չկան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ««ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒ ԱՐՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.

««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում առաջանում է ՀՀ կառավարության որոշման ընդունման անհրաժեշտություն:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը

Համապատասխանում է:

3. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

Չկան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

ք. Երևան 11.01.2018թ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 444-Ն որոշման 8-րդ կետը, մենք ներքոստորագրյալներս՝ ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Գոհար Փանացյանը, ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Գյուլնարա Սարգսյանը և ՀՀ ԱՆ աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի պետ Մանյա Միխիթարյանը կազմեցինք սույն հանձնման ընդունման ակտը՝ լուծարված ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության ընթացիկ դատական և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն ուղարկված գործերը (կից ցանկով) ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Գոհար Փանացյանին, ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Գյուլնարա Սարգսյանին հանձնելու վերաբերյալ:

11.01.2018 թվականին ՀՀ ԱՆ աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի պետ Մանյա Միխիթարյանը լուծարված ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության ընթացիկ դատական և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն ուղարկված գործերը (կից ցանկով) հանձնեց ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Գոհար Փանացյանին, ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Գյուլնարա Սարգսյանին:

ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Գոհար Փանացյանը, ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Գյուլնարա Սարգսյանը ընդունեցին ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության ընթացիկ դատական և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն ուղարկված գործերը (կից ցանկով):

Հանձնեց
Մանյա Միխիթարյան

Ընդունեցին
Գոհար Փանացյան

Գյուլնարա Սարգսյան

| ԼՈՒԾԱՐՎԱԾ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ | | | ԷՋ |
|---|---|---|---|
| 1. | «Լևոն և Լամարա Դեղատուն» ՍՊԸ | ՎԴ/4369/05/17- ՀՀ վարչական դատարան | 161 |
| 2. | «Բոյյուս» ՍՊԸ | ՎԴ/1114/05/17- ՀՀվարչական դատարան | 109 |
| 3. | «Ստանդարտ Մեդիքլ» ՍՊԸ | ՎԴ/1096/05/17- ՀՀվարչական դատարան | 100 |
| 4. | Սամվել Փարիզյան «Մեգիէլ» ՍՊԸ | ՎԴ/1385/05/17- ՀՀ վարչական դատարան | 62 |
| 5. | «Լիվաֆարմ» ՍՊԸ Գագիկ Բոյախչյան | ՎԴ/3231/05/17-ՀՀ վարչական դատարան | 117 |
| 6. | «Ռիթմ Ֆարմ» ՍՊԸ | ՎԴ/1998/05/17- վարչական դատարան | 248 |
| 7. | Սամվել Մկրտչյան «Ռիթմ Ֆարմ» ՍՊԸ | ՎԴ/2003/05/17- ՀՀ վարչական դատարան | 248 |
| 8. | «Նարեկ-1» Ա/Կ | ՎԴ/9032/05/16- ՀՀ վարչական դատարան | 54 |
| 9. | «Կարեն Խաչիկյան» ՍՊԸ տնօրեն Լուսինե Խաչիկյան | ՎԴ/1593/05/17- ՀՀ վարչական դատարան | 101 |
| 10 | Լիլիթ Հովհաննիսյան և «Լիտիան» ՍՊԸ | ՎԴ/1304/05/17- ՀՀ վարչական դատարան | 126 |
| 11. | «Իրեն-Էմմա» ՍՊԸ տնօրեն ՍարգիսՂազարյան | ՎԴ/3447/05/17- ՀՀ վարչական դատարան | 153 |
| 12. | «Կալաչ» ՍՊԸ Սիլվա Համբարձումյան | ՎԴ/7011/05/13- ՀՀ վարչական դատարան | 69 |
| 13 | «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ Վարդան Լազարյան | ՎԴ/0894/05/17- ՀՀ վարչական դատարան | 249 |
| 14 | «Գենիաֆարմ» ՍՊԸ տնօրեն Եվգենիյա Սարգսյան | ՎԴ/1329/05/17- ՀՀ վարչական դատարան | 73 |
| 15 | «Վիտաֆարմ» ՍՊԸ տնօրեն Սուսաննա Ռաֆայելյան | ՎԴ/1388/05/17- ՀՀ վարչական դատարան | 72 |
| 16 | «Մեդ Տուր Սերվիս» ՍՊԸ | ՎԴ/1284/05/17- ՀՀ վարչական դատարան | 106 |
| 17. | Կառնի Խչաղուրյան «Անի և Գառնի» ՍՊԸ | ՎԴ/1619/05/17- ՀՀ վարչական դատարան | 73 |
| 18 | Կառնի Խչաղուրյան «Անի և Գառնի» ՍՊԸ | ՎԴ/2649/05/17- ՀՀ վարչական դատարան | 73 |
| 19 | «Ռատինա» ՍՊԸ տնօրեն Լիլիթ Զարգարյան | ՎԴ/4648/05/17-ՀՀ վարչական դատարան | 105 |
| 20 | «Պիկանտ Համ» ՍՊԸ տնօրեն Ֆելիքս Բաղդասարյան | ՎԴ/3061/05/12-ՀՀ վարչական դատարան | 171 |
| 21. | «Ավեստա» ՍՊԸ | ՎԴ/4920/05/15-ՀՀ վարչական դատարան | 310 |
| 22 | «Շիրվան» ՍՊԸ Աստղիկ Բաղդասարյան | ՎԴ/1182/05/17- ՀՀ վարչական վերաքննիչ դատարան | 84 |
| 23 | «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ | ՎԴ/3761/05/16- ՀՀ վարչական վերաքննիչ դատարան | 165 |
| 24 | «Խաչունց Գրուպ» ՍՊԸ | ՎԴ/1623/05/17- ՀՀ վարչական վերաքննիչ դատարան | 275 |
| 25 | «ԿՎՀ Գրուպ» ՍՊԸ | ՎԴ/1328/05/17- ՀՀ վարչական վերաքննիչ դատարան | 147 |

| | | | |
|---|---|---|---|
| 26 | «Սևանի իշխան» ՓԲԸ և ԷդվարդԳևորգյան | ՎԴ/2476/05/16-ՀՀ վարչական վերաքննիչ դատարան | 156 |
| 27 | «Վագա-Ֆարմ» ՍՊԸ | ՎԴ/3049/05/17- ՀՀ վարչական վերաքննիչ դատարան | 138 |
| 28 | «Կալաչ» ՍՊԸ Սիլվա Համբարձումյան | ՎԴ/3060/05/14- ՀՀ վարչական վերաքննիչ դատարան | 91 |
| 29 | Վարդան Լազարյան «Քրաուն Քեմիքլ» ՍՊԸ | ՎԴ/5528/05/14- ՀՀ վարչական դատարան | 209 |
| 30 | «Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ | ՎԴ6/0038/05/15- ՀՀ վարչական վերաքննիչ դատարան | 123 |
| 31 | «Թիվ 6 Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ | ՎԴ/7675/05/17- ՀՀ վարչական դատարան | 64 |
| 32 | Գագիկ Դոլիև | ԵԿԴ/4421/02/16- ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան | 149 |
| 33 | «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ Գոհար Կլեկչյան | ԵԷԴ/3555/05/15-ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան ՎԴ/1892/05/14- ՀՀ վարչական դատարան | 178 |
| 34 | «ՍՊՍ Սիգարոն» ՍՊԸ տնօրեն Սեյրան Պողոսյան | ԵԱՆԴ/2958/02/16- ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան | 304 |
| 35 | «Վագա-ֆարմ» ՍՊԸ | ՎԴ/3628/05/17-ՀՀ վարչական դատարան | 75 |
| 36 | «Ամարիտ» ՍՊԸ Մարինա Խաչատրյան | ՎԴ/1955/05/17- ՀՀ վարչական դատարան | 61 |
| 37 | «Տոշա Թրեյդ» ՍՊԸ | ՎԴ/8864/05/17- ՀՀ վարչական դատարան | 175 |
| 38 | Ա/Ձ Նարինե Հովսեփյան | ՎԴ/3588/05/17- ՀՀ վարչական դատարան | 195 |
| 39 | «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ | ՎԴ/0439/05/17- ՀՀ վարչական վերաքննիչ դատարան | 128 |
| 40 | «Լավանդա Նորֆարմ» ՍՊԸ | ՎԴ/2850/05/17- ՀՀ վարչական դատարան | 86 |
| 41 | «Վագա-ֆարմ» ՍՊԸ | ՎԴ/2029/05/17- ՀՀ վարչական դատարան | 75 |

## ՑԱՆԿ

## ԼՈՒԾԱՐՎԱԾ ՀՀ ԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴԱՀԿ ԳՈՐԾԵՐԻ

| N | Անվանում | ԴԱՀԿ | Գտնվելու վայր | Էջ |
|---|---|---|---|---|
| 1 | «Էմ ընդ Էմ մեդ» ՍՊԸ Մարգո Բունիաթյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 3 |
| 2 | ԱՁ Կարապետ Կարապետյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 22 |
| 3 | ԱՁ Վաչագան Միքաելյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 22 |
| 4 | Գելերտ ՍՊԸ Ալեքսան Սեդրակյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 30 |
| 5 | Էֆ Փի Դի Քամփնի» ՓԲԸ | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 11 |
| 6 | Երևանի էլեկտրոշարժիչների գործարան ԲԲԸ Նաիրա Փուստյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 7 |
| 7 | Սամվել Դանիելյան Նոյան Տապան ՍՊԸ | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 4 |
| 8 | Արտակ Հակոբյան Ավտոբուս ՓԲԸ | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 11 |
| 9 | Ա/Ձ Հրաչյա Գրիգորյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 31 |
| 10 | Ա/Ձ Ռաֆայել Խաչատրյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 64 |
| 11 | Ա/Ձ Գոռ Գալստյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 22 |
| 12 | «Մարկ Ֆարմ» ՍՊԸ տնօրեն Արմեն Անտոնյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 14 |
| 13 | Լուսինե Խալաթյան Երևանի Հ. Գյուլիքեխվյանի անվան N103 ավագ դպրոց | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 3 |
| 14 | «Գևորգ և Հովիկ» ՍՊԸ | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 3 |
| 15 | Արտավազդ Գալստյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Կենտրոնական ապարատ | 11 |
| 16 | «Ստոմատոլոգիական կենտրոն Վան» ՍՊԸ տնօրեն Նարինե Վանցյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Երևան քաղաքի տարածքային կենտրոն | 234 |
| 17 | «Մարդիկ Մեդիա» ՍՊԸ տնօրեն Արտակ Բշտիկյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Երևան քաղաքի տարածքային կենտրոն | 171 |
| 18 | «Հիդրոտեխմոնշին» ՍՊԸ տնօրեն Մայիս Սայադյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Երևան քաղաքի տարածքային կենտրոն | 209 |
| 19 | «Զարդանոց» ՓԲԸ տնօրեն Գեղամ Հարությունյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Երևան քաղաքի տարածքային կենտրոն | 40 |
| 20 | «Ստոպ ակումբ» ՍՊԸ տնօրեն Հայկ Սահակյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Երևան քաղաքի տարածքային կենտրոն | 113 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 21 | Ա/Ձ Տիգրան Մազմանյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Երևան քաղաքի տարածքային կենտրոն | 40 |
| 22 | Ա/Ձ Կարեն Հակոբյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Երևան քաղաքի տարածքային կենտրոն | 50 |
| 23 | «Եվա և Սյուզի» ՍՊԸ տնօրեն Գոռ Գևորգյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Երևան քաղաքի տարածքային կենտրոն | 40 |
| 24 | «Ամիկուս» ՍՊԸ տնօրեն Վարդ Նազեյան | Ընթացքի մեջ է | ԱՏՄ Երևան քաղաքի տարածքային կենտրոն | 68 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N ____________________

“___“ _____________ 2018թ.

0047 ՀՀԵրևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, 65-46-95
Ֆաքս. (374-10) 65-16-60
Էլ. փոստ info-atm@moh.am

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աղաջանյան

Հայտնում եմ, որ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդմասով և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման հավելվածի 29-րդ կետով նախատեսված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչականմարմնիկառուցվածքային ստորաբաժանումներիկանոնադրությունները հաստատելու նպատակով մշակվել է համապատասխան կանոնադրության օրինակելի ձևը:

Ելնելով վերոնշյալից և հաշվի առնելով, որ որևէ իրավական ակտով նշված փաստաթղթի օրինակելի ձև սահմանված չէ, Ձեր համաձայնեցմանն է ներկայացվում կանոնադրության օրինակելի ձևի նախագիծը:

Առդիր՝ 3 էջ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Երևան, Կառավարական տուն 1

---

**ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար**

**պարոն Էդգար Խուրշուդյանին**

--------------------------------------------------------------------------------

ՀՀ վարչապետի պաշտոնակատարի հանձնարարությամբ՝ տալ համաձայնություն:

Միաժամանակ խնդրում եմ ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համաձայնեցվող գրությունները այսուհետ հասցեագրել գրասենյակի ղեկավարին:

**/ Էդուարդ Աղաջանյան**

.......-ը ..................-ի, 2018 թ. հ/հ.....................

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N ________________

"___" ____________ 2018թ.

0047 ՀՀԵրևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյանի. 10
(374-10) 65-03-05, 65-05-53, 65-46-95
Ֆաքս. (374-10) 65-16-60
Էլ. փոստ info-atm@moh.am

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ, Ք. ՄԱՍԻՍ,
ՀԵՐԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 1 ՇԵՆՔ
«ՄԱՍԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ՏԻԿԻՆ ՆՈՒՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ավանեսյան

2018 թվականի փետրվարի 9-ից 14-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի կողմից՝ բժշկական սպասարկման և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջների հնարավոր խախտումները կանխելու և հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով «Մասիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում (այսուհետ՝ Ընկերություն) իրականացվել է ուսումնասիրություն:

Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել է հետևյալը՝

1) Ընկերության լաբորատոր հետազոտությունների արդյունքում կազմվող ձևանմուշները չեն համապատասխանում սահմանված ձևաչափին՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 25-ի N 76-Ն հրամանի հավելված 1-ի, 3-ի, 4-ի և 5-ի պահանջները:
2) Ընկերության մեծահասակի հիվանդության պատմագրում բժշկական բոլոր միջամտությունները լրացված կամ արձանագրված չեն (Ջիվանշիրյան Յուրիի

արյան ընդհանուր քննության վերաբերյալ գրառումը բացակայում է)՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի մարտի 30ի N 924-Ա հրամանի պահանջը:

3) Ընկերության տնօրենի հրամանով չի նշանակվել բժշկական իրերի մաքրման, ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման գործընթացի հսկողության պատասխանատու՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 23-րդ կետի պահանջը:
4) Արյունով և/կամ այլ կենսաբանական հեղուկներով աղտոտված բժշկական իրերը օգտագործումից անմիջապես հետո չեն ենթարկվում մաքրման՝ օտար նյութերի՝ ներառյալ կենսցաղային աղտոտվածության, փոշու, միկրոօրգանիզմների և օրգանական նյութերի հեռացման նպատակով, որն իրականացվում է ջրի, լվացող հեղուկի կամ ֆերմենտային նյութերի միջոցով՝ դրանց կից հրահանգներին համաձայն՝ խստորեն չի պահպանվում խտությունը, պահաժամը և ջերմաստիճանը՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 28-րդ կետի պահանջը:
5) Կլինիկական լաբորատորիայում բժշկական իրերի մաքրման վերաբերյալ գրանցումները չեն իրականացվում սահմանված կարգով հաստատված ձևաչափին համապատասխան գրանցամատյանում՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 31-րդ կետի պահանջը:
6) Բարձր մակարդակի ախտահանումից հետո բժշկական իրերը չեն լվացվում մանրէազերծ ջրով: Մանրէազերծ ջրի բացակայության դեպքում չեն լվացվում թորած կամ ֆիլտրված ջրով, այնուհետև չեն չորացվում մանրէազերծ սավանով, բացակայում են նշված բոլոր նյութերը՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 38-րդ կետի պահանջը:
7) Ախտահանումը չի իրականացվում այդ նպատակի համար նախատեսված բնական կամ արհեստական ներհոս-արտածիգ օդափոխությամբ հատուկ սենքում՝

խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 39-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը:

8) Չի պահպանվում բժշկական իրերի ախտահանման պահաժամը, որի մասին չեն կատարվում գրանցումներ գրանցամատյանում՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 39-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջը:

9) Բժշկական իրերի լվացման համար օգտագործվող իրերը /խոզանակ և այլն/ պահվում են ախտահանիչ նյութում, դրանք չեն պահվում ախտահանելուց հետո չոր վիճակում՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 39րդ կետի 9-րդ ենթակետի պահանջը:

10) Ախտահանող, մանրէազերծող նյութերի աշխատանքային լուծույթների համար նախատեսված տարողությունները մակնշված չեն՝ նյութի անվանման, խտության, նշանակության, պատրաստման ամսաթվի, պիտանելիության ժամկետի վերաբերյալ՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 42-րդ կետի պահանջը:

11) Բժշկական իրերի ախտահանման համար նախատեսված տարողությունների ծավալը և լուծույթի ծավալը չեն ապահովում դրանց լրիվ ընկղմումը լուծույթի մեջ՝ պահպանելով բժշկական իրերի վրա լուծույթի շերտի առնվազն 1 սմ հաստություն՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 43-րդ կետի պահանջը:

12) Ախտահանման, նախամանրէազերծման մշակման որակի հսկողության համար չեն օգտագործվում զգայորոշիչներ (ինդիկատորներ)՝ համաձայն վերջիններիս կից հրահանգների՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 47-րդ, 48-րդ կետերի պահանջները:

13) Ախտահանման, նախամանրէազերծման մշակման որակի հսկողության արդյունքների գրանցումները չեն իրականացվում սահմանված կարգով հաստատված ձևաչափին համապատասխան գրանցամատյանում՝ խախտելով ՀՀ

առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 49-րդ, 50-րդ, 51-րդ կետերի պահանջները:

14) Ընկերության այն աշխատողները, որոնց աշխատանքային պարտականություններն առնչվում են բժշկական թափոնների գործածության հետ, մինչև իրենց աշխատանքային պարտականություններին անցնելը չեն անցել բժշկական թափոնների անվտանգ գործածության պահանջների ուսուցում՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանի 1-ին հավելվածի 14-րդ կետի պահանջը:

15) Ընկերության տնօրենը չի տրամադրել բժշկական թափոնների գործածությունը կարգավորող գործողությունների Ակտը համապատասխան աշխատողներին և չի կազմակերպել դրան վերաբերող դասընթացներ՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանի հավելված 1-ի 15-րդ կետի պահանջը:

16) Ակտի կատարման ամենօրյա հսկողությունը չի իրականացվում կազմակերպության տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը (համաճարակաբան, գլխավոր բուժքույր, տնօրենի տեղակալ տեխնիկական հարցերով կամ այլ)՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանի հավելված 1-ի 16-րդ կետի պահանջը:

17) Բժշկական թափոնները չեն հավաքվում (տարանջատվում) և պահվում առանձին՝ ըստ տեսակների՝ բացառելով դրանց միմյանց խառնվելը՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանի հավելված 1-ի 18-րդ կետի պահանջները:

18) Ընկերության լաբորատորիայում չեն պահպանվում վարակիչ թափոնների պահման համար սահմանված ժամանակահատվածները՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանի հավելված 1-ի 35-րդ կետի պահանջը:

19) Կլինիկական լաբորատորիայում չի վարվում հատուկ մատյաններ բժշկական թափոնների գործածության Ծրագրով սահմանված ժամանակացույցի կատարման նպատակով բժշկական թափոնի գոյացման տեղում և ժամանակավոր պահման

հատուկ տարածքում, չի նշվում թափոնի տեսակը, դրա հավաքման և գոյացման տեղից հեռացման ամսաթիվը՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանի հավելված 1-ի 37-րդ կետի պահանջը:

20) Բժշկական թափոնների գործածության մեջ ներգրավված աշխատողները չեն կրում հատուկ արտահագուստ՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանի հավելված 1-ի 46-րդ կետի պահանջը:

21) Վարակիչ թափոնների գործածության մեջ ներգրավված աշխատողները համաճարակային ցուցումով պատվաստված չեն՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանի հավելված 1-ի 49-րդ կետի պահանջը:

22) Բժշկական թափոնների գործածության մեջ ներգրավված աշխատողները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի N 1089-Ն որոշման պահանջների համաձայն, չեն ենթարկվել պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների՝ խախտելով ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանի հավելված 1-ի 50-րդ կետի պահանջը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերը, 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը,13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 444-Ն որոշման 1-ին հավելվածի 11-րդ կետի 13-րդ ենթակետը, տեղեկացնում եմ, որ, «Մասիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում պարտադիր պետք է.

1. Ընկերության լաբորատոր-ախտորոշիչ՝ կլինիկական, կենսաքիմիական (բիոքիմիական), շճաբանական (սերոլոգիական), իմունոլոգիական և բջջաբանական բժշկական օգնության և սպասարկման տեսակներն իրականացնելիս առաջնորդվել «Բնակչության բժշկական օգնության և

սպասարկման մասին» ՀՀ օրենքի 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջի պահպանումը:

2. ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանի հավելվածի 23-րդ, 28-րդ, 31-րդ, 38-րդ կետերի, 39-րդ կետի 3-րդ, 8-րդ, 9-րդ ենթակետերի, 42-րդ, 43-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ կետերի, ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանի հավելված 1-ի 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 35-րդ, 37-րդ, 46-րդ, 49-րդ, 50-րդ կետերի պահանջների պահպանումը:

Առդիր՝ 5 էջ:

ԳՈՀԱՐ ՓԱՆԱՋՅԱՆ

Կատարող՝ Աննա Կասպարյան
Բժշկական սպասարկման վերահսկողության վարչություն
Հեռ. 010 65-16-60

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N ________________

"___" ______________ 2018թ.

0047 ՀՀ Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան փ. 129
☎ (374-10) 65-05-53, 65-46-95
Ֆաքս. (374-10) 65-16-60
Էլ. փոստ info-atm@moh.am

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՀԱՅԿ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Այվազյան

Ձեր 27.11.2018 թվականի թիվ 02/42.1/40268-18 գրության կապակցությամբ, կից ներկայացվում է Տեսչական մարմնի բնականոն և արդյունավետ գործունեությանը խոչընդոտող հիմնական խնդիրների վերաբերյալ տեղեկանքը:

Առդիր՝ 11 էջ:

04.12.2018

X

ᲮᲮᲮᲮᲮ ᲮᲮᲮᲮᲮᲮᲮᲮᲮᲮᲮ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: KHURSHUDYAN EDGAR 4001830221

ԷԴԳԱՐ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Կատարող՝ Նարինե Ադամյան
իրավական աջակցության և
փաստաթղթաշրջանառության բաժին (28)

ՔԱՂՎԱԾՔ

# ԱՂՅՈՒՍԱԿ

## ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՆԱԿԱՆՈՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| N | Օրենսդրական | Կազմակերպատեխնիկական | Այլ նշումներ |
|---|---|---|---|
| 9 | | Լաբորատոր և գործիքային հետազոտությունների իրականացման ուղիների այլընտրանքային անհրաժեշտություն | Կարևոր խնդիրներից է վերահսկողության շրջանակներում իրականացվող լաբորատոր և գործիքային հետազոտությունների ապահովումը՝ և անաչառության, և աշխատանքների առավել արագ և արդյունավետ կազմակերպման և իրականացման տեսանկյունից:<br>Լուծման տարբերակներից է Տեսչական մարմնի կողմից (որի համար լիազորված է կանոնադրությամբ) նշված գործառույթի իրականացման (կանոնադրության 7-րդ կետ, 11-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերություն) հնարավորության քննարկումը՝ համապատասխան հաստիքների ստեղծմամբ, համալրմամբ՝ նմուշառող և գործիքային չափման իրականացում: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N 01/212-19
"21" 01 2019թ.

0047 ՀՀ Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան փ.129
(374-10) 65-05-53, 65-46-95
Ֆաքս. (374-10) 65-16-60
էլ. փոստ info-atm@moh.am

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ոսկանյան,

Ի պատասխան Ձեր 2019 թվականի հունվարի 10-ի թիվ ՀՊԵ-ԳՈ-07 գրության տեղեկացնում ենք, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում ուսումնասիրվել է ներկայացված հաշվեքննության արձանագրությունը, որը աշխատանքային կարգով քննարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ, որի վերաբերյալ ստացվել է հետևյալ դիրքորոշումը.

«Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ներքին աուդիտի են ենթարկվում կազմակերպության գործունեության ֆինանսական կառավարմանը, հսկողությանն առնչվող բոլոր գործառույթները:

«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեսչական մարմնի գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման (ֆինանսաբյուջետային), անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված

ՄՈՒՏՔ No 1771-71
23 01 2019թ.

վարչական (կազմակերպչական) բնույթի գործառույթներն իրականացնում է ՀՀ վարչապետի աշխատակազմը:

Նույն օրենքի 18-րդ հոդվածը կարգավորում է տեսչական մարմնի ֆինանսավորումը, որի համաձայն՝ տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմի միջոցով՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերի շրջանակում:

Հաշվի առնելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ տեսչական մարմինների ֆինանսաբյուջետային և անձնակազմի կառավարման հարցերի կարգավորման առանձնահատկությունները՝ առաջարկում ենք սահմանել, որ տեսչական մարմինների նկատմամբ ներքին աուդիտն իրականացնում է ՀՀ վարչապետի աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանումը: Նման կարգավորման դեպքում հնարավոր կլինի նաև խուսափել պետական բյուջեում լրացուցիչ ծախսեր առաջանալու անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով այն, որ կվերանա 6 տեսչական մարմիններում ներքին աուդիտի ստորաբաժանումների ստեղծման և առնվազն 12 հաստիքի նախատեսման անհրաժեշտությունը:

21.01.2019

X

VERIFIED OCSP 21.01.2019 14:59:28 GMT+4

Подписано: KHURSHUDYAN EDGAR 4001830221

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԷԴԳԱՐ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Կատարող՝ Աննա Կոոյան
իրավական աջակցության
և փաստաթղթաշրջանառության բաժին(28)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

**Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3**
հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ minister@moh.am

10.01.19 N ՄԽ/06-2/19297-18

Ձեր N ____________ .

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ

ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ոսկանյան

Ի պատասխան Ձեր 2018թ. դեկտեմբերի 14-ի ՀՀ առողջապահության նախարարության և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում իրականացված հաշվեքննության արձանագրության մասին թիվ ՀՊԵ-ԳՈ-176 գրության՝ ներկայացնում եմ ստորագրված արձանագրությունը՝ կցելով առողջապահության նախարարության դիրքորոշումը վերջինիս վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

28.12.2018

X

VERIFIED OCSP 28.12.2018 17:23:31 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Կատարող՝ Մանյա Մխիթարյան
Հաշվապահական հաշվառման բաժին
Հեռ.՝ (060)808003/1801/

ՄՏԻՑ No ԽՊԼ-28
11 . 01 . 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Առողջապահության նախարարության դիրքորոշումը ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում հայտնաբերված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ արձանագրության մասին

## ՀԱՐՑ I

Տեսչական մարմինն ունի 280 հաստիքային միավոր, որից՝ 90-ը թափուր:

Տեսչական մարմնի կողմից 2017-2018 թթ.ընթացքում վարձակալական հիմունքներով զբաղեցված աշխատանքային տարածքների համար հաշվարկվել և վճարվել են հետևյալ գումարները՝

Հազ.դրամ

| | Հաշվարկված | Վճարված | Տարբերություն | Տարբերության բացատրությունը |
|---|---|---|---|---|
| 2017թ. | 6,783.28 | 7,312.85 | -529.57 | Տարվա ընթացքում վճարվել է նաև 2016թ. դեկտեմբերի հաշիվների դիմաց |
| 2018թ. | 8,846,06 | 7,863.16 | 982.9 | Սեպտեմբեր ամսվա հաշիվների դիմաց վճարումը կատարվել է հոկտեմբերին |

2018թ. տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման համար կատարվել է 1,057.8 հազ.դրամ:

## ՀԱՐՑ IV.

2017թ. կատարվել է ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության գույքի գույքարում: Նույն ժամանակ կատարվել է փաստաթղթերի գույքագրում և օրենսդրության համապատասխան հանձնում-ընդունում: (Ակտը կցվում է:)

## ՀԱՐՑ V.

Հեռահար ջերմաչափման սարքավորումները ստացվել են 2016 թվականի դեկտեմբերին և նշված ժամանակաշրջանում գտնվել են երաշխիքային սպասարկման մեջ: Սակայն ԱՊՏ-ի, իսկ հետագայում նաև տեսչական մարմնի

կողմից պատշաճ կերպով չենք իրազեկվել սպասարկումը կազմակերպելու նպատակով:

## ՀԱՐՑ XI.

ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1301-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) գործող կանոնադրության 8-րդ կետի բ ենթակետի համաձայն՝ Գործակալությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման գործընթացի փաստաթղթային և տեղում փորձագիտական գնահատում, դիտարկում, մշտադիտարկում, կատարված աշխատանքների վերլուծություն:

Նշված գործառույթը Գործակալության կանոնադրության մեջ լրացվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1327-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով, հաշվի առնելով, որ Գործակալությունում ստեղծվել են փորձագիտական գնահատման և մշտադիտարկման առաջին և երկրորդ բաժինները՝ 30 բժիշկ-փորձագետներով:

Մինչև 2017 թվականի հոկտեմբերի 19-ի փոփոխությունները Գործակալության գործառույթը եղել է բժշկական օգնություն իրականացնողների կողմից պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքների որակի և ծավալի՝ սահմանված չափանիշներին համապատասխանության վերահսկումը, որը Գործակալությունն իրականացրել է որպես քաղաքացիաիրավական պայմանագրի կողմ: Ընդ որում, պայմանագրի կնքման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, համաձայն որի՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունն ու սպասարկումը կարող են կազմակերպվել բժշկական կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքման միջոցով:

Արդյունքում, 2017 թվականի համար ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի հունվարի 27-ի թիվ 145-Ա հրամանով հաստատվել է 2017 թվականի համար պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրի օրինակելի ձևը՝ ուժը կորցրած ճանաչելով ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի թիվ 166-Ա հրամանը: 2018 թվականի համար ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 3613-Ա հրամանով էլ հաստատվել է 2018 թվականի համար պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին

պայմանագրի օրինակելի ձևը՝ ուժը կորցրած ճանաչելով ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի հունվարի 27-ի թիվ 145-Ա հրամանը:

2017 թվականի համար ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի հունվարի 27-ի թիվ 145-Ա հրամանով հաստատված պայմանագրի օրինակելի ձևի 3-րդ գլխով նախատեսվում էր, որ Կատարողի կողմից պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը պայմանագրի պահանջներին իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի օգոստոսի 18-ի թիվ 2227-Ա հրամանով հաստատված կարգով:

Միևնույն ժամանակ, 2018 թվականի համար ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 3613-Ա հրամանով հաստատված պայմանագրի օրինակելի ձևի 2.3.1. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի, պայմանագրի համաձայն, իրականացնել դիտարկումներ, մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական գնահատում Կատարողի կողմից Բուժօգնության կատարման ընթացքի, Նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալների, որակի, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանահավատության և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտության և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման և պահպանման վերաբերյալ, իսկ պայմանագրի օրինակելի ձևի 3-րդ գլխի համաձայն՝ Կատարողի կողմից պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը պայմանագրի պահանջներին իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և Նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիրատուկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով:

Գործակալության կանոնադրությամբ ստուգայցեր կատարելու լիազորություններ սահմանված չեն: Ավելին, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասից, դեռևս 2018 թվականի մարտի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքով ուժը կորցրած է ճանաչվել Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը» պարբերությունը, առ այն, որ առողջապահության նախարարությունը այլևս Հայաստանի Հանրապետության տարածքում իր լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված չէ:

Սակայն, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենքը չի

տարածվում պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված քաղաքացիաիրավական գործարքների հիման վրա պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված պայմանագրի շրջանակներում պետական մարմնի կողմից որպես գործարքի կողմ իրականացվող ստուգումների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել կապալառուի կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 060) 808003
էլ. փոստ minister@moh.am

01.02.19 N ԱԵ/Ծ/11.2/1146-19
Ձեր N ______

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ
ՀԱՍՑԵ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ 19

Հարգելի պարոն Ոսկանյան

Ի պատասխան 2019 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՊԵ-ԳՈ-10 գրության՝ ուսումնասիրելով «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում հայտնաբերված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ» N 1 հաշվեքննության արձանագրությունը, ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ներկայացնում եմ հետևյալ առարկությունը կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ.

Վերոնշյալ արձանագրությունում նշվել է, որ հաշվեքննվող ժամանակաշրջանում տեսչական մարմինը 2017 թվականի օգոստոսի 27-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ:

1. ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմին ստեղծելու, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002

ՄՏԻՑ N Հ-ՊԱ-193
«04» 02 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1293-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 444-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետով նախատեսվել էր, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համակարգում գործող առանձնացված ստորաբաժանում է, որն իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կիրառում պատասխանատվության միջոցներ առողջապահության, աշխատողների առողջության և անվտանգության ապահովման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

Վերոնշյալ որոշումն ուժը կորցրած է ճանաչվել 2018 թվականի հունիսի 30-ին՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 705-Ն որոշման ուժի մեջ մտնելուց հետո, ինչից հետևում է, որ ***սկսած հունիսի 30-ից մինչ օրս*** որևէ տեսչական մարմին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համակարգում չի գործել, տվյալ ժամանակահատվածի համար ներքին աուդիտի համակարգ նախարարության համակարգում չգործող տեսչական մարմնում ապահովելու պարտավորություն նախարարությունը չի ունեցել, հետևաբար N 1 հաշվեքննության արձանագրությունում նշված այն դրույթը, ***որ ներքին աուդիտի համակարգ մինչ օրս առկա չէ***, չի համապատասխանում իրականությանը:

2. ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի ««Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1300-Ն որոշմամբ, այնուհետև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ Առողջապահության նախարարության

կառուցվածքային ստորաբաժանումների կազմում առկա է եղել և ներկայումս էլ կա ներքին աուդիտի բաժին, որն իր իրավասությունների շրջանակներում իրականացրել ու իրականացնում է նախարարությանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված գործառույթների ներքին աուդիտ:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համակարգում գործող ***առանձնացված ստորաբաժանում է եղել*** 2017 թվականի ապրիլի 27-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը՝ այն է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 444-Ն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 705-Ն որոշման ուժի մեջ մտնելու օրը, իսկ նախարարությանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված գործառույթների ներքին աուդիտը իրականացվել է կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող ներքին աուդիտի բաժնի կողմից, հետևաբար Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի կազմում առանձին ներքին աուդիտի համակարգ ստեղծելու անհրաժեշտություն առկա չի եղել:

Ուստի առարկում եմ N 1 հաշվեքննության արձանագրությունում նշված այն դիտարկման դեմ, որ տեսչական մարմինը 2017 թվականի օգոստոսի 27-ից պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

2/1/2019

X

VERIFIED OCSP 2/1/2019 12:21:44 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Կատարող՝ Նելլի Թովմասյան
ԱՆ իրավաբանական վարչություն
Հեռ.՝ 060 80 80 03 (1621)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԿՐԹՈՒԹՅԱՆՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

*0051, Երևան, Կոմիտասի պողոտա հ. 37/4, հեռ. 203027*

№24/24/20231-18 «28» դեկտեմբերի 2018թ.

**ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ**
**Գ. Ոսկանյանին**

**Հարգելի՛ պարոն Ոսկանյան,**

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից իրականացված հաշվեքննության արդյունքում կազմված արձանագրության վերաբերյալ մեր առարկություններն ու բացատրությունները ներկայացնում ենք ստորև՝ ըստ արձանագրության մասերի և կետերի.

***I մաս. «Տեսչական մարմնի ձևավորումը, գործունեության և սփուգումների փարեկան ծրագրերը, անկախությունը»***

1. **Տեսչական մարմինն ամբողջությամբ չի ձևավորվել ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 7-ի N 1150-Ն որոշման 3-րդ կետով սահմանված քառամսյա ժամկետում:**

Տեսչական մարմնի ձևավորումը տեղի չի ունեցել մեզանից անկախ պատճառներով: Տեղեկացնում ենք, որ Տեսչական մարմնի ձևավորման ողջ ժամանակահատվածում Կրթության պետական տեսչությունը գործել է, իսկ Տեսչական մարմնի ղեկավարը նշանակվել է 2017 թվականի նոյեմբերի 17-ին: Տեսչական մարմնի խորհրդի կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի N 1239-Ա որոշմամբ 2017թ. հոկտեմբերի 31-ին:

**2.Տեսչական մարմինը 2017թ. համար չի ունեցել գործունեության տարեկան ծրագիր:**

ՀՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության 2017 թվականի տարեկան ծրագիրը հաստատվել է «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 1335-Ա/2 հրամանով (կցվում է):

**3.Տեսչական մարմինը պետական բյուջե գումար չի մուտքագրել 2017-2018թթ.:**

ՄՈՒՏՔ № ԽՊԼ-08
08. 01 2019թ.

Տեսչական մարմինը (Կրթության պետական տեսչությունը) տույժեր կամ տուգանքներ կիրառելու լիազորություն չունի (չի ունեցել), ուստի չէր կարող պետական բյուջե որևէ գումար մուտքագրվել:

4. **Տեսչական մարմինը իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացրել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության միջոցով, որը հանդիսանում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի խախտում:**

Տեսչական մարմինն իր գործառույթների իրականացման ժամանակ չէր կարող խախտել <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջները, քանի որ փաստացի մինչև օրենքի համապատասխան փոփոխությունը, նշյալ գործառույթն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից, համապատասխան փոփոխությունից հետո վարչապետի աշխատակազմի ղեկավարի կողմից ստացված գրության հիման վրա՝ (հանձնարարական 18-41, տրված 26.06.2018 թվականին 02/42.1/12321-18 գրությամբ ստացված Mulberry համակարգով) «ՀՀ վարչապետի հանձնարարությամբ՝ հաշվի առնելով տեսչական մարմինների գործունեության առանց ընդհատման ապահովման անհրաժեշտությունը, խնդրում եմ ներկա անցումային փուլում, շարունակել աջակցել դրանց բնականոն աշխատանքներին՝ ժամանակավորապես իրականացնելով տեսչական մարմինների գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, ֆինանսաբյուջետային, անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի աշխատանքները», որոնք էլ կատարվել են նախարարության կողմից և հանձնարարականի կատարումը չի կարող դիտվել օրենքի դրույթների խախտում:

***II մաս. «Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումները, ստուգաթերթերը և պատասխանատվության ենթարկելու լիազորությունը»***

1. **Տեսչական մարմինը չպետք է իրականացներ ստուգումներ 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում, բացառությամբ մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների սննդի կազմակերպման նկատմամբ իրականացվող ստուգումների՝ համաձայն ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ա որոշման:**

ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ա որոշման 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պետական մարմինների կողմից ստուգումները կարող են իրականացվել միայն «պետական կառավարչական հիմնարկներում, պետական ոչ առևտրային կազմակերպություններում, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում», ինչն էլ մեր կողմից իրականացվել է, իսկ 4-րդ կետը («մանկապարտեզներում և

դպրոցներում երեխաների սննդի կազմակերպման նկատմամբ իրականացվող ստուգումների»), որպես բացառություն, վերաբերում **<u>էառևտրային կազմակերպություններին</u>**: Ղեկավարվելով ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ՝ Կրթության պետական տեսչությունն իր 2017 թվականի ստուգումների ժամանակացույցից հանել է ոչ պետական հաստատությունները և սահմանված կարգով իրականացրել իր գործառույթները որոշման 1-ին կետում նշված կազմակերպություններում: Իսկ 4-րդ կետում սահմանված՝ «մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների սննդի կազմակերպման նկատմամբ իրականացվող ստուգումներ» իրականացնելու լիազորություն Կրթության պետական տեսչությունը չի ունեցել:

Վերոնշյալ գործառույթներում առկա չեն խեղաթյուրումներ կամ անհամապատասխանություններ:

**2. Տեսչական մարմինը 2018թ. չի իրականացրել ոչ մի ստուգում:**

Առաջարկում ենք «2018թ.» բառերը փոխարինել «2018 թվականի փետրվարի 14-ից մինչև 2018թ. սեպտեմբերի 30-ը» բառերով, քանի որ ՀՀ կառավարության կողմից ստուգաթերթերի հաստատումից (04.10.2018թ.) անմիջապես հետո սկսվել է 2018 թվականի ստուգումների ժամանակացույցով սահմանված ստուգումների գործընթացը:

**3. Տեսչական մարմինը 2018թ. չի ունեցել ստուգումների ստուգաթերթեր:**

Առաջարկում ենք «2018թ.» բառերը փոխարինել «2018 թվականի փետրվարի 14-ից մինչև 2018թ. հոկտեմբերի 3-ը» բառերով, քանի որ ստուգաթերթերը հաստատվել են 2018թ. հոկտեմբերի 4-ին:

Հարկ է նշել, որ որ ստուգաթերթերը այժմ էլ մշակման, տնտեսավարողների մոտ փորձարկման և շրջանառության փուլեր են անցնում:

**4. Տեսչական մարմինը օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորությունը չի կատարել ոչ 2017թ.-ին, ոչ 2018թ.-ին:**

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պատասխանատվության միջոցների կիրառումը չի կարող տարածվել Կրթության պետական տեսչության 2017 թվականի գործունեության վրա, ուստի արձանագրության սույն կետից պետք է հանել «ոչ 2017թ.-ին, ոչ» բառերը:

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն*(«Ուսումնասիրության ընթացքում կրթության բնագավառի օրենսդրության պահանջների խախտում հայտնաբերելու դեպքում Հայաստանի Հանրապետության կրթության գլխավոր պետական տեսուչը կամ նրա հանձնարարությամբ տեսչության տարածքային մարմնի ղեկավարը պայտշաճ ձևով համապատասխան ուսումնասիրվող սուբյեկտին* ***<u>նախազգուշացնում է</u>*** *կրթության բնագավառի օրենսդրության պահանջի խախտման մասին՝ նշելով խախտման հետևանքները վերացնելու միջոցառումները, այդ թվում՝ դրանց կատարման ժամկետը»),* բոլոր այն ուսումնասիրվող սուբյեկտները, որոնք կրթության բնագավառի օրենսդրության պահանջի խախտում են թույլ տվել, նախազգուշացվել են ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից: Այսինքն, պատասխանատվության

միակ՝ **«նախազգուշացում»** միջոցը Կրթության պետական տեսչությունը կիրառել է օրենսդրության բոլոր խախտումների դեպքում:

2018 թվականի համար Տեսչական մարմինը չէր կարող կիրառել պատասխանատվության միջոցներ, քանի որ առ այսօր հաստատված չեն պատասխանատվության տեսակները, միջոցներ կիրառելու ձևերն ու ընթացակարգերը:

***III մաս. Տեսչական մարմնի վարչարարությունը և ուսումնասիրությունները***

1. **Տեսչական մարմինը 2017թ. կատարել է 150, իսկ 2018թ. 2 փաստացի ստուգումներ' ուսումնասիրությունների անվան տակ' խախտելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթները:**

ՀՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության 2017 թվականի ստուգումների ժամանակացույցով նախատեսված է եղել 135 ստուգում, սակայն հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ա որոշումը՝ թվով 47 առևտրային կազմակերպություններ հանվել են ստուգումների ժամանակացույցից, և ստուգումներ իրականացվել են 88 ՊՈԱԿ-ներում և ՀՈԱԿ-ներում:

2. **Տեսչական մարմինը չի կատարել ուսումնասիրություններ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:**

Վերոհիշյալ օրենքի և իր կանոնադրական պահանջներից, նաև կրթության բնագավառի առանձնահատկություններից ելնելով՝ տեսչական մարմնի կողմից որոշ ուսումնասիրություններ կատարվել են տնտեսավարող սուբյեկտներում:

***IV մաս. Տեսչական մարմնի կողմից լիցենզիաների պայմանների և պահանջներիպահպանման նկատմամբ վերահսկողությունը***

1. **Կրթության և գիտության նախարարության Լիցենզավորման գործակալությունը իրականացրել է գործառույթ, որի համար օրենքով լիազորված էր Տեսչական մարմինը, որը խախտում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և Կանոնադրության 10-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթները:**

Սույն գործառույթն իրականացվել է Տեսչական մարմնից անկախ պատճառով:

***V մաս.Բարձրագույն ուսումնական հաստատությունների վերահսկողությունը***

Կրթության տեսչական մարմնի կանոնադրությամբ(ընդունվել է 11.06.2018թ.) սահմանվում են Տեսչական մարմնի խնդիրները վերահսկողության հետևյալ ոլորտներում՝ նախադպրոցական կրթություն, հանրակրթություն, նախնական մասնագիտական (արհեստագործական) ու միջին մասնագիտական կրթության ( հոդված 2, կետ 9):
Հետևաբար, **Տեսչական մարմինը լիազորված չէ** վերահսկողություն իրականացնել ԲՈՒՀ-երում:

***VI մաս. Իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակումը և համապատասխան մարմիններին ներկայացումը***

1. **Տեսչական մարմինը չի իրականացրել իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակման, գործող իրավական ակտերում փոփոխությունների և համապատասխան մարմիններին ներկայացնելու իր պարտավորությունը, որը սահմանված է Կանոնադրության 14-րդ կետի 2-րդ ենթակետով և «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ կետի 1.1) ենթակետով:**

ՀՀ ԿԳՆ կրթության տեսչական մարմնի ղեկավարի՝ N **04/24/4625-18 2018-04-25** գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարին է ներկայացվել ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրության, ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմին ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմնի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու և 2004 թվականի դեկտեմբերի 30-ի N 1927-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1150-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման և Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծերը (կցվում են):

Խորհրդի հավանությանն են ներկայացվել Տեսչական մարմնի ստուգաթերթերը, ստուգումների մեթոդաբանությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերը և այլն:

Տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող այլ իրավական ակտերի նախագծերի մշակման կամ գործող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի եղել:

***VII. Բացատրական աշխատանքների իրականացումը, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացումը, իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովումը և կանխարգելիչ գործունեությունը:***

1. **Տեսչական մարմինը չի իրականացրել ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացման, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման, իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովման և կանխարգելիչ գործունեության իր պարտավորությունը՝ խախտելով Կանոնադրության 10-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթները:**

Տեսչական մարմինն իր ձևավորումից հետո, առաջնորդվելով 2018թ. աշխատանքային ծրագրով, որը հաստատված է կառավարման խորհրդի 2018թ. հուլիսի 3-ի նիստում, խորհրդատվական բնույթի ու մեթոդական աջակցման նպատակով հանդիպումներ է ունեցել, այնուհետ նաևվերահսկողություն իրականացրել ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Կոտայքի մարզպետարանների աշխատակազմերի կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում, ՀՀ Արարատի մարզի Մասիսի, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում: Վերահսկողական գործընթացի արդյունքում բացահայտված խախտումների հետևանքների և թերությունների վերացման նպատակով ներկայացված հանձնարարականների և առաջարկությունների կատարման նկատմամբ վերահսկողություն (հետադարձ կապ) ու պարբերաբարմեթոդական օգնություն է տրվել Երևան քաղաքում և ՀՀ մարզերում աշխատանքային այցերով գտնվող տեսչական մարմնի ծառայողների կողմից:

Ամբողջ տեղեկատվությունը տեղադրված է նաև տեսչական մարմնի կայքում՝ http://www.eib.am

### *VIII. Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ*

1. **Տեսչական մարմինը 2018թ. չի ունեցել ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություն՝ խախտելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի 2 մասի դրույթները:**

Մեթոդաբանությունը ներկայացվել է, անցել է նաև սահմանված կարգով փորձարկման փուլը, սակայն Տեսչական մարմնից անկախ պատճառով չի հաստատվել:

2. **Ստուգումների և գործունեության տարեկան ծրագրերը կազմվել են օգտագործելով արդեն իսկ գոյություն չունեցող մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը:**

Որպեսզի 2018 թվականին ապահովվեր Տեսչական մարմնի ծառայողների աշխատանքային ծանրաբեռնվածությունը, կազմվելենստուգումների ժամանակացույցը և գործունեության տարեկան ծրագիրը ավելի վաղ, քան կհաստատվեր ռիսկի վրա հիմնված ստուգումների նոր մեթոդաբանությունը:

Առդիր՝ ԿՊՏ 2017թ. ծրագիրը:

12/28/2018

X

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱԳԱՖՅԱՆ

**Հարգանքով՝** Signed by: SHAGAFYAN ALEKSANDR 3802800141 **Ա. Շագաֆյան**

Կատարող՝ ԿՏՄ ղեկավարի տեղակալ

Նարա Հովհաննիսյան (հեռ.՝ 010 203054

Հաստատված է
ՀՀ կրթության և գիտության նախարարի
հրամանով

# ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

| No | Աշխատանքի անվանումը | Աշխատանքի նպատակը | Ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | Տեսչության գործունեության տարեկան հրապարակային, կիսամյակային հաշվետվությունների և աշխատանքային ծրագրի կազմում | «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ, 8-րդ մասերի և 10-րդ հոդվածի պահանջների ապահովում. ԿՊՏ գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովում | **30.06.2017 30.12.2017** |
| 2 | Կրթության բնագավառում առկա վիճակի, դրա առանձին բնութագրիչների, կրթության ցուցանիշների մասին հաշվետվության կազմում | «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի ապահովում | **30.06.2017 30.12.2017** |
| 3 | Մշտադիտարկումների, ուսումնասիրությունների, ստուգումների, տեսչավորումների արդյունքների հիման վրա հանրակրթական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կրթական ծառայությունների արդյունավետության գնահատում, գործունեության վերլուծություն, զարգացմանը նպաստող առաջարկությունների ներկայացում | «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում, կրթության համակարգում պետական կրթական չափորոշիչների կիրառմանը և պահանջների ապահովմանը նպաստում | **30.06.2017 30.12.2017** |
| 4 | ՀՀ Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի մարզպետարանների և Երևանի, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու, Կոտայքի մարզի Չարենցավանի, Եղվարդի, Արարատի մարզի Արտաշատի, Վեդիի, Գեղարքունիքի մարզի Սևանի, Մարտունու, Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի, Վայքի քաղաքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումների գործունեության, ինչպես նաև ՀՀ Արմավիրի, Տավուշի մարզերի հանրակրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կրթական գործունեության **ուսումնասիրություններ** | «Կրթության պետական տեսչության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 7-րդ մասերի պահանջների կատարման ապահովում, մարզպետարանների կողմից կրթության պետական քաղաքականության իրականացման արդյունավետության, ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության կատարման ապահովում | **30.06.2017 30.12.2017** |
| 5 | Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում **ստուգում** (ՀՀ ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ, Երևանի Ավան, Կենտրոն վարչական շրջանների, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, Կոտայքի մարզի Չարենցավան, Եղվարդ, Արարատի մարզի Արտաշատ, Վեդի, Գեղարքունիքի մարզի Սևան, Մարտունի, Վայոց | «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարման ապահովում, ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության կատարման ապահովում | **30.06.2017 30.12.2017** |

| | | | |
|---|---|---|---|
| | ...րի մարզի Եղեգնաձոր, Վայք քաղաքների նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնադաստիարակչական հաստատություններ) | | |
| 6 | Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում մշտադիտարկում, ուսումնասիրություն, տեսչավորում (անկախ կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից), թեմատիկ ստուգում | «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի և տեսչության կանոնադրության 1-ին կետի պահանջների կատարման ապահովում, կրթության համակարգում պետական կրթական չափորոշիչների կիրառմանը և պահանջների ապահովմանը նպաստում, ռիսկի գնահատում (ՀՀ կառավարության 06.06.2013թ. N 598-Ն որոշմամբ հաստատած ստուգաթերթերի հիման վրա),«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում (ըստ ԿԳ նախարարի հրամանի) | **30.06.2017**<br>**30.12.2017** |
| 7 | Ստուգումների, ուսումնասիրությունների, մշտադիտարկումների արդյունքում բացահայտված խախտումների հետևանքների վերացման նպատակով ներկայացված հանձնարարականների և առաջարկությունների կատարման նկատմամբ **վերահսկողություն** (դիտարկումներ) | «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջների կատարում. կրթության բնագավառի օրենսդրության պահանջների խախտման հետևանքների և թերությունների վերացում, հետադարձ կապի ապահովում | **30.06.2017**<br>**30.12.2017** |
| 8 | Դիմումներում, բողոքներում բարձրացված խնդիրների **ուսումնասիրություն կամ ստուգում** | «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի կատարում. դիմումներում, բողոքներում բարձրացված խնդիրների լուծմանը, դրանց դրդապատճառների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացում | **30.06.2017**<br>**30.12.2017** |
| 9 | Այլ ընթացիկ աշխատանքներ | | **30.06.2017**<br>**30.12.2017** |

**ՀՀ կրթության պետական տեսչության պետ՝ Ա. Կարապետյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

ՂԵԿԱՎԱՐ

0051, Երևան, Կոմիտաս 37/4, հեռ. 010 203027

№ 04/24.5/766-19

«18» հունվարի 2019թ.

**ՀՀ հաշվեքննիչ պալատի**

**անդամ Գագիկ Ոսկանյանին**

**Հարգելի՛ պարոն Ոսկանյան,**

ի պատասխան Ձեր 14.12.2018թ. N ՀՊԵ-ԳՈ-178 և 08.01.2019թ. N ՀՊԵ-ԳՈ-05 գրությունների՝ հայտնում եմ, որ ծանոթացել եմ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N9/3 որոշմամբ ՀՀ կրթության տեսչական մարմնում իրականացված հաշվեքննության արդյունքում կազմված՝ 14.12.2018թ. և 28.12.2018թ. N1 արձանագրություններին և ստորագրված բնօրինակները թղթային և էլեկտրոնային առաքման եղանակով վերադարձնում Ձեզ:

ՀՀ կրթության տեսչական մարմնում ներքին աուդիտի ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

1. «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, ներքին աուդիտի են ենթարկվում կազմակերպության գործունեության ֆինանսական կառավարմանը, հսկողությանն առնչվող բոլոր գործառույթները:

2. «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, տեսչական մարմնի գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման (ֆինանսաբյուջետային), անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը: Օրնքի 18-րդ հոդվածը կարգավորում է

ՄՏԻՑ № Հ-ՊԼ-62
«21» 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

տեսչական մարմնի ֆինանսավորումը, որի համաձայն տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է վարչապետի աշխատակազմի միջոցով՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերի շրջանակում:

Հաշվի առնելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ տեսչական մարմինների ֆինանսաբյուջետային և անձնակազմի կառավարման հարցերի կարգավորման առանձնահատկությունները՝ առաջարկում եմ սահմանել, որ ՀՀ կրթության տեսչական մարմնի նկատմամբ ներքին աուդիտն իրականացնում է ՀՀ վարչապետի աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանումը: Նման կարգավորումը թույլ կտա խուսափել պետական բյուջեում լրացուցիչ ծախսեր անելու անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով այն, որ կվերանա տեսչական մարմնում ներքին աուդիտի ստորաբաժանման ստեղծման և լրացուցիչ հաստիքների նախատեսման անհրաժեշտությունը:

Առդիր՝ 15+3 (տասնութ) թերթ:

**Հարգանքով՝** **Ա. Ծագաֆյան**

Կատարող՝ Արմեն Գևորգյան (հեռ.՝ 010-20-30-49)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
МИНИСТР
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N 01/10/20158-18 «28» 12 2018թ.

Հայաստանի Հանրապետության
հաշվեքննիչ պալատի անդամ
ԳԱԳԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ոսկանյան,

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ձեզ եմ ներկայացնում Կրթության և գիտության նախարարության առարկություններն ու բացատրությունները՝ հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Նախարարի պաշտոնակատար)

27.12.2018

X
ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒ ԹՅՈՒ ՆՅԱՆ
Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Կատ.՝ Հ. Մանուկյան
/հեռ. 010 52 48 56/

ՄՏԻՑ № Ա-7Ա-04
«03» 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

**Կրթության և գիտության նախարարության առարկություններն ու բացատրությունները՝ հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ**

Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության արձանագրության կապակցությամբ տեղեկացնում եմ հետևյալը.

Արձանագրության 5-րդ՝ «Բարձրագույն ուսումնական հաստատությունների վերահսկողությունը» բաժնում նշված են.

1. *ՀՀ կրթության ոլորտի կարևորագույն մասնիկը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները, դուրս են մնացել տեսչության ստուգումների և հսկողության դաշտից:*
2. *Մի շարք ոչ պետական բուհերում ռեկտորի, պրոռեկտորի, դեկանների պաշտոններ են զբաղեցնում գիտական կոչում, աստիճան չունեցող անձիք, որտեղ իրավիճակը շտկելու նպատակով պետական լիազոր մարմինների կողմից անհրաժեշտ է կատարել համապատասխան վերահսկողություն կամ ստուգում:*

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության որակի, ուսուցման, գնահատման, ինչպես նաև կրթության կազմակերպման կանոնադրական պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարաբերությունները հանրակրթության և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության բնագավառում:

Բարձրագույն մասնագիտական կրթությունը չի ներառված տեսչավորման շրջանակներում, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրությամբ և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության, իրավասությունների և ակադեմիական ազատությունների շրջանակները:

Իսկ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է **լիազորված մարմինը՝** լիցենզավորման և հավատարմագրման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների կազմակերպմամբ, ուսումնական

հաստատության որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

Անդրադառնալով մի շարք ոչ պետական բուհերում վարչական պաշտոն զբաղեցնող անձանց գիտական աստիճան կամ կոչում չունենալու խնդրին, տեղեկացնում եմ, որ օրենքով սահմանված չեն ռեկտորին ներկայացվող պահանջներ, այդ թվում՝ գիտական աստիճան կամ կոչում ունենալու: Օրենքն ամրագրում է, որ «Պետական բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորն ընտրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթի կարգով՝ ուսումնական հաստատության խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:»: Գիտական աստիճանի և կոչման, ինչպես նաև ռեկտորին ներկայացվող այլ պայմաններ սահմանված են բուհերի կանոնադրություններում:

Ոչ պետական ուսումնական հաստատություններն ունեն տարբեր կազմակերպական-իրավական ձևեր, հիմնականում շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություններ են, դրանց հիմնադիրներն են սահմանում կամ կանոնադրություններով կարող են սահմանվել կազմակերպության գործադիր մարմնին /ռեկտոր/, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին /դեկաններին/ ներկայացվող պահանջները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մշակել է «Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» նոր օրենքի նախագիծ, որն այժմ փորձագիտական քննարկման փուլում է: Նախատեսվում է հաջորդ տարվա մայիս-հունիս ամիսներին այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն: Նախագծի ընդունման արդյունքում հստակ կսահմանվեն բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում միջազգային պահանջներին համապատասխան անհրաժեշտ պետական վերահսկողության իրականացման հիմքերը, սկզբունքները և մեխանիզմները, բուհերի կառավարման մարմիններին և կառուցվածքին ներկայացվող պահանջները:

Արձանագրության 1-ին կետում նշված է, որ *«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ Տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է վարչապետի աշխատակազմի միջոցով՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերի շրջանակում: Տեսչական մարմինը նախարարությունից անկախ կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող մարմին է, սակայն 2017-2018թթ. Տեսչական մարմնի*

*հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:*

Որպես արձանագրության 1-ին կետի ամփոփում և 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի սեպտեմբերի 30-ը արձանագրված խեղաթյուրում ու անհամապատասխանություն՝ նշված է, որ *Տեսչական մարմինն իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումն իրականացրել է ՀՀ կրթության և գիտության նախարարության միջոցով, որը հանդիսանում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի խախտում:*

Վերոգրյալի հետ կապված ներկայացնում եմ հետևյալ **<u>առարկությունը.</u>**

Մինչև 2018 թվականի մարտի 23-ի «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի /ՀՕ-267-Ն/ ընդունումը՝ Օրենքի 18-րդ հոդվածով սահմանված էր, որ *Տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է լիազոր մարմնի միջոցով՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերի շրջանակում:* ՀՕ-267-Ն օրենքի 11-րդ հոդվածով փոփոխություն կատարվեց վերոնշյալ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետում՝ «լիազոր մարմնի» բառերը համապատասխան հոլովածևերով փոխարինելով «վարչապետի աշխատակազմի» բառերով: Այդ փոփոխությունն ուժի մեջ մտավ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը՝ 2018 թ. ապրիլի 9-ին, երբ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեն արդեն հաստատվել էր:

Ավելին, ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմնի վերակազմավորումը ՀՀ կրթության տեսչական մարմնի, և վերջինիս կանոնադրության հաստատումն իրականացվել է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 729-Լ որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 21.06.2018-ին:

Հաշվի առնելով այն, որ վերոգրյալով պայմանավորված փոփոխություններ չկատարվեցին ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում՝ Տեսչական մարմնի ֆինանսավորումը, հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը շարունակվեցին իրականացվել ՀՀ կրթության և գիտության նախարարության միջոցով:

ՀՀ ԿԳՆ լիցենզավորման գործակալության կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ լիցենզավորման և դիտարկումների և վերլուծության բաժինները:

**«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2009թ հուլիսի 9-ի 808-Ն որոշմամբ հաստատված լիցենզավորման կարգերին համապատասխան Լիցենզավորման գործակալությանը վերապահված են հետևյալ գործառույթները.**

1) լիցենզիաների տրամադրում,
2) լիցենզիաների վերաձևակերպում,
3) լիցենզիաների գործողության կասեցում,
4) լիցենզիաների դադարեցում,
5) լիցենզավորման հանձնաժողովի գործավարության իրականացում՝ հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստում, ամփոփում և դրանք լիցենզավորման հանձնաժողովի քննարկմանը ներկայացում,
6) լիցենզիաների գրանցամատյանների վարում,
7) տեղեկատվական բազայի ստեղծում,
8) լիցենզավորված անձանց մասին տեղեկատվության տրամադրում,
9) լիենզավորվող և լիցենզավորված սուբյեկտների կողմից տվյալ գործունեությունն իրականացնելու համար պարտադիր պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ դիտարկումների և ուսումնասիրությունների իրականացում փաստաթղթերի՝ հաշվետվությունների հիմքով և ուսումնական տարածքներում,
10) կրթության ոլորտում դիտարկումներից և ուսումնասիրություններից բխող լիցենզավորման հանձնաժողովի նիստին եզրակացությունների, անհրաժեշտ նյութերի նախապատրաստում, ամփոփում, լիցենզավորման հանձնաժողովի քննարկմանը ներկայացում,
11) լիցենզավորված անձանց կողմից իրենց գործունեությունից բխող՝ օրենքով նախատեսված հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծության իրականացում,
12) լիցենզավորված անձանց մասին տեղեկությունների հավաքագրում, վերլուծություն, գնահատում,
13) լիցենզավորման գործակալությունն իրականացնում է իր առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, նախագծերի նախապատրաստում:

Լիցենզավորման գործակալության գործառույթների շրջանակը ընդգրկում է ՀՀ տարածքում հանրակրթական, մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորման գործընթացը:

Կրթական ծրագրերով լիցենզավորման գործընթացը կրում է անընդհատ և շարունակական բնույթ:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվում կրթական ծրագրերով լիցենզավորման գործընթացի /լիցենզիա տալու, մերժելու, մասնագիտությունների գծով գործունեության թույլտվության, սահմանային տեղերի փոփոխության, վերաձևակերպման/ տարեկան շուրջ 2760 հայտեր: Իրականացվում է կրթական ծրագրերի լիցենզավորման հանձնաժողովի նիստերի նախապատրաստական աշխատանքներ՝ հայտարարություններ մամուլում տպագրելու, նիստերի օրակարգի, քվեաթերթիկների, արձանագրությունների, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում:

Օրենսդրական դաշտի բարեփոփոխումներով պայմանավորված՝ տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լիցենզիաները պարբերաբար վերաձևակերպվում են՝ համապատասխանեցվելով օրենսդրության պահանջներին: Ներկայացվում է նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական /բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագիր/ կրթական ծրագրերով մասնագիտությունների գծով գործունեության թույլտվության, սահմանային տեղերի փոփոխության տարեկան շուրջ 800 հայտեր: Իրականացվում է փաստաթղթերի ուսումնասիրություն, տրվում է եզրակացություններ և ներկայացվում նախարարի հրամանների նախագծեր: Իրականացվում է ուսումնական հաստատությունների լիցենզիաների վերաձևակերպում և այդ հիմքով եզրակացությունների, հրամանների նախագծերի կազմում: Լիցենզավորված հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ներկայացվում են սահմանային տեղերի փոփոխության մասին դիմումներ: Լիցենզավորման գործընթացն իրականացվում է նաև էլեկտրոնային համակարգի միջոցով:

Լիցենզավորված ուսումնական հաստատություններում իրականացվում է լիցենզիայի պարտադիր պայմանների ու պահանջների պահպանման նպատակով պլանային և ոչ պլանային շուրջ 1050 ուսումնասիրություններ, և խախտումներ հայտնաբերելու դեպքում օրենքով սահմանված կարգով կիրառվում են վարչական տույժեր՝ նախազգուշացում, կասեցում կամ դադարեցում:

Գործակալությունը լիցենզավորման բնագավառի օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ ՀՀ կրթության և գիտության նախարարին և մասնակցում իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին:

Լիցենզիաների վկայականները ձևակերպվում, ներդիրները կազմվում և տրամադրվում են գործակալության կողմից:

Իրականացվում է լիցենզավորված ուսումնական հաստատությունների կողմից ներկայացվող լիցենզավորմանն առընչվող ամենամյա հաշվետվությունների ուսումնասիրման, և նախարարին եզրակացությունների տրման աշխատանքներ, ինչպես նաև ուսումնական հաստատությունների լիցենզիայի համար վճարվող պետական տուրքի նկատմամբ վերահսկողությունը:

ՀՀ ԿԳՆ լիցենզավորման գործակալության վերը նշված գործառույթների իրականացման կոնտեքստում, պարզ է դառնում ամենօրյա աշխատանքի մեծ ծավալը, որն էլ պահանջ է առաջացնում մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ իրականացնելու համար:

Անդրադառնալով հաշվեքննիչ արձանագրության 4-րդ կետին՝ հարկ է նշել, որ ՀՀ ԿԳ լիցենզավորման գործակալությունը իր գործառույթներն իրականացնում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2009թ հուլիսի 9-ի 808-Ն որոշմամբ հաստատված լիցենզավորման կարգերի, ինչպես նաև կրթության ոլորտը կարգավորող մի շարք ՀՀ օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան, համաձայն որի լիցենզավորման գործընթացն իր մեջ ներառում է վերը նշված բոլոր գործառույթները, այդ թվում լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների ապահովման և պահպանման նպատակով ուսումնասիրությունների իրականացումը /փաստաթղթային և վայրում/, ուստի Տեսչական մարմինների լիազորություններից է ոչ թե լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու կամ դադարեցնելու միջնորդագրեր ներկայացնելու ֆունկցիան, այլ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումներն արձանագրելը և հաղորդելը: Հարկ է նշել, որ Տեսչական ստուգումները կրում են այլ բնույթ քան Լիցենզավորման գործակալության ուսումնասիրությունները. դրանք կարող են որոշ առումներով հատվել, բայց բովանդակային առումով դրանք տարբեր գործառույթներ են և չեն կարող համարվել գործառույթների կրկնություն:

Մասնավորապես՝ Լիցենզավորման գործակալության ուսումնասիրություններն ի սկզբանե՝ մինչ իրավաբանական անձանց լիցենզիա տրամադրելը, ենթադրում է լիցենզիայի պարտադիր պայմանների և պահանջների առկայության ստուգում /հիմնարար փաստաթղթեր, ուսումնական տարած, ուսումնամեթոդական հագեցվածություն, մանկավարժական կազմ և այլ/, իսկ լիցենզավորումից հետո դրանց պահպանումը ապահովող վերահսկողություն/ հաշվետու լինելը, ուսումնասիրությունները/:

«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծում ներկայացվում են լիցենզավորման նոր պահանջներ, որոնք ենթադրում են մշտական գործուն գործելաոճ. այն է՝ նախկինում անժամկետ տրվող լիցենզիաներին փոխարինելու են գալիս ժամկետային լիցենզիաները, որոնց հիմքով կիրականացվի հավատարմագրման գործընթացը: Կրթության բնագավառի առանձնահատկությունից և պետական ռազմավարական կարևոր նշանակություն ունենալուց է բխում նաև վերահսկողության բաղադրիչի պահպանումը՝ ի տարբերություն մյուս գերատեսչությունների Լիցենզավորման գործակալությունների: Օրինակ սովորողների համակազմի տեղերի փոփոխությունը, նոր մասնագիտությունների գծով գործունեության թույլտվությունը, պարբերաբար փոփոխվող օրենսդրության կիրարկումը, չափորոշիչների և նորմատիվների փոփոխությունը, միջազգային ստանդարտներին համապատասխանեցումը, լիցենզավորման միջազգային վարկանիշի պահպանումը և լիցենզավորման միավորի նկատմամբ ունեցած պահանջները:

Հարկ է նշել, որ միջազգային փորձը դիտարկելիս պարզ է դառնում, որ արտերկրում չափազանց կարևորվում է լիցենզավորման միավորի կարգավիճակը և լիցենզան /*լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ*, /<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդված//: Արտերկրում ուսումնական հաստատության կողմից տրված ավարտական փաստաթուղթն ընդունվում է միայն լիցենզիայի առկայության դեպքում /հաճախ երկրորդական համարելով հավատարմագրված լինելու պահանջը/:

Հաշվեքննիչ պալատի արձանագրության մեջ անդրադարձ է արվել նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնավոր սեկտորի վարչական աշխատողների գիտական աստիճան և/կամ կոչում ունենալու պահանջը չպահպանելուն: Այս առումով պետք է նշել, որ լիցենզավորման կարգով պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջներում կարևորված է դասավանդող անձնակազմի կարգավիճակը, որի նկատամաբ ներկայացվող պահանջը խստացվել է. այսպես ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 20-ի N 1047-Ն որոշմամբ. «ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի դասախոսների առնվազն 60 տոկոսը /*նախկին 50 տոկոսի փոխարեն*/ պետք է ունենա պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան, (կամ) կոչում, այդ թվում՝ յուրաքանչյուր մասնագիտության մասնագիտական առարկաների գծով՝ 3-ը, իսկ արվեստի, ֆիզիկական կուլտուրայի բարձրագույն ուսումնական հաստատությունների, այլ բարձրագույն ուսումնական

հաստատությունների նմանատիպ ֆակուլտետների և ամբիոնների դեպքում պետք է ունենա պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան, (կամ) կոչում, (կամ) բնագավառին հատուկ պետական կոչումներ, (կամ) պարգևներ, (կամ) գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ և այլն:»:

Մյուս կողմից, մասնավոր հատվածն ունի որոշակի առանձնահատկություններ և՛ կառավարման, և՛ ֆինանսավորման՝ պետական սեկտորի համեմատ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
МИНИСТР
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N 01/10/20225-18 «28» 12 2018թ.

Հայաստանի Հանրապետության
հաշվեքննիչ պալատի անդամ
ԳԱԳԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ոսկանյան,

Ի լրումն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 01/10/20158-18 գրության, ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Ձեզ եմ ներկայացնում հաշվեքննության արձանագրության ստորագրված տարբերակը: Արձանագրության թղթային տարբերակը կցվում է:

Առդիր՝ 20 էջ:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Նախարարի պաշտոնակատար)

28.12.2018

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Կատ.՝ Հ. Մանուկյան
/հեռ. 010 52 48 56/

ՄՏԻՑ No ՀՊՄ-01
«03» 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2, Հեռ. 010235600, 011 597-520, Ֆաքս 233600,

/ 28 / 12 2018թ.
N 554/18-Ն

Հայաստանի Հանրապետության
հաշվեքննիչ պալատի իրավաբանական
վարչության պետ Արամ Մամիկոնյանին

Հարգելի պարոն Մամիկոնյան,

Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) քննարկելով Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի կողմից 2018 թվականի ՀՊԵ-Գո-187 գրությամբ ներկայացված Տեսչական մարմնում հայտնաբերված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ արձանագրությամբ բարձրացված հարցերը հայտնում է հետևյալ առարկությունները՝

1. Տեսչական մարմինն իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) միջոցով, որը հանդիսանում է <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված պահանջի խախտում:

Տեսչական մարմինն իր գործառույթների իրականացման ժամանակ չէր կարող խախտել <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջները, քանի որ փաստացի մինչև օրենքի համապատասխան փոփոխությունը, տվյալ գործառույթն իրականացվել է Նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից, համապատասխան փոփոխությունից հետո վարչապետի աշխատակազմի ղեկավարի կողմից ստացված գրության հիման վրա՝ (հանձնարարական 18-41, տրված 26.06.2018 թվականին 02/42.1/12321-18 գրությամբ ստացված Mulberry համակարգով) «ՀՀ վարչապետի հանձնարարությամբ՝ հաշվի առնելով տեսչական մարմինների գործունեության առանց ընդհատման ապահովման անհրաժեշտությունը, խնդրում եմ ներկա անցումային փուլում, շարունակել աջակցել դրանց բնականոն աշխատանքներին՝ ժամանակավորապես իրականացնելով տեսչական մարմինների գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական

ՄՏԻՑ N 1-ՄՊ-05
08. 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

հաշվառման, ֆինանսաբյուջետային, անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի աշխատանքները», որոնք էլ կատարվել են Նախարարության կողմից և հանձնարարականի կատարումը չի կարող դիտվել օրենքի դրույթների խախտում:

2. Տեսչական մարմինը չի ունեցել տարեկան գործունեության ծրագրեր՝ ոչ 2017թ., ոչ 2018թ. համար չի իրականացրել Կանոնադրության 15-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը:

Տեսչական մարմինն ըստ գործող օրենքի յուրաքանչյուր տարի տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացրել Տեսչական մարմնի գործունեության և իրականացվող ստուգումների տարեկան ծրագրերը, որոնք խորհրդի կողմից հաստատվելուց հետո օրենքով սահմանված ժամկետներում տեղադրվել են տեսչական մարմնի կայքում՝ prosafe.am: Ներկայացված փաստարկներն անհիմն են և չեն համապատասխանում իրականությանը:

3. Տեսչական մարմնի կողմից 2017թ-ից – 2018թ-ի ինն ամիսների ընթացքում նշանակված տուգանքների ընդհանուր 45,110.0 հազ. դրամ գումարից 4,700.0 հազ. դրամը պետական բյուջե չի վճարվել:

Ներկայացված հաշվարկի իմաստը անհասկանալի է, քանի որ ըստ «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով նախատեսված բողոքարկման ժամկետները լրանալուց հետո երկամսյա ժամկետում միայն Տեսչական մարմինը կարող է դիմել համապատասխան մարմիններին բռնագանձում իրականացնելու խնդրանքով և փաստացի տեսչական մարմինը գանձումների գործընթացը տվյալ պահի դրությամբ կատարել է 92,5%-ին համարժեք, որն էլ արտահայտված է կառավարման խորհրդին ներկայացված տեսչական մարմնի ղեկավարի հաշվետվության մեջ :

4. Տեսչական մարմնի կողմից 2017-2018թթ-ին քաղաքացիների դիմում – բողոքների հիման վրա արտածրագրային ստուգումների իրականացնելու դեպքում ստուգում իրականացնելու վերաբերյալ հրամաններում կամ հանձնարարագրերում հստակ սահմանված չեն եղել դրանց հիմքերը, ինչպես նաև հիմնավորումները, որ սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ նույն տնտեսվարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ՝ խախտվել է <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015թ-ի հունիսի 18-ի N 711-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջները:

Տեսչական մարմնի կողմից դիմում բողոքների հիման վրա իրականացվել են ստուգումներ միայն «ՀՀ- ում ստուգումների կազմակերպման և անցկացման

մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1.մասի 2-րդ կետի հիմքերով՝ ստուգում իրականացնող պետական մարմինը Հայաստանի Հանրապետության վարչապետից ստացել է հանձնարարական, քաղաքացիներից, իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից ստացել է դիմում, իսկ պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ գրավոր տեղեկատվություն՝

ա. քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին, կենդանիներին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու վտանգի, ինչպես նաև բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման վտանգի մասին,

բ. քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին, կենդանիներին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու, ինչպես նաև բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման մասին,

գ. սպառողի իրավունքների խախտման մասին (այն քաղաքացիների դիմումի դեպքում, որոնց իրավունքները խախտվել են),

Տվյալ պարագայում իրականացված ստուգումներն օրինական և համահունչ են փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրությանը, ինչպես նաև արձակված հրամաններում նշված են իրականացվող ստուգման օրենսդրական հիմքերը:

5. Տեսչական մարմինն իր վերահսկողական գործառույթները շարունակում է իրականացնել նախկին մարմնի ստուգաթերթով: Տեսչական մարմնի համար նոր ստուգաթերթերի (կամ ստուգաթերթերում այդ ուղղությամբ կատարված փոփոխությունների) վերաբերյալ հաստատված ակտ չկա:

Ներկայացված հիմնավորումները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ ՀՀ կառավարության կողմից 29.06.2017 թվականին N756-Ն որոշմամբ հաստատվել է Նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող ոչ պարենային արտադրանքների և ծառայությունների նկատմամբ պետական վերահսկողության իրականացման ստուգաթերթերը, բացի այդ Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա շուկայի վերահսկողության տեսչական մարմինը հանդիսանում է Նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի իրավահաջորդը:

6. Տեսչական մարմինը 2017թ-ի ստուգումներ իրականացնելու իրավասություն չուներ՝ համաձայն ՀՀ կառավարության 2015թ հուլիսի 20-ի N 839-Ա որոշման դրույթների:

Սույն որոշմանը հղում կատարելիս նկատի չի առնվել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 839-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 43-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը նախատեսել է «որոշման 1-ին կետով նախատեսված՝

ստուգումների իրականացման սահմանափակումը չի տարածվում «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա և Հայաստանի Հանրապետությունում տեսչական համակարգի օպտիմալացման արդյունքում ստեղծվող նոր տեսչական մարմինների գործունեության վրա» և ՀՀ կառավարության 20.07.2017թ 865-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի «Ստուգումների կազմակերպման և անցկացման ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի N 594-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 839-Ա որոշման 1-ին կետում «2017 թվականի հուլիսի 1-ը» բառերը փոխարինել «2017 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով, իսկ «և մաքսային մարմինների» բառերից հետո լրացնել «ինչպես նաև «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված տեսչական մարմինների,» բառերով, որն էլ ինքնին բացառությունների շարքում է դասում տեսչական մարմինների կողմից իրականացվող ստուգումները: Համադրելով ՀՀ կառավարության վերոնշյալ որոշումները պարզ է դառնում, որ Տեսչական մարմինը գործառույթների վերազանցում չի թույլ տվել, այլ գործել է օրենքով սահմանված իր լիազորությունների շրջանակներում:

7. Տեսչական մարմնում 2017-2018թթ. համար պետք է հարուցված լիներ թվով 40 վարչական վարույթներ, որոնք չեն հարուցվել՝ խախտելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթները:

Տեսչական մարմինն 2017-2018թթ. ընթացքում ստացված դիմում-բողոքներին ընթացք է տվել <<ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան իրականացվել են ստուգումներ և հարուցվել են վարչական վարույթներ, իսկ ինչ վերաբերում է Տեսչական մարմնի լիազորությունների չվերաբերող դիմում-բողոքների, ապա դրանք ետ են վերադարձվել դիմումատուներին՝ համապատասխան իրավական օգնությամբ և հիմնավորումներով:

8. Տեսչական մարմինը չի օգտագործում իր թվով 2 շարժական լաբորատորիաները:

Տեսչական մարմնի նավթամթերքի շարժական փորձարկման լաբորատորիաները տվյալ ժամանակահատվածում հավատարմագրված չեն եղել, ուստի այդ պատճառով էլ նմուշները լաբորատոր փորձարկման նպատակով տրվել են Ստանդարտների ազգային ինստիտուտի հավատարմագրված փորձարկման լաբորատորիային:

9. Տեսչական մարմինը լաբորատոր հետազոտություններն իր մոտ կատարելու փոխարեն պատվիրում է <<Ստանդարտների ազգային ինստիտուտ>> ՓԲ ընկերություն՝ հավելյալ վճարելով 2018թ. դեկտեմբերի 4-ի դրությամբ 12,405.2 հազ. դրամ:

<<Ստանդարտների ազգային ինստիտուտ>> ՓԲ ընկերությանը տեսչական մարմինը չի պատվիրել լաբորատոր փորձարկումներ կատարել, այլ խոսքը գնում է ՀԿԳ քննիչի կողմից տրված Նախարարությանը հանձնարարականի, համաձայն որի Տեսչական մարմինը օրենքով սահմանված կարգով վերցրել է փորձանմուշներ և Նախարարության հանձնարարականով ներկայացրել հավատարմագրված լաբորատորիային փորձարկման, նկատի ունենալով որ փորձարկման արդյունքները նման դեպքերում հավաստի են հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի կողմից կատարելու պայմաններում:

10. Տեսչական մարմնի կողմից խախտվել են «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և կանոնադրության 21-րդ կետի դրույթները, այն է՝ Տեսչական մարմնի տեղակալների նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ խորհրդի ներկայացմամբ:

Տեսչական մարմնի ղեկավարը համաձայն «Հանրային ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ կետի հիման վրա իրականացրել է համապատասխան պարգևատրումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Տեսչական մարմինը գտնում է, որ արձանագրությամբ ամրագրված անհամապատասխանությունները և խեղաթյուրումներն իրականությանը չեն համապատասխանում և չեն կարող դիտարկվել որպես Տեսչական մարմնի կողմից թերի կամ օրենսդրական խախտումներով իրականացված գործառույթներ:

Հարգանքով՝

Արմեն Կոտոյան

Կատարող՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
Հեռ. 011 597 525

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2, Հեռ. 010235600, 011 597-520, Ֆաքս 233600,

/ 11 / 01 2019թ.
12/19-Զ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ՝
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ոսկանյան,

Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) քննարկելով Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի կողմից 2019 թվականի հունվարի 8-ի ՀՊԵ-Գn-187 գրությամբ ներկայացված Տեսչական մարմնում հայտնաբերված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ N1 արձանագրությամբ բարձրացված հարցը հայտնում է հետևյալ առարկություն՝

1. Տեսչական մարմինը 2017-2018թթ-ին պետք է ունենար ներքին աուդիտի համակարգ, որը մինչ օրս առկա չէ.

2017-2018թթ. ընթացքում ներքին աուդիտի համակարգը գործել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներքին աուդիտի վարչության կողմից, սակայն վարչության կողմից չեն իրականացվել ներքին աուդիտ: Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ.հունիսի 11-ի N 732-Լ որոշման համաձայն տեսչական մարմնի կառուցվածքում ներքին աուդիտի համակարգ կամ նման ստորաբաժանում նախատեսված չէ և տեսչական մարմինը հանդիսանում է ՀՀ կառավարությանը ենթակա մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ԿՈՍՈԼՅԱՆ

Կատարող՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
Հեռ. 011 597 525

ՄՈՒՏՔ No ՀՊԼ-31
«14» 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
## ՆԱԽԱՐԱՐ

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] www.mineconomy.am

Ձեր № ՀՊԵ-188
2018-12-18

01/18.2.1/18-19
09.01.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլյան

Ի պատասխան Ձեր գրության՝ ներկայացնում ենք ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաշվեքննության արձանագրության վերաբերյալ համապատասխան պարզաբանումները:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Տ. Խաչատրյան

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Կատարող՝ Համիկ Հովհաննիսյան
011 597193

[illegible] № Հ-18
09 01 2019թ.
[illegible]

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Տեսչական մարմնում Հաշվեքննիչ պալատի կատարողականի հաշվեքննության արձանագրության վերաբերյալ

| Հ/h | Արձանագրություն | Պարզաբանում |
|---|---|---|
| 1 | Տեսչական մարմինը իր հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը և անձնակազմի կառավարումը իրականացրել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության միջոցով, որը հանդիսանում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի խախտում: | «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը մինչև 2018թվականի ապրիլի 4-ը սահմանում էր, որ «Տեսչական մարմնի ֆինանսավորումն իրականացվում է լիազոր մարմնի միջոցով՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերի շրջանակում:», իսկ 2018 թվականի մարտի 23-ի N 267-Ն օրենքի 11-րդ հոդվածի 1) կետով կատարված փոփոխությամբ «լիազոր մարմնի» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինվել է «վարչապետի աշխատակազմի» բառերով: Հետագայում, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 26-ի N 02/42.1/12321-18 հանձնարարականով համապատասխան պետական մարմիններին հանձնարարվել է «հաշվի առնելով տեսչական մարմինների գործունեության առանց ընդհատման ապահովման անհրաժեշտությունը՝ խնդրում եմ ներկա՝ անցումային փուլում, շարունակել աջակցել դրանց բնականոն աշխատանքներին՝ ժամանակավորապես իրականացնելով տեսչական մարմինների գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, ֆինանսաբյուջետային, անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով |

| | | |
|---|---|---|
| | | չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի աշխատանքները:» Ինչը և իրականացվել է: Այսպիսով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի խախտում թույլ չի տրվել: |
| 2 | «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և Տեսչական մարմնի կանոնադրության 21-րդ կետի համաձայն Տեսչական մարմնի ղեկավարի և տեղակալների նկատմամբ խրախուսման ու պատասխանատվության միջոցներ կիրառում է ՀՀ վարչապետը խորհրդի ներկայացմամբ: Սակայն վերջիններս խրախուսում ստացել են Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով: | Համաձայն «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ կետի «Նախարարի տեղակալին, Կառավա-րությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին, տեսչական մարմնի ղեկավարի տեղակալին, վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին, մարզպետի տեղակալին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է անմիջական ղեկավարը:»: |
| 3 | Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ | Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ արձանագրված խնդիրների վերաբերյալ համապատասխան պարզաբանումները և բացատրությունները կներկայացվեն Տեսչական մարմնի կողմից |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր №

№ 01/13.2.1/294-19
«22» 01 2019 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլյան

Ձեր 08.01.2019 թվականի N ՀՊԵ-ԳՈ-01 գրությամբ ներկայացված արձանագրության վերաբերյալ հայտնում ենք, որ շուկայի վերահսկողության տեսչական մարմինը ստեղծվել է ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1063-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), որի N 1 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմինը հանդիսացել է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության համակարգում գործող առանձնացված ստորաբաժանում:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմնի առանձնացված ստորաբաժանումը չի հանդիսանում հանրային հատվածի կազմակերպություն, ուստի չպետք է ունենա ներքին աուդիտի համակարգ: 2018թ.-ի մարտի 23-ի ««Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ուժի մեջ է 2018 թվականի ապրիլի 9-ից) 3-րդ հոդվածի համաձայն սահմանվել է, որ Տեսչական մարմինը Կառավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է:

Կատարող՝ Համիկ Հովհաննիսյան
011 597193

ՄՏԻՑ № 471-66
«22» 01 2019թ.
ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Վերոգրյալից հետևում է, որ 2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2018թ.-ի ապրիլի 9-ն ընկած ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնում ներքին աուդիտի համակարգ ունենալու որևէ օրենսդրական պահանջ առկա չի եղել: Ավելին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ.հունիսի 11-ի N 732-Լ որոշման համաձայն տեսչական մարմնի կառուցվածքում ներքին աուդիտի համակարգ կամ նման ստորաբաժանում նախատեսված չէ:

Առդիր՝ Հաշվեքննության արձանագրությունը՝ 3 թերթ (կներկայացվի առձեռն):

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ